Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

CC BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.1
Lh-17

1927

Հ. ԱԶԱՏՅԱՆ

ՑԵՌԱԴԱՇՏԻՑ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՎՐԱՅՈՎ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ.—«ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ»

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ—1927

338.1
Ա-17

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-ի
ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ուղեցույց անտառային աշխատավորի . . . . 50 կոպ.
2. Ս. Տաղունց.—*Մեր անտառները (սպառված)* . . . . . . 20 »
3. Հ. Փիրումյան և Ա. Մելքոնյան.—*Ինչո՞ւ է ձեռնտու յե գործարանում յուղ և շվեյցարական պանիր պատրաստելը* . . . 3 »
4. Հ. Փիրումյան.—*Թիթեռաբույսերը և նրանց մշակության յեղանակները (սպառված)* . . . . 10 »
5. Խ. Ավդալբեգյան.—*Հ. Խ. Ս. Հ. Հողային Օրենսդիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատավորական հողօգտագործություն (սպառված)* . . 40 »
6. Գ. Հեքիմյան.—*Թթենու մշակությունը* . . . . 10 »
7. Գ. Հեքիմյան.—*Շերամի որդը, նրա կերակրելն ու խնամելը* . 10 »
8. Խ. Ցերիցյան.—*Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.)* . . . . 1-50 »
9. Կ. Մելիք-Շահնազարյան.—*Ծխախոտի մշակությունը* . . . 20 »
10. Ս. Ֆրիդոլին.—*Տասը պատգամ անասնապահին* . . . . . 20 »
11. Խ. Ցերիցյան.—*Անհատակա՞ն, թե՞ կոոպերատիվ կաթնատնտեսություն* . . . . 10 »
12. Հ. Հարություն.—*Բատրա՛կ, հիշիր պայմանագիր (չափածո)* . 5 »
13. Մ. Թումանյան.—*Շարքացանքը և նրա նշանակությունը* . . 15 »
14. Խս. Տեր-Ներսիսյան.—*Ինչպես մշակել խաղողի այգիները (28 նկարով)* . . . . 35 »
15. Յերեսներս դեպի գյուղ.—*Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին. Ս. Տաղունցի նախաբանով (սպառված)* . . . . 14 »
16. Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի չորրորդ պլենումի բանաձևերը (*սպառված*) . 15 »
17. Ռ. Արմենյան.—*Խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը* 15 »
18. Հ. Ազատյան.—*Գյուղատնտեսական բանվորությունը և միջազգային կոմունիստական շարժումը* . . . . 40 »
19. Ն. Խան-Ազյան.—*Ուղեցույց արդյունավետ խոզաբուծության* . 15 »
20. Ֆերդինանդով.—*Հավաբուծությունը և նրա օգուտները* . . 20 »

338.1
Ա-17
17 FEB 2010

Հ. ԱԶԱՏՅԱՆ

ՅԵՐԱԴԱՇՏԻՑ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ
ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՎՐԱՅՈՎ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ.—«ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ»

68

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ—1927

29.707

31. 09 2013

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4350
ԳՐԱՌ. 300 Բ. ՏԻՐԱԺ 2000

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

20453-59

Ա.

ՅԵՌԱԴԱՇՏԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

1

Չնչին բացառություններով Խորհրդային Միության ամբողջ գյուղացիությունն իր հողը յեռադաշտյան, իսկ մասամբ նաև յերկդաշտյան յեղանակով է մշակում: Հողագործության այս յեղանակը գյուղացու համար ճակատագրական անեծքի ու պատմական դժբախտության է վերածվել: Նա բնության ու մարդկանց հանդեպ գյուղացուն կատարելապես ստրկացրել և դարեր շարունակ նրան ամենաանգութ կերպով դատապարտել է գործ ունենալ ու շփվել միևնույն հողամասի ու հացահատիկների, միևնույն կենդանիների ու արտադրության գործիքների, միևնույն բնական կազմի և հասարակական-պետական հաստատությունների ու կազմակերպությունների հետ: Յեռադաշտյան յեղանակը հողագործին բնական ու հասարակական-քաղաքական, կրոնական ու բարոյական միևնույն գաղափարներով է սնել ու ղեկավարել, միևնույն գաղափարների նեղ, խեղդիչ մթնոլորտում է ապրել տվել: Այդ բոլորի հետևանքով գյուղացին իր հոգևոր հորիզոնը սահմանափակել է իր մանր տնտեսության և գյուղի հասարակական կյանքի հրեշային նեղ շրջանակներով, վորոնցից այն կողմը կատարելապես անհայտ ու անհասկանալի, հեքիաթական բնույթ կրող և մշուշապատ մի աշխարհ է դառնում՝ իր հզոր իշխաններով ու իմաստուններով, իր լուսափայլ սրբերով և ամենակարող աստվածներով, իր թագազարդ ոձերով ու պոզավոր կամ պոչավոր սատանաներով, իր դրախտով ու իր դժոխքով: Այդ բոլոր անդրգյուղային և վերգյուղային ուժերը գյուղացին ընդունում է իբրև գերմարդկային ուժեր, վորոնց գոյությանն ու հզորությանը նա միայն հավատում է, նրանց հասկանալը և նրանց մասին պարզ գաղափար կազմելն իր ուժերից վեր համարելով:

Խորհրդային Միության գյուղացին այս ասպարեզում բացառություն չի կազմում: Իրենց տնտեսական ու հասարակական կյանքով, ինչպես և իրենց հոգևոր ապրումներով ավելի կամ պակաս չափով նրա վիճա-

կըն են բաժանում ամբողջ աշխարհի մանր ու միջակ գյուղացիները, վորոնց թվում պետք ե դասել նաև կապիտալիստական յերկրների մանր ու միջակ գյուղացիության մի վորոշ տոկոսը:

Մոտ յերկու հազար տարի յե արդեն, վոր հայ գյուղացին տնտեսական ու հասարակական այս պայմաններն ե ապրում: Արևմտյան Յեվրոպայի գյուղացին հայ գյուղացուց յերկու անգամ ավելի յերիտասարդ ե: Հողագործության յեռադաշտյան յեղանակին նա անցել ե 8-րդ կամ 9-րդ դարերում և նրանից կարողացել ե ազատվել միայն հազար տարուց հետո՝ 18-րդ դարի յերկրորդ կեսում կամ 19-րդ դարի սկզբին: Շատ ավելի յերիտասարդ ե ռուս գյուղացին, վորի մոտ յեռադաշտը վոչ ավելի, քան 4 կամ 5 դարի պատմություն ունի:

Գյուղատնտեսական արտադրության այս յեղանակի պայմաններում արտադրողական ուժերն այնքան դանդաղ են աճում և կյանքի բոլոր ասպարեզներում կատարվող նյութական ու բարոյական փոփոխություններն այնքան աննկատելի կերպով են տեղի ունենում, վոր առաջխաղացման ու զարգացման փաստերը նկատելու, հաստատելու ու գնահատելու համար պահանջվում ե ավելի քան մի մարդկային կյանք: Գյուղացիների տասնյակ սերունդներ դարեր շարունակ աշխատում են գարուն ու ամառ, աշուն ու ձմեռ, կատարելագործում են իրենց արտադրության գործիքները, ազնվացնում են իրենց ընտանի կենդանիների տեսակները, բարձրացնում են հողի վորակը և հողագործության համար բնությունից նորանոր հողամասեր են նվաճում: Սակայն արտադրողական ուժերի աճման ասպարեզում կատարվող ամենաաննշան փոփոխությունը նրանցից խլում ե այնքան յեռանդ ու ժամանակ և իր արտադրության աստիճանով հողի նոր շերտերի գոյացման դանդաղ ընթացքին այնքան ե նմանում, վոր անգամ հարյուր տարի ապրող գյուղացին իր տնտեսության ձևերի մեջ աչքի ընկնող և ուշադրության արժանի վորևե փոփոխություն չի նկատում:

Իր կտրած ամեն մի ծառով, իր ջարդած ամեն մի քարով, իր կառուցած ամեն մի խրճիթով, իր բահի ու քլունգի ամեն մի հարվածով, իր չուլթ ու գութանի վարած ամեն մի ակոսով, անտառում ու դաշտում կատարած վորսի ամեն մի դեպքով, անասնաբուծության ասպարեզում ունեցած ամեն մի հաջողությունով յեռադաշտյան հողագործության հերոս գյուղացին՝ մարդկային հասարակության պատմության այդ իսկական հերկուլեսը՝ անպայման փոփոխման ե յենթարկում և՛ իր բնական միջավայրը և՛ իր արտադրության գործիքները, դրա հետ զուգընթացաբար համապատասխան փոփոխման ե յենթարկում նաև իր հոգևոր աշխարհը: Սակայն նրա տնտեսական կյանքի ու հոգևոր աշխարհի զարգացումն անսահման դանդաղ

ե կատարվում, այնքան դանդաղ, վոր գյուղացին չի յել իմանում, թե իր հպարտության ու պարծանքի առարկա կազմող չուլթն ու գութանը, կովն ու յեզը, հավն ու բադը, բարձր տեսակի հացահատիկներն ու սև հողը դաժան պայմաններում կատարած իր սեփական աշխատանքի արդյունք ու ծնունդ են:

Հողագործության յեռադաշտյան յեղանակը գյուղացուն աշխատանքի ամենամեծ պահանջներ ե առաջադրում, սակայն թափած աշխատանքին ու յեռանդին համապատասխան արդյունք չի տալիս: Իր ուժերի յերեք քառորդը գյուղացին աննպատակահարմար կերպով ե ծախսում, այդ յերեք քառորդի փոխարեն բնությունից վարձատրություն չի ստանում: Նրա աշխատանքի արտադրողականությունն այնքան ցած ե, հողագործությունից և անասնապահությունից ստացած արդյունքն այնքան չնչին, վոր իր ընտանիքի ֆիզիքական գոյությունը գյուղացին մեծ դժվարությամբ ե պահպանում, իսկ մի գութան կամ մի զույգ յեզ ձեռք բերելը՝ նրա համար մի խոշոր պատմական յեղելություն ե: Գյուղացու նյութական ապահովության աստիճանը վորոշելու համար բավական ե մատնանշել այն հանրածանոթ յերևույթը, վոր իր յեզն ու կովը միջակ գյուղացին ավելի բարձր ե գնահատում, քան իր յերեխաներին և վոր առաջինների կորուստը նրան ավելի յե դժբախտացնում ու այդ պատճառով էլ նրան ավելի ցավ ե պատճառում, քան յերեխաների կորուստը: Յեռադաշտյան յեղանակի պայմաններում գյուղացին այնքան ցած տնտեսական վիճակում ե գտնվում, վոր կարծես վոչ թե տնտեսությունն ե նրա գոյության միջոցը, այլ ինքն ե իր աշխատանքով տնտեսության պահպանման միջոցը, և հետևապես՝ նրա արտադրության նպատակը վոչ թե ինքն ե, այլ տնտեսությունն ե:

Գյուղացու աշխատանքն այնքան վատ ե վարձատրվում, վոր հաճախ նա զուրկ ե նույնիսկ իր բանվորական ուժը պահպանելու հնարավորությունից և առանց կողմնակի աշխատանքների դիմելու իր գոյությունը պահպանել չի կարող: Իսկ իր բավականության համար ապրելը միջակ ու աղքատ գյուղացուն առհասարակ վիճակված չե, ինչքան վոր նա հողագործության ավելի բարձր յեղանակներ չի գործադրում, քան յեռադաշտյան յեղանակն ե: Ռուս գյուղացու գոյության պայմաններին նվիրած իր սքանչելի պատկերներից մեկում Գլեբ Ուսպենսկին չքավոր գյուղացու մի տիպ ե դուրս բերում, վորը նախանձում ե կալվածատիրոջ կովին: Վերջինը շատ ավելի բարձր նյութական պայմաններում ե ապրում, քան գյուղացին: Այդ պատճառով էլ նա կարողանում ե այնքան կաթ արտադրել, վոր տիրոջն ու իր հորթուկին ավելի կաթ ե տալիս, քան գյուղացու սովորական կովն ե ընդունակ: Բայց նախանձի ամբողջ առարկան կովի տված կաթը չե:

Գյուղացու զարմանքի ու նախանձի առարկա հանդիսացող ագնվացեղ կովը տիրոջն ու հորթուկին շատ կաթ է տալիս, սակայն նա տալիս է վոչ ամբողջ կաթը, ինչպես այդ գյուղացու կովն է անում: Ագնվացեղ կովն իր համար, իր սեփական սննդի, իր սեփական բավականության համար էլ կաթի մի վորոշ պաշար է պահում: Կալվածատիրոջ կառավարիչը բացատրում է գյուղացուն, վոր ագնվացեղ կովը կրթված, կուլտուրական կով է, վոր նա ինքն էլ բարձր պահանջներ ունի և այդ պահանջների բավարարման համար կաթի մի մասն իր համար է պահում: Նա թույլ չի տալիս, վոր իրենից կթեն կաթի վերջին կաթիլն ու քամեն: Նա իր սեփական կարիքների համար թողած կաթի պաշարով անդադար ուժեղացնում է իր որգանիզմը և իրեն այնքան լավ է զգում, վոր գլուխը միշտ բարձր է պահում և իր ադահով փնձակով, կարծես, հպարտանում և ուրախանում է:

Հողագործության յեռադաշտյան յեղանակին կառչած գյուղացին իր սովորական նիհար կովից վոչնչով չի տարբերվում: Նույնիսկ այն դեպքում, յերբ նա շահագործումից ազատ է, ինքն իր ձեռքում և իր ընտանիքի ձեռքում կթի կովի դեր է կատարում, վորովհետև արտադրության այդ յեղանակի պայմաններում յերբեք չի կարող այնքան արտադրել, վոր կալվածատիրոջ ագնվացեղ կովի նման վոչ միայն անհրաժեշտ սնունդ ունենա, այլև ինքն իրեն վորոշ շռայլություն թույլ տա: Գլեբ Ուսպենսկու նկարագրած նիհար կովը յեռադաշտյան հողագործությամբ զբաղվող անապահով գյուղացու սիմվոլն է, իսկ կալվածատիրոջ ագնվացեղ կովն այն գյուղացու սիմվոլը, վորը յեռադաշտյան յեղանակը թողել և հողագործության ավելի բարձր յեղանակներին է անցել: Յեռադաշտյան հողագործության պայմաններում գյուղացին չէ, վոր իշխում է հողի վրա, այլ ընդհակառակն՝ հողն է նրա վրա իշխում: «Հողի իշխանության» խնդիրը ռուս գրողներից և վոչ մեկի գործերում այնքան կլասիկ արտահայտություն չի ստացել, ինչքան Գլ. Ուսպենսկու գործերում: Վերջինս գտնում է, վոր գյուղացու տնտեսական, ընտանեկան, հասարակական ու բարոյական ամբողջ կյանքը գյուղատնտեսական աշխատանքի և հողի անբաժան իշխանությամբ է պայմանավորվում. գյուղացին, նախ քան կալվածատիրոջն ստրկանալը, արդեն ստրկացած է իր հողին:

Մարդկային հասարակության առաջխաղացման ամեն մի նոր քայլ նրանով է պայմանավորվում, վոր արտադրության ավելի կատարելագործված գործիքներից և առհասարակ արտադրողական նոր, ավելի բարձր ուժերից ոգտվելով, մարդը հնարավորություն է ստանում բնական հարստությունները առաջվանից ավելի մեծ չափով իրեն յենթարկել, ավելի մեծ չափով նրանց կերպարանափոխել, իր պահանջներին հարմարեցնել, իր պա-

հանջների բավարարմանը ծառայեցնել և իր իշխանությունը բնության վրա առաջվանից ավելի մեծ չափով տարածել: Յեռադաշտյան հողագործությունը, վերջինս հատուկ տարրական գործիքների ու մանր արտադրության շնորհիվ, բնության հզոր ուժերի հանդեպ գյուղացուն անոգնական է դարձնում, զրկելով նրան ամեն մի հնարավորությունից՝ իրեն շրջապատող բնական միջավայրում վորևէ խոշոր փոփոխություններ մտցնել, այդ միջավայրի ուժերն իրեն յենթարկել, նրանցից ավելի մեծ չափով ոգտվել, քան ներկայումս է ոգտվում: Գլ. Ուսպենսկին գտնում է, վոր անհնարին է ավելի վատ պայմաններ յերևակայել, քան գյուղացու աշխատանքի ներկայիս պայմաններն են:

Բավական չէ, վոր հողագործության այդ յեղանակը գյուղացուն մըշտական անապահով վիճակի յե դատապարտում և հողի ու բնության հանդեպ նրան այնքան անոգնական դարձնում, վոր այդ պայմաններում աշխատող բոլոր դարերի ու բոլոր յերկրների գյուղացիներն իրենց վերջին փրկությունն աղոթքի մեջ են տեսնում: Նրանք յենթակա յեն յեռապատիկ ստրկության—բնական ուժերին, իշխող դասակարգերին և յեկեղեցուն: Յեռադաշտյան հողագործությունը գյուղացու համար հղի յե և մի չորրորդ չարիքով, վորը նրան նույնպես ստրկության շղթաներով է փաթաթում և բնության ու շահագործող դասակարգերի հանդեպ է՛լ ավելի անզոր դարձնում: Այդ չորրորդ չարիքը՝ գյուղացու անգրագիտությունն ու տգիտությունն են, վորոնք վոչ թե մի պատահական յերևույթ, այլ յեռադաշտյան հողագործությունից բխող ու նրանով պայմանավորվող մի անհրաժեշտություն են: Յեռադաշտյան հողագործություն կազմակերպելու համար գրագիտություն և վորևէ կրթություն չի պահանջվում: Դրա հետ միաժամանակ հողագործության յեռադաշտյան յեղանակը գյուղացու տրամադրության տակ այնքան միջոց չի դնում, վոր նա իր յերեխաներին կարողանա գեթ տարրական կրթություն տալ: Գյուղատնտեսական կամ տեխնիքական կըրթության մասին խոսելն էլ ավելորդ է:

Տեխնիքապես անսահման հետամնաց, նյութապես անապահով, տգետ ու անգրագետ, բնական ու հասարակական ուժերի դեմ կռվելու գործում համարյա անզոր, այնքան անզոր, վոր այդ բոլոր ուժերը նրան ուղղակի ստրկացնում են—ահա յեռադաշտյան հողագործության պայմաններում աշխատող գյուղացու ծանր վիճակը: Յեթե այս բոլորի վրա ավելացնենք և այն, վոր ահագին տարածությունների վրա ցրված մանր տնտեսությունները գյուղացուն զրկում են մշտական ու լայն դասակարգային կազմակերպություններ ունենալու և հետևապես սեփական ուժերով ու սեփական պայքարի միջոցով շահագործումից ազատագրվելու հնարավորությունից—

ապա յեռադաշտյան հողագործության պայմաններում գյուղացու համար ըստեղծվող ողբերգական վիճակի պատկերը լրիվ կլինի: Գյուղացու վերաբերմամբ յեռադաշտյան հողագործությունն այն ուրույն դերն է կատարում, վորը շղթայված ու ժայռից կապած Պրոմեթեոսին անվերջ տանջում եր: Ինքը գյուղացին հողին շղթայված Պրոմեթեոս է:

Մեր դարի գիտական հողագործությունն ու տեխնիկան այդ շղթաները փշրելու և գյուղացուն բնության ու մարդկանց ստրկությունից ազատագրելու կատարյալ հնարավորություն են տալիս: Հողագործության յեռադաշտյան յեղանակի պաշտպաններ միայն հողատերերը և նախկին կալվածատերերը կարող են լինել, վորոնց իշխանության հիմքն ու աղբյուրը տնտեսության հենց այդ յեղանակն է: Ուրիշ պաշտպաններ յեռադաշտյան հողագործությունը չունի: Նրա կործանումը հնարավոր է և նա պետք է կործանվի: Մահվան դատավճիռն այնքան ավելի հեշտ է կատարել, վոր Խորհրդային իշխանությունը գյուղացուն կազմակերպելու ամենալայն հնարավորություններ է տալիս և յերկրի տնտեսական վերակառուցմանը զուգընթացաբար՝ վերացնում է նրա անգրագիտությունը, նրա շարքերում գյուղատնտեսական գիտելիքներ ու գյուղատնտեսական գործիքներ է տարածում, նրա տնտեսության մեջ աստիճանաբար արտադրության նոր յեղանակներ է մտցնում և գործարանային արդյունաբերության հետ միասին՝ նրա տնտեսության կազմակերպումն էլ սոցիալիզմի ուղիով է տանում:

Բայց նախ քան նրան թաղելը, ծանոթանանք նրա առաջացման պայմաններին և այն դերին, վոր պատմության մեջ կատարել է հողագործության այդ յեղանակը: Այդ դերն այնքան մեծ է, վոր յեռադաշտյան հողագործությունը մահվան դատապարտելուց և նրան անեծքի առարկա դարձնելուց հետո էլ անթույլատրելի յե մոռանալ այն մեծ ծառայությունները, վոր դարերի ընթացքում նա մատուցել է մարդկային հասարակությանը: Մեռնողը բարոյական իրավունք ունի պահանջելու, վոր նրա դագաղը գերեզման իջեցնելուց առաջ նրա պատմական դերի մասին անպայման խոսվի, վոր ժառանգների կողմից նրա բարի գործերը համապատասխան գնահատում ստանան:

II

1848 թվի հեղափոխությունից հետո գերազանցապես հակահեղափոխական դառնալով, բուրժուազիան մոռացության է տվել պատմական զարգացման դիալեկտիկական այն օրենքը (իր մեծ փիլիսոփաների ուժերով մշակված ու ձևակերպված), ըստ վորի՝ իր զարգացման մի վորոշ բարձր աստիճանի վրա բարիքը չարիքի յե վերածվում:

Պատմական այդ օրենքի նկատմամբ բացառություն չի կազմում նաև հողագործության յեռադաշտյան յեղանակը՝ թե՛ իր առաջացման և թե՛ իր զարգացման ու իր կործանման պայմաններով:

Յեռադաշտը վոչ հրաշագործության արդյունք է և վոչ յերկնային մի պարգև: Նրա առաջացումը մարդկային հասարակության տասնյակ հազարավոր տարիների համառ ու տաժանալից աշխատանքի ու կռվի հետևանք է: Հատկապես նոր ժողովուրդներից ամեն մեկը պետք է մի քանի հարյուր տարի յեվրոպական հողի վրա կռվեր ու աշխատեր, վորպեսզի իր տեխնիկան և իր բնական միջավայրը յեռադաշտի պահանջներին հարմարեցներ: Իրեն հատուկ տնտեսական ու կուլտուրական բոլոր արժեքներով յեվրոպական ժողովուրդների միջնադարը գլխավորապես յեռադաշտի մի դարաշրջան է յեղել՝ Ֆրանսիայում կամ Գերմանիայում վոչ պակաս չափով, քան Ռուսաստանում: Յեվ յեռադաշտի հիմնական պայմանները՝ սև հողը, գութանը և լծկան անասունները, միայն և միմիայն աշխատանքի արդյունք են, այն էլ հազարավոր տարիներ տևող համառ ու տաժանալից աշխատանքի արդյունք:

Վոչ վոք չի կարող վիճել, վոր կենդանիների ընտանեցումը հազարավոր տարիների գործ է: Դեռ այսօր էլ մեր ընտանի կենդանիների շարքում կան այնպիսիները, վորոնց վերջնականապես ընտանեցրած համարել չի կարելի: Այդպիսիների թվին են պատկանում գոմեշը և խոզը: Կասկածից դուրս է նաև, վոր իր առաջացման համար վոչ պակաս ժամանակ է պահանջել նաև գութանը, մինչև վոր հասարակ բրիչից և քարի ծայր ունեցող ճյուղավոր փայտից իր ներկա դրությանն է հասել: Սակայն, շատ-շատերին դեռ անհայտ է, վոր լծկան անասունների և գութանի հետ միասին՝ յերկրագնդի շատ մասերում աշխատանքի արդյունք է հանդիսանում նաև սև հողը: Ռուսաստանը օրինակ, վոր իր սև հողի մեծ տարածությունների շնորհիվ Յեվրոպայի շտեմարանն է դարձել, իր սև հողի ամբողջ տարածությունը բնությունից պատրաստի չի ստացել: Աշխատանքի ամենածանր պայմաններում, հարյուրավոր տարիների ընթացքում միլիոնավոր գյուղացիներ այդ հողը բնությունից իրենք են նվաճել: Նրանք կռվել են քամու և ավազի դեմ, չորացրել են ճահիճները, մաքրել են անտառապատ շրջանները, ջրի հոսանքը վորոշ հունի մեջ են դրել, ահագին տարածություններ ազատել են քարից, ծառերի արմատներից ու վնասակար բույսերից, և այդ ճանապարհով վորոշ շրջաններում հողագործության միջոցով առաջին անգամ սև հող են ստեղծել և նույն հողագործության միջոցով ամենուրեք սև հողի շերտն աստիճանաբար խորացրել, նրա վրա նոր ու նոր շերտեր են ավելացրել:

Ռուսական «деревня» բառը ռուս գյուղացու կատարած տիտանական կռվի ու աշխատանքի վկայություններից մեկն է: Դաշտի և գյուղի տեղը նա

խլում, նվաճում եր անտառից, «выдирал из-под леса»: Հյուսիս-արևելյան Ռուսաստանի սև հողի մասին հատուկ հայտնի յե, վոր իր տարածությամբ նա այնքան սակավ ե յեղել և այնքան բարակ շերտ ե ներկայացրել, վոր հարավային Ռուսաստանից այդ շրջանը տեղափոխված սլավոն ցեղերը հարկադրված եյին գութանից հրաժարվել և դաշտը չթով վարել, մինչև վոր այդտեղ էլ գութանի վարի համար պահանջվող սև հողի շերտ գոյացավ:

Այն հողը, վորը 300 տարի շարունակ կալվածատերերն իրենց սեփականություն եյին համարում, նախ քան նրանց ձեռքն անցնելը, հարյուրավոր տարիներ շարունակ գյուղացու սեփականություն ե կազմել և նրա ձեռքի, նրա մատների աշխատանքով ե ստեղծվել: Գյուղացու անասելի ծանր ու մեծ այդ աշխատանքն եր, վոր Մոսկովյան Ռուսաստանը հողագործության համար պիտանի դարձրեց, հողին բարձր արժեք տվեց և այդպիսով ունևոր և իշխող դասակարգերի համար հողը հրապուրիչ դարձրեց: 1917 թվին Ռուսաստանի գյուղացին հեղափոխության միջոցով յերկրորդ անգամ տիրացավ այն հողին, վորին մի անգամ արդեն, 14—16 դարերում, տիրացել եր աշխատանքի միջոցով և բնության դեմ մղած համառ կռվով:

Հողագործության յեռադաշտյան յեղանակը, ինչպես տեսանք, վոչ միայն տեխնիկայի և տնտեսական արտադրողական ուժերի զարգացման մի վորոշ բարձր աստիճան ե պահանջում, վորին հասնելու համար գյուղացիությունը հազարավոր ու տասնյակ հազարավոր տարիներ աշխատել և ստեղծագործել ե, այլև վորոշ տեսակի հող ե պահանջում, վորը շատ յերկրներում նույնպես միայն դարավոր աշխատանքով ե ձեռք բերվում:

Միլլիոնավոր մարդկանց աշխատանքի ուժով այդ շրջանում կատարած տնտեսական ու կուլտուրական առաջադիմությունն ինքնին բավական կլիներ՝ նրա զարգացման պրոցեսում ծնունդ առած յեռադաշտին մարդկային հասարակության պատմության մեջ ամենապատվավոր տեղերից մեկը հատկացնելու համար: Այդ շրջանում թափած մարդկային եներգիայի շնորհիվ ե, վոր վոչ միայն աճում ե հողագործության համար պիտանի հողերի տարածությունը, այլև վերջինիս ոգտագործումը յեռադաշտի պայմաններում շատ ավելի շահավետ ե դառնում, քան հողագործության նախորդ յեղանակների պայմաններում, յերբ 3–5 տարի հողը մշակելուց հետո նրա վրա 25–50 տարի այլևս ցանք չեյին անում: Հողագործության յեռադաշտյան յեղանակին անցնելով, ամեն մի ժողովուրդ իր դաշտի յերկու յերրորդը մշտապես ու կանոնավոր կերպով շահագործելու հնարավորություն ե ձեռք բերում և դրանով ժամանակի, մարդկային եներգիայի խնայողության և իր արտադրողական ուժերն աճեցնելու մի անսահման զորեղ միջոցի յե տիրանում:

Յեռադաշտը հարկավոր կլիներ մարդկային հասարակության ամենամեծ կուլտուրական նվաճումներից մեկը համարել նույնիսկ այն դեպքում, յեթե նրա պատմական դերը միայն վերոհիշյալով սահմանափակվեր: Սակայն, հողագործության այդ յեղանակը մարդկային հասարակությանն ուրիշ շատ ծառայություններ էլ ե մատուցել:

Յեռադաշտը վերջ ե դնում հողագործի թափառական կյանքին և նրան մի վորոշ հողամասի հետ կապելով, հարկադրում ե մշտական նստակեցություն հաստատել: Նստակյաց կյանքը մշտական բնակարանի հնարավորություն ե ստեղծում: Անշարժ բնակարան կառուցելով, մարդը կարողանում ե մշտապես կրակ ունենալ: Հացահատիկների և նրա աշխատանքի այլ արդյունքների պահպանման գործը մեծապես դյուրանում ե: Անշարժ բնակարանը, մթերքների անշարժ պահեստը և մշտական կրակը նպաստում են նրա սննդի բարելավման գործին: Այս բոլորի հետևանքով, ցրտից ու շոգից, քամուց ու փոշուց գյուղացին առաջվա չափ այլ ևս չի տուժում: Նա ֆիզիքապես կազդուրվում ե և մահացությունը յերեխաների շարքերում ուժեղ չափով նվազում ե:

Հողի վրա թափած աշխատանքն այժմ կորած համարել չի կարելի: Գյուղացին մշտապես միևնույն հողամասի հետ գործ ունի: Այդ պատճառով էլ հողը շատ ավելի մեծ խնամքով ե մաքրվում ու մշակվում, քան այդ թափառական հողագործության պայմաններում տեղի ուներ: Հողի մշակության ձևին ու չափին համապատասխանում ե նրա բերրիությունը: Կանոնավոր ու պլանաչափ այդ աշխատանքի պրոցեսում արտադրության գործիքները շատ ավելի արագ են կատարելագործվում, քան հողագործության նախորդ յեղանակների պայմաններում, յերբ պլանաչափ արտադրությունը հաճախ անհնարին եր և յերբ գործիքները տարբեր հողերի հարմարեցնելը մեծ դժվարություններ եր ներկայացնում, իսկ մոխրի կուլտուրայի շրջանում հողագործության ամենակարևոր գործիքները—չութը և գութանը—տարիներ շարունակ նույնիսկ ավելորդ եյին դառնում:

III

Յեռադաշտի հաստատումը մարդկային հասարակության պատմությանը հայտնի ամենախոշոր տնտեսական հեղաշրջումներից մեկն ե: Իսկ տնտեսական ամեն մի հեղաշրջում արդարացվում ե վոչ միայն նրանով, վոր արտադրողական ուժերի զարգացման մի վորոշ բարձր աստիճանի վրա նրա հաղթությունը հնարավոր, ոգտավետ և անհրաժեշտ ե դառնում, այսինքն՝ արդարացվում ե և վոչ միայն իր առաջացման տնտեսական ու հասարակական պայմանների հասունացումով, այլև իր հետապնդած նպատակների իրա-

կանացումով, այն է՝ արտադրողական ուժերի նոր աճումով: Առանց այս վերջին պայմանի տնտեսական հեղաշրջումը կորցնում է ամեն մի իմաստ: Այս տեսակետից խնդրին մոտենալով, գտնում ենք, վոր հողագործության յեռադաշտյան յեղանակի դարը պատմության ամենահարուստ շրջանների թվին է պատկանում և վոր իր հաստատումից հետո հողագործության այդ յեղանակը՝ թեև շատ դանդաղ կերպով՝ մեծապես առաջադիմել ու կատարելագործվել է:

Հողագործության նախորդ ձևերի հետ համեմատած, մշակման յենթակա հողի տարածությունն ամեն մի տնտեսության համար յեռադաշտի պայմաններում նշանավոր չափերով նվազում է: Յեռադաշտին անցնելն աննպատակահարմար ու վնասակար կլիներ, յեթե իր սահմանափակ հողամասից գյուղացին այժմ չկարողանար ավելի բարձր բերք հավաքել, քան առաջ եր հավաքում՝ այն էլ շատ ավելի լայն տարածություններից: Իսկ այդ նպատակին հասնել միայն արտադրողական ուժերի նոր աճումով կարելի յեր:

Յեռադաշտը սահմանափակ տարածություն և ինտենսիվ կուլտուրա յե պահանջում: Իսկ նրա հաջողության գլխավոր պայմանը և նրա արտադրության միջոցների ամենակարևոր ներկայացուցիչները գութանն ու անասուններն են: Միջնադարյան գութանն այսօր հողագործության ամենահետամնաց գործիքների շարքն է դասվում և գյուղացու անեծքն է դարձել, իսկ տրակտորի գործածությունը լծկան անասունների աշխատանքը տարեցտարի ավելորդ է դարձնում: Բավական է ասել, վոր գյուղատնտեսական արտադրության և փոխադրության միջոցների մեխանիզացիայի հետևանքով վերջին տարիների ընթացքում ձիերի քանակն Ամերիկայի Միացյալ-Նահանգներում նվազել է ավելի քան յերկու միլիոնով: Սակայն, պարզ է, վոր հին Յեգիպտոսի կամ միջնադարյան Յեվրոպայի գութանի շրջանին 20-րդ դարի ամերիկական մասշտաբով մոտենալ չենք կարող: Յերկաթի արտադրության և նրա մշակույթի հետ կապված դժվարությունները գութանի գինն այնքան եյին բարձրացնում, վոր նա մատչելի յեր դառնում միայն գյուղացիների փոքրամասնությանը: Հայտնի յե, վոր դեռ այսօր էլ հետամնաց յերկրներում, վորտեղ յեռադաշտն է իշխում, գյուղացիության մեծամասնությունը սեփական գութանից զուրկ է:

Յեռադաշտը գութանի կուլտուրա յե: Բայց գութանի գործադրումն այն ժամանակ միայն լծկան անասունների ուժով եր հնարավոր, իսկ մինչև գութանի տարածումը՝ լծկան անասուններ շատ քիչ կային և յեղածներն էլ վոչ թե հողագործական արտադրության մեջ եյին աշխատում, այլ փոխադրության գործին եյին ծառայում:

Գութանը և լծկան անասունները յեռադաշտի ամենակարևոր կուլտուրական նվաճումներն են: Սակայն, յեռադաշտի պատմական մեծ դերն այդքանով էլ չի սահմանափակվում: Յեռադաշտի շրջանին մարդկությունը պարտական է վոչ միայն լծկան անասուններով, այլև կթան անասուններով: Վայրի կովն այնքան քիչ կաթ է արտադրում, վոր հազիվ իր հորթուկին է կերակրում:: Իրենց ընտանեցման առաջին շրջանում կովը կամ վոչխարը միայն մսացու կենդանիներ են յեղել: Ժամանակի ընթացքում, նստակյաց կյանքի հաստատմանը զուգընթացաբար, նրանց արտադրած կաթի քանակն սկսում է աճել: Այդ դրությունը պարզելու համար բավական է նկատի առնել այն տարբերությունը, վոր կաթի քանակի նկատմամբ գոյություն ունի մեր պապական կովի և ազնվացեղ յեվրոպական կովի միջև: Իսկ իբրև այդ դրության պատմական ապացույց հին սլավոնների որինակը կարող է ծառայել, վորոնց վերաբերմամբ հայտնի յե, վոր տնային կենդանիներ համարյա չեն ունեցել, իսկ կթան անասուններն այնքան հազվագյուտ են յեղել, վոր՝ ըստ «Русская Правда» հայտնի որենսդրքի՝ կաթ գողացողը նույնքան տուգանք է վճարում, ինչքան և ձիու քուռակը գողացողը: Պատմական մի շարք տվյալներ վկայում են այն մասին, վոր իրենց գոյության հնադարյան շրջանում հնդկա-յեվրոպական ցեղերը կաթնատնտեսությանը ծանոթ չեն յեղել, թեև նրանցից մի քանիսը անասնապահությամբ են զբաղվելիս յեղել: Հայտնի յեն վորոշ պատմական ցեղեր, վորոնք կաթ ստանալու նպատակով կենդանուն սպանելիս են յեղել՝ նրա կուրծը պատռելով: Յեղել են և ցեղեր, վորոնք՝ հորթերի որինակին հետևելով, կաթը կուրծից անմիջապես ծծել են, մինչև վոր դարեր հետո կթելու արվեստն են հայտնաբերել:

Մեզ զբաղեցնող շրջանում անասնապահությունը շատ ժողովուրդների մեջ նոր և միայն առաջանում կամ բոլորովին նոր հիմունքների վրա յե դրվում: Այդ շրջանումն է, վոր անասունները յերեք տեսակի յեն բաժանվում՝ մսացու, կթան և լծկան անասուններ: Գութանը և յեռադաշտին հատուկ անասնապահությունը բարձրացնում են համապատասխան ժողովուրդների նյութական ապահովության աստիճանը և նրանց առաջվանից շատ ավելի առատ ու շատ ավելի այլազան սնունդ են մատակարարում: Համապատասխան չափով բարելավվում են նաև տնային կենդանիների կերը և նրանց գոյության ընդհանուր պայմանները: Տնային կենդանիները կիսանստակյաց են դառնում:

Աշխատանքի արտադրողականության աճման բնագավառում գութանը և լծկան անասուններն ամենամեծ հեղաշրջում կատարեցին: Բայց մերկ ձեռքերով գութան չեն արտադրում: Գութանի գոյությունն արհեստների համապատասխան բարձր զարգացման ապացույց է: Հին Յեգիպտոսում կամ

Յեվրոպայի միջին դարերում չէ, որ արհեստները ծագում են: Նրանց պատմությունը նույնքան հին է, ինչքան և մարդկային հասարակության պատմությունը, նույնքան հին, ինչքան և մեր նյութական կյանքի արտադրությունը: Քարից կամ փայտից ամենապրիմիտիվ գործիքներ պատրաստող նախնական մարդն արդեն արհեստավոր էր: Սակայն, իր գործիքներով և իր աշխատանքի արտադրողականության աստիճանով նախնադարյան այդ արհեստավորը յեռադաշտի շրջանի արհեստավորին նույնքան էր զիջում, ինչքան վերջինս զիջում է այժմյան վարակյալ մի փականագործի կամ խառատի: Տասնյակ հազարավոր տարիների ընթացքում արհեստավորի արտադրության գործիքներն աշխատանքի պրոցեսում այնքան էյին կատարելագործվել, որ այժմ նա ընդունակ էր գութան և գյուղատնտեսական այլ գործիքներ պատրաստել, ընդունակ էր սայլեր և ամուր բնակարաններ կառուցել, ընդունակ էր ընտիր գեղարվեստական գործեր ստեղծել: Այդ նույն շրջանում է, որ առաջանում է ջրաղացը՝ մեքենայի այդ նախատիպը, առաջանում է, որպես հետևանք թե արհեստների զարգացման և թե բերքի աճման: Զարգացած արհեստները և ջրաղացը գյուղացուն հնարավորություն են տալիս հողագործության և անասնապահության նյութերը վերամշակել, առաջվանից ավելի մեծ չափով օգտագործել, ավելի մեծ չափով իր շահերին ծառայեցնել: Պատմության այս շրջանում է նույնպես, որ առաջանում է խմոր հունցելու և հաց թխելու ներկայումս մեզ հայտնի և ամբողջ աշխարհում գործադրվող արվեստը:

Աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության բոլոր ճյուղերում այնքան է բարձրանում, հավելյալ արդյունքն այնքան է աճում և գյուղատնտեսական ամբողջ արտադրության համար արհեստներն այնքան անհրաժեշտ են դառնում, որ գյուղատնտեսական արտադրության համար ամենակարևոր արհեստները գյուղատնտեսությունից աստիճանաբար զատվում են և տնտեսության նոր ճյուղեր են կազմում: Ամեն մի գյուղացի առաջվա նման այլ ևս գործիքներ չի պատրաստում, այլ ևս յերկանքով հացահատիկներ չի աղում: Ամեն մի գյուղացի չի կարող սեփական դարբնոց բացել, չի կարող սեփական ջրաղաց ունենալ: Այսպիսով, աշխատանքի հասարակական բաժանում է առաջանում: Իր կողմից, վերջինը զարկ է տալիս թե՛ աշխատանքի արտադրողականության աճմանը և թե՛ արհեստների զարգացմանը:

Յեռադաշտի շրջանում գյուղացին դադարում է բնության կատարյալ ստրուկ լինելուց: Իր իշխանությունը բնության հանդեպ նա այնքան է ուժեղացնում, որ ընդունակ է դառնում հողի, կենդանիների և ջրի ուժն իրեն ստրկացնել, իր շահերին ծառայեցնել, ընդունակ է դառնում բնական

միջավայրն իր տնտեսության պահանջներին հարմարեցնել և պլանաչափ տնտեսություն ստեղծել:

Աշխատանքի արտադրողականության աճումը և բնության հանդեպ տարած հաղթությունները մեծապես նպաստում են բնակչության աճմանը:

Միջնադարյան հասարակության մեջ գյուղացին նյութական կյանքի գլխավոր արտադրողն է, իսկ նրա առաջին շրջանում՝ մինչև արհեստների առանձնացումը և տարածումը—միակ արտադրողն է: Իր աշխատանքով նա սնունդ է ստեղծում թե՛ իր և թե՛ ամբողջ հասարակության համար, սնունդ է ստեղծում նաև իր անասունների համար, հում նյութ է մատակարարում արհեստավորին, ապրանք է հասցնում վաճառականին, շահագործող դասակարգերի իշխանության, նրանց պետության պատվանդանն է հանդիսանում: Կյանքի բոլոր ասպարեզներում նա միակ կամ գլխավոր ստեղծագործող ուժն է: Իր անդուլ աշխատանքով և բնության դեմ մղած իր համառ կռվով նա հողագործության նոր յեղանակ և նոր ձևի անասնապահություն, նոր արհեստներ ու արվեստներ է ստեղծում, նյութական ու բարոյական կուլտուրայի մի նոր շենք է կառուցում, նոր հասարակական ու պետական կյանքի հիմքեր է դնում: Ամենուրեք նա հանդես է գալիս, որպես ստեղծագործող ու շինարար ուժ: Ի զուր չէ, որ իշխող դասակարգերը՝ աշխատանքից խուսափող և աշխատանքն իրենց համար վիրավորական ու անպատվաբեր համարող պորտաբույծների այդ միջնադարյան փոհմակները՝ գյուղացուն «շինական»*) անունն են տվել: Պետք է յենթադրել, որ գյուղացուն, որպես աշխատանքի ներկայացուցչի, որպես շինականի, նրանք ձգտել են այդ կոչումով ստորացնել ու խայթել, սակայն իրենց հաշիվներում կոպիտ սխալվել են: Անաչառ պատմությունն այսօր գալիս է ասելու, որ գյուղացին իսկապես շինարար է, որ պատմական մի ամբողջ շրջան, մի մեծ կուլտուրա նրա շինարարության, նրա ստեղծագործական աշխատանքի արդյունք է յեղել:

---

*) Գերմանական «Բաուեր» (գյուղացի) բառը նույնպես շինական է նշանակում:

Բ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՌԱԴԱՇՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ

I

Յեռադաշտի առաջացումը պատմական մի յերկարատև շրջան է յենթադրում, վորի ընթացքում գյուղացիական մասսան՝ զուրկ քիչ թե շատ կատարելագործված գործիքներից և համապատասխան գիտելիքներից, քայլ առ քայլ բնությունից հող է նվաճել, վերջինն իր արտադրության համար պիտանի դարձրել, և աշխատանքի պրոցեսում իր գործիքներն ու արտադրության յեղանակը կատարելագործելով, մարդկային հասարակության կուլտուրական զարգացման ամենահարուստ շրջաններից մեկի հիմքն է դրել: Հողագործական յեռադաշտյան յեղանակը վոչ միայն տեխնիկայի և առհասարակ արտադրողական ուժերի զարգացման մի վորոշ աստիճան է պահանջում, վորին հասնելու համար մարդկությունը տասնյակ հազարավոր տարիներ աշխատել ու ստեղծագործել եր հարկավոր, այլև վորոշ տեսակի հող է պահանջում, վորը վոչ ամենուրեք, բայց շատ յերկրներում, ինչպես օրինակ Գերմանիայում կամ հյուսիս—արևելյան Ռուսաստանում, նույնպես միայն դարավոր աշխատանքով է ձեռք բերվում: Հողի դերը յերկրագործության մեջ նրանով չի սահմանափակվում, վոր նա յերկրագործության բազան և անհրաժեշտ պայմանն է: Հողը յերկրագործության այն ելեմենտն է, վորը միաժամանակ տնտեսության այդ ճյուղի ամենակարևոր արտադրողական ուժն է ներկայացնում: Յերկրագործության մեջ հողը յուրահատուկ մի մեքենա յե:

Նստակյաց հողագործության առաջացման և կազմակերպման հետ կապված դժվարությունների մասին մեզ հարուստ նյութ է տալիս ժողովրդական վեպը: Վերջինս պարզ ապացույց է այն բանի, վոր նստակյաց հողագործության անցնելու շրջանում թե՛ հին աշխարհի ժողովուրդները և թե՛ Յեվրոպայի այժմյան ժողովուրդները բնական ու հասարակական ամենամեծ արգելքների յեն հանդիպել, վորոնց հաղթահարումը նրանցից կռվի ու աշխատանքի հերոսական ջանքեր է պահանջել և սովորական մահկանացուների ուժերից վեր մի

20453-59

գործ է համարվել: Հերկուլեսը, Միկուլա Սելյանինովիչը և մի շարք այլ վիպական հերոսներ իրենց անձնավորության մեջ մարմնացնում են համապատասխան ժողովուրդների դարեր տևած այդ մասսայական, այդ կոլլեկտիվ աշխատանքը: Ինչպես հայտնի յե, նստակյաց հողագործության անցնելու այդ նույն շրջանին է վերաբերում նաև Աբելի սպանության մասին մեզ ժառանգություն թողած ավետարանական ավանդությունը: Ժողովրդական վեպը նստակյաց հողագործության բարձր կուլտուրական արժեքի անվիճելի ապացույցներից մեկն է:

Յեռադաշտը բազմաթիվ ժողովուրդների մասսայական կռվի ու աշխատանքի արդյունք է, միայն նման կռվի ու աշխատանքի հետևանքով կարող եր առաջանալ և իր զարգացման անհրաժեշտ պայմաններ ստեղծել: Ինքն ըստինքյան պարզ է, վոր այդ աշխատանքի ու կռվի հաջողություններն առանձին անհատների, բուրժուական գիտության դուրգուրանքի առարկա կազմող՝ ռոբինզոնների գործ լինել չեն կարող և վոր նրանք—այդ հաջողությունները—այս կամ այն ձևի հասարակական կազմակերպություններ են յենթադրում:

Մարդկային հասարակության հիմքն ու նպատակը մարդկանց տնտեսական շահերի պաշտպանությունը և առաջին հերթին՝ նրանց ֆիզիքական ու ֆիզիոլոգիական պահանջների բավարարումն է: Առանց տնտեսության չկա և հասարակություն: Ինքը մարդն էլ կենդանիների թագավորությունից անջատվել, իր մարդկային կերպարանքն է ընդունել աշխատանքի պրոցեսում, այսինքն՝ տնտեսություն կազմակերպելով: Իսկ մարդկային հասարակության ամեն մի ձև նրանով է պայմանավորվում, թե տվյալ դարում ու տվյալ յերկրում տնտեսություն կազմակերպելու համար իրենց ուժերը մարդիկ ինչպես են միացնում, միմիանց մեջ ինչ հարաբերություններ են ստեղծում՝ համապատասխան արտադրողական ուժերի զարգացման այն աստիճանին, վորին այդ ժողովուրդը հասել է: Հասարակության ամեն մի տվյալ ձև վոչ թե ինքնանպատակ, վոչ թե մի ինքնաբավ մեծություն է, այլ տնտեսության կազմակերպման և նրա առաջխաղացման մի միջոց, մի գործիք է:

Հողագործության յեռադաշտյան յեղանակից բղխող ու նրա վրա հանգչող ընտանեկան, հասարակական ու պետական ձևերն էլ ամբողջապես յեռադաշտի շրջանին հատուկ արտադրողական ուժերով, նրանց օգտագործման յեղանակներով են պայմանավորվում: Իսկ այդ շրջանում իշխող արտադրողական ուժերն են՝ գութանը կամ արորը, լծկան անասունները, այս կամ այն վորակի, ավելի կամ պակաս չափով մշակման ու պարարտացման յենթակա հողը և վերջապես գյուղացու բանվորական ույժը: Արտադրողական այդ ուժերն են, վոր գյուղացուն հրամայողաբար թելադրում են վերջնականապես հրաժեշտ տալ սեփականության հասարակական ձևերի և արտադրության

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ

կոլեկտիվ յեղանակների այն մնացորդներին, վոր նա ժառանգել եր այսպես կոչվող նախնադարյան շրջանից: Հիշյալ ուժերի հիման վրա հասարակական տնտեսության կազմակերպելն ե՛ անշահավետ ու աննպատակահարմար ե և՛ ահագին տեխնիքական դժվարություններ ե ներկայացնում: Նրանց քիչ թե շատ լիակատար օգտագործումը և նրանց զարգացումը արտադրության միջոցների մասնավոր սեփականության և մանր արտադրության պայմաններում՝ ավելի յե ապահովվում:

Յեռադաշտի և գութանի շրջանում մանր գյուղատնտեսական արտադրությունը վոչ միայն իշխող ե հանդիսանում, այլև արտադրության միակ յեղանակն ե: Արտադրում ե վոչ թե հասարակությունը, այլ անհատը՝ իր ընտանիքի անդամների հետ միասին ու նրանց օգնությամբ: Մանր արտադրությունը և նրա շուրջը համախմբված ընտանիքը յեռադաշտի շրջանի տնտեսական ու հասարակական հիմնական բջիջներն են, այդ շրջանի զարգացման ու հարատևման աղբյուրը և նրա իշխող դասակարգերի պատվանդանը: Գյուղացիական նույն մանր տնտեսությունն իր ժամանակի արհեստների և առևտրի աղբյուրը, նրանց գոյության ու զարգացման հիմքն ե: Գյուղական հասարակություն, յերկրի ամբողջ բնակչության մեջ տիրող դասակարգային հարաբերություններ, պետական կարգ, դատաիրավական ու բարոյական գաղափարներ, գիտություն ու կրոն—ամեն ինչ գյուղացիական մանր տնտեսության շուրջն ե պտույտ գալիս, նրա արտադրողական ուժերի զարգացման տվյալ մակարդակով, նրանց զարգացման տեմպով և ուղիներով ե պայմանավորվում: Գյուղացիական մանր տնտեսությունն այդ շրջանի տնտեսական-հասարակական ամբողջ կյանքի կենտրոնն ու առանցքն ե նույն չափով, ինչ չափով վոր մինչ Կոպեռնիկոսը յերկրագունդն ամբողջ տիեզերքի կենտրոնն ու առանցքն եր համարվում:

Իր նախկին դրության հետ համեմատած, յեռադաշտի և գութանի շրջանում գյուղացին մեծապես առաջադիմում, իր համար գոյության շատ ավելի ապահով, շատ ավելի նպաստավոր պայմաններ ե ստեղծում: Յեվրոպայի գյուղատնտեսական կուլտուրայի ասպարեզում, մինչև 18-րդ դարի վերջը յեռադաշտը զարգացման բարձրագույն աստիճանն ե յեղել: Դրա հետ միաժամանակ, յեռադաշտը դարեր շարունակ Յեվրոպայի ամբողջ հասարակության տնտեսական ու կուլտուրական զարգացման հիմք ե հանդիսացել: Սակայն, այն նույն յեռադաշտը և նրա վրա հանգչող մանր գյուղատնտեսական արտադրությունը, վորոնց պայմաններում գյուղացին բարձրացրեց իր աշխատանքի արտադրողականությունը, պլանաչափ տնտեսության կազմակերպելու հնարավորություն ձեռք բերեց, նյութապես շոշափելի չափով ապահովվեց և բնության հանդեպ ամուր դիրքեր գրավեց՝ գյուղատնտեսության

և գյուղացիության խոշոր պրոգրեսի այդ նույն գործոնները հետագայում գյուղացուն դժբաղդացրին, նրա թալանի, նրա ստրկացման պայմաններ ստեղծեցին:

Յեռադաշտը և նրան հատուկ արտադրողական ուժերի վրա կառուցված մանր գյուղատնտեսական արտադրությունը վոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ եյին դարձնում թե՛ ավատական (ֆեոդալական) կարգերը և թե՛ շատ դեպքերում՝ նույն իսկ ճորտությունը: Ահագին տարածությունների վրա ցրված մանր գյուղացիական տնտեսությունները, հաղորդակցության ճանապարհների և միջոցների բացակայությունը, գյուղացիների անապահով նյութական դրությունը և նրանց ընդհանուր անգրագիտությունը պայմաններ եյին ստեղծում, վորոնք գյուղացուն զրկում եյին մասսայական կազմակերպություններ առաջացնելու և սեփական դասակարգի իշխանության հաստատելու ամեն մի հնարավորությունից: Իր դաշտի բերքի և իր աշխատանքի այլ արդյունքների շնորհիվ՝ ամեն տեսակի թալանչիների համար գյուղացին գրավիչ եր դառնում: Սեփական ուժերով իր գույքը պաշտպանել նա կատարելապես անզոր եր, քանի վոր վոչ կազմակերպված եր և վոչ զինվելու միջոցներ ուներ: Նրա դրությունը թշնամիների հանդեպ դեռ ավելի յեր ծանրանում նրանով, վոր նրա արտադրությունը սեզոնային եր, վոր տարվա վորոշ ամիսներին հողից կտրվել նա առհասարակ չեր կարող: Զինված թալանչիների ամեն մի փոքրաթիվ խումբ ընդունակ եր իրեն յենթարկել գյուղացիական ամբողջ շրջաններ: Գյուղացիների թալանը և նվաճումը հատկապես դյուրանում եյին դաշտային աշխատանքների ժամանակ, յերբ նրանք թողնում եյին գյուղը և իրենց հողամասերում ցաք ու ցրիվ եյին գալիս: Ինչքան գյուղացին ավելի յեր աշխատում, ինչքան իր հողն ավելի յեր պարարտացնում, ինչքան ավելի բերք եր ստանում, այնքան էլ համապատասխան չափով ավելի յեր աճում թալանի ու ստրկացման վտանգը:

Իրենց ֆիզիքական գոյությունը փրկելու և իրենց տնտեսությունը վերջնական քայքայումից ապահովագրելու համար գյուղացիները վորոշ զինված խմբերի եյին յենթարկվում, նրանց հետ համաձայնություն եյին կնքում, պարտավորվելով տարեց-տարի նրանց վճարել, միայն թե ուրիշ զինված խմբերի հարձակումներից իրենց ազատ պահեն, համապատասխան շրջանի պաշտպանությունն իրենց վրա վերցնեն: Գյուղացին մշակել եր հողը, կատարելագործել եր գործիքները, և նրա համար ավելի շահավետ եր նստակյաց հողագործության կազմակերպել ու իր աշխատանքի արդյունքի մի մասը թալանչիներին հատկացնել, քան հրաժարվել մշակած հողից ու գութանից և նորից հողագործության պրիմիտիվ յեղանակներին դիմել: Ինչպես տեսնում ենք, թալանի և շահագործման մեջ սկզբունքային տարբերություն չկա: Ծա-

հագործումը կանոնավոր հիմունքների վրա դրված և տասնյակ ու հարյուրավոր տարիների համար կազմակերպված թալան է: Աշխատանքի արտադրողականության այն աստիճանը, որին հասնելով գյուղացին կարողացավ յեռադաշտ կազմակերպել և նստակյաց կյանք վարել, գյուղացուն մեխեց հողին, գյուղացուն սարկացրեց հողին: Նախ քան մարդկանց սարկանալը, յեռադաշտի գյուղացին բնությանն եր սարկացել: Բարիքը նրա համար չարիքի վերածվեց:

Արտադրողական ուժերի զարգացման համեմատաբար բարձր աստիճանի վրա—յեռադաշտի շրջանում—գյուղացին սարկության կրկնակի շղթաներ և կրում—սարկանում ե և՛ բնությանը և՛ մարդկանց: Աստիճանաբար, դարերի ընթացքում, նրա այդ սարկացումը դեռ ավելի յե աճում՝ ճորտության տարածման հետ միասին: Յեռադաշտի համար անհրաժեշտ արտադրողական ուժերն արդեն գոյություն ունեյին, սակայն միջոցների բացակայության պատճառով գյուղացիների մեծամասնությունը նրանցից օգտվել չեր կարողանում: Հայտնի յե, թե նույն իսկ այսօր, 20-րդ դարում, չքավոր ու միջակ գյուղացու համար ինչքան դժվար ե մի զույգ յեզը կամ մի գութան գնել: Յեռադաշտն անխուսափելիորեն պարբերական քաղցի հետ ե կապված, որովհետև հողի արհեստական պարարտացումը բացակայում ե, և հոգնած, ուժասպառ հողն ամեն 3, 4 թե 5 տարուց հետո պարբերաբար բերք չի տալիս: Հողագործության յեռադաշտյան յեղանակն ել, ինչպես տեսնում ենք, իր առանձնահատուկ պարբերական ճգնաժամերն ունի, որոնք, ինչպես և արդյունաբերական ճգնաժամները, արտադրության համապատասխան յեղանակից են բղխում, արտադրողական ուժերի զարգացման ու աճման համապատասխան ուղիներով են պայմանավորվում: Քաղցի տարիներին դեռ ավելի յեր աճում այն գյուղացիների թիվը, որոնք անկարող եյին սեփական միջոցներով չե թե մի զույգ լծկան անասուն ձեռք բերել, այլ մինչ հետևյալ բերքը իրենց ֆիզիքական գոյությունը պահպանել:

II

Ավատական կարգերը պատմության այդ շրջանի գլխավոր չարիքը չեն: Այդ կարգերը հաստատվելուց հետո ել գյուղացիության ճնշող մեծամասնությունը շատ յերկրներում և դարեր շարունակ սարկության և ճորտության շղթաներից ազատ ե լինում: Յեռադաշտի հաստատմանը և տարածմանը ֆեոդալիզմը դեռ ավելի յե զարկ տալիս, թափառական անտեսությունը սահմանափակելով և արգելելով: Սակայն, յեռադաշտ կազմակերպելու համար պահանջվող արտադրության միջոցներից գյուղացիության մեծամասնությունը զուրկ եր: Յեռադաշտի մեծ առավելությունները թելադրում եյին այդ շրջանի գյուղացիներին վաճառականներից և կալվածատերերից վարկ վերցնել փողով, սերմացվով, լծկան անասուններով և գործիքներով: Գյուղացիների

մեծամասնության համար պարտքի վերադարձը սովորաբար անհնարին եր լինում, մանավանդ յեթե նրանք լծկան անասուններ եյին առցել: Վարկի ժամկետն անցնելուց հետո անվճարունակ պարտապանը պատմության այդ շրջանում, որպես օրենք, ճորտանում եր պարտատիրոջը, հաճախ իր հետ միասին կնոջն ու յերեխաներին ել ճորտ հայտարարելով: «Ճորտատիրական իրավունքի առաջացումը Ռուսաստանում» իր հոդվածում հռչակավոր ռուս պատմագիր Վ. Կլյուչևսկին պարտավորության գրի մի օրինակ ե բերում, որը տրված ե պարտատիրոջը՝ վերջինից պարտք վերցրած աղատ գյուղացու կողմից, 1597 թվին: Գյուղացին ստորագրություն ե տալիս այն մասին, որ ինքը պարտավորվում ե՝

„за рост у государя своего служити во дворе по вся дни, а полягут деньги по сроце, и мне за росту государя своего потому же служити по вся дни“. —„А кои нас заимщиков в лицах, на том деньги и служба,“ ավելացնում եր չքավոր գյուղացին՝ իր ընտանիքի անդամների հետ միասին:

Մինչև պարտքի վճարման ժամկետը գյուղացին պարտավորվում ե ծառայել իր տիրոջը և այդ ծառայությամբ պարտքի շահն ե վճարում („за рост у государя своего служити“): Պարզ ե, որ նման պայմաններում պարտքի գումարի վճարումը պարտապանների 80 թե 90 տոկոսի համար անհնարին պետք ե լիներ: Բաց թողած վարկը հետ ստանալում պարտատերն առհասարակ չահագրգռված չեր, որովհետև բնակչության սակավության պատճառով բանվոր ձարելն այդ շրջանում չափազանց դժվար եր, այն ինչ անվճարունակ պարտապանն, իր ընտանիքի անդամների հետ միասին, իրենց աշխատանքով թե ստացած վարկի յեռապատիկն ու տասնապատիկն եյին վերադարձնում և թե բավարարում եյին բանվորական ուժի այն պահանջը, որն ուներ պարտատերը:

1649 թ. ընդունած հռչակավոր ռուսական օրենսգիրքը՝ Уложение царя Алексея Михайловича, վերջնականապես ձևակերպում և օրինականացնում ե ճորտությունը Ռուսաստանում: 16-րդ դարի յերկրորդ կեսում և 17-րդ դարի սկզբում ավատական կարգերի և բոյարների հանդեպ հաղթություն տարած նոր հասարակական ուժերը—կալվածատիրական ազնվականությունը և առևտրական դասակարգը—գյուղացիության ճորտացումը մաքսիմալ չափերի հասցրին, այդ նպատակի իրականացման համար կանգ չառնելով նույնիսկ քաղցի տարիների չահագործման առաջ: Այդ տեսակետից հատկապես բնորոշ ե օրենսգրքի XX գլխի հոդված 43, որտեղ կարդում ենք.

„А будет кто в голодное время сам себя с женою или сына или дочь отдаст кому в работу за прокорм, и записи на себя в том даст, или в записи напишет на себя и на детей своих заемные деньги, и по той записи жити им у того, кому они в работу дадутся до тех мест, покаместа они окупятся или отработаются."

Հիշյալ օրենսգիրքը օրինական ույժ է տալիս նաև այն ստրկական հարաբերություններին, վորոնք դարերի ընթացքում ստեղծվել էին նահապետական ընտանիքում: Կինը և յերեխաները տղամարդու օրինական սեփականություն են հայտարարվում: Ըստ կրոնական սուրբ օրենքների, ասված է օրենսգրքի վերոհիշյալ գլխի 62-րդ հոդվածում, «արգելվում է կնոջը ամուսնուց բաժանել» („жены с мужем розводити не велено"): Ընտանիքի բոլոր անդամների ստրկացումը տղամարդուն շահավետ էր թե տնտեսության տեր հանդիսացող գյուղացուն և թե իշխող դասակարգերին:

Ճորտ գյուղացուն կարելի յե վաճառել, կարելի յե մի ուրիշին ընծայել, կարելի յե աղջկա օժիտի մեջ մտցնել: Վորպեսզի այդ բոլոր գործառնությունների ընթացքում և գյուղացիների փախուստի դեպքում նրանց շուրջը վեճեր չծագեն և տերն իր ստրկին հեշտությամբ ճանաչի, օրենսգիրքը կարգադրում է ճորտերին ցուցակագրել, մանրամասնելով նրանց նշանները.— „для таких споров холопьи приметы описывати в кабалах имянно, чтобы всякой человек холопу своему приметы ведал". (գլուխ XX, հոդ. 76):

Գյուղացիական մասսայի ճորտացման փաստին հանդիպում ենք հին և նոր աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների մոտ՝ նրանցից ամեն մեկի պատմության՝ այսպես կոչված՝ միջին դարերում: Ճորտությունը հատուկ է միայն գյուղատնտեսական ժողովուրդներին և բացառապես գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման այն աստիճանի վրա, վորը յեռադաշտի շրջանին է համապատասխանում: Իր ժամանակին, ճորտատիրական կարգերն ամեն մի յերկրի համար տնտեսական անհրաժեշտություն են ներկայացրել, շահավետ լինելով վոչ միայն իշխող դասակարգի, այլև իրեն՝ գյուղացիության համար: Գյուղացիությունը ճորտացավ իր համար աննկատելի կերպով, յերբ պարտքի վճարման անհնարինությունը մասսայական բնույթ ընդունեց: Սակայն, ճորտության լծի ծանրությունը պարզվելուց հետո յեվս հարյուրավոր և հազարավոր գյուղացիներ՝ քաղցից ստիպված, ճորտանում էին, միայն թե սեփական տնտեսություն կազմակերպելու հնարավորություն ստանան կամ ստրկացման գնով գեթ իրենց ֆիզիքական գոյությունը փրկեն: Մեզ զբաղեցնող պատմական շրջանում քաղցած մարդն ուրիշ յելք չուներ:

Մեր դարի մարդկանց համար ճորտացող գյուղացու հոգեբանությունը հասկանալ նույնքան դժվար է, ինչքան սոցիալիստական հասարակության

հաստատվելուց մի հարյուր տարի հետո դժվար կլինի հասկանալ, թե կապիտալի իշխանության շրջանում քաղաքականապես ազատ բանվորներն իրենց «հոժար կամքով» ինչպես կարող էին կապիտալիստներին ստրկանալ կամ՝ ըստ 18-րդ դարի խոշորագույն տնտեսագետներից մեկի*) արտահայտության՝ ինչպես կարող էին «հարուստներին ծնկաչոք աղաչել, նրանց հարստացնելու բարեհաճ թույլտվություն ստանալու համար»: Քաղցը հանաքներ չի սիրում: «Անգամ ամենախմատուն ձիներին քաղցը դեպի կարթիկն է քշում», ասում է Գյոթեն:

Արտադրության այն ուժերն ու պայմանները, վորոնք հատուկ են յեռադաշտի շրջանին, գյուղացուն ճորտացրին և նրա շահագործման գնով իշխողների մի նոր դասակարգ ստեղծեցին: Ժամանակի ընթացքում, յերբ գյուղացու հաշվին կալվածատերերը խոշոր հարստություններ կուտակեցին և այդ հարստություններից օգտվելով՝ իրենց պետական ապարատը կազմակերպեցին, նրանց համար հնարավոր դարձավ գյուղացիներին ճորտացնել բիրտ ույժի միջոցով՝ ըստ իրենց պահանջի, ըստ իրենց դասակարգային շահի: Հակառակ պրոգրեսի թեորիայի բոլոր հավաստիացումների՝ ճորտ գյուղացու գոյության պայմանները տարեց-տարի վատթարանում էին: Պրոգրեսը գոյություն ուներ միայն իշխող դասակարգերի համար, վորոնք կատարելագործում էին շահագործման ձևերն ու յեղանակները և գյուղացու անարգել թալանի միջոցով նոր ու նոր հարստություններ էին դիզում: Այդ դարի հարստության 80—90 տոկոսը գյուղացու արտադրած հավելյալ արդյունքից էր գոյանում: Շատ կարևոր է նկատել, վոր գյուղացու շահագործումն այնքան ավելի յեր ուժեղանում, ինչքան միջնադարյան հասարակությունը տնտեսապես ու կուլտուրապես ավելի յեր առաջադիմում, ինչքան ավելի մեծ չափով բնական տնտեսությունն ապրանքային տնտեսության էր վերածվում, ինչքան ավելի էին աճում քաղաքները, ինչքան ավելի էին զարգանում առևտուրը և արհեստները:

III.

Բուրժուական գիտությունը կաշվից դուրս է գալիս, ապացուցելու համար, վոր ստրկությունը և ճորտությունը բուրժուազիայի համար անհանդուրժելի յեն և վոր ճորտատիրական կարգերի հետ բուրժուական հասարակակարգը վորևէ առնչություն ունենալ չի կարող, քանի վոր ինքը միջնադարյան հասարակության փլատակների վրա յե կառուցած: Սակայն պարզ է, վոր բուրժուազիան յերկնքից չի իջել, Յեվայի նման Ադամի կողից չի գոյացել: Միջնադարյան հասարակակարգը կործանելու և իր հեղափոխությունը

*) Linguet (1736—1794):

կատարելու համար, արդեն մինչև իր իշխանության հաստատումը նա պետք ե համապատասխան նյութական միջոցներ ձեռք բերեր, պետք ե փորձ կազմակերպված ույժ ներկայացներ: Յեվ մենք իսկապես տեսնում ենք, վոր կապիտալի առաջին ձևը՝ առևտրական կապիտալը՝ նախ և առաջ և գլխավորապես ճորտ գյուղացիության հաշվին, նրա շահագործման գնով ե կուտակվում:

Առևտրական կապիտալի գոյության առաջին շրջանում, նրա կուտակման գլխավոր աղբյուրն այն հավելյալ արդյունքն եր, վորը կալվածատերը հավաքում եր գյուղացիներից և ամենաեժան գներով վաճառականին եր հանձնում: Առևտրի աճմանը զուգընթացաբար, բոլոր յերկրներում, ճորտերի շահագործումն ուժեղանում ե, ճորտերի ստրկական շղթաների ծանրության պատասխանատվությունը նույնքան առևտրական բուրժուազիայի վրա յե ընկնում, ինչքան և կալվածատիրության վրա: Ճորտերի արտադրած հավելյալ արդյունքի մի խոշոր տոկոսն առևտրական բուրժուազիայի ձեռքն ե անցնում, ժամանակակից կապիտալի հիմքն ե դնում: Այսպես և ճորտ գյուղացիների շահագործումը դարեր շարունակ կալվածատեր և առևտրական դասակարգերի միացյալ ուժերով ե կատարվել:

Այդ յերկու դասակարգերի միջև մղվող կռիվը նրան եր վերաբերում, թե նրանցից ամեն մեկը հավելյալ արդյունքի վո՛ր մասին ե տիրանալու: Յեթե որինակ վերցնենք ցարական Ռուսաստանը, կտեսնենք, վոր արդեն 16—17 դարերում առևտրական բուրժուազիան այդտեղ նշանավոր դեր ե կատարում, իսկ Պետրոս Մեծի ղեկավարությամբ ստեղծված պետությունը նույնքան առևտրական կապիտալի, ինչքան և կալվածատիրության պետություն եր: Հայտնի յե, վոր Ռուսաստանում ճորտատիրության կարգերն իրենց զարգացման գագաթնակետին են հասնում 18-րդ դարի վերջում, յերբ առևտրական կապիտալը յերկրում վոչ միայն մեծ ուժ ե ներկայացնում, այլև արդեն արդյունաբերական կապիտալի յե փոխանցվում, արդեն կապիտալիստական արտադրություն ե կազմակերպում: Յերբ Պետրոս Մեծը խուզում եր բոյարների մորուքը կամ նրանց փեշերը կտրում, վորպեսզի ֆեոդալիզմի մնացորդները վերջնականապես արմատախիլ անի, դրանով վոչ այնքան կալվածատերերի, ինչքան առևտրական կապիտալի շահն եր պաշտպանում:

Ֆեոդալիզմը, ինչպես և նրա հաջորդող կենտրոնական այն պետությունը, վորտեղ կալվածատերերն ու առևտրականներն են իշխում, յերկուսն էլ յեռադաշտի հողի վրա յեն կազմակերպվում, այն մեծ տարբերությամբ սակայն, վոր նրանցից առաջինը սովորաբար յեռադաշտի աչքալույսին ե համապատասխանում, իսկ յերկրորդը յեռադաշտի զարգացած շրջանի պետական ձևն ե, յերբ գյուղատնտեսության համապատասխան բարձր աստիճանը

արհեստների և առևտրի ծաղկման պայմաններ ե ստեղծում: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր յեռադաշտը պատվանդան ե հանդիսանում և այն կուլտուրայի, վորն ստեղծում են հիշյալ յերկու շրջանների իշխող դասակարգերը: Իր ժամանակի համար այդ կուլտուրան ամենաբարձր առաջադիմություն եր նշանակում, անկախ նրանից՝ հին Յեգիպտոսին կամ Չինաստանին թե միջնադարյան Յեվրոպային ե խոսքը վերաբերում: Այդ կուլտուրան չպետք ե թերագնահատել, յեռադաշտի շրջանին չպետք ե մեր դարի պահանջներով մոտենալ: Սակայն, իշխող դասակարգերի փայլած այդ կուլտուրան գյուղացիական ամբողջ մասսային չափազանց թանկ եր նստում, նրա տնտեսական ու ֆիզիքական կազմալուծման, նրա բարբարոսացման գնով եր ձեռք բերվում:

Այդ շրջանի գյուղացիության ծանր վիճակն ամենամանրամասն ուսումնասիրության և նկարագրության ե արժանացել թե պատմական գիտության և թե գեղարվեստական գրականության կողմից: Բուրժուական բոլոր յերկրները համապատասխան նյութով ավելի քան հարուստ են: Առանձնապես հարուստ ե նրանով ռուս ժողովուրդը: Խնդիրը հանրածանոթ համարելով, այստեղ առաջ ենք բերում միայն ֆրանսիական գյուղացու այն հայտնի նկարագիրը, վոր տվել ե Լաբրյույերը 17-րդ դարի վերջերին: «Եգ ու վորձ վայրի կենդանիների մի տեսակ կա՝ նիհար, սև, արևից վառված, գրում ե Լաբրյույերը: Նրանք գյուղում են բնակվում և շղթայված են հողից, վորը անպարտելի համառությամբ փորում են, շուռ են տալիս: Նրանք խոսելու ինչ վոր ընդունակություն են ցուցադրում, իսկ յերբ վոտքի յեն կանգնում, տեսնում ենք, վոր մարդկային դեմք ունեն: Յեվ դրանք իսկապես մարդիկ են, վորոնք գիշերվա ժամերին իրենց բներն են վերադառնում և այնտեղ սնունդ են ընդունում՝ սև հաց, արմատիքներ և ջուր»: Սակայն, այս աղքատիկ սնունդն էլ ունեյին վոչ բոլորը և վոչ միշտ ու ամենուրեք: Այսպես, որինակ, 1788 թ. իշխան Շչերբատովը գրում ե ռուս գյուղացիների մասին, վոր «նրանք ուտում են ծղոտ, հարդ, տերև, խոտ, թաղթ, բայց այդ նյութերից էլ արդեն չի ճարվում»:

Յեռադաշտի հերոս գյուղացուն ե, վոր ամենից շատ սազում ե հին կտակարանի անեծքը՝ ճակատի քրտինքով հաց ուտելու մասին: Սակայն, այդ շրջանի իշխող դասակարգերը գյուղացու շահագործումն այն աստիճանի հասցրին, վոր իր ճակատի քրտինքով արտադրած հացից էլ ոգտվել նա չեր կարող: Հացը ուղարկվում եր կալվածատիրոջ պահեստը կամ անմիջապես վաճառականին եր հանձնվում, իսկ իր ճակատի քրտինքով հաց արտադրող գյուղացին «ծղոտ, հարդ, տերև, խոտ, թաղթ» եր ուտում: Նույն իսկ ճորտության կապանքներն իրենց ուսից թոթափելուց հետո, արդեն զարգացած

կապիտալիզմի շրջանում, գյուղացիները վորոշ յերկրներում իրենց այդ ծանր վիճակից չազատագրվեցին: Որինակ, այդ է յեղել նրանց դրությունը Ռուսաստանում թե ֆեոդալիզմի ու ճորտության շրջաններում, յերբ նրանք վոչ միայն քաղցած եյին, այլև „сирота“, „черные людишки“, „мужик“ ու նման այլ անուններ եյին ստանում իշխողներից, այդ է յեղել նրանց դրությունը նաև 1861 թ. այսպես կոչված ազատագրումից հետո՝ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը: Հայտնի յե, վոր 18-րդ դարի 2-րդ կեսից սկսած, Ռուսաստանի գյուղացու պատմությունը 3—4 տարին մի անգամ պարբերաբար կրկնվող քաղցի պատմություն է յեղել: Մեր աչքի առաջ՝ 1906 թվին, Վոլգայի շրջանի քաղցած գյուղացիներն իրենց աղջիկներին շուկայում բացահայտ վաճառում եյին, վորպեսզի գեթ այդ ճանապարհով ընտանիքի մյուս անդամներին քաղցած մահից փրկեն, իսկ 1911 թվին Պետական Դումայի կադետական ֆրակցիայի անդամ Շինգարյովը Դումայի նիստին ցուցադրեց գյուղից ստացած մի կտոր հաց, «վորը բաղկացած եր ալրաման ինչ վոր կաշվից, աղած ծղոտից և մոխրից՝ ածուխի կտորների հետ խառնած»:

IV.

Յեռադաշտի շրջանում իշխող դասակարգերը համեմատաբար բարձր կուլտուրա յեն ստեղծում, սակայն այդ կուլտուրայի հնարավորությունը բացառապես նրանով է պայմանավորվում, վոր գյուղացիական մասսան իշխող դասակարգերի կողմից կիսաքաղց դրության և խավարման է դատապարտվում և վոր ինքը՝ այդ մասսան, իր աշխատանքով ստեղծած կուլտուրայի բարիքներից բնավ չի ոգտվում:

Յեռադաշտի շրջանում, ամեն ինչ՝ վերջին հաշվով՝ գյուղատնտեսական արտադրության այդ յեղանակով է պայմանավորվում, ամեն ինչ նրա վրա յե հենվում: Արհեստների և առևտրի աճումն ու զարգացումը, նոր դասակարգերի առաջացումը և նրանց փոխհարաբերությունների ընդացքում տեղի ունեցած փոփոխումները, միջնադարյան ընտանիքը, ֆեոդալիզմի և ճորտատիրության շրջաններին հատուկ՝ պետական կազմակերպության ձևերը— ամեն ինչ իր գոյությամբ յեռադաշտին է պարտական:

Յեռադաշտը և նրա վրա հենվող ու նրանից բղխող դասակարգային հարաբերությունները, նրա պայմաններում առաջացող հասարակական ու պետական կարգերը և ամենից առաջ յեռադաշտին հատուկ ու նրա համար բնորոշ արտադրական պայմանները հիմք են ծառայում նաև կրոնական գաղափարների ու յեկեղեցական կազմակերպության մի ամբողջ շրջանի: Յեկեղեցու և կրոնական գաղափարների իշխանությունը միջին դարերում պատահականություն չե: Ճիշտ է, յեկեղեցին իշխող դասակարգերի շահերի պաշտպա-

նությանը նվիրված մի կազմակերպություն եր, ճիշտ է և այն, վոր միջնադարյան կրոններն և յեկեղեցիները հազարավոր տարիների պատմության արդյունք եյին, սակայն ֆեոդալական և ճորտատիրական շրջաններում մինչ այդ գոյություն ունեցող կրոններն ու յեկեղեցիներն այնքան են կերպարանափոխվում, հիշյալ շրջաններում իշխող հասարակական-քաղաքական պայմաններում այնքան նոր բովանդակություն են ընդունում, վոր շատ յերկրներում նրանք միայն իրենց նախկին անունն են պահպանում: Այս դրության պերճախոս ապացույցն է քրիստոնեյական յեկեղեցիների ու նրանց ուսմունքների պատմությունը մեզ զբաղեցնող շրջանում:

Ֆեոդալիզմի ու ճորտության դարերում յեկեղեցին ինքն եյ ֆեոդալական ու ճորտատիրական մի կազմակերպություն է դառնում, այն եյ՝ շատ յերկրներում՝ ֆեոդալական ու ճորտատիրական մի կազմակերպություն, վորը ղեկավարում է ուրիշներին և այնքան է զորեղանում, վոր աշխարհիկ ֆեոդալների ու ճորտատեր կալվածատերերի համար նրա դեմ կռիվն անհնարին է դառնում: Յեղբայրություն, հավասարություն և խաղաղություն քարոզող, յերկրային հարստությունն արհամարհող ու այն ժխտող, աղքատների շահերի պաշտպանությանը նվիրված ուսմունքը ֆեոդալների, կալվածատերերի ու վաշխառուների ձեռքում նրանց դասակարգային շահերի պաշտպանության ամենհզոր մի գործիքի յե վերածվում, ստրկության, ճորտության, շահագործման ու կեղեքման ամեն մի յեղանակի, ուժեղ և մշտնջենական կռվի ու պատերազմի գաղափարական հիմնավորման ու արդարացման մի ուսմունքի յե փոխվում: Քրիստոնեյության մեջ տեղի ունեցած այդ թեքումը իշխող դասակարգերի շահերով եր պայմանավորվում, սակայն միջնադարյան քրիստոնեյության հնարավորությունը և նրա լայն տարածումը գյուղացիական մասսայի շարքերում միայն իշխող դասակարգերի շահերով ու ձգտումներով բացատրել չի կարելի: Վորպեսզի իշխող դասակարգերը կրոնն իրենց ձեռքում այդ ատաճան զենք դարձնեյին, պետք է վոր գյուղատնտեսության մեջ այդ ժամանակ ընդգրկած արտադրության յեղանակում նույն կրոնը հիմք ունենար, արտադրության այդ յեղանակին համապատասխաներ և քիչ թե շատ չափով նրանից բղխեր:

Գյուղացու գոյության տնտեսական ու հասարակական-քաղաքական պայմանները նրան ընդմիշտ քաղցած կամ կիսաքաղց դրության եյին դատապարտում և դրանով նրան կողմնակից եյին դարձնում այն ուսմունքի, վորը քաղցած ու աղքատ մարդկանց շահերից եր խոսում: Սակայն, գյուղացու կրոնական սարկացման համար ամենակարևորը վոչ թե նրա անապահով նյութական վիճակն եր, այլ նրա գյուղատնտեսական արտադրության յեռադաշտյան յեղանակը, վորից բղխում եյին թե նրա սարկացումը մարդկանց ու բնության

հանդես է թե կրոնական այն ֆատալիզմը՝ դեպի ճակատագիրն ունեցած այն խոր հավատը, վորն այնքան բնորոշ է յեռադաշտի շրջանի համար: Հողը պարարտացում է պահանջում: Նոր բերք ստանալու համար, նրան պետք է վերադարձնել այն նյութերը, վորոնցից նա զրկվել է նախորդ գյուղատնտեսական տարիներում: Առանց այս պայմանի, հողի բերրիությունը տարեցտարի նվազում է, մինչև վոր նա անընդունակ է դառնում վերադարձնել գյուղացուն նույն իսկ սերմացուն: Պատմությանը շատ դեպքեր են հայտնի, յերբ հոգնած, ուժասպառ հողը մի դեսյատինից 3—6 փութ բերք է տալիս: Այդպես էին, որինակ, մեր սերնդի աչքի առաջ անցած քաղցած տարիները Ռուսաստանում՝ 1891 և 1921 թ.թ., կամ կիսաքաղց տարիները—1906 և 1911 թ.թ.:

Ըստ Կ. Մարքսի, արտադրությունը վոչ այլ ինչ է, քան բնության և մարդու միջև կատարվող փոխանակություն: Յեթե հողը խոսելու ընդունակություն ունենար, հին հռոմայեցու նման կասեր մեզ. do ut des, այսինքն՝ տալիս եմ, վորպեսզի դու էլ ինձ տաս, ձրիաբար վոչինչ բաց չեմ թողնում. առնելն՝ առ, սակայն իմացիր, վոր առանց համապատասխան հատուցման այլև վոչինչ չես ստանալու: Հողը յուրահատուկ մի մեքենա յե, վորը բոլոր մյուս մեքենաների նման դադարում է աշխատել ու արտադրել, յեթե դրսից պարբերաբար չի ստանում այն սնունդը, կամ էներգիան, վորն անհրաժեշտ է ամեն մի աշխատանքի համար: Ինչպես իր հռչակավոր „De rerum natura“ («Իրերի բնության մասին») աշխատության առաջին գլխում հին հռոմեյական մատերիալիստ-փիլիսոփա Լուկրեցիուսն*) է ասում՝ «վոչընչից վոչինչ չի գոյանում» (de nihilo nihil): Իսկ հայտնի յե, վոր քիչ թե շատ բավարար բերքի նկատմամբ գյուղացու ունեցած ամբողջ հույսը բնական ուժերի հետ է կապված, այդ հույսի իրականացումը հողի հանգըստացման ճանապարհով է կատարվում:

Ամբողջապես թե մասամբ, յեռադաշտի շրջանում արհեստական պարարտացումը բացակայում է, բացակայում է այն պարզ պատճառով, վոր համապատասխան միջոցներից գյուղացին զուրկ է: Միջոցների բացակայությամբ, նյութական անապահովությամբ է պայմանավորված նաև գյուղացու տգիտությունը: Վերջինս այն աստիճանի յե հասնում, վոր գյուղացին չի ոգտագործում նույն իսկ իր տրամադրության տակ գտնվող պարարտացման միջոցները, գլխավորապես՝ տավարի աղբը: Բնությունն իրեն յենթարկելու և նրա ուժերն ու հարստությունները պլանաչափ կերպով ոգտագործելու փոխարեն՝ գյուղացին ստրկանում է բնությանը և իր դաշտից ստացվող բերքը նախախնամությանն է վերագրում: Դարերի ընթացքում գյուղացին ար-որի

*) Ապրում էր նախքրիստ. 99—55 թ.թ.:

վրա ընտելանում է այն մտքին, վոր իր դաշտի բերքը, իր անասունների աճումը և նույն իսկ իր յերեխաների ծնունդը նախախնամության գործեր են և վոր նյութական ապահովության ձեռք բերելու համար անհրաժեշտ է յենթարկվել իրեն անհայտ այն ուժին, վորը ծնունդ է տալիս ամեն ինչի:

V

Հողագործության յեռադաշտյան յեղանակը գյուղացուն ֆատալիստ է դարձնում: Բնության դեմ կռվելու խոշորագույն զենքը նրա ձեռքում աղոթքն է հանդիսանում, վորն ունեոր է իշխող դասակարգերի ներկայացուցիչներին ուղղած խնդրից իր ձևով ու բովանդակությամբ վոչնչով չի տարբերվում: Գյուղացու տեխնիքական ու մտավոր հետամնացությունը բնության դեմ կռվելու գործում նրան կատարելապես անզոր է դարձնում և դրանով իշխող դասակարգերի համար նրա նյութական ու բարոյական շահագործման հնարավորություններ է ստեղծում: Իշխող դասակարգերը լիովին շահագործում են գյուղացու այդ անզորությունն ու հետամնացությունը, շահագործում են նաև գյուղացու ստրկացմանը նպաստող այն հոգեբանությունը, վորը մշակվում է նրա մեջ աշխատանքի պրոցեսում, վորպես հետևանք նրա և բնության միջև հաստատվող հարաբերությունների: Այս ասպարեզում ռեկորդ է խփում յեկեղեցին, անկախ նրանից, գործ ունենք հին աշխարհի վորևէ այպես կոչված հեթանոսական կրոնի, թե Յեվրոպայի միջնադարի մահմեդականության ու քրիստոնեության հետ:

Գյուղացու շահագործումը յեկեղեցու կողմից նրանով չի սահմանափակվում, վոր նրանց յերկուսի միջև նույն հարաբերություններն են ստեղծվում, վորոնք պատմության այդ շրջանում գոյություն ունեն գյուղացու և ավատական ու ճորտատիրական այլ կազմակերպությունների միջև: Յեկեղեցին գյուղացու չար վոգին, նրա իսկական պատուհասն է: Նա և՛ շահագործում է գյուղացուն և՛ արդարացնում նրա շահագործումն ուրիշների կողմից: Հոգևորականությունը բարոյական անկման ու գազանացման այն աստիճանի յե հասնում, վոր գյուղացու աշխատանքը փառաբանում, որհնում և աստծո կամքին համապատասխան է հայտարարում այն չափով միայն, ինչ չափով վոր գյուղացին իշխող դասակարգերի համար է աշխատում և իր արտադրանքից իր համար այնքան է միայն բաժին հանում, վոր կարողանա պահպանել իր ֆիզիքական գոյությունը, այսինքն՝ իշխողների համար կարողանա անընդհատ կերպով հավելյալ արդյունք արտադրել: Մանր արտադրողների համար կրոնը միշտ և ամենուրեք ափիոնի դեր է կատարել, իսկ ավատական և ճորտատիրական կարգերում ժողովրդական լայն մասսաների համար կրոնը նյութական ու բարոյական ստրկացման մի

գործիք է դառնում, վորից ճնշող դասակարգերը լիապես օգտվում են և վորից գյուղացին՝ իր ծննդյան մոմենտից մինչև մահվան մոմենտը՝ ազատագրվել չի կարողանում: Ճորտության և ստրկության շենքի կառուցման գործում յեկեղեցին անսահման մեծ դեր է կատարել: Ավատական և ճորտատիրական կարգերում նա մի այնքան հարազատ գործոն էր, վոր յերկնային Թագավորության շենքը կառուցեց ըստ այն պատկերի, վորն այդ ժամանակի յերկրային Թագավորությանն էր հատուկ: Միջնադարյան այդպես կոչվող աստծո և նրա սրբերի ու հրեշտակների միջև նույն յերարխիան, նույն հարաբերությունններն եյին իշխում, վորոնք յերկրային Թագավորների, խոշոր ֆեոդալների ու նրանց վասալների միջև եյին հաստատված:

Յեռադաշտի գյուղացին անզոր էր բնության հանդեպ, սակայն շատ ավելի անզոր էր իշխող դասակարգերի հանդեպ: Իսկ վերջիններիս գաղափարական պաշտպանը՝ յեկեղեցին՝ գյուղացու ինքնուրույնությունը, նրա ձեռներեցությունը, նրա դասակարգային կազմակերպման ու ազատագրական շարժման գործին այնքան ծանր հարված էր հասցնում, վոր գյուղացիական մասսան վերջնականապես հիասթափվում էր, իր գրությունն անուղղելի էր համարում, ֆատալիզմի և դրախտային ցնորքների պաշտպանն էր դառնում: Յեռադաշտը զրկում էր նրան թե՛ մասսայական կազմակերպություններ ստեղծելու և իշխողների դեմ հաջողությամբ կռվելու հնարավորությունից և թե՛ տեխնիքապես ու մտավորապես առաջադիմելու միջոցներից, իսկ յեռադաշտի պայմաններում կազմակերպված և նրանից բխող հասարակական-քաղաքական կարգերը գյուղացու առաջ փակում եյին զարգացման ու ազատագրման բոլոր ճանապարհները և նրա մեջ այն համոզմունքն եյին արմատացնում, վոր զարգացում առհասարակ չկա, վոր գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերն ու հարաբերությունները, ինչպես և գյուղացու արտադրության յեղանակը, նրա յեզն ու կովը, նրա գործիքները, ուրեմն և նրա գոյության բոլոր պայմանները աստվածային կամքով են ստեղծված ու հաստատված, այնպես վոր այդ բոլորի դեմ բողոքել, նրանց փոփոխման կամ վերացման ձգտել՝ նշանակում է աստծո դեմ ապստամբություն հայտարարել:

Պարզ է, վոր նման ամեն մի ապստամբություն հաջողությամբ ավարտելը մարդկային ուժերից վեր մի գործ էր համարվում և ընդունվում էր, վոր տեխնիքական ու մտավոր առաջխաղացման, ինչպես և հասարակական հեղաշրջման ամեն մի փորձ սկզբից և յեթ պարտության է դատապարտված: Իշխող դասակարգերի այս «դաստիարակչական» աշխատանքն ամենամեծ հաջողությամբ պսակվեց: Կալվածատիրության և յեկեղեցու ազդեցության տակ գյուղացիությունը դարերի ընթացքում այնքան պահպանողական դարձավ, այնքան բթացավ, վոր սկսեց նախախնամությանը վերագրել վոչ միայն իր դաշտի բերքը, այլև իր ստրկական շղթաները, վոչ միայն անասունների ու մարդկանց բազմացումը, այլ և հիվանդությունները, նույն իսկ մարդկանց չարագործությունները: Պահանջվում էր վոչ թե կազմակերպվել ու կռվել, այլ համբերությամբ զինվել և աղոթել վոչ միայն բարձր բերք ստանալու, այլև ավազակներից կամ իդլիտիզմից ազատվելու համար: Միջին դարերի և մեր ժամանակի իրականությունից կարելի յէ բազմաթիվ օրինակներ բերել այն մասին, թե ինչպես՝ կալվածատերերի ու հոգևորականության ազդեցության տակ՝ գյուղացիությունը հրաժարվում է օգտվել վորոշ կուլտուրական բարիքներից, օրինակ՝ դեղորայից կամ բժշկությունից: Ամբողջ աշխարհին հայտնի յեն ռուս գյուղացու «խոլերային բունտերը», ուղղված բժիշկների դեմ: Այս հակաժողովրդական, այս մութ գործունեյության ասպարեզում բոլոր դավանությունների հոգևորականները միմյանց հետ ազատ մրցել կարող են:

Գյուղացու նյութական ու բարոյական ստրկացման հիմքը յեռադաշտն էր: Իր վզին փաթաթված ստրկական շղթաներից ազատագրվելու համար նա պետք է վերացներ վոչ միայն ֆեոդալների ու ճորտատեր կալվածատերերի իշխանությունը, այլև իր հողագործության յեռադաշտյան յեղանակը՝ իր բոլոր դժբաղդությունների այդ հիմքն ու աղբյուրը:

Ինչպե՞ս կատարվեց գյուղացու ազատագրումը ստրկության այդ կրկնակի շղթաներից:

Գ.

ՅԵՌԱԴԱՇՏԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

I.

Յեռադաշտի վերացումը և նրա փոխարինումը գյուղատնտեսական արտադրության ավելի բարձր ձևերով ավատականության և ճորտատիրության պայմաններում անհնարին էին: Դրա համար ոչ միայն նոր արտադրողական ուժեր, այլև նոր հասարակական կարգեր ու նոր գիտելիքներ էին պահանջվում, վորոնց տիրանալու համար գյուղացին նախ և առաջ պետք է բուրժուական հեղափոխական շարժմանը միանար և նրա հետ միասին բուրժուական հեղափոխություն կատարեր կամ՝ ինչպես այդ մեզ մոտ տեղի ունեցավ՝ պրոլետարիատի շարժմանը միանար և նրա հետ միասին ու նրա ղեկավարությամբ պրոլետարական հեղափոխություն կատարեր, պրոլետարական դիկտատուրայի հաստատմանն աջակցեր: Նախ ծանոթանանք այն պայմաններին, վորոնք անհրաժեշտ էին դարձնում գյուղացու մասնակցությունը բուրժուական հեղափոխություններին:

Պատմության նախակապիտալիստական շրջանում գյուղի և քաղաքի տնտեսության մեջ մանր արտադրությունն էր տիրապետում: Գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ բոլոր գործիքները գյուղի և քաղաքի մանր արհեստանոցներում էին պատրաստվում: Իսկ մանր արհեստավորական արտադրությունը, բուրժուական հեղափոխություններից դեռ շատ առաջ, արդեն իր զարգացման գագաթնակետին էր հասել, այսինքն արդեն լրիվին սպառել էր արտադրողական այն բոլոր ուժերը, վորոնց զարգացման ու գործադրման համար ինքը համապատասխան ասպարեզ էր ներկայացնում: Արտադրողական ուժերի նոր, ավելի բարձր զարգացումը մանր արտադրության նեղ շրջանակներում այլ ևս անհնարին էր: Չափազանց սահմանափակ էր մանր արտադրության տեխնիքական բազան, սահմանափակ էին նրա զարգացման հասարակական պայմանները, սահմանափակ էր շուկան, սահմանափակ էին ուրեմն նաև նրա տրամադրության տակ գտնվող նյութական մի-

ջոցները: Այդ շրջանի արհեստանոցից գյուղատնտեսությունը չէր կարող մի ավելի կատարելագործված գործիք ստանալ, քան գութանն էր՝ յեռադաշտի կուլտուրայի այդ խոշորագույն տեխնիքական նվաճումն ու հիմքը: Նույն վիճակում էր գտնվում նաև արհեստավորական արդյունաբերությունը: Իր տրամադրության տակ գտնվող գործիքներից ոգտվելով, արհեստավորն անզոր էր ավելի բարձր տիպի տնտեսություն կազմակերպել, իսկ նոր, ավելի կատարելագործված գործիքների արտադրությունը նրա ուժերից վեր էր, վորովհետև նա զուրկ էր դրա համար պահանջվող և գործիքներից ու նյութական միջոցներից և՛ համապատասխան գիտելիքներից ու շնորհքից:

Գյուղատնտեսական և արդյունաբերական մանր արտադրության համար անել վիճակ էր ստեղծվել: Տնտեսության այդ յերկու ճյուղերն էլ ճահճացման ու մահվան էին դատապարտված: Իրենց վիճակված այդ փակուղուց սեփական ուժերով դուրս գալ նրանք անզոր էին: Տնտեսական կյանքի այս պայմաններում է, վոր գերման ժողովրդի մեջ առաջացել ու ձևակերպվել է հեքիաթական հերոս Մյունհաուզենի տիպը, այն Մյունհաուզենի, վորը ճահճի մեջ ընկղմված լինելով՝ ինքն իրեն ճահճից դուրս է հանում, քաշելով իր մազերից: Այս կացության մեջ մանր արհեստավորական արտադրությունը—թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության մեջ—կարող է հազարավոր տարիներ իր գոյությունը քարշ տալ, յեթե չստեղծվի խոշոր գործարանային արտադրություն, վորը պատմության այդ շրջանում միայն կապիտալիզմի հողի վրա յե հնարավոր, միայն կապիտալի միջոցով կարող է կազմակերպվել: Վորտեղ կապիտալի առաջացման նպաստավոր պայմանները բացակայում են, մանր արհեստավորական արտադրությունն իր նեղ շրջանակներից ազատագրվել և խոշոր արտադրության վերածվել ընդհանրապես չի կարող: Հին աշխարհի մեծ կուլտուրաները և Ասիայի այժմյան խոշոր յերկրները—Պարսկաստանից սկսած մինչև Չինաստան—այդ դրության ճշտության անվիճելի ապացույցներ են:

Գութանից ավելի կատարելագործված գործիքներ գյուղացուն միայն խոշոր գործարանային արդյունաբերությունը կարող էր տալ, վորն, ինչպես նկատեցինք, պատմության այս շրջանում միայն կապիտալիստական կարող էր լինել: Սակայն, դարաշրջան կազմող նոր գործիքների ու մեքենաների մասսայական արտադրությունը և գործադրումը նաև նոր արտադրական հարաբերություններ և նոր իդեոլոգիա՝ նոր հասարակակարգ է յենթադրում: Յեռադաշտի շրջանի գյուղացու դժբախտությունը կատարելագործված գործիքների բացակայությամբ չէր սահմանափակվում: Կատարելագործված գործիքներից և արտադրության բարձր յեղանակներից ոգտվելու համար, գյուղացին պետք է նաև համապատասխան հասարակական-քաղա-

քական պայմաններ նվաճի և ինքն ել հեղաշրջվի, նոր հասարակական հարաբերություններից և նոր տեխնիկայից ոգևորվելու համար ինքն ել քաղաքականապես դաստիարակվի և նոր գիտելիքներ ձեռք բերի, իր անտեսության պահանջներին համապատասխանող մասնագիտական կրթություն ստանա: Առանձնապես ինչ բազմադաշտին ե վերաբերում, նրան անցնելու համար յեռադաշտի գյուղացուն վոչ այնքան նոր գործիքներ են պակասում, ինչքան նոր հասարակական կարգեր և ամենից առաջ՝ պակասում են կրթության մի վորոշ աստիճան և լայն շունչ: 8-դաշտյան կամ 12-դաշտյան արտադրությունն անգրագետ գյուղացին կազմակերպել չի կարող:: Իր հերթին, զարգացած և մասսայական չափեր ընդունած բազմադաշտյան անտեսությունը վոչ միայն լայն շունչ, այլ և գործարանային արդյունաբերություն ե յենթադրում: Բազմադաշտը մի շարք տեխնիքական կուլտուրաների հետ ե կապված, վորոնց արտադրանքի վերամշակումը, այն ե՝ նրանց ոգտումը գործարանային արդյունաբերության մեջ ե կատարվում:

Բնական չե, վոր առանց գործարանային արդյունաբերության և առանց նրա ստեղծած շուկայի գյուղացին չի կարող իրացնել (ռեալիզացիայի յենթարկել) իր բազմադաշտի արտադրանքը: Առանց ժամանակակից խոշոր գործարանային արդյունաբերության անհնարին ե նաև այն գիտությունների տարածումը, վորոնց մասսայական յուրացումը գյուղացու կողմից զարգացած բազմադաշտի կազմակերպման հրամայողական պահանջ ե: Հենց միայն գրագիտության ու թվաբանության չորս գործողությունների մասսայականացումն անհրաժեշտ են դարձնում, վոր մանր արհեստավորական արտադրությունն իր տեղը խոշոր գործարանային արտադրությանը զիջի: Բայց չե՞ վոր բազմադաշտը գյուղացու իդեալը չե: Բազմադաշտն անցման շրջանի կուլտուրա յե, յերբ յեռադաշտից գյուղացին հրաժարվել ե, սակայն ռացիոնալ գյուղատնտեսության անցնել դեռ չի կարողացել, այսինքն ժամանակակից կատարելագործված տեխնիկան ու ժամանակակից գյուղատնտեսական գիտությունները իր արտադրության պրոցեսում ոգտագործել դեռ չի իմանում, դրա համար պահանջվող նյութական ու բարոյական հնարավորություններից դեռ զուրկ ե:

Ռացիոնալ գյուղատնտեսության կազմակերպելու համար գյուղացին պետք ե վոչ միայն կատարելագործված գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ, վոչ միայն պարարտացման արհեստական միջոցներ ունենա, այլև տեխնիքական ու գյուղատնտեսական գիտելիքների մի վորոշ պաշար ձեռք բերի, առանց վորի մեխանիքական ու բնական արտադրողական ուժերի ոգտագործումն ընդհանրապես անհնարին ե: Ռացիոնալ գյուղատնտեսությունը պահանջում ե, վոր գյուղացին առնվազն ընդհանուր տարրական

կրթություն ունենա և ավելի կամ պակաս չափով ժամանակակից գիտական ագրոնոմիայից ծանոթ լինի: Դրանից զատ, գյուղացին, իբրև մանր արտադրող, պետք ե նաև վորոշ չափով տեխնիկ ու մեխանիկ լինի, վորպեսզի կարողանա ինքնուրույն կերպով իր մեքենաներն ու գործիքները բանեցնել և նրանց փչանալու դեպքում՝ կարողանա հենց դաշտում՝ գեթ թեթև ռեմոնտ անել: Հակառակ դեպքում նրա աշխատանքն անհնարին ե, վորովհետև գյուղացին զուրկ ե այն նյութական միջոցներից, վորոնք նրան հնարավորություն տային և՛ ագրոնոմ և՛ մեքենավար ու փականագործ վարձելու: Այսքան վորակյալ աշխատակիցներ վարձելը մանր արտադրության համար և՛ անհնարին և՛ աննպատակահարմար ե: Անհնարին ե նյութական միջոցների պակասության պատճառով, աննպատակահարմար ե ըստ արտադրության չափերի, վորովհետև գյուղացու փոքրիկ անտեսությունը նման ծախքեր արդարացնել չի կարող:

Ռացիոնալ գյուղատնտեսության այս բոլոր պահանջներին պարզ ապրանքային արտադրության շրջանը, վորը գերազանցորեն մանր արհեստավորական արտադրության շրջան եր, բավարարել չեր կարող: Այդ պահանջների բավարարումը միայն խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը կարող եր տալ: Ռացիոնալ գյուղատնտեսության համար անհրաժեշտ տեխնիկան, պարարտացման միջոցները, շուկան, ագրոնոմիական գիտությունները, վորակյալ բանվորները և մասնագետ գյուղատնտեսները ժամանակակից կապիտալիզմի և բուրժուական հասարակակարգի արդյունք են: Նման մի ծրագիր իրագործելու համար տվյալ ամեն մի յերկրում պետք եր դեռ բուրժուական հեղափոխություն կատարել, իսկ բուրժուական հեղափոխության պայմանն ե, վոր արդեն պարզ ապրանքային արտադրության շրջանում իրենց զարգացման համապատասխան բարձր մակարդակի հասնեն վոչ միայն առևտրական կապիտալը, այլև արդյունաբերական կապիտալը: Հայտնի ե, վոր կապիտալը գոյություն ե ստանում և համեմատաբար բարձր զարգացման ե հասնում արդեն մինչև բուրժուական հեղափոխությունները: Տնայնագործության յենթարկումը առևտրական կապիտալին և նրա մասսայականացումն այդ կապիտալի կողմից, կապիտալիստական արտադրության կոոպերատիվ և մանուֆակտուրային ձևերը, մեքենայի առաջացումն, իբրև զարգացած մանուֆակտուրային արտադրության հետևանք և վերջապես մեքենայի արտադրությունը մեքենայի միջոցով—ահա կապիտալիզմի զարգացման հիմնական ետապները մինչև 19-րդ դարի 30-ն թվականները, ահա բուրժուական հասարակության տնտեսական առաջխաղացման այն յերկար ուղին, վորն անցնելուց հետո միայն հնարավոր դարձավ ռացիոնալ գյուղատնտեսությունը, հնարավոր դարձավ գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը գիտական հիմունքներով:

II

Բուրժուազիայի տիրապետության դարում, նրա ղեկավարությամբ ու նրա ձեռքով մեր դարաշրջանի ամենաբարձր արտադրողական ուժերն են ստեղծվել: Սակայն խոշոր մեքենայական արտադրությունը և այժմյան տեխնիքական հրաշալիքները կատարելապես անհնարին կլինեյին, յեթե իր առաջխաղացման ամեն մի ետապում՝ տեխնիքական հեղաշրջմանը զուգընթացաբար՝ իր կուլտուրական կյանքում և գիտությունների բնագավառում եվ բուրժուազիան համապատասխան հեղաշրջում չկատարեր: Ֆեոդալիզմը և համքարական արհեստը զարգանում եյին նույնիսկ տարրական գրագիտու-թացաբար՝ իր կուլտուրական կյանքում և գիտությունների բնագավառում եվ Նաղարի վորակյալ արհեստավորներն ամենանուրբ գործիքներ եյին պատրաստում, վորոնք դեռ այսոր եվ ընդհանուր զարմանք են առաջացնում: Սակայն, չնչին բացառություններով, իրենց մասսայում, այդ արհեստավորներն անգրագետ եյին: Արհեստավորի և գյուղացու համար գրագիտությունն այդ ժամանակ մի ավելորդ շռայլություն եր, վորովհետև ամենամեծ դժվարությունների հետ եյին կապված վոչ միայն գրագիտություն ձեռք բերելը, այլև ձեռք բերածի գործադրումը: Ժողովրդի արտադրող մասսաների համար գրականություն խոսք չկար, բացակայում եր լրագիրը, բացակայում եր փոստային կապը: Վոչ կարդալու և վոչ մեկին յերկու տող գրելու հնարավորություն կար: Կյանքի այս բնագավառում իրերի բոլորովին այլ դրություն է ստեղծվում զարգացած կապիտալիզմի շրջանում, յերբ գրագիտությունը և գիտելիքների մի վորոշ պաշարն անհրաժեշտ են դառնում թե՛ գործարանային բանվորների և թե՛ ռացիոնալ տնտեսություն վարող գյուղացու համար: Ել չենք խոսում բուրժուազիայի մասին, վորի տնտեսության կազմակերպումը և իշխանության հաստատումն առանց բնական, մաթեմատիկական ու հասարակական գիտությունների—յերևակայել անհնարին է:

Գիտության առաջացումը, նրա զարգացումն ու տարածումը պատմության ամեն մի շրջանում տվյալ իշխող դասակարգի տնտեսության կազմակերպման պահանջներով ու նրա քաղաքական շահերով են պայմանավորվում: Յեվ յեթե վերջին չորս հարյուր տարվա ընթացքում գիտության ու գեղարվեստի բոլոր ճյուղերում բուրժուազիան մեծամեծ նվաճումներ կատարեց, այդ յերևույթը վոչ թե բուրժուազիայի կուլտուրականությամբ ու նրա բարձր բարոյական ձգտումներով է բացատրվում, այլ բացառապես հավելյալ արժեքի արտադրության ու կուտակման շահերով, կապիտալիստական տնտեսությունն ու բուրժուական ամբողջ հասարակակարգն առանց գիտության կազմակերպելու անհնարինությամբ: Արդեն առևտրական կապիտալի համաշխարհային տիրապետության շահերը բուրժուազիայի աշխարհագրական, տիեզերագրական ու պատմական հարցերի ընդլայնում եյին պահանջում: Իսկ արդյունաբերական կապիտալի հրամայողական պահանջն եր՝ առաջին հերթին բնագիտական, մաթեմատիկական ու տեխնիքական գիտությունները մշակել ու զարգացնել: Կան մի շարք գիտություններ, վորոնք առաջին հայացքից, ինչպես սովորաբար արտահայտվում են, վերացական են թվում, այսինքն յենթադրվում է, վոր կյանքի պրակտիկայի, մեր առօրյա պահանջների ու դասակարգային շահերի հետ նրանք վորևէ առնչություն չունեն, վոր նրանք միայն մեր մտավոր զգացման ու հոգեկան պահանջների բավարարման գործին են ծառայում: Այդ գիտությունների շարքում տեղ են գտնում վոչ միայն աստրոնոմիան ու մաթեմատիկան, այլ նույն իսկ թեորեթիկական բուսաբանությունը:

Գիտության այդ թշվառ ներկայացուցիչները և մեշչան ամբողջ հասարակությունը չեն եվ գիտակցում, վոր անխտիր բոլոր գիտությունները, սկսած մաթեմատիկայից ու աստրոնոմիայից, արտադրության և փոխանակության շահերին են ծառայում և վոր նրանցից ամեն մեկի առաջացման ու զարգացման հնարավորությունն եվ վորոշ տնտեսական նախադրյալներ է յենթադրում: Առանց ժամանակակից բնագիտության ու մաթեմատիկայի անհնարին է մեքենա կառուցել, անհնարին է թեթև արդյունաբերություն կամ տեքստիլ արդյունաբերություն կազմակերպել: Ինչ վերաբերում է պատմական ու տնտեսական գիտություններին կամ փիլիսոփայական ու կրոնական ուսմունքներին, նրանք բոլորը կրկին գերազանցորեն պրակտիկ նշանակություն ունեն, բուրժուազիայի շահերի պաշտպանությանն են ծառայում: Լյութերական յեկեղեցու ուսմունքը կամ Կանտի փիլիսոփայությունը վոչ այլ ինչ են, քան բուրժուազիայի շահերի տեսակետից ձևակերպված վերացական արտահայտություն այն նոր հասարակական հարաբերությունների, վորոնք բուրժուական հասարակակարգին են հատուկ: Լյութերի և Կանտի ուսմունքները ապրանքային-կապիտալիստական հասարակության փիլիսոփայությունն են, ապրանքի տիրապետության արդարացմանն են նվիրված, առաջինն ավելի մոտ լինելով առևտրական կապիտալի, իսկ յերկրորդը—արդյունաբերական կապիտալի շահերին: Այդ յերկու ուսմունքների հիմքը, նրանց ամենադժվարին ու խրթին պրոբլեմների բացատրությունը գլխավորապես վերացական աշխատանքի մեջ է փնտրելու, ինչքան վոր վերջինս ապրանքային—կապիտալիստական արտադրության հետ է կապված:

Այժմյան ռացիոնալ գյուղատնտեսությունը բազմաթիվ կատարելագործված գործիքներ, ապարատներ ու մեքենաներ է պահանջում և ամենալայն չափով ոգտվում է բնական ու մասամբ մաթեմատիկական գիտություններով: Այդ ամենի հնարավորությունն առաջին անգամ համաշխարհա-

յին պատմության մեջ կապիտալիստական տնտեսությունն է ստեղծել: Խոշոր գործարանային արդյունաբերությունն է միայն, վոր գործիքներ, ապարատներ ու մեքենաներ է պատրաստում թե՛ նյութական կյանքի արտադրության և թե՛ գիտական արտադրության համար: Ինչպես յերադաշտը մանր արհեստանոցի արտադրության հետ եր կապված, նրանից ստանալով իրեն անհրաժեշտ գործիքները, այնպես էլ ռացիոնալ գյուղատնտեսությունը խոշոր գործարանային արդյունաբերության հետ եր կապված: Գյուղմշակությունն, իբրև այդպիսին՝ առանց բուրժուազիայի ու նրա ստեղծած գործարանային արդյունաբերության, իր սեփական ուժերով ու միջոցներով, միշտ էլ անզոր կլիներ ստեղծել ռացիոնալ գյուղատնտեսության տեխնիքական ու գիտական այն լայն ու ամուր հիմքը, վորը վերջին դարերի ընթացքում ստեղծեցին կապիտալիստական գործարանը և բուրժուական գիտությունը: Գյուղատնտեսությունը հազարավոր թելերով կապված է գործարանային արդյունաբերության հետ և առանց նրա օգնության մի քայլ անել չի կարող: Կապիտալիզմի շրջանում գյուղատնտեսության և՛ վերելքը և՛ նրա ճգնաժամերն ամբողջապես կապիտալիզմի առաջխաղացման չափերով են պայմանավորված: Գյուղատնտեսությունը գործարանային արդյունաբերությանն է յենթարկվում:

«Արտադրության միջոցները վոչ միայն մարդու բանվորական ուժի զարգացման չափանիշ են, այլև այն հասարակական հարաբերություններն են բնորոշում, վորոնց պայմաններում կատարվում է աշխատանքը», գրում է Մարքսը իր գլխավոր գործի I հատորում (գլ. V): Արտադրության միջոցների կատարելագործումը մանր արտադրության շրջանակներում ու նրա ուժերով յերադաշտի զարգացման մի վորոշ բարձր աստիճանի վրա կանգ առավ: Նոր արտադրողական ուժեր գյուղատնտեսությունը միայն խոշոր արդյունաբերությունից կարող եր ստանալ, վորը գյուղացու և արհեստավորի շահագործման միջոցով եր առաջացել, ուրեմն՝ հակառակ նրանց կամքի յեր առաջացել, նրանց ծրագրի մեջ չեր մտնում, նրանց ղեկավարությանը չեր յենթարկվում: Սակայն, գյուղացին և արհեստավորը, իրենց մանր արտադրության հետ միասին, խոշոր արդյունաբերության և կապիտալի բոլոր ձևերի հանդեպ այնքան անզոր, այնքան անօգնական գտնվեցին, վոր ամբողջապես նրան յենթարկվեցին—յենթարկվեցին տնտեսապես ու քաղաքականապես: «Այն հասարակական հարաբերությունները, վորոնց պայմաններում կատարվում է աշխատանքը», այժմ արդեն վոչ թե գյուղացու գործիքներով, այլ այն արտադրական միջոցներով եյին բնորոշվում, վորոնք կապիտալիստական տնտեսության մեջ եյին զարգանում: Իսկ հայտնի յե, վոր ապացուցվել է արտադրության նոր յեղանակ, տնտեսության նոր

ձև ստեղծել միայն այն դասակարգն է ընդունակ, վորի ձեռքում են կենտրոնացած արտադրության զարգացող ուժերը կամ վորը կարող է արտադրության զարգացող ուժերին տիրանալ և նրանց միջոցով տնտեսության նոր, ավելի բարձր ձև ստեղծել:

Գյուղատնտեսության բարձրացման և գյուղացու փրկության միջոցները կապիտալիստական արտադրության մեջ եյին զարգանում, սակայն բուն իր դրության արտադրության պրոցեսում գյուղացին վոչ միայն անզոր եր այդ միջոցներին տիրանալու, այլ նրանց տիրանալու միտքը գյուղացու մեջ առաջանալ ընդհանրապես չեր կարող: Արտադրության այդ նոր միջոցներից օգտվելու և նրանց տիրանալու համար գյուղացին նախ պետք է դադարեր գյուղացի լինել, նախ պետք է սեփականազուրկ լիներ և վարձու բանվոր դառնար, վորպեսզի դարավոր կազմակերպչական աշխատանքից ու դասակարգային կռվից հետո կապիտալիստ դասակարգի արտադրության միջոցներին տիրանալու ուժ և նրանցից օգտվելու ընդունակություն ձեռք բերի: Յերադաշտի անկման շրջանում գյուղացու հիմնական և բարձրագույն ձգտումն եր՝ տիրանալ կալվածատիրական հողերին և վերացնել այդ շրջանի ճորտատիրական կամ կիսաճորտատիրական հարաբերությունները, վորոնց մեջ նա տնտեսապես ու կուլտուրապես խեղդվում եր: Հայտնի յե, վոր ճորտության դարում գյուղացին ամենուրեք դարեր շարունակ կալվածատիրական լծի դեմ կռվել, մասսայական ապստամբական շարժումներ է կազմակերպել, սակայն յերբեք և վոչ մի յերկրում սեփական ուժերով իր ձգտումների նպատակին իրագործել չի կարողացել: Նրա այդ մշտական պարտությունների պատճառը մանր արտադրությունն եր:

Գյուղացիական տնտեսությունները ցրված եյին ահագին տարածությունների վրա և գյուղացիների կազմակերպումն ու միացումը չափազանց դժվարացնում եյին: Պատմության այդ շրջանում խիստ բացակայում եյին կապի այն միջոցները, վորոնք այժմ գյուղացիների միացման գործը մեծապես դյուրացնում են: Այդ միջոցներն են՝ հաղորդակցության ճանապարհները, գլխավորապես՝ յերկաթուղին, փոստը, հեռագիրը, դրականությունը, զարգացած առևտուրը, պետական ապարատը և այլն: Մանր գյուղատնտեսական արտադրությունը գյուղացիական մասսայի կազմակերպման ու միացման գործի առաջ դժվար հաղթահարելի արգելքներ են կանգնեցնում, վորովհետև անզոր եր գյուղացուն ապահովելու կազմակերպման ու կռվի միջոցներով, սեզոնային բնույթ եր կրում և գյուղացիների մեջ յերկարատև ու լայն կապեր չեր ստեղծում, իսկ տնտեսությունների ցրվածությունն ու կապի տեխնիքական միջոցների բացակայությունը գյուղացու դրության այդ դժբախտ պայ-

մանները կրկնակի ծանր եյին բարձնում: Յեթե այս ամենի վրա ավելացնենք գյուղացիական մասսայի անգրագիտությունը, տգիտությունը, նրա նյութական ստրկացման հետ միասին նաև նրա հոգևոր ստրկացումը կալվածատիրական դասակարգին ու յեկեղեցուն, նրա սարսափը բնական ու հասարակական ամեն մի ուժից, նրա յենթարկումը ճակատագրական ուսմունքին և այն, վոր բնական ու հասարակական ուժերի դեմ նա վոչ թե կռվում եր, այլ խնդրանքի ու աղոթքի միջոցով աշխատում եր նրանց գութը շարժել, նրանց մեջ իր նկատմամբ բարի տրամադրություն առաջացնել՝ կտեսնենք, վոր պատմության այդ շրջանում գյուղացու համար խոսք վոր անել ու անօգնական դրություն եր ստեղծվել:

Գյուղացին վոչ ինքնուրույն քաղաքական ծրագիր ուներ և վոչ էլ նոր հասարակակարգ ստեղծելու տնտեսական հնարավորություն: Պատմության այդ շրջանում տնտեսական զարգացման ուղին կապիտալիստականն եր: Բարձրացող, տնտեսապես ու կուլտուրապես աճող, իշխանության ձգտող և իր ձգտումների իրականացման բոլոր նախադրյալները նվաճած միակ դասակարգը բուրժուազիան եր, զինված նյութական ու բարոյական այն բոլոր զենքերով, վորոնք անհրաժեշտ եյին թե՛ հին կարգերի դեմ կռվելու և թե՛ ժողովրդի շահագործվող մասսաներին իրեն յենթարկելու, իր ձգտումների իրականացման գործին ծառայեցնելու համար: Միջնադարի ստրկացուցիչ պայմաններից ինքն իրեն ազատագրելով, նույն պայմաններից բուրժուազիան միաժամանակ նաև ամբողջ աշխատավոր ժողովրդին եր ազատագրում և այդպիսով ազգային ազատագրական շարժման ղեկավար եր դառնում: Բանվորն ու գյուղացին միանում եյին նրա կազմակերպած շարժմանը, հանուն նրա ձգտումների իրականացման արյուն եյին թափում, համոզված լինելով, վոր հանդերձ բուրժուական հասարակարգի բոլոր մարդկանց հավասարության, յեղբայրության և ազատության հասարակարգ են նվաճում:

III

Իր հեղափոխություններով բուրժուազիան վերացրեց սեփականության և շահագործման միջնադարյան ձևերը, նպատակ ունենալով վոչ թե մասնավոր սեփականության և շահագործման վերացումն ընդհանրապես, այլ միայն նրանց միջնադարյան ձևերի փոխարինումը բուրժուական ձևերով: Իր կապիտալիստական տնտեսությունը լայն չափերով կազմակերպելու համար բուրժուազիան նախ և առաջ պետք է հողի և բանվորական ույժի մասնավոր սեփականություն հաստատեր: Հայտնի յե, վոր հողը և բանվորական ույժը միջին դարերում միայն մասամբ նրանց օգտագործողների մասնավոր սեփականություն եյին: Աննշան բացառություններով, հողի վաճառքն ամե-

նուրեք արգելված եր վոչ միայն գյուղացիներին, այլև կալվածատերերին: Ճորտ գյուղացին չեր կարող վաճառքի հանել նաև իր բանվորական ույժը, չեր կարող վարձվել: Դրա համար պահանջվում եր կալվածատիրոջ թույլտվությունը: Գյուղացու, կալվածատիրոջ, մասամբ նաև կապիտալիստի համար սեփականություն ձեռք բերելու և այն օգտագործելու իրավունքը բազմաթիվ սահմանափակումների եր յենթակա: Բուրժուական հեղափոխությունները մասնավոր սեփականության ինստիտուտը զարգացման բարձրագույն աստիճանին հասցրին և նյութական ու բարոյական անխտիր բոլոր արժեքները ապրանքի վերածեցին: Ի թիվս այլոց, ապրանք դարձան, սկսեցին շուկա հանվել նաև հողն ու բանվորական ույժը: Յեվ այսքանով էլ սահմանափակվում են բուրժուազիայի հաստատած ազատությունն ու հավասարությունը: Բուրժուական հեղափոխությունները վերացրին բոլոր դասային արգելքներն ու սահմանափակումները և անխտիր բոլորին կատարյալ «ազատություն» և «հավասար իրավունք» տվին՝ վաճառելու իրենց սեփականությունը և ձեռք բերելու ամեն մի հարստություն, առանց վորևե սահմանափակման: Ուրիշ ազատություն և ուրիշ հավասարություն բուրժուական հասարակարգը չի ճանաչում: Այսինքն՝ բոլոր քաղաքացիները վաճառելու և գնելու կատարյալ ազատություն են վայելում, յեթե գնելու միջոց և վաճառելու ապրանք ունեն. բոլոր քաղաքացիները միմիանց կատարելապես հավասար են, յեթե հավասար սեփականատերեր են:

Բանվորն «ազատություն» եր ստանում վաճառելու իր բանվորական ույժը կապիտալիստին, այսինքն բանվորի ազատությունը շահագործման ազատություն եր վերածվում, իսկ գյուղացին «ազատ» եր վաճառելու իր հողն ու արտադրության այլ միջոցները, այսինքն ազատ եր պրոլետարիատի շարքերն անցնելու: Իսկ վորովհետև խոշոր հողատերերի, գյուղի բռունցքների և կապիտալի մրցմանը մանր գյուղացիները դիմանալ ընդհանրապես անզոր են, անզոր եյին մանավանդ կալվածատիրական լծից նոր միայն ազատագրված գյուղացիները՝ բուրժուազիայի հաստատած այսպես կոչված ազատությունները և ամենից առաջ մրցման ազատությունը գյուղացու իսկական չարիքը դարձան:

Նույնիսկ այն յերկրներում, վորտեղ հեղափոխական կռվի պրոցեսում ու նրա միջոցով գյուղացուն հաջողվում եր կալվածատիրական հողերին տիրանալ, շատ շուտով նա հարկադրված եր լինում իր մի թիզ հողը շուկա հանել, վորովհետև զուրկ եր արտադրության միջոցներից, զուրկ եր իր ֆիզիքական գոյությունը պահպանելու հնարավորությունից: Յեթե գյուղացուն բռնի ուժով հողազուրկ չեյին անում, ինչպես այդ Անգլիայում տեղի ունեցավ, նրան տնտեսական այնպիսի պայմանների մեջ եյին դնում, վոր իր հողն

անպայման կալվածատիրոջ վաճառք: Բուրժուազիայի ամենակլասիկ հեղափոխությունը Ֆրանսիայում է կատարվել: Այդ հեղափոխությունը բուրժուական հեղափոխությունների մեջ ամենակլասիկն է նաև գյուղացիական խնդրի լուծման այն յեղանակով, վորը բուրժուազիայի համար իդեալական կարող է համարվել: 18-րդ դարի վերջում Ֆրանսիայի գյուղացիությունը տիրացավ կալվածատիրական հողերին, սակայն կապիտալի առաջխաղացման ամեն մի քայլ զրկում եր նրան նվաճած հողի մի նշանավոր մասից: Կապիտալիզմի զարգացումն անհրաժեշտորեն պահանջում է, վոր գյուղացու հողը կապիտալիստ դասակարգի ձեռքն անցնի և վոր ինքը՝ գյուղացիական մասսան, պրոլետարացման յենթարկվի: Ահանց այս պայմանի կապիտալիստական արտադրությունն ընդհանրապես անհնարին է:

18-րդ դարի վերջում Ֆրանսիայի գյուղացին հերոսական կռվի միջոցով, իր արյան գնով տիրացավ կալվածատիրական հողերին: Իսկ մի դար հետո Ֆրանսիայում արդեն նոր կալվածատիրություն եր առաջացել—բուրժուական կալվածատիրություն: Ըստ 1892 թ. տվյալների, Ֆրանսիայի հողը գյուղացիության և կալվածատիրության տարբեր խավերի միջև հետևյալ կերպ եր բաժանված.

Տնտեսությունների թիվը	Նրանց ընդհանուր հողային սեփականությունը (դեսյատին.)	Ամեն մի տնտեսության բաժին է ընկնում (դեսյատին.)
2.235.405	1.194.528	0,54
1.829.259	4.940.280	2,7
788.299	5.179.950	6,57
711.118	12.882.075	18,0
138.671	20.244.000	145,9

Չքավոր (0,54 դես.) ու միջակ (2,7 դես.) գյուղացիները, միասին 4.064.664 տնտեսություն, ընդամենը 6.134.808 դես. հող ունեյին, այսինքն մի քիչ ավելի, քան 788.299 ուժեղ տնտեսությունները, յերկու անգամ պակաս, քան 711.118 հարուստ տնտեսությունները և 3,3 անգամ պակաս, քան 138.671 կալվածատերերը: Նույն 138.671 կալվածատերերը չորս անգամ ավելի հող ունեյին, քան 1.829.259 միջակ տնտեսությունները և 17 անգամ ավելի, քան 2.235.405 չքավոր տնտեսությունները: Ֆրանսիան ամենադեմոկրատական բուրժուական յերկրների շարքին է պատկանում: Հողատիրության դասակարգային կազմը ցույց է տալիս, թե ինչ է բուրժուական հեղափոխու-

թյունը գյուղացիական մասսայի համար և այդ մասսայի նկատմամբ ինչպես է կիրառվում, ինչում է արտահայտվում բուրժուական հավասարությունը: 45 միլլիոն դեսյատին հողից չորս միլլիոն չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների ընդամենը 6,1 միլլիոն դեսյատին հող է բաժին ընկնում, իսկ մնացած 39 միլլիոն դեսյատին տարածությունը գյուղացիության շահագործող տարրերի և կալվածատերերի ձեռքում է կենտրոնացած:

Բուրժուական անխտիր բոլոր յերկրներում իրերի այս նույն դրությունն է տիրում: Հողատերերի դասակարգային վերատվորումն ամենուրեք ընդհանուր առմամբ, աննշան շեղումներով, նույն պատկերն է ներկայացնում, վորին ծանոթացանք Ֆրանսիայի որինակի վրա: Ավելորդ չենք համարում առաջ բերել նաև Գերմանիայի վերաբերյալ տվյալները: 1895 թվականին հողատերերի ներքո բերյալ կարգերին հետևյալ տարածությամբ հող եր պատկանում (հեկտարներով=0,915 դեսյատինի).*)

Կարգեր	Տնտեսությունների թիվը	Նրանց պատկանում էր	Ամեն մի տնտեսության միջին հողաբաժինը
2 հեկտ. պակաս	3.236.367	1.808.444	հեկտար **0.56**
2—5 հեկտար	1.016.318	3.285.984	» **3,2**
5—20 »	998.804	9.721.875	» **9,8**
20—100 »	281.767	9.869.837	» **35,0**
100-ից ավելի	25.061	7.831.801	» **313,3**

25 հազար կալվածատերերը մեկ ու կես անգամ ավելի հող ունեն, քան 4.252.685 մանր ու միջակ գյուղացիները, վորոնց ամբողջ հողի միայն $^{1}/_{6}$-ն է պատկանում, իսկ 3.236.367 սակավահող տնտեսություններին ամբողջ հողի միայն $^{1}/_{18}$-ն է բաժին ընկնում: Յերեք միլլիոնից ավելի սակավահող տնտեսությունների միջին հողամասը 0,56 հեկտար է կամ կես դեսյատին, այն ինչ մոտ մի միլլիոն հարուստ գյուղացիական տնտեսությունների համար միջին հողամասը համարյա 10 հեկտար է(9,8), 25 հազար խոշոր կալվածատերերի համար—313,3 հեկտար: Առանձնապես ուսանելի յեն աղյուսակի վերջին ուղղահայաց սյունյակի տվյալները: Մեկ միլլիոն հարուստ գյուղացիներից ամեն մեկը 18 անգամ ավելի հող ունի և 25 հազար խոշոր կալվածատերերից ամեն մեկը 559 անգամ ավելի, քան 3.236.367 սակավահող տնտեսություններից ամեն մեկը:

*) Ֆրանսիայի և Գերմանիայի հողատիրության վերաբերյալ աղյուսակները վերցրել ենք Կ. Կաուցկու «Հողային խնդիրը» աշխատությունից:

Ով ուզում է իր համար պարզել, թե ինչ է բուրժուազիայի քարոզած հավասարությունը կամ յեղբայրությունը, թող ուսումնասիրի վերը բերած յերկու աղյուսակները:

IV

Բուրժուական հեղափոխությունը գյուղացիական մասսային սեփականազրկումից ու չքավորության գիրկն ընկնելու դժբաղդությունից չի ազատագրում և ապահովագրել ընդհանրապես չի կարող, վորովհետև բուրժուական հեղափոխության ամենահիմնական խնդիրն է՝ գյուղացուն և արհեստավորին գոյության այնպիսի պայմանների մեջ դնել, վոր նրանք հարկադրված լինեն իրենց հողը և բանվորական ույժը կապիտալիստներին վաճառել: Միակ իմաստը, վոր ժողովրդական լայն մասսաների համար ունի բուրժուական հեղափոխության նվաճած «ազատությունը», հենց այն է, վոր մանր արտադրողների մասսան նախ «ազատվում է» արտադրության միջոցներից, գլխավորապես՝ հողից և ապա իր բանվորական ույժը վաճառելու «ազատություն» է ստանում: Ինչպես հայտնի յե, «ազատություն» այս յերկու տեսակից ել ճորտը զուրկ եր: Յեվ այս պատճառով է, վոր բուրժուական հեղափոխություններից հետո վորոշ յերկրների գյուղացիներ կործանված ճորտատիրական կարգերին սկսում եյին յերանի տալ և նորից այն կալվածատերերի թակարդի մեջ եյին ընկնում, վորոնց լուծն իրենց ուսից հազիվ թոթափել եյին:

Քաղցի հարվածներին չդիմանալով, սեփականազուրկ յեղած բանվորն ու արհեստավորն աշխատանքի շուկա յեն գնում և իրենց «հոժար կամքով», իբրև «ազատ քաղաքացիներ», «առանց վորևե ճնշման» իշխող դասակարգերի կողմից և «իբրև կապիտալիստին հավասար ապրանքատերեր»՝ ինչպես այդ բուրժուական գիտությունն է պնդում, իրենց միակ ապրանքն, իրենց բանվորական ույժը, կապիտալիստի տրամադրության տակ են դնում, խոնարհաբար խնդրելով, վոր կապիտալիստն իրենց այդ «ապրանքը» գնի և նրա սպառողական արժեքն ըստ իր հայեցողության ոգտագործի, ինչպես բոլոր մյուս ապրանքների սպառողական արժեքներն են ոգտագործում: Իսկ վորտեղ գյուղացին կամ արհեստավորը տնտեսապես դեռ այնքան կործանված չեն, վոր հարկադրված լինեն իրենց բանվորական ույժը վաճառել և վորտեղ բուրժուազիան աշխատանքի շուկայում պահանջվող թվով բանվորներ չի գտնում, իր պետական ապարատի միջոցով «ազատ» քաղաքացիներին հարկադրում է վարձվել և իր ձեռնարկներում աշխատել:

Հանդերձ իր իդեոլոգների, բուրժուազիան վարձու բանվորին ազատ է հայտարարում, վորովհետև իր «ապրանքը»՝ իր բանվորական ույժը նա կարող է վաճառել և չվաճառել: Խնդիրը կապիտալիստի և բանվորի փոխադարձ համաձայնությամբ է լուծվում, ասում են բուրժուազիայի փարիսեցի գիտնականները: Իսկ իրականությունը մեզ այն է վկայում, վոր այդ համաձայնությունը քաղցի մտրակի կամ վոստիկանի մտրակի հարվածների ազդեցության տակ է ձեռք բերվում: Կապիտալիզմի կլասիկ յերկրում՝ Անգլիայում՝ մտրակը, բանտը և ընդհանրապես բռնի ույժը կյանքի այդ բնագավառում ել բուրժուական դեմոկրատիայի ամենաազդեցիկ միջոցների շարքին են պատկանել:

Բուրժուական հեղափոխությունների հիմնական նվաճումը պրոլետարիատի առաջացումն է: Այս նոր դասակարգը և վարձու աշխատանքի սիստեմը բուրժուական հասարակակարգի ամենաբնորոշ հատկանիշներն են, վորոնցով նա տարբերվում է նախորդ հասարակակարգերից: «Բանվորի ստրկացումը յելակետն եր այն զարգացման, վորի պրոցեսում առաջացան թե՛ վարձու բանվորը և թե՛ կապիտալիստը», գրում է Մարքսը «Կապիտալի» 1-ին հատորում (գլ. 24, § 1): Մանր արտադրողների սեփականազրկումը և սեփականազուրկ բանվորների ստրկացումը կապիտալիստական տնտեսության կազմակերպման հիմնական պայմաններն են, միշտ ել բուրժուազիայի քաղաքականության վողնաշարն են կազմել և այսուհետև ել կազմելու յեն: Բուրժուազիայի նվաճած ազատությունները բուրժուական դասակարգային ազատություններ եյին, ուղղված մի կողմից միջնադարի իշխող դասակարգերի դեմ, վորոնցից բուրժուազիան ազատագրվեց, մյուս կողմից բանվորության դեմ, վորի համար շահագործման ու ճնշման նոր լուծը պետք եր մշտենջենական դարձնել: Ինչպես հայտնի յե, բուրժուա սեփականատերերի միջև վորևե հավասարություն չկա: Հավասար են հավասար կապիտալ ունեցող բուրժուաները: Խոշոր կապիտալիստները միջակ ու մանր կապիտալիստներին անվերջ սնանկացնում ու կործանում են՝ այսպես կոչված ազատ մրցման պրոցեսում, վորն ազատություն հանդիսանալով խոշորագույն կապիտալիստների համար, միջակ ու մանր կապիտալիստների համար մահվան մի զենք է: Մասնավոր սեփականություն ձեռք բերելու և այն վաճառելու կատարյալ ազատությունը տրամաբանորեն դեպի մասնավոր սեփականության կենտրոնացումը, դեպի նրա ժխտումն է տանում: Մասնավոր սեփականության ինստիտուտի զարգացումը ժողովրդական լայն մասսաների սեփականազրկում է նշանակում:

Յեռադաշտի շրջանի գյուղացու հիմնական դժբաղդությունն այն է, վոր իր տնտեսությունը բարձրացնելու համար անհրաժեշտ արտադրության գործիքներն ու այլ միջոցները նա միայն դրսից՝ խոշոր գործարանային արդյունաբերությունից կարող եր ստանալ, իսկ կապիտալիզմի հողի վրա կազմակերպված խոշոր արդյունաբերությունն այդ նույն գյուղացիության մի խոշոր

տոկոսի պրոլետարացում և պահանջում։ Վորտեղ նրա պրոլետարացման պրոցեսը դանդաղ էր կատարվում կամ վորտեղ նրա հողը հարկավոր էր կալվածատերերին ու կապիտալիստներին, վորտեղ ազատ մրցման կործանիչ արդյունքներով տիրապետող դասակարգերը չէյին բավարարվում, նրանք անմիջապես գյուղացու և այլ մանր արտադրողների բռնի սեփականազրկման էյին ձեռնարկում, կանգ չառնելով և վոչ մի բարբարոսության առաջ։ Անգլիայի իշխող դասակարգերը, վորոնք իրենց հին պարլամենտական կարգերով ու դեմոկրատական ազատություններով այնքան պարծենում են, յերկրագնդի յերեսին առաջին տեղն են բռնում այն բարբարոսություններով, վորոնց դարեր շարունակ դիմում էյին՝ գյուղացուն սեփականազուրկ անելու և նրան տնից ու հողից վտարելու համար։ Հողը պետք էր ազատել գյուղացուց, նրա վրա մասսայական վոչխարաբուծության կազմակերպելու համար։ Գյուղացուն պետք էր ազատել ամեն մի սեփականությունից՝ նրան կապիտալիստի տրամադրության տակ դնելու համար։ Իր «Ուտոպիա» հռչակավոր գործում Թոմաս Մորը*) գրում է, վոր վոչխարները, իրենց համեստությամբ և չնչին պահանջկոտությամբ ամենուրեք հայտնի այդ կենդանիները, Անգլիայում «այն աստիճան անգութ և ագահ են, վոր հարձակվում են մարդկանց վրա, նրանց վտարում են հողից, մշտական բնակավայրից, տնից ու գյուղից»։

Մասնավոր սեփականատեր և մանր արտադրողը, մասնավոր սեփականատեր և նաև կապիտալիստը։ Սակայն մասնավոր սեփականության այդ յերկու ձևերի մեջ, ինչպես ցույց տվեց Մարքսը, սկզբունքային տարբերություն կա։ Նրանցից առաջինն արտադրողի սեփական աշխատանքի արդյունք է, այն ինչ յերկրորդն ուրիշների շահագործման ճանապարհով է առաջանում և նրա առաջացումն անպայման յենթադրում է, վոր մանր սեփականությունն այս կամ այն չափով արդեն կործանվել է։ Մանր հողատիրության և մանր գյուղատնտեսական արտադրության զարգացումը կապիտալիստական խոշոր հողատիրության և կապիտալիստական խոշոր գործարանային արդյունաբերության հիմք ծառայեց։ Կապիտալիզմը պրոլետարիատ է յենթադրում, պրոլետարիատի գոյությունը—մանր գյուղացիության սեփականազրկում,—իսկ գյուղացիության սեփականազրկումը—խոշոր կապիտալիստական կալվածատիրության առաջացում։ Իր մանր տնտեսությունով կապիտալիզմի դեմ մրցել գյուղացին չէր կարող։ Իր արտադրության նեղ շրջանակներով սահմանափակված լինելով, գյուղացին չէր կարող զարգացնել իր արտադրողական ուժերը, չէր կարող իր իշխանությունը բընության վրա տարածել, չէր կարող օգտագործել իրեն շրջապատող բնական

*) Թոմաս Մոր. 1478—1535։ Նրա «Ուտոպիա»-ն լույս է տեսել 1516 թ.։

ուժերն ու հարստությունները, ինչպես և գիտության տվյալները։ «Իր էյությամբ, մանր սեփականությունը ժխտում է. աշխատանքի հասարակական արտադրողական ուժերի զարգացումը, աշխատանքի հասարակական ձևերը, կապիտալների հասարակական կենտրոնացումը, խոշոր չափերով կազմակերպած անասնապահությունը, գիտության աճող գործադրումը», գրում է Կ. Մարքսը*)։ «Նրա կործանումը, արտադրության միջոցների անհատական և բաժան-բաժան յեղած ձևի փոխանցումը նրանց հասարակական-կենտրոնացած ձևին, հետևապես մեծաթիվ մարդկանց թզուկային սեփականության փոխանցումը փոքրաթիվ մարդկանց վիթխարի սեփականության, ժողովրդական լայն մասսաների սեփականազրկումը հողից, գոյության միջոցներից, աշխատանքի գործիքներից՝ ժողովրդական մասսայի սեփականազրկման այդ սոսկալի և դժվար պրոցեսը կապիտալի պատմության նախաբանն է»**)։

V

Անցյալ դարի վերջում և ներկա դարի սկզբում ռեֆորմիստ-սոցիալիստները և բուրժուա-գիտնականները մի շարք հաստափոր գործեր լույս ընծայեցին, վորտեղ «ապացուցում» էյին մանր գյուղատնտեսական արտադրության կենսունակությունը և նույնիսկ նրա առավելությունները խոշոր գյուղատնտեսական արտադրության հանդեպ***)։ Մանր գյուղատնտեսական արտադրության ջատագովումն այդ թեորետիկոսները նրանով էյին հիմնավորում, վոր գյուղատնտեսության մեջ մեքենայի գործադրումը շատ ավելի նվազ չափերով է հնարավոր և գյուղատնտեսության սեզոնային բնույթի պատճառով անհամեմատ ավելի պակաս շահավետ է, քան գործարանային արդյունաբերության մեջ։ Այդ պատճառով էլ արտադրության խոշորացումն ու կենտրոնացումը գյուղատնտեսության մեջ նրանք աննպատակահարմար ու անշահավետ են համարում և համապատասխան պետությունների ստատիստիկայի տվյալներով «ապացուցում են», վոր կյանքի պրակտիկան իրենց թեորիայի լրիվ արդարացումն է տալիս։ Այդ մանր-բուրժուական ուսմունքի առանցքը, նրա ամենակարևոր պատճառաբանությունն այն է, վոր գյուղատնտեսության մեջ բնական ուժերը չափազանց խոշոր դեր են կատարում, այն ինչ գործարանային արդյունաբերությունը գերազանցորեն մեքենայական արտադրություն է։ Այնուհետև խոշոր գյուղատնտեսական արտադրության հան-

*) «Կապիտալ», հատոր III, գլ. 47, § 5։

**) «Կապիտալ», հատ. I, գլ. 24, § 7։

***) Էդ. Բերնշտեյն և Հերց—1899 թ., Բուլգակով և Գատտի—1900 թ., Շտումպֆե—1901 թ., Էդ Դավիդ—1903 թ., Ա. Չուպրով—1904 թ. և մյուսները։

դեպ մանրին նախապատվությունն է տրվում այն պատճառով, որ իբր թե գների տատանումը և նրանց անկումը շուկայում, մրցումը և ճգնաժամերը մանր գյուղատնտեսական արտադրության համար յերբեք չեն կարող այն ծանր վիճակն ստեղծել, որը գործարանային արդյունաբերության համար այնքան սովորական յերեվույթ է դարձել:

Գյուղատնտեսության և գործարանային արդյունաբերության մեջ որևէ սկզբունքային տարբերություն չկա: Գյուղատնտեսության անխտիր բոլոր ճյուղերում այժմ արդեն խոշոր մեքենայական արտադրություն գոյություն ունի, սակայն շատ ավելի պակաս չափով տարածված, քան գործարանային արդյունաբերության մեջ: Մեր դարի տեխնիկան և բնական գիտությունները գյուղատնտեսությունը սացիոնալ հիմունքների վրա դնելու և այն խոշոր մասշտաբով կազմակերպելու ամենալայն հնարավորություններ են ստեղծել: Չնայած դրան, այժմյան կատարելագործված տեխնիկայի և գիտական ագրոնոմիայի մեծ նվաճումներից գյուղատնտեսությունը դեռ համեմատաբար աննշան չափերով է օգտվում, ոչ այն պատճառով, որ խոշոր ռացիոնալ արտադրությունը գյուղատնտեսության մեջ ինչ որ դժվարությունների ու արգելքների յե հանդիպում կամ որ նա այդտեղ պակաս շահավետ է, քան մանր գյուղատնտեսական արտադրության մեջ, այլ բացառապես շնորհիվ այժմյան բուրժուական հասարակության մեջ տիրապետող դասակարգային հարաբերությունների: Մանր գյուղացին տեխնիկայից և գիտությունից օգտվելու նյութական հնարավորություն չունի, իսկ խոշոր հողատերերը, որպես օրենք, գյուղատնտեսությամբ շատ քիչ են զբաղվում, որովհետև հողի մասնավոր սեփականությունը և մենաշնորհը նրանց հնարավորություն են տալիս ոչ միայն հողի վարձ, այլև ռենտա ստանալ:

Մանր արտադրությունը «կարող է իր գոյությունը պահպանել նույն իսկ այն դեպքում, յեթե նրա արտադրանքի վաճառքից ստացվող շահը միայն արտադրողների աշխատավարձը տա, այն ինչ նման պայմաններում գտնվող խոշոր տնտեսությունը հարկադրված են լինում լիկվիդացիայի յենթարկել», գրում է մանր գյուղատնտեսության ամենակլասիկ պաշտպաններից մեկը, Ս. Զուպրովը („Мелкое земледелие стр. 23.“) Զուպրովն այստեղ մենակ չէ: Նույն մոտիվը կրկնվում է վերոհիշյալ բոլոր հեղինակների գործերում: Յեվ բավական է հաշվի առնել մանր գյուղատնտեսական արտադրության պաշտպանության հենց միայն այս մի մոտիվը, հասկանալու համար, թե ինչքան ռեակցիոն է այդ թեորիան գյուղացու շահերի նկատմամբ ինչքան կործանիչ է: Բերնշտեյնը և Դավիդը, Բուլգակովը և Զուպրովը գյուղացու ամենամեծ դժբաղդությունը, նրա համար իսկական յերկնային անեծքի նշանակություն ունեցող այդ յերևույթը իբրև նրա բաղդավորության նշան, իբրև մանր

գյուղատնտեսական արտադրության մեծագույն առավելությունն են հայտարարում:

Պետք է ասել, որ ամոթխածությունից թե համեստությունից դրդված, բուրժուազիայի այդ գիտնականները ճշմարտության միայն մի մասն են բացում, որովհետև իր արտադրանքի վաճառքից գյուղացին շատ հաճախ ոչ թե իր աշխատավարձը, այլ միայն աշխատավարձի ֆիզիքական մինիմումն է ստանում: Բացի, թշվառության և անկուլտուրականության գնքով է, որ մանր գյուղացին պահպանում է իր թղթային սեփականությունն ու տնտեսությունը: Այստեղ գյուղատնտեսության ծայրահեղ անկման, նրա կատարյալ անօգնական վիճակի հետ գործ ունենք: Յեվ ահա այդ վիճակն է, որ ռեֆորմիստ–սոցիալիստներն ու բուրժուազիայի իդեոլոգները գյուղացու համար իբրև նախանձելի վիճակ են հռչակում, որովհետև շուկայի ցածր գներին և ճգնաժամերին նման տնտեսությունները դիմանում են, այն ինչ խոշոր կապիտալիստական արտադրությունը կործանվում է: Պարզ է, որ նման պայմաններում կապիտալիստական և ոչ մի ձեռնարկ աշխատել չի կարող, որովհետև զուրկ կլինի ոչ միայն տեխնիկան կատարելագործելու և արտադրությունն ընդարձակելու, այլ նաև կապիտալն ամեն անգամ վերականգնելու և բանվորներին բավարարելու միջոցներից:

VI.

Մանր գյուղատնտեսական արտադրության ամենակլասիկ անալիզը տվել է Մարքսը, գլխավորապես իր «Հավելյալ արժեքի թեորիաների» II հատորում և «Կապիտալի» I ու III հատորներում: Նույն խնդրին նա անդրադառնում է և իր բազմաթիվ այլ գործերում, որոնցից այստեղ կհիշատակենք միայն «Լյուի Բոնապարտի 18–ն Բրյումերի»: Ըստ Մարքսի ուսմունքի, մանր արտադրությունը գյուղատնտեսության մեջ մահվան է դատապարտված ոչ պակաս չափով, քան արդյունաբերության մեջ: Դրա հետ միաժամանակ, խոշոր արտադրության անցնելու համար գյուղատնտեսությունը ոչ պակաս տվյալներ ունի, քան արդյունաբերությունը: Մարքսը չի ժխտում այն, որ կապիտալիզմի շրջանում աշխատանքի արտադրողականությունը գործարանային արդյունաբերության մեջ ավելի արագ տեմպով է աճում, քան գյուղատնտեսության մեջ: Սակայն այս յերևույթը ժամանակավոր է համարում և գյուղատնտեսական խոշոր արտադրության նկատմամբ բոլորովին այլ յեզրակացության է գալիս, քան բուրժուական գիտությունը: Կապիտալիզմի բուռն զարգացման շրջանում, գրում է Մարքսը «Հավելյալ արժեքի թեորիաների» II–րդ հատորում, աշխատանքի արտադրողականությունը գործարանային արդյունաբերության մեջ ավելի արագ է աճում, քան գյուղատնտեսության մեջ: Այնուհետև տնտեսության այդ յերկու ճյուղերում էլ արտադրու-

ղականությունն աճում է, թեև վոչ հավասար չափով: Սակայն, շարունակում է Մարքսը, արդյունաբերության վերելքի մի վորոշ բարձր աստիճանի վրա «անհամաչափությունը պետք է նվազի, այսինքն հողագործության մեջ արտադրողականության աճումը պետք է համեմատաբար ավելի արագ կերպով կատարվի, քան արդյունաբերության մեջ»: Մարքսը նման յեզրակացության է հանգում վոչ միայն այն պատճառով, վոր կապիտալիզմի վերելքի ամեն մի նոր ետապ գյուղատնտեսության մեջ ել ուժեղացնում է կապիտալիստական տարրերը և խոշոր գյուղատնտեսություն կազմակերպելու համար անհրաժեշտ նյութական բազա յե ստեղծում, այլ և այն պատճառով, վոր խոշոր գործարանային արդյունաբերության գիտական հիմքը կազմող մեխանիկան արդեն 18-րդ դարում զարգացած, ձևակերպված գիտություն եր, այն ինչ միայն 19-րդ դարում են զարգանում «այն գիտությունները, վորոնք գյուղատնտեսությանը շատ ավելի մեծ չափով են անմիջական հիմք ծառայում, քան արդյունաբերությանը, այն է՝ քիմիան, յերկրաբանությունը և ֆիզիոլոգիան»*):

Կասկածից դուրս է, վոր սոցիալիզմի առաջին շրջանում արտադրողական ուժերը գյուղատնտեսության մեջ շատ ավելի արագ տեմպով են զարգանալու, քան գործարանային արդյունաբերության մեջ, վորովհետև կապիտալիստական հասարակակարգում և՛ գիտությունը և՛ տեխնիկան գործարանային արդյունաբերության մեջ համարյա լրիվ են ոգտագործվում, այն ինչ այդ ասպարեզում գյուղատնտեսությունը մեծապես զիջում է գործարանային արդյունաբերությանը, և յերբ սոցիալիստական կարգերում կազատագրվի իր կապիտալիստական շղթաներից, յերբ գիտության ու տեխնիկայի ամենալայն ոգտագործման համար նրա առաջ այլ ևս վորևէ հասարակական սահմանափակումներ ու խոչընդոտներ գոյություն չեն ունենա՝ նրա զարգացումը բուռն ընթացք կստանա և իր վերելքի տեմպով գյուղատնտեսությունը մի ժամանակ արդյունաբերությանը կգերազանցի, մինչև վոր նրան հասնի, մինչև վոր մեքենայացման և ռացիոնալացման բնագավառներում տնտեսության բոլոր ճյուղերը մոտավորապես կհավասարվեն: Սոցիալիզմի սկզբնական շրջանում, գյուղատնտեսությունն իր տրամադրության տակ չոգտագործած տեխնիկայի և գիտության շատ ավելի հարուստ պաշար կունենա, քան արդյունաբերությունը: Ինչպես արդեն այսոր զարգացած կաթնատնտեսությունը մեքենայական գործարանային արտադրության է վերածված, այնպես ել սոցիալիստական հասարակության մեջ գյուղատնտեսության բոլոր ճյուղերը մեքենայացման կենթարկվեն և գործարանային արտադրության ձևեր կըս-

*) „Теории прибав. ценности", т. II, ч. 2, стр. 202.

տանան: Զարգացած սոցիալիստական հասարակության մեջ դաշտը մի գործարան է ներկայացնելու:

Մանր գյուղատնտեսության ջատագովումը բուրժուական գիտության մեջ շատ հաճախ նրանով է պատճառաբանվում, վոր գյուղատնտեսությունը մի արտադրություն է, վորի պրոցեսում վճռական դեր են կատարում վոչ թե տեխնիքական, այլ բնական ուժերը: Բնական ուժերի և հարստությունների մեծ դերը գյուղատնտեսության մեջ ժխտելն, իհարկե, անհնարին է, սակայն դրանով դեռ չի ասված, վորպես թե գյուղատնտեսական արտադրության եվոլյուցիայի խնդիրները բնական միջավայրի պայմաններով են լուծում: Ինչպես հասարակական միջավայրը, այնպես ել բնական միջավայրն մշտական ու անդադար փոփոխումների յեն յենթակա, սակայն բնության մեջ այդ փոփոխումներն անհամեմատ շատ ավելի դանդաղ են կատարվում, քան հասարակական կյանքում: Այդ տարբերությունն այնքան ավելի յե մեծանում, ինչքան ավելի մեր ժամանակին ենք մոտենում: Այնուհետև հայտնի յե, վոր բնական պայմանների փոփոխումը բնական ճանապարհով ավելի դանդաղ է կատարվում, քան մարդու ազդեցության տակ՝ աշխատանքի պրոցեսում: Արդեն յեռադաշտի շրջանի համար բնական ուժերի թեորիան վորոշ չափով հնացած եր, վորովհետև այդ ժամանակ, թեև վոչ ուժեղ չափով, գյուղացին փոփոխման եր յենթարկում յերկրագնդի յերեսը և հողի պարարտացման ու մշակման միջոցով նրա արտադրողականությունը բարձրացնում եր: Սակայն և այնպես, պատմության այդ դարում բնությունն ավելի զորեղ է, քան մարդը: Մինչև կապիտալիզմի դարը, գրում է Մարքսը նույն գործում, «հողագործությունն իր արտադրողականությամբ ավելի բարձր եր կանգնած, վորովհետև այդտեղ աշխատանքի պրոցեսին ոգնում է բնության ստեղծած մեքենան, վորովհետև ամեն մի արտադրող այդ մեքենայի ոգնությամբ է աշխատում: Այդ պատճառով ել հին աշխարհում և միջին դարերում գյուղատնտեսական արդյունքները համեմատաբար շատ ավելի աժան եյին, քան արդյունաբերական արդյունքները»:*)

Այն բոլոր ուսմունքները, վորոնք գյուղատնտեսության մեջ տիրապետող են համարում բնական ուժերը, դրանով հրաժարվում են պատմական տեսակետից և մեր տնտեսական ու հասարակական կյանքում մարդուն միայն պասիվ դեր են վերագրում: Միևնույն բնական պայմաններում գյուղատնտեսական արտադրության տարբեր ձևեր ու յեղանակներ են հնարավոր, վորոնց առաջացումով ու հաստատումով մարդիկ վոչ թե բնությանը, այլ իրենք իրենց են պարտական, իրենց աշխատանքի ու կռվի պրոցեսներում

*) „Теории", т. II, г. 2, стр. 124.

ստեղծած նոր արտադրողական ուժերին և նոր հասարակական հարաբերություններին են պարտական։ Առաջավոր կապիտալիստական յերկրների հողագործության բարձր արտադրողականությունը վոչ թե այդ յերկրների հողի բնական հարստություններով, այլ նրա մշակման ու պարարտացման միջոցներով է պայմանավորվում։ Ճիշտ է, հողի բնական վորակը գյուղատնտեսական բարձր կուլտուրաների շրջաններում էլ շարունակ կարևոր դեր է կատարում, սակայն տեխնիկայի ու գիտության զարգացման հետ միասին նրա այդ դերն աստիճանաբար նվազում է և իրենց նշանակությամբ ավելի ու ավելի մեծ չափերով գերազանցող են դառնում տեխնիկան ու գիտությունը։ Բնական ուժերի ջատագովումը պատմության անցած շրջաններին, նրա նախկապիտալիստական շրջաններին է վերաբերվում։ Յեվ վերջապես չե՞ վոր բնական ուժերը և բնական ամբողջ միջավայրը խոշոր արդյունաբերության նկատմամբ էլ—վոչ միայն լեռնարդյունաբերության, այլ և գործարանային արդյունաբերության մեջ— շատ կարևոր դեր են կատարում, սակայն դեռ վոչ վոքի գլուխը չի յեկել պնդելու, վոր այժմյան խոշոր արդյունաբերությունը «բնական յերևույթ է», վորովհետև բնությունից ենք վերցնում վոչ միայն ամբողջ հում նյութը, այլ և այն գոլորշին, գազը, ելեքտրական եներգիան, վորոնց գործադրումով միայն հնարավոր դարձավ ստեղծել այժմյան խոշոր արդյունաբերությունը։

Մանր հողագործության մեջ բուրժուազիայի իդեոլոգներն այնքան առավելություններ են գտնում, վոր նույն իսկ մրցման բնագավառում նրան ավելի կայուն, ավելի դիմացկուն, ավելի զորեղ են համարում, քան խոշոր արդյունաբերությունը։ Վորոշ պայմաններում, գրում է, որինակի համար, Բուլգակովն իր « Капитализм и земледелие» գործում, «մանր տնտեսություններում հողագործությունը կարող է զարգանալ նաև գների անկման շրջանում, յերբ խոշոր տնտեսությունն ուժասպառ է լինում»։ Գների անկման ազդեցությունը մանր գյուղատնտեսական արտադրության վրա պարզելու համար գիտական հարուստ պաշարով զինվելու կարիք էլ չկա։ Բավական է վերհիշել, թե այդ ասպարեզում ինչ էր կատարվում մեզ մոտ 1923—1924 տնտեսական տարում՝ հացի գների ծայրահեղ անկման այդ շրջանում, մանավանդ հարավային Ռուսաստանում և հյուսիսային Կովկասում։ Յեթե Բուլգակովը և նմանները գյուղացիների համար գրեյին, նման անհեթեթություններ դուրս տալ նրանք չեյին համարձակվի, վորովհետև ամեն մի գյուղացի շատ լավ է իմանում, թե գյուղատնտեսական մթերքների գների անկումն իր տնտեսության համար ինչքան կործանիչ է։ Հակառակ բուրժուական գիտնականներին, Մարքսը հայտարարում է, վոր «տասը բերքի տարիներն արտադրության այդ յեղանակի համար դժբաղդություն

են*»։ Յեվ մի այլ տեղ․ «բավական է, վոր մանր գյուղացու կովն ընկնի, և նա արդեն անընդունակ է դառնում նորից սկսել իր վերարտադրությունը հին շրջանակներում**»։

*) «Կապիտալ», հատ. III, գլ. 47, § 5 և **) գլ. 36.

Գ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՆՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

I

Գյուղատնտեսական խոշոր և մանր արտադրության շուրջը մղվող թեորետիկական վեճը պրոլետարական հեղափոխության դարում համաշխարհային—պատմական նշանակություն ունեցող մի անսահման խոշոր քաղաքական խնդիր է դարձել: Առաջին պրոլետարական հեղափոխությունը մի յերկրում կատարվեց, վորի բնակչության 82 տոկոսը մանր գյուղացիությունն է և նրա տնտեսության մեջ գերիշխող է հանդիսանում յեռադաշտը: Դրա հետ միաժամանակ, մեր դարը գաղութային ու կիսագաղութային ժողովուրդների մասսայական ազատագրական շարժումների մի դար է, յերբ իրենց գոյության համարյա միջնադարյան պայմաններից այդ ժողովուրդները կարող են սոցիալիստական կարգերի անցնել՝ առանց վերապրելու արտադրության կապիտալիստական շրջանը: Հետամնաց ու գաղութային բոլոր յերկրներում բնակչության ճնշող մեծամասնությունը մանր գյուղացիներն են: Համաշխարհային մասշտաբով վերցրած, նրանք կրկին բնակչության մեծամասնությունն են: Նման պայմաններում, հետամնաց յերկրների յեռադաշտի ու ընդհանրապես մանր գյուղատնտեսական արտադրության ապագան, նրանց առաջիկա զարգացման ուղիները թե այդ յերկրների գյուղացիության և թե միջազգային պրոլետարիատի ու նրա դասակարգային հեղափոխության համար ուղղակի վճռական նշանակություն են ստանում:

Կապիտալիստական տնտեսությունը գերազանցորեն համաշխարհային է: Առաջավոր ամեն մի կապիտալիստական յերկրի տնտեսություն հարյուրավոր թելերով կապված է վոչ միայն մյուս կապիտալիստական յերկրների շուկայի, այլ և տնտեսապես հետամնաց յերկրների ու գաղութային յերկրների շուկաների հետ: Իրենց հերթին, սոցիալիստական տնտեսությունը և սոցիալիստական հասարակությունն էլ չեն կարող սահմանափակվել այն յերկրների շրջանակներով, վորտեղ այժմ զարգացած կապիտալիստական արդյունաբերությունն է տիրապետում: Ճիշտ է, այդ յերկրներում է, վոր առաջին հերթին կատարվելու յե պրոլետարական հեղափոխությունը, սա-

կայն այդ յերկրների սոցիալիստական հասարակության շահն է, վոր սոցիալիստական կարգերն աստիճանաբար ամբողջ աշխարհի վրա տարածվեն: Հակառակ պարագայում, այժմյան կապիտալիստական յերկրների տերրիտորիայի վրա կազմակերպված սոցիալիստական հասարակությունը վոչ միայն վորոշ նյութերի պակաս կզգա, այլ և իր գոյությունը վտանգի կենթարկի այն կապիտալիզմի կողմից, վորն անխուսափելիորեն կառաջանա այժմյան վոչ-կապիտալիստական, տնտեսապես հետամնաց յերկրներում, յեթե միջազգային պրոլետարիատը և հետագայի սոցիալիստական հասարակությունը չկարողանան խանգարել կապիտալիզմի հաստատմանն այդ յերկրներում և հենց այժմյանից նրանց ազգային-ազատագրական շարժումներին այնպիսի բնույթ չտան, վոր նրանք վոչ թե բուրժուազիայի դիկտատուրայով, այլ բանվորա-գյուղացիական իշխանության հաստատումով, խորհրդային կարգերի հաստատումով պսակվեն: Անկախ իր այդ տնտեսական ու քաղաքական շահերից, պրոլետարիատը և հետագայի սոցիալիստական հասարակությունը չեն կարող հանդուրժել, վոր յերկրագնդի վորևէ անկյունում կապիտալիստական կամ վորևէ այլ ձևի շահագործում գոյություն ունենա, չեն կարող իրենց պրոլետարական ու սոցիալիստական ոգնությունը չհասցնել հետամնաց յերկրների այն մասսայական ազատագրական շարժումներին, վորոնք այսօր արդեն համաշխարհային կապիտալի գոյությանն ու տարածմանը ամենամեծ վտանգ են սպառնում:

Չինաստանի հեղափոխության ընթացքը և Անգլիայի ու այլ կապիտալիստական յերկրների կողմից Խորհրդային Միության դեմ ուղղած հակախորհրդային քաղաքականությունը շահագործվող ու ճնշված ամբողջ մարդկությանը վերին աստիճանի համոզեցուցիչ ու հարուստ նյութ են տալիս այն մասին, վոր կապիտալիզմի գոյության դեմ ուղղած կռիվը՝ պրոլետարիատի դասակարգային հեղափոխական շարժումը, միայն այժմյան բուրժուական յերկրների շրջանակներով սահմանափակվել չի կարող, վոր Չինաստանի կամ Հարավային Աֆրիկայի ժողովրդական մասսաների ազատագրական շարժումը կապիտալիստական յերկրների պրոլետարական շարժման հաջողություններից նույնքան կախումն ունի, այդ շարժման հաջողություններով կամ պարտություններով նույնքան է պայմանավորվում, ինչքան և միջազգային պրոլետարիատի կոմունիստական շարժման վիճակը՝ հետամնաց ու գաղութային ժողովուրդների ազատագրական շարժման վիճակով է պայմանավորվում: Այն հարձակողական քաղաքականությունը, որինակ, վոր 1927 թվականին վարում է անգլիական բուրժուազիան թե անգլիական պրոլետարիատի ու Խորհրդային Միության և թե ասիական ու աֆրիկական մի

չորք ժողովուրդների նկատմամբ և ամենից առաջ Չինաստանի նկատմամբ, այդ հարձակողական քաղաքականությունն անմիջական հետևանք է այն պարտության, վոր անգլիական պրոլետարիատը կրեց 1926 թվականին: Յեթե պրոլետարիատի կոմունիստական հեղափոխության և հետամնաց ժողովուրդների ազատագրական շարժումների խնդիրներին համաշխարհային մասշտաբով մոտենանք, կտեսնենք ու կհամոզվենք, վոր այդ յերկու շարժումների հաջողության հիմնական պայմանը, նրանց շահն է՝ պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության միջև համաշխարհային մասշտաբով նույն համերաշխությունը հաստատել, նույն դաշինքը կնքել, վորոնց գործադրումը Հոկտեմբերյան հեղափոխության պրոցեսում Խորհրդային Միության բանվորին ու գյուղացուն այնքան մեծ հաղթությունների հասցրեց:

Այն պայմանները, վորոնց մեջ գյուղացիությունը դրվեց բուրժուական հեղափոխությունների շրջանում, պրոլետարական հեղափոխության շրջանում նրա համար բոլորովին պարտադիր չեն: Յեթե արդեն գոյություն չունենար Խորհրդային Միությունը և յեթե ընդհանրապես իմպերիալիզմը սոցիալիզմի անմիջական նախադուռը չլիներ, յեթե հետևապես մեր ապրած դարաշրջանը պրոլետարական հեղափոխության դարաշրջան չլիներ, այդ դեպքում հետամնաց յերկրների տնտեսական զարգացումը նույն ուղիներով և նույն յեղանակներով կկատարվեր, վորոնք հատուկ են զարգացած ամեն մի բուրժուական յերկրի պատմությանը, այդ դեպքում հետամնաց յերկրների գյուղացիությունը սեփականազրկման և թշվառության նույն ծանր վիճակին կդատապարտվեր, վորին իր ժամանակին, բուրժուական հեղափոխությունների շրջանում, գյուղացիությունն ամենուրեք դատապարտվում եր: Յեթե հետամնաց յերկրների կապիտալիստական զարգացումը իմպերիալիզմի դարում ել պատմականորեն անխուսափելի լիներ, այդ յերկրների գյուղացիության հետամնաց տնտեսությունը և նրանց սեփականությունը պաշտպանել միայն ռեակցիոն քաղաքական կուսակցությունները կարող եյին: Սակայն ամբողջ խնդիրը հենց այն է, վոր իմպերիալիզմը փտող, մեռնող կապիտալիզմի և պրոլետարական հեղափոխությունների այն շրջանն է, յերբ արդյունաբերության կապիտալիստական յեղանակը և բուրժուական կարգերը հնարավոր է ընդհանրապես վերացնել և հետամնաց յերկրների տնտեսական ու կուլտուրական զարգացումը սոցիալիզմի ուղիով տանել, այսինքն այդ յերկրների բանվորական ու գյուղացիական մասսաներին ազատել այն բոլոր չարիքներից, վորոնք անհրաժեշտաբեն կապված են կապիտալիզմի տարածման հետ:

Իր ժամանակին, Ռուսաստանի մարքսիստները նարոդնիկների և սոցիալիստ-հեղափոխականների գյուղացիական ծրագիրը ռեակցիոն հայտարարեցին և նրանց դեմ անողոք կռիվ եյին մղում, վորովհետև խնդիրը կապիտալիզմի զարգացման շրջանին եր վերաբերում, յերբ վերոհիշյալ գյուղացիական ծրագրի պաշտպանությունը և կիրառումը յերկրի տնտեսական ու կուլտուրական առաջխաղացման գործն առաջ տանելու փոխարեն հետ եր տանելու: Ն. Միխայլովսկին, այդ ուղղության խոշորագույն իդեոլոգն ու հեղինակությունը, 1872 թ. իր հոդվածներից մեկում հայտարարում եր, վոր բանվորական հարցը Ռուսաստանում բոլորովին այլ բովանդակություն ունի և բոլորովին այլ յեղանակներով է լուծվելու, քան Արևմտյան Յեվրոպայում: «Բանվորական հարցը Ռուսաստանում, գրում է նա այնտեղ, պահպանողական հարց է, վորովհետև մեզ մոտ պահանջվում է միայն աշխատանքի պայմանները պահպանել աշխատավորի ձեռքում, այժմյան սեփականատերերին ապահովել իրենց սեփականությունը»*): Իբրև ապացույց իր այդ դրության, Միխայլովսկին հայտարարում եր, վոր նույնիսկ Պետերբուրգի նման մի խոշոր արդյունաբերական կենտրոնի մոտերքը դեռ գյուղեր կան, վորոնց բնակիչները սեփական աշխատանքի արդյունքներով են բավարարում իրենց բոլոր պահանջները (սեփական հող, սեփական հաց, սեփական բուրդ, սեփական աշխատանքով պատրաստած հագուստեղեն և այլն):

Յերկու դեպքում ել Միխայլովսկին մանր բուրժուական ռեակցիոն ուտոպիաներով է սնվում: Սոցիալիզմի հիմքը՝ խոշոր գործարանային արդյունաբերությունն է: Ինչպես վերը ցույց տվինք, սոցիալական գյուղատնտեսություն կազմակերպել միայն այն տեխնիկայի ու կուլտուրայի միջոցով է հնարավոր, վորոնք այժմյան խոշոր գործարանային արդյունաբերության մեջ ու նրա դարում են ստեղծվում: Հասկանալի յե, վոր առանց կատարելագործված տեխնիկայի ու զարգացած գիտությունների առավել ևս անհնարին է սոցիալիստական գյուղատնտեսություն կազմակերպել: Ռուսաստանում մանր բուրժուական սոցիալիզմի իդեոլոգները ռեակցիոն ուտոպիաներ եյին վոչ միայն այն պատճառով, վոր առանց սոցիալիզմի համար պահանջվող նյութական ու բարոյական տվյալների ձգտում եյին սոցիալիզմ կառուցել, յելակետ ունենալով արդեն քայքայված գյուղական համայնքը և գյուղացու մանր արտադրությունը, այլ և այն պատճառով, վոր չեյին ել հետաքրքրվում այն խնդրով, թե այդ յուրատեսակ սոցիալիզմի կառուցման համար պետության ինչ ձև, քաղաքական ինչ զենք է պահանջվում: Այդ ամենից անկախ, իրականությունը բոլորովին չեր համապատասխանում նաև նրանց տեսակետը ռուսական համայնքի և գյուղացու արտադրության տակ յեղած սեփականության մասին:

* Собр. соч., т. I (изд. 1911 г.), стр. 703.

Ամեն մի ուտոպիա անզորության նշան է, համապատասխան դասակարգի անօգնական վիճակից է բխում: Նարոդնիկների և սոցիալիստ–հեղափոխականների ծրագրերն ուտոպիական եյին, վորովհետև բուրժուական կարգերում և կապիտալիզմի վերելքի շրջանում խոշոր կապիտալի հարվածներին մանր արտադրությունը դիմանալ ընդհանրապես անզոր է, վորովհետև ազատ մրցումը հենց նրա կործանման համար գոյություն ունի: Այդ ծրագիրը ուտոպիական եր, վորովհետև մանր գյուղատնտեսական արտադրության և արհեստավորների տեխնիկայով ու կուլտուրայով սոցիալիզմ կառուցել չի կարելի: Այդ ուղղությունների ներկայացուցիչները միայն ուտոպիաներ եյին տարածում մանր արտադրողների շարքերում, վորոնք կապիտալիզմի շրջանում անխուսափելիորեն սեփականազրկման և տնտեսական կործանման են դատապարտված: Միևնույն ժամանակ, նրանց ուտոպիան ռեակցիոն եր, վորովհետև մանր բուրժուական սոցիալիզմը հրաժարվում է կապիտալիզմից, հրաժարվում է նրա տեխնիկայից ու կուլտուրայից և միջնադարի տեխնիկայով ու կուլտուրայով է, վոր փաստորեն ծրագրում է սոցիալիզմ կառուցել: «Ո՞րն է հին կոոպերատորների պլանների ֆանտաստիկությունը, Ռոբերտ Օուենից սկսած», հարցնում է Լենինը «Կոոպերացիայի մասին» իր հռչակավոր հոդվածում և հարցին հետևյալ պատասխանն է տալիս. «Նրանք յերազում եյին այժմյան հասարակությունից խաղաղ ճանապարհով սոցիալիզմի անցնել, հաշվի չառնելով մի այնքան հիմնական խնդիր, ինչպիսին է դասակարգային կռվի խնդիրը, քաղաքական իշխանության նվաճման խնդիրը բանվոր դասակարգի կողմից, շահագործողների դասակարգի տիրապետության կործանման խնդիրը»*):

II

Գյուղի և քաղաքի մանր արտադրողների համար պրոլետարական հեղափոխությունը գոյության և զարգացման բոլորովին այլ պայմաններ է ստեղծում: Թեև կապիտալիզմը մեզ մոտ դեռ վերջնականապես վերացած չէ, սակայն մեր արդյունաբերության մեջ գերիշխող է հանդիսանում պետական սեկտորը, այսինքն սոցիալիստական արդյունաբերությունը, իսկ մասնավոր և պետական կապիտալիզմը մեր արդյունաբերության մեջ բոլորովին աննշան դեր են կատարում: Խ.Ս.Հ. Միության խոշոր արդյունաբերության մեջ 1925—26 տնտեսական տարում արտադրանքի 91,6% պետական արդյունաբերությանն եր պատկանում, 4,3%—կոոպերատիվ և միայն 4,1%—մասնավոր ու կոնցեսիոն արդյունաբերությանը: Պարզ է, վոր 95,9 տոկոսի հանդեպ 4,1% այն աստիճան անզոր է, վոր յերկրի ընդհանուր տնտեսական քաղաքականությունը և նրա տնտեսական զարգացման ուղիներն ու նրա վիճակը վորոշելու խնդրում վճռական դեր խաղալ չի կարող: Հողի, համարյա ամբողջ խոշոր արդյունաբերության, ֆինանսների և արտաքին առևտրի ազգայնացման ու պրոլետարական դիկտատուրայի պայմաններում մանր արտադրողներին կործանում այլևս չի սպառնում: Պրոլետարական պետության գոյության միակ նպատակը սոցիալիզմի կառուցումն է, իսկ սոցիալիզմը նրանցից վոչ վոքի սեփականազուրկ անել, տնտեսապես կործանել և շահագործել չի կարող: Մանր արտադրողներին, գլխավորապես գյուղացիներին, սոցիալիզմն ապահովում է վոչ միայն նրանց այժմյան սեփականությունը, այլ և նախկին շահագործող դասակարգերի՝ կալվածատերերի և կապիտալիստների արդեն ազգայնացրած սեփականությունը, սակայն վոչ իբրև մասնավոր, այլ իբրև հասարակական սեփականություն, իբրև սոցիալիստական ամբողջ հասարակության սեփականություն: Կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը գյուղացիներին և այլ մանր արտադրողներին սեփականազուրկ չեն անում, սակայն խոսքով ու գործով նրանց համոզում են իրենց մանր արտադրությունից հրաժարվել և կոոպերատիվ արտադրության միջոցով աստիճանաբար սոցիալիստական արտադրության անցնել:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը մեզ մոտ տիրապետող եր մասնավոր սեփականությունը, իբրև կապիտալիստական և կալվածատիրական սեփականություն: Իսկ արտադրության միջոցների մասնավոր սեփականություն ունեցող ամեն մի հասարակակարգում խոշոր արտադրության կազմակերպումը բնականաբար մանր արտադրողների մասսայական սեփականազրկում ու տնտեսական կործանում է պահանջում: Այժմյան կատարելագործված տեխնիկան և գիտությունը սոցիալիզմի հիմքն են, իսկ սրանց առաջացումը վոչ թե մանր, այլ խոշոր արտադրության հետ է կապված: Մանր արտադրության շրջանակներում տեխնիկան իր զարգացման գագաթնակետին հասավ միջնադարի արհեստանոցներում: Նրա կատարելագործման մի նոր, ավելի բարձր աստիճանի համար խոշոր արդյունաբերություն և կապիտալ եր պահանջվում: Կապիտալիստական խոշոր արդյունաբերությունը իր տեխնիկայի ու գիտության հետ միասին՝ սոցիալիզմի ամենակարևոր նախապայմանն են: Ահա ինչու ռեակցիոն է ամեն մի շարժում, վորի նպատակն է պահպանել մանր արտադրությունը՝ խոշոր արտադրության առաջացումն ու զարգացումը խանգարելու ճանապարհով: Բայց յերբ պրոլետարիատը, ոգտվելով խոշոր կապիտալիստական արտադրությունից ու այն իրեն յենթարկելով, տվյալ յերկրում իր իշխանությունն է հաստատում, այդ դեպքում խոշոր սոցիալիստական արդյունաբերության և մանր մասնավոր տնտեսության միջև ուղղակի հակա—

*) Հատ. 18, մասն II, էջ 133:

ռակ հարաբերություն է ստեղծվում: Պրոլետարիատը, երբ իշխող դասակարգ, ձգտում է վերացնել քաղաքի և գյուղի մանր արտադրությունը, սակայն իր այդ ձգտումը նա ոչ թե մանր արտադրողների տնտեսական կործանման գնով է իրագործում, այլ նրանց տնտեսական ու կուլտուրական վերածննդի միջոցով: Պրոլետարական պետությունը մանր արտադրողներին կազմակերպում, գիտակցություն է բերում, նրանց իր սոցիալիստական շինարարության գործին հաղորդակից է անում և նրանց նյութական ու բարոյական ամեն մի հնարավոր աջակցություն է ցույց տալիս, որպեսզի նրանք կարողանան ոտքի կանգնել, իրենց տնտեսությունը բարձրացնել և գյուղի ու քաղաքի տնտեսության մեջ կոոպերատիվ արտադրություն մտցնելով, այդպիսով սոցիալիզմի հիմքը դնեն՝ խոշոր արտադրություն կազմակերպեն:

Մանր գյուղատնտեսական կամ արհեստավորական արտադրությունից սոցիալիզմի անցնելու երկու ճանապարհ կա: Նրանցից մեկն այն է, որ վերջին դարերի ընթացքում կատարել է կապիտալը՝ ժողովրդական լայն մասսաների պրոլետարիզացիայի ճանապարհը: Այդ ուղիով ընթանալ Խորհրդային իշխանությունը չի կարող, սակայն իր հերթին անհնարին կլինի սոցիալիզմի վերջնական հաղթությունը, եթե մանր արտադրությունը շարունակի իր գոյությունը՝ մանավանդ Խորհրդային Միության նման տնտեսապես հետամնաց մի երկրում, որտեղ գյուղատնտեսության մեջ մանր արտադրությունը տիրապետող է հանդիսանում: Պետք է կամ սոցիալիզմից հրաժարվել, կամ գյուղացիական մասսային գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի շուրջը կազմակերպել: Գյուղատնտեսական կոոպերացիայից դուրս, սոցիալիստական տնտեսություն ստեղծելու այլ ուղիներ պրոլետարիատի տրամադրության տակ չկա, որովհետև մեր պետական-հասարակական պայմաններում կոոպերացիան խոշոր արտադրություն կազմելու միակ միջոցն է:

Սոցիալիստական հասարակությունը վերջ է դնելու և՛ բանվորի և՛ գյուղացու գոյությանը: Նրա տնտեսությունը պլանաչափ կերպով կազմակերպված մի ամբողջություն կներկայացնի, որը կընդգրկի և գործարանային արդյունաբերությունն ու երկրագործությունը և՛ գյուղատնտեսության բոլոր ճյուղերը: Զարգացած սոցիալիստական կարգերում կվերանա նաև այն անդունդը, որը բուրժուական հասարակակարգում գյուղի և քաղաքի միջև գոյություն ունի: Այլևս ոչ քաղաք ու գյուղ և ոչ քաղաքի պրոլետար կամ գյուղի մանր սեփականատեր կլինի: Իր այս նպատակն իրագործելու համար է, որ իր դիկտատուրայի շրջանում պրոլետարիատը գյուղացիական մասսային պետք է կոոպերացման ենթարկի: Սոցիալիզմը շահագործման ու ճնշման բոլոր ձևերի վերացումն է: Իր հեղափոխության հաղթությունից հետո պրոլետարիատը պետք է օգտագործի իր պետական ապարատն ու իր նյութական միջոցները՝

տնտեսապես հետամնաց և շահագործվող ամբողջ մասսայի համար գոյության պայմաններ ստեղծելու, որոնք վերացնեյին գոյություն ունեցող շահագործումը և անհնարին դարձնեյին շահագործման որևէ նոր ձևերի առաջացումը: Իսկ շահագործման հիմնական պայմանը մասնավոր սեփականությունն է: Ահա ինչու պրոլետարիատի դասակարգային հեղափոխության նվաճումները վերջնականապես ապահովելու համար անհրաժեշտ է վերջ դնել մասնավոր սեփականությանը նաև տնտեսության այն ճյուղերում, որտեղ մանր արտադրությունն է տիրապետում, սակայն վերջ դնել ոչ թե կապիտալիստների ու կալվածատերերի կողմից ընդգրկված բարբարոս ու վայրագ յեղանակներով, այլ մանր արտադրողների տնտեսությունը բարձրացնելով, այդ տնտեսությունը կոոպերատիվ հիմունքներով կազմակերպելով, վերջ դնել ոչ թե հակառակ մանր արտադրողների կամքին ու ցանկությանը, նրանց դեմ կռվելով, այլ նրանց համաձայնությամբ, նրանց ձեռքով ու հօգուտ նրանց սոցիալիստական վերածննդի:

Այս վերջին պրոցեսը շատ ավելի յերկարատև է լինելու, քան կապիտալի ու կալվածատիրության դեմ ուղղած կռիվը: Մանր արտադրությունը կոոպերատիվ խոշոր արտադրության վերածելու համար պրոլետարական իշխանությանը ոչ թե քաղաքական զորություն, այլ նյութական միջոցներ են պակասում: Դրա համար ոչ միայն գյուղացին պետք է իր տնտեսությունը բարձրացնի, այլ և բանվորն իր պետական գործարաններում պետք է այն բոլոր մեքենաները, գործիքները և արտադրության այլ միջոցներն արտադրի, որոնք կոոպերատիվ տնտեսության համար անհրաժեշտ են: Գյուղատնտեսությունը արտադրության կատարելագործված գործիքներով ապահովելու անհրաժեշտությունը Խորհրդային իշխանության առաջ կանգնած ամենաանհետաձգելի, ամենակարևոր խնդիրներից մեկն է: Այլ կերպ գյուղացիության կոոպերացումն ամենամեծ դժվարությունների կհանդիպի, իսկ գյուղատնտեսության մեջ կազմակերպվող կոոպերատիվ ընկերություններն իրենց արտադրությունը լայն հիմունքների վրա դնելու և գիտական յեղանակներով կազմակերպելու հնարավորությունից զուրկ կմնան: Կալվածատիրությունը վերացած է և Խորհրդային իշխանության պայմաններում վերականգնվել չի կարող: Խոշոր գյուղատնտեսություն մեզ մոտ միայն կոոպերատիվ սկզբունքներով կարելի յե կազմակերպել, իսկ խոշոր գյուղատնտեսական արտադրությունը նպատակահարմար ու շահավետ է միայն արտադրության մեքենայացման պայմաններում:

III

II Ինտերնացիոնալը և ամբողջ աշխարհի տիրացուները ներկա խնդրում այն տեսակետն են պաշտպանում, որ պրոլետարական հեղափոխությունն իր

նպատակին հասնել, այսինքն սոցիալիստական հասարակությունով փոխարինել միայն այն ժամանակ կարող է, երբ գյուղի ու քաղաքի մանր արտադրությունն ընդհանրապես կվերանա և ամբողջ աշխարհում խոշոր կապիտալիստական արտադրություն կհաստատվի: Մինչ այդ ժամանակ սոցիալիզմի հնարավորությունը նրանք ժխտում են նույնիսկ Անգլիայի կամ Գերմանիայի համար: Բուրժուազիան շատ բաղձալի կլիներ, եթե II Ինտերնացիոնալի այս ուսմունքն իրականությունից բխեր, իրականությանը գեթ նվազագույն չափով համապատասխաներ: Այդ կնշանակեր չէ թե սոցիալիզմը մի քանի հարյուր տարով հետաձգել, ինչպես ենթադրում է բուրժուազիան, այլ կապիտալիստական կարգերն ընդհանրապես մշտնջենական դարձնել, սոցիալիստական հեղափոխության ամեն մի ծրագրից խաղաղ հրաժարվել: Լենինը թեորետիկապես բացատրեց, որ իմպերիալիզմը մեռնող կապիտալիզմն է և որ հետևապես կապիտալիզմի զարգացումը բոլոր երկրներում պատմականորեն անհնարին է: Ովքեր ենթադրում են, որ այժմյան բոլոր հետամնաց ու գաղութային երկրներն իր ժամանակին Անգլիայի կամ Գերմանիայի նման կապիտալիստական տնտեսություն են ունենալու և որ այդ երկրներում հնարավոր է երբևիցե հասարակական այն նույն հարաբերություններն առաջացնել, որոնք այժմ առաջավոր կապիտալիստական երկրներին են հատուկ, նրանք ֆինանսական կապիտալի և իմպերիալիստական քաղաքականության մասին ընդհանրապես որևէ գաղափար չունեն, կապիտալիզմի այժմյան իմպերիալիստական շրջանին նույն չափանիշով են մոտենում, որը կապիտալիզմի նախորդ շրջաններումն էր գործադրելի, նույն գաղափարներով են տնվում, որոնք արդյունաբերական կապիտալի շրջանին են համապատասխանում և այսօրվա համար բոլորովին հնացել, ժանգոտել են:

Իբրև թեորետիկոս՝ Լենինը տվեց իմպերիալիզմի լավագույն գիտական վերլուծումը: Իբրև Հոկտեմբերյան հեղափոխության ղեկավար՝ պրոլետարական առաջին պետության հաստատումով, մեր բանվորության և գյուղացիության պատմական մեծ հաղթություններով Լենինն անժխտելի կերպով ապացուցեց իր ուսմունքի ճշմարտությունը: Բանվորական շարժման վիճակը բուրժուական երկրներում և ասիական ու աֆրիկական մի շարք հետամնաց ժողովուրդների ազատագրական շարժումներն ամեն օր, ամեն րոպե Լենինի ուսմունքի ճշտության նոր ու նոր ապացույցներ են տալիս: Իսկ այդ ուսմունքի ճշտության խոշորագույն և ամենափայլուն ապացույցը Խորհրդային Միության գոյությունն է, Խորհրդային իշխանության շինարարությունն է: Գյուղացիության և գյուղատնտեսության նկատմամբ վարած իր քաղաքականությամբ Խորհրդային իշխանությունը նաև այն ապացուցեց, որ բանվորի և գյուղացու դաշինքը հնարավոր է և երկու կողմերի համար էլ անսահման

շահավետ է ոչ միայն քաղաքացիական կռվի դաշտում, այլ և պրոլետարական դիկտատուրան հաստատելուց հետո՝ խաղաղ շինարարության ընթացքում:

Իր օրենսդրությունով և իր ամբողջ քաղաքականությունով Խորհրդային իշխանությունը խանգարում է գյուղացու սեփականազրկումը, հակառակ այն քաղաքականության, որն իր հեղափոխությունների ընթացքում վարում էր բուրժուազիան, ձգտելով գյուղացուն և արհեստավորին պրոլետարացնել, նրանց զրկել արտադրության միջոցներից և այդպիսով նրանց վարձու աշխատանքով ապրելու դժբախտությանը դատապարտել, այսինքն կապիտալին ստրկացնել: Մարդիկ, որոնք պատմության և թեորիայի բնագավառներում ուժեղ չեն, մերթ ընդ մերթ հայտարարություններ են անում այն իմաստով, իբր թե Խորհրդային իշխանությունը նարոդնիկների ու սոցիալիստ-հեղափոխականների հողային ծրագիրն է կիրառում: Ճիշտ է, երկու դեպքում էլ կռիվը գյուղացու պրոլետարացման դեմ է ուղղված, սակայն ամենքի համար այժմ գեթ պետք է պարզ լինի, որ այդ երկու ծրագրերի նմանությունը միայն ձևական ու ժամանակավոր բնույթ է կրում, որ նրանց մեջ հավասարության նշան դնողները նույն հաջողությամբ կարող են սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը կապիտալիստական համարել կամ սոցիալիստական հասարակության մեքենաներն իբրև կապիտալ ընդունել: Նման դեպքերում թեորեթիկական սխալմունքի զոհ չդառնալու համար, պետք է նախ և առաջ հաշվի առնել այն հասարակական հարաբերությունները, որոնց պայմաններում այդ երկու ծրագրերն իրականանալու էին և իրականանում են, պետք է հաշվի առնել այդ ծրագրերի իրականացման համապատասխան հնարավորությունները և նրանցով ձգտած նպատակները:

Խորհրդային իշխանության համար գյուղացու մանր արտադրության և նրա փոքրիկ սեփականության պահպանումը ոչ թե նպատակ, այլ մի ժամանակավոր չարիք է: Խորհրդային իշխանությունը խանգարում է գյուղացու սեփականազրկման պրոցեսը, որպեսզի դրանով անհնարին դարձնի կապիտալի նոր ուժեղացումը և գյուղացու ստրկացումը կապիտալին: Գյուղացու սեփականազրկման պրոցեսը կապիտալիզմի վերականգման, նրա վերադարձի ամենակարևոր ու ամենաանհրաժեշտ պայմանն է: Սակայն Կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը գյուղացուն ոչ միայն չեն հանձնարարում իր մանր արտադրությունը մշտնջենական դարձնել, այլ նրան ամեն կերպ համոզում են, որ գյուղացու և գեղջկուհու դարավոր չքավորության, տգիտության ու այլ դժբախտությունների հիմնական պատճառ հենց նրանց մանր արտադրությունն է եղել ու կլինի և որ այդ ամենից ազատագրվել միայն սոցիալիստական հասարակակարգում է հնարավոր, իսկ սո—

ցիալիզմի հասնել մանր արտադրողները միայն իրենց կոոպերացման միջոցով կարող են։

Գյուղացիներին բարի խորհուրդներ տալով Խորհրդային իշխանությունն, իհարկե, չի սահմանափակվում, այլ նրանց համար նաև կոոպերացման ու խոշոր արտադրության նյութական հնարավորություններ է ստեղծում։ Հարկային գործի հետևողական դասակարգային կազմակերպումը, չքավոր գյուղացիների կատարյալ ազատումը հարկից, անվերադարձ կերպով և իբրև վարկ գյուղատնտեսությանը բաց թողնվող գումարները, գների իջեցման քաղաքականությունը, գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ արտադրող գործարանների հիմնումը և այդ գործքների ու մեքենաների պլանային բաշխումը, քաղաքական ու նյութական ամեն մի հնարավոր աժանդակություն գյուղատնտեսական կոոպերացիային, գյուղատնտեսական արտադրության ռացիոնալացման ու մեքենայացման աշխատանք և նման մի շարք այլ միջոցներ Խորհրդային իշխանության ձեռքում գործիքներ են, որոնց գործադրումով չքավոր գյուղացու տնտեսությունը փրկվում է կործանումից, գյուղատնտեսությունն ընդհանրապես բարձրացվում է և գյուղատնտեսական արտադրությունը միաժամանակ կոլեկտիվ հիմունքների վրա յե դրվում։ Խորհրդային կարգերում պրոլետարիատը հնարավորություն ունի վոչ միայն գյուղացու տնտեսությունը փրկել կործանումից, այլ և գյուղացիությանն ամեն կերպ աջակցել, որ կոոպերացման ճանապարհով նա խոշոր արտադրության կազմակերպի և այդպիսով սոցիալիզմի ամենակարևոր նախադրյալի ստեղծի։

Գյուղատնտեսական հարկի դասակարգային կառուցվածքը նրանում է արտահայտվում, որ չքավոր գյուղացիությունը հարկից բոլորովին ազատված է. իսկ գյուղացիության ունևոր և հարուստ խավերի համար հարկը պրոգրեսիվ կերպով աճում է։ Խորհրդային ամբողջ Միության մասշտաբով վերցրած, 1926—27 թվականին գյուղացիական տնտեսությունների 20% այդ հարկից բոլորովին ազատված է, այն ինչ տնտեսությունների 14% հարկի 47% են վճարում (147 միլլիոն ռ.)։ Հետևապես հարկի մոտ կեսը վճարում է տնտեսությունների ամենաապահով խավը, նրանց մի յոթերորդ մասը։ Ինչ Խորհրդային Հայաստանին է վերաբերում, մինչև յերկրի խորհրդայնացումը գյուղատնտեսության կործանումն այնքան բարձր աստիճանի յեր հասել, որ դեռ 1926—27 թ. գյուղական տնտեսությունների 37,6 տոկոսը հարկավոր յեղավ հարկից ազատել։ Յեվ դեռ պետք է իմանալ, որ այդ թվականին գյուղատնտեսական հարկի գումարը գյուղացիության մաքուր յեկամտի ընդամենը 3,8 տոկոսին եր հավասար։ Խորհրդային Միության մասշտաբով էլ հարկի և յեկամտի գումարների միջև մոտավորապես նույն հարաբերությունը գոյություն ունի (4%)։

Ինչպես տեսնում ենք, թեև մեր գյուղում պրոգրեսիվ յեկամտային հարկ դեռ չկա, սակայն հարկի սոցիալական բաշխման ներկա ձեր հարկային այդ յեղանակին մեծ չափով մոտենում է և նրա կիրառման համար հող է պատրաստում։

Բուրժուազիան քայքայում ու կործանում է մանր արտադրությունը, իսկ մանր բուրժուազիան նրա պահպանման է ձգտում, իր ծրագիրն իրականացնելու միջոցներից կատարելապես զուրկ լինելով։ Յեվ միայն պրոլետարիատն է, որն իր իշխանությունը հաստատելուց հետո հնարավորություն է ստանում կռվելու միաժամանակ թե խոշոր և թե մանր բուրժուազիայի գյուղացիական հողային ծրագրների դեմ, պահպանում է գյուղացու սեփականությունը և աջակցում է նրա տնտեսության վերելքին, ձեռք առնելով ամեն մի հնարավոր միջոց՝ այդ տնտեսությունը սոցիալիզմի ռելսերի վրա դնելու, կոոպերացման միջոցով սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության կազմակերպելու համար։ Հողի և գործարանային արդյունաբերության ազգայնացումը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում գյուղացուն հնարավորություն է տալիս պահպանել իր սեփականությունը և պրոլետարիատի աջակցությամբ ու հովանավորությամբ աստիճանաբար սեփականության սոցիալիստական ձև և արտադրության սոցիալիստական յեղանակ հաստատել։ Մանր բուրժուական սոցիալիզմի հիմնական մեղքը հենց այն է, որ նրա իդեոլոգները հաշվի չեն առնում վոչ տնտեսության զարգացման օրենքները և վոչ իրենց ծրագրների իրականացման հասարակական-քաղաքական պայմանները։

Բավական է նկատի առնել հենց միայն գյուղատնտեսական հարկի սոցիալական կառուցվածքը, համոզվելու համար նրանում, որ գյուղացիական մասսայի տնտեսությունների փրկությունը միայն պրոլետարական դիկտատուրայի պայմաններում է հնարավոր։ Հարկային արտոնություններից ավելի կարևոր է այն նյութական օգնությունը, որ տրվում է գյուղատնտեսությանը Խորհրդային իշխանության կողմից։ 1926—27/1930—31 հնգամյակի համար ծրագրած է բաց թողնել 1.477 միլլիոն ռուբլի վարկային կարգով և 774 միլլյոն ռ. անվերադարձ ծախս է կատարվելու այնպիսի ձեռնարկների վրա, որոնց կազմակերպումը և ծախսը բնակչության ուժերից վեր են։ Պետության այդ ծրագիրն իրականացնելու համար ինքը գյուղացիությունը ծախսելու յե 1.317 միլ. ռ.։ Այսպես օրինակ, գյուղատնտեսական մեքենաների տարածումը կանոնավորելու և ապահովելու նպատակով պետությունը վարկային կարգով բաց է թողնում նրանց արժեքի 40%, իսկ 60% վճարում են մեքենա ձեռք բերող գյուղացիները։ Հողաշինարարական աշխատանքների համար նույն հնգամյակում 501,4 միլ. ռ. յե ծախսվելու։ Այդ գումարներից. ա) պետությունը բաց է թողնում բյուջետային կարգով 193,3 միլ. ռ. (անվերադարձ), բ) վարկային կարգով—134 միլ. ռ. և գ)

ինքը գյուղացիությունը 174.1 միլ. ռ. յե ծախսում: Մելիորատիվ աշխատանքների համար համապատասխան գումարներն են. ա) 278.4 միլ. ռ., բ) 143.4 միլ. ռ. և գ) 156 միլ. ռ., անտառաբուծության համար. ա) 27.4 միլ. ռ., բ) 234.7 միլ. ռ., գ) 75.9 միլ. ռ. և այլն, ընդամենը 3.568 միլ. ռ. հինգ տարվա ընթացքում:

IV

Խորհրդային իշխանության գյուղացիական և գյուղատնտեսական քաղաքականության մեկ նպատակն է՝ կոոպերացիայի միջոցով մեր գյուղում սոցիալիստական տնտեսության և սոցիալիստական կարգեր հաստատել: Ինչպես վերը մի քանի անգամ արդեն նկատել ենք, այդ ծրագրի իրականացումը նախ և առաջ կատարելագործված մեքենաներ է ենթադրում: Բացի նրանից, որ երկրի ընդհանուր ինդուստրացման և էլեկտրիֆիկացիայի բարիքները մեծ չափով նաև գյուղատնտեսության վրա յեն տարածվելու, Խորհրդային իշխանությունը մի շարք գործարանների կառուցման է ձեռնարկել, որոնք հատկապես գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ են արտադրելու: Արդեն 1926 թ. գործում էր Չելյաբինսկի գութանի գործարանը, որը տարեկան 150 հազար գութան է արտադրում: 1927 թվականին յերեք խոշոր գործարանների հիմք է դրվել, որոնցից մեկը (Ստալինգրադում) տարեկան 10,000 տրակտոր է արտադրելու, յերկրորդը (Ռոստովում) —200 հազար գութան և մի քանի տասնյակ հազար այլ գործիքներ, յերրորդը (Ռոստովում)—մի քանի տասնյակ հազար հնձելու և հավաքելու մեքենաներ ու գործիքներ: Այդ գործարանները պատրաստ կլինեն յերկու տարուց հետո: Նրանցից առաջինը 16 միլ. ռ. ծախս է պահանջում, յերկրորդը—3,350,000 ռ. և յերրորդը—15 միլ. ռ.: Յերեքում միասին մոտ 7000 բանվոր է աշխատելու:

Խորհրդային Միության նման մի մեծ յերկրի համար, որի բնակչության 82% գյուղացիություն է, այդ գործարանների արտադրանքը դեռ շատ անբավարար է: Կասկածից դուրս է, որ նրանց թիվը տարեց-տարի աճելու յե: Սակայն, յերբ նկատի յենք առնում իրերի այն դրությունը, որը գյուղատնտեսական գործիքների ու մեքենաների արտադրության բնագավառում մինչև պատերազմն էր տիրում, հիշյալ գործարանների հիմնադրումը խոշոր պատմական արժեք է ստանում: Ցարական Ռուսաստանում գործադրվող գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մոտավորապես կեսն արտասահմանից էր ներմուծվում, այն է՝ 53.4%—1911 թ., 54.6%—1912 թ. և 44.6%—1913 թ.: 1911—1913 թ. թ. համար նրանց ներմուծման միջին տարեկան գումարը 54.6 միլիոն ռուբլի յեր, իսկ սեփական արտադրանքի արժեքը

էր՝ 1912 թ.—52,6 միլ. ռ. և 1913 թ.—60.5 միլ. ռ.: Խորհրդային իշխանության աշխատանքն այդ ասպարեզում ճշգրիտ կերպով գնահատելու համար պետք է իմանալ, որ ցարական Ռուսաստանի գյուղատնտեսական ամբողջ մեքենայական ինվենտարը 1913 թ.—1.150 մլ. ռ. արժեք էր ներկայացնում: Պատերազմի և քաղաքացիական կռիվների կործանիչ հետևանքն այն յեղավ, որ 1924—25 թվականին Խորհրդային Միության սահմաններում միայն 758.5 միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենայական ինվենտար էր մնացել, այսինքն նրա արժեքը նվազել էր ամբողջ 44 տոկոսով: 1914—1921 թ. թ. ժամանակամիջոցում մինիմալ չափերի յեն հասնում գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների թե՛ արտադրությունը և թե՛ ներմուծումն արտասահմանից: Այդ մասին պարզ պատկեր է տալիս հետևյալ աղյուսակը.

թ. թ.	Սեփական արտադրություն	Ներմուծում
ՀԱԶԱՐ ՎՈՍԿԻ ՌՈՒԲԼԻ		
1912	52.628	63.545
1913	60.528	48.678
1914	54.017	40.909
1915	30.254	120
1916	12.101	481
1917	9.076	1.286
1918	6.382	0
1919	4.212	0
1020	2.840	1.000
1921	3.126	9.220
1915—1921	67.971	12.107
նույնը՝ %% առ 1913	112,3	24,9

Հետևապես, յոթ տարվա ընթացքում, 1915—21 թ. թ., միայն 7,443,000 ռուբլով կամ 12.3 տոկոսով ավելի յե արտադրած, քան 1913 թվականին, իսկ այդ նույն յոթնամյակում ներմուծումը 1913 թ. ներմուծման միայն 24,9 տոկոսին է հավասար: Նույն ժամանակաշրջանում ուժեղ չափով նվազել էր նաև լծկան անասունների թիվը: Նման պայմաններում գյուղացիության ապա–

Համալրումն ինվենտարով Խորհրդային Իշխանության առաջ դրած ամենադժվարին խնդիրներից մեկն է, մանավանդ վոր գործարանային արդյունաբերությունն իր նախապատերազմյան վիճակին միայն անցյալ տնտեսական տարում հասավ: Ըստ մեր տնտեսական հնգամյա պերսպեկտիվ պլանի, Խորհրդային Միության գյուղացիությունը 1930—31 թվականին 1·254 մլն. ռուբլու մեքենայական ինվենտար և ունենալու, այսինքն միայն 9 տոկոսով ավելի, քան 1913 թ.:

Գյուղատնտեսության բարձրացման ամենաանհրաժեշտ պայմանն է՝ մեքենաների և գործիքների արտադրությունն ընդլայնել և ամուր հիմքերի վրա դնել: Ինչպես տնտեսության բոլոր մյուս ճյուղերում, այստեղ եվ Խորհրդային իշխանությունը ձեռք և առնում ամեն մի հնարավոր միջոց, վորպեսզի գյուղատնտեսության պահանջը մեր սեփական գործարանների արտադրանքով բավարարվի: Տրակտորների արժեքը չհաշված, անցյալ 1925—26 տնտեսական տարում խորհրդային գործարանները 64,1 մլն. ռուբլու գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ են արտադրել, այն ինչ ներմուծման գումարը համարյա կրկնակի պակաս է (35,9 մլն. ռ.): Համամիութենական Փողանախորհն իր 5-ամյա արդյունաբերական պլանում գյուղատնտեսական ինվենտարի արտադրության և ներմուծման հետևյալ ծրագիրն ունի:

Թ. թ.	ՄԻԼԼԻՈՆ ՌՈՒԲԼԻ					
	Գյուղթ. մեքենաշինական տրեստների արտադրանքը	Ընդհանուր կարգի մեքենաշինական տրեստների արտադրանքը	Միասնական արտադրական ծրագիր	Պահանջ	Ներմուծում	Ներմուծման %-ը
1926/27	75,950	20,050	96,0	115	19,0	16,5
1927/28	80,325	39,175	119,5	128	8,5	6,7
1928/29	85,275	50,725	136,0	142	6,0	4,2
1929/30	90,850	52,650	143,5	153	9,5	6,2
Ընդամենը	332,400	162,600	495,0	538	43,0	8,0

Այս ծրագրի մեջ չեն մտնում վոչ տեղային նշանակություն ունեցող մանր ձեռնարկների արտադրանքը և վոչ այն մետաղագործարանների արտա—

դրանքը, վորոնք միայն մասամբ գյուղատնտեսական արտադրության գործին են ծառայում: Նույն ծրագրի մեջ չի մտնում նաև տրակտորների արտադրությունը: Մինչև պատերազմը Ռուսաստանում ընդամենը 187 տրակտոր կար, 1917 թ.— 1·500, 1921—26 թ. թ. ներմուծված է 21·135 հատ և 1923—26 թ. թ. սեփական գործարաններում արտադրված է 1·927 հատ: Ինչպես վերը նկատեցինք, Ստալինգրադում արդեն մի խոշոր գործարան է կառուցվում, վորը տարեկան 10 հազար տրակտոր է արտադրելու: Այդ գործարանի հաջողության դեպքում, յերկրորդը յենթադրվում է բացել Տագանրոգում: Ծրագրվում է մինչև 1931 թ., հինգ տարվա ընթացքում, շուկա հանել 131 հազար տրակտոր, իսկ մինչև 1935/36 թ. յերեքից մինչև չորս հարյուր հազար տրակտոր (սեփական գործարաններից և արտասահմանից): Ստալինգրադի գործարանը 28 ձիու ուժանոց տրակտորներ է բաց թողնելու:

Այս ծրագրի իրականացումով Խորհրդային Միության գյուղատնտեսությունը մեքենաներով ու գործիքներով չի ապահովվում: Նրանց թիվը հարկավոր է չե թե կրկնապատկել ու յեռապատկել, այլ տասնապատկել: Պետք է իմանալ, վոր Միացյալ Նահանգների գյուղատնտեսության մեջ առ 1 հունվարի 1925 թ. 506 հազար տրակտոր եր աշխատում, այն ինչ 1920 թ. նրանց թիվը 246 հազար եր: Մեր հետամնացությունը լուսաբանելու համար, բավական է ասել, վոր Միացյալ Նահանգներում 1909 թ. միայն 2 հազար տրակտոր է արտադրվել, իսկ 1920 թ.—արդեն 203 հազար: Այնուհետև արտադրությունն ուժեղ չափով նվազում է, բայց և այնպես այդ ասպարեզում Ամերիկան ամբողջ աշխարհում առաջին տեղն է բռնում: 1923 թ. այդ յերկրում 134·590 տրակտոր է արտադրվել, 1924 թ.— 119·305 և 1925 թ.— 167·640*): Ըստ Միութենական Պետպլանի 5-ամյա պերսպեկտիվ ծրագրի, Միության գյուղատնտեսության մեքենայացման գործի վրա 1926–27—1930–31 թ. թ. 1·001·6 միլիոն ռուբլի յե ծախսվելու: Այդ գումարից 535,4 մլն. ռ. բնակչությունն է մուծելու, իսկ մնացած 465·1 մլն. ռ. վարկային կարգով պետությունն է բաց թողնելու: Այդ գումարի մեջ է մտնում նաև գյուղատնտեսու—

*) Գյուղատնտ. գործ. ու մեքեն. վերաբերյալ տվյալները հետևյալ գործերից ենք վերցրել. 1. ВСНХ СССР: ,,5-летние гипотезы, по отраслям пром.'', кн. 23; ,,Мет. пром.'' (1926 г.). 2. Сб. изд. ,,Эк. Жизнь'', ,,Вопросы с.-хоз. машиностроения в России'', (1923); 3. ,,Труды, Госплана'', кн. IV; ,,К вопросу о механизации с.-хоз.'' (1923 г.) 4. Сб. изд. ,,Эк. Жизнь''; ,,Промышл. и Нар. Хозяйство'', под ред. Квиринга и др., ст. Н. Огановского; ,,Промышленность и сельское хоз.'' (1927 г.) 5. Տրակտորների արտադրության մասին Մ. Նահանգներում—,,Американская техника'' ամսաթերթից. № 5, 1927 թ.

թյան տրակտորացման համար պահանջվող ծախսը, այն է 168 մլն. ռ.: Խորհրդային իշխանության և մեր գյուղացիության նյութական միջոցները նկատի առնելով, գյուղատնտեսության մեքենայացման գործին ծրագրային կարգով հատկացված այդ գումարը մեր երկրի ներկայացրած հնարավորության մաքսիմումն է, սակայն պարզ է, որ եթե մեր գյուղատնտեսության պահանջների այդ մաքսիմումը մաքսիմում լինելուց դեռ շատ հեռու է և որ երկրի տնտեսական վերելքի պրոցեսում գյուղատնտեսության մեքենայացման գործին շատ ավելի խոշոր գումարներ կհատկացվեն:

Մեքենայացման հետ միասին, գյուղատնտեսության ռացիոնալացման գործում ամենամեծ դերն ունի կատարելու նաև արհեստական պարարտացումը: Պատերազմից առաջ, համապատասխան նյութերի ներմուծումն արտասահմանից տարեց-տարի աճում էր, այն է 7 միլլիոն փթից 1905 թ. մինչև 21.7 մլն. փ. 1910 թ. և մինչև 34 մլն. փութ 1913 թ.: Այս բնագավառում եվ Խորհրդային իշխանությունը լայն ծրագրեր է մշակում և դրանցից մի քանիսի իրագործմանն արդեն ձեռնարկել է: Արհեստական պարարտանյութեր արտադրող ձեռնարկների մեջ ամենաառաջնակարգ տեղերից մեկն է գրավելու Խ. Հայաստանում կառուցվող՝ Ձորագեսի գործարանը, որը ոչ միայն տեղային, այլ ընդհանուր միութենական նշանակություն ունի: Ձորագեսի ջրաէլեկտրակայանը, 30 հազար ձիու ուժի արտադրողականությամբ, ոչ միայն գործարաններին ու երկաթուղուն էներգիա կը մատակարարելու, այլ և ազոտային պարարտանյութերի արտադրության համար է օգտագործվելու: Ըստ նախահաշվի, մի կիլովատ—ժամ էներգիան այդ կայանից կարելի կլինի ստանալ 1 ռ. 22 կոպեկով, իսկ 1935 թ. սկսած—90 կոպեկով: Ազոտային պարարտանյութերի գործարանին էներգիան ե՛լ ավելի աժան գնով բաց կթողնվի: Էլեկտրակայանի շրջանում կրաքարի շատ հարուստ պաշար կա: Աժան էլեկտրական էներգիան և կրաքարի առատությունը ցիանամիդ արտադրելու հիմնական նախադրյալներն են, իսկ ցիանամիդը հողը պարարտացնելու ամենակարևոր ազոտային նյութերից մեկն է, որի գործադրումը Յեվրոպայի և Ամերիկայի գյուղատնտեսության մեջ արդեն նշանավոր հետևանքներ է տվել, հացահատիկների բերքը մի դեսյատինից բարձրացնելով մինչև 150–180 փութ: Բացի հացաբույսերից, ցիանամիդն ուժեղ չափով բարձրացնում է նաև գետնախնձորի, ճակնդեղի, բամբակի և այլ բույսերի բերքը: Ցիանամիդի գործարանը պատրաստ կլինի 1931 թ. և տարեկան 600–620 հազար փութ ցիանամիդ կարտադրի, որը երեք միլլիոն փութ ազոտային պարարտանյութի յե հավասար: Այդ գործարանի շնորհիվ, մեր գյուղատնտեսության համար կուլտուրական վերածնունդի մի նոր դարաշրջան է բացվելու: Բավական է ասել, որ մի փութ մեծ դժվարությունների, հաճախ՝ անհաղթելի արգելքների եյին հանդի-

բերքը—30 փ., գետնախնձորի բերքը—26 փթով և այլն: Անշուշտ, մոտ ապագայում խորհրդային իշխանությունը կձեռնարկի նաև ֆոսֆոր, կալի և այլ նյութեր պարունակող պարարտացման միջոցների արտադրության գործին:

V

Գյուղատնտեսական մեքենաներով, պարարտացման նյութերով ու ագրոնոմիական գիտությունների գործադրումով առաջավոր կապիտալիստական երկրները Խորհրդային Միությանն անպայման գերազանցում են: Սակայն, վերջին մեկ ու կես դարի տեխնիկական ու գիտական նվաճումներից օգտվողն այնտեղ ոչ թե մանր գյուղացիների մասսան է, այլ խոշոր գյուղացիները և կալվածատերերն են: Այդ ամենից լայն չափերով օգտվելու համար մանր գյուղացիները միջոցներ չունեն, իսկ նրանց մանր արտադրությունը կատարելագործված մեքենաների ու արտադրության կատարելագործված յեղանակների գործադրումն ընդհանրապես չափազանց դժվարացնում է, հաճախ նույնիսկ անհնարին է դարձնում: Ինչ խոշոր հողատերերին է վերաբերում, այժմյան զարգացած տեխնիկայի ու գիտության լայն գործադրման հնարավորություններ նրանք ունեն, սակայն ռենտայի անընդհատ աճումը և կապիտալիստական ողջ արտադրության ընդհանուր պայմանները ռացիոնալ գյուղատնտեսությունը նրանց համար անշահավետ են դարձնում: Կապիտալիստական անխտիր բոլոր երկրներում խոշոր ռացիոնալ գյուղատնտեսական արտադրությունը ոչ թե օրենք, այլ հազվագյուտ բացառություն է: Խորհրդային Միությունն այդ երկրներից տեխնիկապես ու կուլտուրապես ավելի հետամնաց է, սակայն նրանց բոլորին մեծապես գերազանցում է իր հասարակական-պետական կառուցվածքով, որը մեր բանվորին ու գյուղացուն տեխնիկայի ու գիտության բոլոր նվաճումներից ամենալայն չափով օգտվելու մեծամեծ հնարավորություններ ու արտոնություններ է տալիս: Կյանքի այդ բնագավառում խորհրդային կարգերը բանվորի և գյուղացու առաջ չե թե դժվարություններ ու խոչընդոտներ չեն ստեղծում, այլ ընդհակառակը՝ նրանց տեխնիկական ու կուլտուրական վերելքի գործին ամեն կերպ նպաստում են, նպաստում են և՛ քաղաքականապես և՛ նյութապես:

Կապիտալիստական երկրների մանր գյուղացու դժբաղդությունը նրանով չի սահմանափակվում, որ իր մասշտաբով և իր նյութական միջոցներով մանր արտադրությունը նրան զրկում է խոշոր ռացիոնալ տնտեսության կազմակերպելու հնարավորությունից: Այդ երկրների մանր գյուղացին կրկնակի դժբաղդ ու անօգնական է այն պատճառով, որ մանր տնտեսությունների մասսայական կոոպերատիվ միացումը և կոոպերատիվ գյուղատնտեսական արտադրության աճումն ու բարգավաճումը բուրժուական հասարակակարգում մեծ դժվարությունների, հաճախ՝ անհաղթելի արգելքների յեն հանդի-

պում: Բուրժուական պետությունը գյուղացու կոոպերատիվ ձեռնարկություններին չի աջակցում ու աջակցել չի կարող, իսկ արդեն գոյություն ունեցող արտադրական կոոպերատիվները բուրժուական հասարակարգում կամ սնանկացման են դատապարտված՝ անզոր լինելով խոշոր կապիտալի դեմ կռվել, կամ իրենք կապիտալիստական ձեռնարկների յեն վերածվում: Բնական է, վոր բուրժուազիան միայն այն կոոպերատիվ միությունների բարգավաճման է նպաստում, վորոնց զարգացումը կապիտալիզմի ուժեղացման ուղիով է ընթանում: Կապիտալիստը կդադարեր կապիտալիստ լինելուց, յեթե չխեղդեր ամեն մի շարժում, վորը անտեսական ու հասարակական կյանքում սոցիալիզմի տարրերն է ուժեղացնում: Այդ պատճառով էլ չի կարելի կանգուն թողնել բուրժուական հասարակարգը և հուսալ, վոր կոոպերացիայի միջոցով հնարավոր է սոցիալիզմի հասնել: Նման հույսերով սնվողների ձեռքում սոցիալիզմը մխիթարանքի միջոց է մանր արտադրողների համար, վորոնք կապիտալի հանդեպ անզոր են, նրանց կողմից անխուսափելիորեն մահվան են դատապարտված, իսկ սեփական ուժերով սոցիալիզմ նվաճել չեն կարող: Ինչքան վոր մանր արտադրողները պրոլետարական շարժմանը չեն միացել, սոցիալիզմի գաղափարը նրանց համար մի անիրականալի գաղափար է և սոցիալիզմին նրանք նույն մոտեցումն ունեն, ինչ և քրիստոնյան կամ մահմեդականը դրախտին: Իսկ խոշոր բուրժուազիան շնորհալի կերպով շահագործում է նրանց այդ «սոցիալիստական հավատը», նրանց «կոոպերատիվ սոցիալիզմը», պրոլետարիատի սոցիալական պայքարից մանր արտադրողներին հեռու պահելու համար:

Առաջին անգամ պատմության մեջ, պրոլետարական դիկտատուրայի շրջանում գյուղատնտեսական կոոպերացիան անարգել կերպով զարգանալու ամենալայն հնարավորություններ է ստացել: Մասնավոր կապիտալը մեզ մոտ այնքան աննշան ուժ է ներկայացնում, վոր գյուղատնտեսական կոոպերացիայի դեմ կռվել չի կարող, չի կարող առավել ես այն պատճառով, վոր գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպումն ու նրա աշխատանքը Խորհրդային իշխանության հովանավորության ներքո ու նրա ակտիվ աջակցությամբ են կատարվում: Ով խորհրդային կարգերում գյուղատնտեսական կոոպերացիային կռիվ է հայտարարում, դրանով նախ և առաջ պրոլետարական դիկտատուրային է կռիվ հայտարարում, իր հարվածներն անմիջապես Խորհրդային իշխանության դեմ է ուղղում: Ընդհակառակը, գյուղատնտեսական կոոպերացիայի դեմ բուրժուական կարգերում կռիվը տիրապետող հասարակական-պետական կարգերի զարգացմանը վոչ միայն չի խանգարում, այլ նրանց զորեղացման գործին է ծառայում, շահագործող դասակարգերի միջոցներով ու նրանց հովանավորությամբ է կատարվում:

Առ 1 հունվարի 1927 թ., Խորհրդային Միության սահմաններում գյուղատնտեսական կոոպերացիան ընդգրկում էր տնտեսությունների 20%: Խորհրդային Հայաստանում էլ գյուղատնտեսական կոոպերացիայի շուրջը գյուղական տնտեսությունների 20% է կազմակերպված: Կոոպերացման նոր հաջողությունները գլխավորապես մեր գործարանային արդյունաբերության վերելքի տեմպից և այն նյութական աջակցությունից են կախված, վորը գյուղատնտեսական կոոպերացիային Խորհրդային իշխանությունն է ցույց տալու: Ինչպես վերը տեսանք, յերկու դեպքում էլ գյուղատնտեսական կոոպերացիայի աճումն առաջիկայում կարելի յե ապահովված համարել:

Միջազգային պրոլետարիատի և բոլոր յերկրների աշխատավոր գյուղացիության համար Խորհրդային իշխանության պրակտիկան կյանքի այս բնագավառում անսահման խոշոր քաղաքական նշանակություն ունի: Պրոլետարիատի կոմունիստական շարժման պրակտիկայի ու թեորիայի բնագավառներում Խորհր. Միությանն այժմ նույն դերն է վիճակված, վորը կապիտալիզմի զարգացման շրջանում բուրժուական ամբողջ աշխարհի նկատմամբ Մարքսը Անգլիային էր վերագրում: Մարքսի հայտնի արտահայտությունն ըստ մեր գոյության սոցիալական պայմանների փոփոխման յենթարկելով, կարող ենք ասել. «Կոմունիզմի ուղղությամբ ավելի զարգացած յերկիրը պակաս զարգացած յերկրին միայն նրա սեփական ապագայի պատկերն է տալիս»: Ինչպես Խորհրդային իշխանության ամբողջ գործունեությունն, այնպես էլ առանձնապես նրա նվաճումները գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում միջազգային պրոլետարիատի և բոլոր յերկրների աշխատավոր գյուղացիության առաջ սոցիալիստական ազատագրման ամենալայն ուղիներ են բացում, սոցիալիզմի գաղափարով նրանց վառակում ու վոգևորում են, սոցիալիզմի հնարավորության համոզմունքը տասնյակ միլլիոնավոր շահագործվողների սեփականություն են դարձնում: Ինչպես հայտնի յե, կապիտալիզմի հիմքն ամենուրեք մանր ապրանքային արտադրությունն է յեղել, վորը մեր յերկրում դեռ չափազանց տարածված է, գլխավորապես գյուղում: «Գյուղացու տնտեսությունը շարունակում է մնալ իբրև մանր ապրանքային արտադրություն: Այստեղ է կապիտալիզմի բազան՝ շատ խոր, շատ ամուր արմատներ ունեցող և չափազանց լայն բազան», գրում է Վ. Ի. Լենինը (հատ. 16, եջ 349): Կոոպերացիան այն հիմնական ու միակ ուժն է, վորի միջոցով Խորհրդային իշխանությունը կարող է վերացնել կապիտալիզմի այդ բազան թե արտադրության և թե՛ փոխանակության պրոցեսներում: Խորհրդային կարգերում կոոպերացիան միայն սոցիալիզմի ուղիով կարող է զարգանալ, իսկ կոոպերատիվ շինարարության մեծ հաջողությունները կասկած չեն թողնում նրանում, վոր ապագան կոոպերատիվ ու սոցիալիստական տնտեսությանն է պատկանում:

ՅԸ.

ԲԱՆՎՈՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻ. ԽՈՇՈՐ ՅԵՎ ՄԱՆՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I

Մարդկային հասարակության պատմության մեջ կոմունիզմը նորություն չէ: Նորություն է մասնավոր սեփականությունը, վորն իր գոյության տևողությամբ սեփականության հասարակական ձևերի տևողությունից մեծապես զիջում է: Ինչ առանձնապես կապիտալիստական սեփականությանն է վերաբերում, վերջինս ընդամենը չորս դարի պատմություն ունի: Դեռ անկախ նրանից, վոր մինչև մասնավոր սեփականության առաջացումը դարեր շարունակ սեփականության հասարակական ձևերն են տիրապետել, մասնավոր սեփականության դարերն էլ չափազանց հարուստ են շահագործվող մասսաների ձգտումներով ու շարժումներով, վորոնց նպատակը սեփականության համայնական կամ հասարակական ձևերի հաստատումն է: Մարքսի և Ենգելսի կատարած գիտական մեծ գործի արժեքն այն չէ, վոր նրանք բացել են կոմունիզմի գաղափարը, այլ այն, վոր պրոլետարիատին նրանք փրկել են անոգնական վիճակից ու հիասթափումից, ազատել են սոցիալիստական ուտոպիաներից ու ավանտյուրաներից, գիտականորեն ապացուցելով սոցիալիզմի հնարավորությունը և անհրաժեշտությունը, այդ հնարավորությունը և անհրաժեշտությունը կապիտալիզմի զարգացման պրոցեսի հետ են կապել, նրանից են բխեցրել և կոմունիզմի իրականացումը հենց իրեն՝ պրոլետարիատի գործն են հայտարարել:

Մինչև անցյալ դարի 40-ական թ. թ., մասնավոր սեփականության շրջանի կոմունիզմը միշտ էլ ուտոպիական է յեղել, վորովհետև նրա կառուցման համար պահանջվող նախադրյալները դեռ բացակայում եյին: Պարզ ապրանքային արտադրության շրջանի կամ այսպես կոչված միջնադարի մանր արտադրությունը, հանդերձ իր հնամենաց տեխնիկայի ու նեղ շրջանակների, սոցիալիզմի հիմք ծառայել չէր կարող: Իսկ այդպիսի հիմք, միայն խոշոր կապիտալիստական արտադրությունը կարող է հանդիսանալ, վորն ազատված

է մեր դարի կատարելագործված տեխնիկայից ու գիտությունից: Միջնադարյան գութանը կամ համքարական արհեստավորի գործիքները սոցիալիզմի անհաշտ թշնամիներն են: Նյութապես ու բարոյապես, նրանք սոցիալիզմի ժխտումն են: Սոցիալիստական արտադրության յերակներ դառնալ նրանք չեն կարող և միաժամանակ իրենց տերերի շարքերում ռեակցիոն մասնավոր-սեփականատիրական գաղափարներ են պատվաստում ու արմատացնում:

Սոցիալիզմի ձգտողը պրոլետարիատն է: Նրա դասակարգային ազատագրական շարժման պրոցեսում, առանձնապես սոցիալիստական հաղթությունների շրջաններում, պրոլետարիատին միանում են նաև հասարակության շահագործվող ու ճնշված այլ տարրերը: Սակայն սոցիալիզմը միայն պրոլետարական սոցիալիզմ կարող է լինել, միայն խոշոր արտադրության վրա կարող է հիմնվել:: Սոցիալիզմն անհնարին է առանց խոշոր արտադրության, վորը նրա հիմքն է. անհնարին է առանց պրոլետարիատի, վորը շարժման կազմակերպիչն ու ղեկավարը, վորը սոցիալիզմի հիմնական ու անփոխարինելի դարբինն ու մարտիկն է: Պրոլետարական հեղափոխությունը մի անպատասխանատու ու անիմաստ գործ կլիներ, յեթե իր արտադրողական ուժերով ու իր կուլտուրայով կոմունիստական հասարակակարգը բուրժուական հասարակակարգին մեծապես չգերազանցեր: Ամեն մի նոր հասարակակարգ հենց առաջին հերթին իր արտադրողական ուժերի զարգացման համապատասխան բարձր աստիճանով է տարբերվում: Միայն պրոլետարիատն է, վոր սոցիալիստական հեղափոխությունից հետո կարող է կապիտալիզմի բարձր արտադրողական ուժերին տիրանալ, լիովին նրանց ոգտագործել և նրանց զարգացման ու կատարելագործման ավելի լայն հնարավորություններ ստեղծել: «Կապիտալիստական հասարակության տնտեսությունն այնպես է կառուցված, վոր տիրապետող ուժ կարող են լինել կամ միայն կապիտալը կամ նրան տապալող պրոլետարիատը», ասում էր Լենինը 1919 թ., արտադպրոցական կրթության 1-ին համագումարում (հատ. 16, եջ 217):

Ըստ իրենց դրության կապիտալիստական արտադրության պրոցեսում, շահագործվող մյուս դասակարգերը միայն սեփական ուժերով անընդունակ են ու միշտ էլ անընդունակ կլինեն թե կապիտալիզմը տապալել և թե նրա ուժերից ազատվելով՝ սոցիալիստական տնտեսության և սոցիալիստական հասարակարգ կազմակերպել: Բացատրելով պրոլետարական դիկտատուրայի եյությունը, Լենինը գրում է. «Միայն մի վորոշ դասակարգ, այն է քաղաքի և ընդհանրապես գործարանային, արդյունաբերական բանվորների դասակարգն է, վորն ընդունակ է ղեկավարել աշխատավոր և շահագործվող մասսաներին՝ հանուն կապիտալի լծի տապալման մղվող կռվում, այդ կռվի պրո-

ցեսում տարած հաղթությունը պահպանելու և ամրապնդելու գործում, նոր՝ սոցիալիստական-հասարակական կարգեր ստեղծելու ասպարեզում, հանուն դասակարգերի լիակատար վերացման մղվող ամբողջ կռվում» (Հատ. 16, էջ 248)։ Նույն հոդվածում Լենինը գրում է. «Ցենթադրել, վոր բոլոր «աշխատավորները» այդ գործի համար հավասարապես ընդունակ են՝ մի բոլորովին դատարկ ֆրազ կամ անդրջրհեղեղյան, մինչ-մարքսյան սոցիալիստի մտապատրանք կլիներ։ Վորովհետև այդ ընդունակությունն ինքն ինքյան չի տրվում, այլ պատմականորեն է առաջանում, այն է՝ միայն խոշոր կապիտալիստական արտադրության նյութական պայմաններից է առաջանում։ Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ տանող ճանապարհի սկզբում այդ ընդունակությամբ միայն պրոլետարիատն է օժտված» (249—250)։ «Կամ կապիտալիստների իշխանությունը, կամ պրոլետարիատի իշխանությունը», հայտարարում էր Լենինը նույն 1919 թ. «Միջին ամեն մի իշխանություն ցնորք է։... Միայն պրոլետարիատի իշխանությունը, միայն բանվորների տիրապետությունն է, վոր աշխատանքի հողի վրա կանգնած վողջ մեծամասնությունը կարող է իրեն միացնել, վորովհետև գյուղացիական մասսաները, թեև աշխատավոր մասսաներ են, սակայն նրանց մի վորոշ մասը սեփականատերեր են՝ իրենց մանր տնտեսությունը, իրենց հացն ունեն» (16—297)։

Լենինի գործերից կարելի յե չե թե մի քանի տասնյակ, այլ մի քանի հարյուր նման քաղվածքներ կատարել։ Համ. Կ. Կ. և Կոմինտերնի համագումարների ու պլենումների վորոշումներն էլ այդ մասին չափազանց հարուստ նյութ են պարունակում։ Մյուս կողմից, ինչպես հայտնի յե, բոլշևիկյան կուսակցությունը միակն է ամբողջ աշխարհում, վորի պրակտիկայում խոսքն ու գործը միմյանց չեն հակասում։ Այս ամենին չնայած, 2-րդ Ինտերնացիոնալի ղեկավարները դեռ այսօր էլ շարունակում են պնդել, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական չէր, վոր Ս. Ս. Հ. Միության տերրիտորիայի վրա պրոլետարիատը մանր բուրժուական տարրերին է զոհաբերվել, վոր մեզ մոտ «ասիական» սոցիալիզմ է հաստատվել և այլն։ Յերբ 1920 թ. 2-րդ Ինտերնացիոնալի ղեկավարները մենշևիկյան Վրաստանում եյին գտնվում, այդ յերկիրն իբրև սոցիալիստական յերկիր հռչակելու գործում միմյանց հետ նրանք ուղղակի մրցում եյին։ Վանդերվելդեն մի քանի անգամ հրապարակորեն հայտարարություններ արեց այն իմաստով, վոր Վրաստանն առաջին սոցիալիստական հանրապետությունն է և՝ իբրև առաջին օրինակ՝ միջազգային պրոլետարիատի սոցիալիստական շարժման համար անսահման մեծ նշանակություն է ստանում։ Դուրս է գալիս, վոր հողի, խոշոր գործարանային արդյունաբերության, ֆինանսների և արտաքին առևտրի ազգայնացումը՝ պրոլետարական դիկտատուրայի հետ միասին, միջազգային բանվորության համար պակաս արժեք են ներկայացնում, քան մենշևիկյան

Վրաստանը, վորտեղ հետևողական բուրժուական կարգեր եյին հաստատվել։ Հայտնի յե, վոր հողի, արդյունաբերության և ֆինանսների ազգայնացման խնդիրը մենշևիկյան Վրաստանում յերբեք նույն իսկ քննության չի առնվել, իսկ հողային խնդրին այնպիսի լուծում տրվեց, վոր Ֆրանսիայի 18-րդ դարի բուրժուական մեծ հեղափոխականները մենշևիկյան Վրաստանի «սոցիալիստ» ղեկավարներին առանց տատանվելու հիլյոտինի կդատապարտեյին։ Այդ իշխանության հիմքը բուրժուազիայի և կալվածատիրության դաշինքն եր։ Նրա գոյությունը միջազգային բուրժուազիայի հակահեղափոխական ծրագրների իրականացման պատրաստակամությամբ եր պայմանավորվում։ Մենշևիկյան Վրաստանը հակախորհրդային ուժերի հովանավորության ներքո յեր գտնվում, իր գոյությամբ նրանց ֆինանսական և ռազմական օգնությանն եր պարտական։

2-րդ Ինտերնացիոնալի սոցիալիստական իդեալը բուրժուական Վրաստանն է։ Յեվ ահա այդ նույն 2-րդ Ինտերնացիոնալը անդադար պնդում է, վոր Խորհրդային կարգերում սոցիալիստական վոչինչ չկա և վոր սոցիալիզմի կառուցումը մեզ մոտ ընդհանրապես անհնարին է, վորովհետև գյուղացիությունը բնակչության մեծամասնությունն է, վորովհետև գյուղացիության մեծամասնությունը դեռ չի պրոլետարացել։ Իր հակակոմունիստական ու հակախորհրդային ագիտացիայով 2-րդ Ինտերնացիոնալը ձգտում է ապացուցել, վոր բոլշևիկների ծրագիրն է՝ սոցիալիզմը մանր գյուղատնտեսական արտադրության վրա հիմնել, վոր հենց այդ պատճառով մեր սոցիալիստական շինարարությունը սկզբից ևեթ կատարյալ անհաջողության է դատապարտված և վոր ըստ Մարքսի ուսմունքի՝ Խորհրդային Միության նման տնտեսապես հետամնաց յերկրներում սոցիալիզմն ընդհանրապես անիրականալի յե։ Իբր թե ըստ Մարքսի ուսմունքի՝ զարգացած կապիտալիզմն ամենուրեք սոցիալիզմի անհրաժեշտ նախապայմանն է և այդ պատճառով էլ վոչ մի յերկրում և յերբեք չի կարող սոցիալիզմ հաստատվել, յեթե նրա տնտեսությունն ու իշխանությունը նախապես կապիտալին չեն յենթարկվել։ Սոցիալիզմի համաշխարհային տարածման անհրաժեշտ պայմանը 2-րդ Ինտերնացիոնալի համար այն է, վոր բոլոր յերկրներում նախապես կապիտալիստական արտադրություն և բուրժուական հասարակական կարգեր հաստատվեն։

II

2-րդ Ինտերնացիոնալի խոհանոցում պատրաստած այդ տարօրինակ «գիտական սոցիալիզմը» կապիտալի շահերի պաշտպանության մի այնքան հարմար գործիք է, վոր խորհրդային կարգերի դեմ պայքարող ամեն մի գրագետ բուրժուա իր պարտքն է համարում լենինիզմը մի հակամարքսիստական ուսմունք հայտարարել և «իսկական մարքսիզմը» «բոլշևիկյան աղավաղումնե-

րեց», պաշտպանել: 2-րդ Ինտերնացիոնալի հետ միասին միջազգային բուրժուազիան Կ. Մարքսին իր հովանավորության տակ է առել: Իր հերթին 2-րդ Ինտերնացիոնալը միջազգային բուրժուազիայի հետ միասին, ազգերի լիգայում բանվորական հարցին է լուծում տալիս: 2-րդ Ինտերնացիոնալը «գաղութային սոցիալիստական քաղաքականություն» է ընդունում, իսկ բուրժուազիան իր յերախտագիտությունը նրանով է արտահայտում, վոր բոլշևիզմը Մարքսի «Կապիտալով» է հարվածում: Այդ տարօրինակ մարքսիստների հետ միասին, բոլշևիզմին թեորետիկական կռիվ են հայտարարել նաև «սոցիալիստ-հեղափոխականները»: Սրանք էլ ձգտում են ապացուցել, վոր բոլշևիկները գողացել են իրենց սոցիալիստական ծրագիրը, վոր հողային հարցը մեզ մոտ ըստ սոց.-հեղ. ծրագրի յե լուծվել: Ինչպես տեսնում ենք, յերկու դեպքում էլ բոլշևիկներին միևնույն մեղադրանքն է առաջադրվում: Նախկին մարքսիստները և սոցիալիստ-հեղափոխականները գտնում են, վոր բոլշևիկները մարքսիզմից հրաժարվել են և իբրև սոցիալիզմի յելակետ, իբրև նրա հիմք մեր յերկրի հետամնաց գյուղատնտեսությունն են ընդունել:

Վերը ցույց տվինք, թե կոմունիստական հեղափոխության պրոցեսում բոլշևիզմը պրոլետարիատին ինչքան բարձր, ինչքան վճռական դեր է հատկացնում: Մեր թշնամիների թեորետիկական հարձակումները դրանով փաստորեն կարելի յե ջրած համարել: Սակայն միջազգային սոցիալիզմի վիճակն այս խնդրի ճիշտ լուծումից այնքան մեծ կախում ունի և Խորհրդային Իշխանության ամեն մի նոր նվաճում մեր թշնամիների շարքերում հակակոմունիստական բամբասանքն այնքան է ուժեղացնում, վոր նույն խնդրի լուսաբանությանն ավելորդ չէ այլ կողմերից էլ մոտենալ:

Նախ կանգ առնենք այն խնդրի վրա, թե բոլշևիկները գյուղացուն ինչ աստիճան սոցիալիստ են համարում: Գյուղատնտեսական բանվորներին չէ, վոր խնդիրն այստեղ վերաբերում է: Ըստ իրենց դրության արտադրության պրոցեսում, նրանք պրոլետարիատի միջազգային բանակի մի մասն են և իրենց դրության բարելավումն ու իրենց ազատագրումը չահագործումից միայն պրոլետարական հեղափոխության ու պրոլետարական դիկտատուրայի միջոցով կարող են ձեռք բերել: Իբրև վարձու բանվորներ, նրանք կապիտալի դասակարգային, ուրեմն՝ սկզբունքային թշնամիներն են և նրանց կենսական շահն է, վոր գյուղատնտեսության բոլոր ճյուղերում ուժեղանան սոցիալիստական տարրերը, մինչև մասնավոր սեփականության և մանր արտադրության կատարյալ վերացումը: Նրանք կոմունիզմի մարտիկներ են և իբրև այդպիսիներ՝ պրոլետարիատի հենարանն են գյուղում:

Գյուղատնտեսական բանվորության հետ մոտավորապես միևնույն հողի վրա է կանգնած նաև չքավոր գյուղացիությունը, վորի անդամների համար

իրենց փոքրիկ սեփականությունը միայն մի չարիք է: Յեթե գործարանային արդյունաբերությունը կարողանար նրանց բոլորին ընդգրկել, իրենց սեփականությունից նրանք ամենայն պատրաստակամությամբ կհրաժարվեյին և անմիջապես պրոլետարիատի շարքերը կանցնեյին: Կոոպերատիվ գյուղատնտեսական արտադրության անցնելու համար նրանց առաջ միայն մի խոչընդոտ կա՝ դրա համար պահանջվող նյութական միջոցների բացակայությունը: Մեր պետական գործարանային արդյունաբերության և յերկրի վողջ տնտեսության վերելքի հետ միասին՝ համապատասխան իրենց տրամադրության տակ դրվող նյութական հնարավորությունների աճման, Խորհրդային Իշխանությունը և գյուղատնտեսական կոոպերացիան չքավոր գյուղացիներին ամեն կերպ աջակցում են և աջակցելու յեն, վորպեսզի նրանք ամեն մի ձևի գյուղատնտեսական կոլեկտիվ արտադրություն կազմակերպեն: Խորհրդային Իշխանության այս ծրագիրը չքավոր գյուղացիության շարքերում վորևէ արգելքների հանդիպել չի կարող: Ընդհակառակը, գյուղացիության այդ խավի դրության պայմանները կոոպերատիվ արտադրության հաստատման ու առաջացման համար ամենապարարտ հող են ներկայացնում: Այս պատճառով էլ, բատրակների հետ միասին, չքավոր գյուղացիներին էլ կոմունիստական կուսակցությունը պրոլետարիատի հենարան է համարում գյուղում: Կարելի յե ընդունել, վոր չքավոր գյուղացիներն, իբրև սրենք, չեն վարձվում վոչ թե այն պատճառով, վոր վարձվել չեն ուզում, այլ այն պատճառով, վոր նրանց վարձող չկա: Նրանք փաստորեն պրոլետարներ են, վորոնք բուրժուական յերկրներում կապիտալիստների կողմից պահպանվում են՝ աշխատանքի պահեստի բանակը մշտապես լրացնելու համար: Խորհրդային կարգերում նրանց հնարավորություն է տրվում վերջնական կործանումից խուսափել և պրոլետարիատի շարքերն անցնելու փոխարեն՝ Խորհրդային Իշխանության աջակցությամբ աստիճանաբար կոլեկտիվ արտադրության անցնել:

Սոցիալիզմին հասնելու տեսակետից, բոլոր կուսակցությունների համար վոչ պակաս պարզ է նաև գյուղի բնակչության հակառակ բևեռի՝ ունևոր և չահագործող գյուղացիների խնդիրը: Նրանց շարքերում սոցիալիստական աշխատանք վարել միայն այսպես կոչված քրիստոնեական սոցիալիստական կուսակցությունները և 2-րդ Ինտերնացիոնալի կուսակցություններն են ընդունակ: Կոմինտերնի կուսակցությունները նրանց դեմ միայն կռվել կարող են և նրանց սոցիալիզմի ակտիվ կողմնակիցներ, սոցիալիստական արտադրողներ կդարձնեն այն ժամանակ, յերբ մասնավոր սեփականության և արտադրության դրությունը մեզ մոտ ընդհանրապես անհնարին կդառնա, յերբ բուրժուական աշխարհի այդ վերջին մնացորդներին առանց այլևայլության կհարկադրեն իրենց սեփականությունը և իրենց բանվորական ուժը

վերջնականապես հաղթանակած սոցիալիստական հասարակության տրամադրության տակ դնել: Գյուղացիության այդ շահագործող տարրերի դեմ Խորհրդային իշխանությունը միայն կռվել կարող է, նրանց դեմ ուղղելով վոչ միայն գյուղի բանվորների ու չքավոր գյուղացիների, այլև միջակ գյուղացիների կազմակերպված ուժը:

Բոլոր մյուս շահագործողների հետ միասին, մեր սահմանադրությունը գյուղի այդ շահագործողներին ել զրկում է քաղաքական իրավունքներից, զրկում է աշխատավոր ժողովրդի վրա իշխելու հնարավորությունից, նրանց ազատելով նաև մեր սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու պարտականությունից: Նման պայմաններում գյուղատնտեսական բանվորների, բատրակների և աշխատավոր ամբողջ գյուղացիության համար կռիվը շահագործող գյուղացիների դեմ չափազանց դյուրանում է: Մեր բատրակներն ու չքավոր գյուղացիները բուրժուական յերկրների իրենց յեղբայրակիցների նման քաղաքականապես անօգնական վիճակում չեն գտնվում, և այդ պատճառով ել գյուղի բռունցքների դեմ կռվելու գործում կռվի նոր յեղանակներ են մշակում: Այդ կռվում նրանք հնարավորություն ունեն հենվելու պրոլետարական դիկտատուրայի նյութական ու քաղաքական ամբողջ զորության վրա: Կոմկուսը, արհմիությունները, ԼԿՅԵՄ, գյուղխորհուրդը, միլիցիան, դատարանը, Կարմիր Բանակը և մեր պետական ամբողջ ապարատը, մեր ամբողջ օրենսդրությունը, կոոպերատիվ և նման այլ կազմակերպությունները միշտ և ամենուրեք գյուղի աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան են և նրա խաղաղ շինարար աշխատանքի լիակատար հնարավորություն են ապահովում:

Կոմկուսի և Խորհրդային իշխանության հիմնական ու ամենակարևոր գործն է՝ պրոլետարական դիկտատուրայի շրջանը սոցիալիստական շինարարության և բանվորական ու գյուղացիական մասսաների սոցիալիստական դաստիարակության ու սոցիալիստական կազմակերպման համար օգտագործել, Խ. Ս. Հ. Միության սահմաններում սոցիալիզմի վերջնական հաղթությունն ապահովել ու արագացնել: Խորհրդային կարգերի և Խորհրդային իշխանության սոցիալիստական շինարարության նկատմամբ գյուղի բնակչության վերոհիշյալ յերկու խավերի դիրքերն այնքան պարզ են, վոր նրանց սոցիալիստական կամ հակասոցիալիստական ձգտումների ու ծրագրների շուրջը Կոմինտերնի ու նրա հակառակորդների միջև վեճեր չեն առաջանում: Խորհրդային իշխանությունը չի թաքցնում և չի կարող թաքցնել այն, վոր գյուղացիության շահագործող խավերը պրոլետարական դիկտատուրայի և կոմունիզմի դասակարգային թշնամիներ են, վոր աշխատավոր գյուղացիության վրա հենվելով՝ ինքը նրանց դեմ կռվում է և վոր բանվորն ու աշխատա-

վոր գյուղացին նրանցից վորևե սոցիալիստական սպասելիքներ ունենալ չեն կարող: Իրենց հերթին, Կոմինտերնի և Խորհրդային Միության թշնամիները գյուղատնտեսական բանվորներին, բատրակներին և չքավոր գյուղացիներին վորևե հակահեղափոխական ծրագրներով ու առաջարկներով մոտենալ չեն կարող, լավ գիտակցելով, վոր բնակչության այդ խավերին հակակոմունիստական ու հակախորհրդային ծրագրների իրականացման գործիք դարձնելն անհնարին է: Յեթե գյուղացիության այդ խավերի նկատմամբ վեճեր յերբեմն ծագում ել են, հեղափոխության և հակահեղափոխության միջև ծագող կռվում նրանք վորևե վճռական դեր չեն կատարում, վորովհետև գյուղի բանվորներին և չքավոր գյուղացիներին դասակարգականապես իրեն յենթարկել հակահեղափոխությունն անզոր է, իսկ կուլակների նկատմամբ Խորհրդային իշխանությունն այնքան հետևողական հարձակողական քաղաքականություն է վարում, վոր նրանց բացորոշապես իր ազդեցությանը յենթարկելու մասին վորևե հույսերով սնվել չի կարող: Սակայն հեղափոխության և հակահեղափոխության միջև ամենասուր թեորետիկական պայքար է ծագում ամեն անգամ, յերբ խնդիրը միջակ գյուղացիությանն է վերաբերում:—Վորտե՞ղ է փնտրելու այս յերևույթի արմատները:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի հետևանք է: Այդ դաշինքի շնորհիվ է, վոր մեր յերկրի նախկին իշխող դասակարգերը զրկվեցին և՛ իշխանությունից և՛ սեփականությունից: Պրոլետարական պետությունն ամենամեծ վտանգի առաջ կանգնած կլինի, յեթե հակահեղափոխությանը յերբևիցե հաջողվի այդ դաշինքը վերացնել: Իսկ հայտնի յե, վոր պրոլետարիատի դասակարգային հեղափոխության շրջանում նրա դաշինքին գյուղացիության հետ վճռական դեր է հատկացվում նույնիսկ Գերմանիայի նման մի առաջավոր արդյունաբերական յերկրում, վորտեղ պրոլետարիատը բնակչության ճնշող մեծամասնությունն է: Պարզ է, վոր պրոլետարական հեղափոխության վիճակը վորոշելու գործում գյուղացիությունն անհամեմատ ավելի մեծ նշանակություն է ստանում Խորհրդային Միության նման մի յերկրում, վորտեղ նա բնակչության 4/5 է կազմում: Իսկ մեր գյուղացիության շարքերում մեծամասնությունը նրա միջակ խավին է պատկանում: Հեղափոխության հետևանքով միջակ գյուղացիությունն ել ավելի աճեց, վորովհետև նախկին կալվածատերերի ու հարուստ գյուղացիների հողերը սակավահող և հողազուրկ գյուղացիների ձեռքն անցան: «Այդ շրջանում, գրում է Լենինը, մեր գյուղն ավելի մանրբուրժուական դարձավ» (հատ. 18^{1}, եջ 178): Յեվ միջակ գյուղացու դերը դիկտատուրայի շրջանում ել չափազանց աճում է, վորովհետև նա յե գյուղացիության կորիզն ու մեծամասնությունը, իսկ «դիկտատուրայի բարձրա-

դույն սկզբունքը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի պահպանումն է», ինչպես ասում էր Լենինը 1921 թ. Կոմինտերնի Երրորդ Կոնգրեսում (18[1]—331):

Խորհրդային Միության առաջացման ու նրա գոյության, նրա բարգավաճման ամենահիմնական պայմանը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքն է: «Վերջին հաշվում, գրում էր Լենինը 1923 թ. հունվարին, մեր հանրապետության վիճակը նրանից է կախված լինելու, թե գյուղացիական մասսան կհետևի՞ բանվոր դասակարգին՝ հավատարիմ մնալով նրա հետ կնքած միությանը, թե՞ «նեպմաններին», այսինքն նոր բուրժուազիային, թույլ կտա, վոր բանվորներից իրեն բաժանեն, բանվորի և գյուղացու միջև հաստատված կապերը խզեն» (18[2]—115): «Ինչպե՞ս վերակազմել Բանգյուղտեսչությունը» այդ նույն հոդվածում Լենինը գրում է, վոր «մեր խորհրդային հանրապետության սոցիալական կարգերը երկու դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների համագործակցության (сотрудничество) վրա յեն հիմնված:...Եթե այդ դասակարգերի միջև լուրջ դասակարգային տարաձայնություններ ծագեն, հերձվածքն անխուսափելի կլինի, սակայն մեր հասարակակարգում նման հերձվածքի հիմքեր անհրաժեշտաբար չեն դրված»:

III

Բանվորի և գյուղացու դաշինքի քակտումը չի կարելի անխուսափելի համարել, սակայն դրանով դեռ չի ասված, վոր հիմք ունենք ընդհանրապես ժխտելու նրա հնարավորությունը: Ճիշտ է, բանվորի հետ միասին ու նրա ղեկավարությամբ գյուղացին հերոսաբար կռվում էր և պրոլետարական հեղափոխության շնորհիվ նվաճումներ կատարեց, վորոնց բուրժուական հեղափոխությունների ընթացքում և վոչ մի յերկրի գյուղացիություն չի արժանացած: Քաղաքացիական կռվի պայմաններում, ինչպես գրում էր 1919 թ. Լենինը, աշխատավոր գյուղացին «սոցիալիստ բանվորի ընկերն է, նրան հավասար իրավունքներ է վայելում, կապիտալի դեմ մղվող կռվում նրա ամենավստահելի դաշնակիցը, նրա հարազատ յեղբայրն է» (16—353): Սակայն գյուղացին մասնավոր սեփականատեր է, մանր արտադրությամբ է զբաղվում և իբրև այդպիսին՝ պրոլետարական հեղափոխության հաղթության հենց յերկրորդ որը սոցիալիստ դառնալ չի կարող: Դրա համար յերկարատև ժամանակ է պահանջվում, վորպեսզի Խորհրդային իշխանության աջակցությամբ գյուղացին բարձրացնի իր արտադրության տեխնիկան և իր մանր անհատական արտադրությունը խոշոր հասարակական արտադրության վերածի: Նոր տնտեսական քաղաքականության հաստատումը հենց նրանով է պայմանավորված, վոր մեզ մոտ, գլխավորապես գյուղատնտեսության մեջ, մանր արտա-

դրությունը չափազանց լայն տարածում ունի՝ յերկրի բնակչության ճնշող մեծամասնությունն է ընդգրկում: ՆԵՊ-ը կատարելապես աննպատակահարմար ու վնասակար կլիներ, յեթե մանր գյուղատնտեսական արտադրությունից յելնելով՝ հնարավոր լիներ խոշոր հասարակական գյուղատնտեսություն կազմակերպել, հնարավոր լիներ հեղափոխության հենց յերկրորդ որը գյուղատնտեսության մեջ եւ սոցիալիստական արտադրություն հաստատել:

ՆԵՊ-ի միջոցով պրոլետարական պետությունը գյուղացիության հետ նոր, ավելի լայն ու ավելի խորը գնացող կապեր է հաստատում, գյուղացիությունը նորից է նվաճում՝ այս անգամ վոչ թե կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը տապալելու, այլ սոցիալիստական շինարարությունը զարկ տալու, խոշոր գյուղատնտեսական արտադրության համար տեխնիկական ու նյութական բազա ստեղծելու համար: Առանց ՆԵՊ-ի՝ գյուղատնտեսության վերականգնումն ու զարգացումն անհնարին կլինեյին և բանվորի ու գյուղացու դաշինքը շատ շուտով կքայքայվեր, կկործանվեր: ՆԵՊ-ի շնորհիվ, այդ դաշինքն այն աստիճան ուժեղացավ ու ամրացավ, վոր 1922 թ. նոյեմբերին, Կոմինտերնի 4-րդ Կոնգրեսում, Լենինը կարողանում էր հայտարարել. «Դժվար է մեզ ավելի կողմնակից լինել, քան գյուղացիությունն է յեղել» (18[2]–89): Իսկ ՆԵՊ-ի հաջողության ամենակարևոր պայմանն առևտուրն է: 1921 թ. նոյեմբերին Լենինը գրում էր, վոր «տասնյակ միլլիոնավոր մանր հողագործների և խոշոր արդյունաբերության միջև առևտուրը միակ հնարավոր տնտեսական կապն է (18[1]—413): Նոր տնտեսական քաղաքականության շրջանում իր ճառերում ու հոդվածներում առևտրի խնդրի վրա Լենինը շատ հաճախ է կանգ առնում, առաջարկելով մեր տնտեսական կյանքում առևտրին ամենաառաջնակարգ տեղ տալ, վորովհետև մասսայական մանր արտադրության պայմաններում գործարանային արդյունաբերության և մանր գյուղատնտեսության արդյունքների փոխանակումը միայն առևտրի միջոցով կարելի յե կազմակերպել և միայն փոխանակության գործի կազմակերպման կանոնավորությամբ կարելի յե վորոշել, թե գործարանային արդյունաբերության կողմից գյուղի պահանջներն ինչպես և ինչ աստիճան են բավարարվում:

Տնտեսության զարգացումը մանր արտադրության պայմաններում անխուսափելիորեն ապրանքային փոխանակության ուղիով է ընթանում, առևտրի ազատություն է պահանջում: «Շրջանառության ազատությունն առևտրի ազատություն է, իսկ առևտրի ազատությունը մեզ դեպի կապիտալիզմ է վերադարձնում: Շրջանառության և առևտրի ազատությունը վոչ այլ ինչ է, քան ապրանքների փոխանակություն՝ առանձին մանր տնտեսությունների միջև: Այն բոլորը մեր շարքերում, ովքեր գեթ մարքսիզմի այբուբենին են ծանոթ, գիտեն, վոր այդ շրջանառությունը և առևտրի ազատությունը

արտադրողների շարքերում անխուսափելիորեն յերկու խավ են ա-ռաջանում՝ կապիտալի տերերին և բանվորական ձեռքերի տերերին, կա-պիտալիստներին և վարձու բանվորներին, այսինքն նորից կապիտալիստական վարձու ստրկությունն են վերականգնում, վորը յերկնքից չի ընկնում, այլ ամբողջ աշխարհում ապրանքային հողագործությունից է առաջանում (18¹—140): «Մանր արտադրությունը միշտ, ամեն օր ու ամեն ժամ, տարե-րային կերպով ու մասսայական չափերով կապիտալիզմ և բուրժուազիա յե ծնում», գրում է Լենինը մի այլ տեղ (17—118):

Մանր արտադրությունը մանր-բուրժուական արտադրություն է և փո-խանակության ազատ պայմաններում, յերբ բանվորական ուժն էլ, իբրև ապ-րանք, մասսայական չափերով շուկա յե հանվում՝ կապիտալիզմի յե վերած-վում: Այս խնդիրը Մարքսի տնտեսական ուսմունքի ամենակարևոր կետե-րից մեկն է: Յեվ վորովհետև մեր գյուղատնտեսության մեջ հենց այդ մանր արտադրությունն է տիրապետում, վորը սոցիալիզմի հիմք ու յերաշխիք ծա-ռայել չի կարող, վորովհետև մանր ու միջակ գյուղացիությունը մեր յերկրի բնակչության ճնշող մեծամասնությունն է, իսկ գործարանային արդյունա-բերությունը դեռ այնքան թույլ է զարգացած, վոր սոցիալիստական արտա-դրության համար անհրաժեշտ գործիքներով, մեքենաներով ու այլ միջոցնե-րով մեր գյուղացիության այդ վիթխարի մասսային դեռ ապահովել չի կա-րող, գյուղատնտեսության վերելքի միակ ուղին մանր ապրանքային արտա-դրության վրայով է անցնում: Մարքսիզմը և լենինիզմը ուտոպիական ուս-մունքներ չեն: Հասարակական կյանքի զարգացման օրենքները նրանք յեր-կուսն էլ վոչ թե հնարում, այլ ռեալ պատմական իրականությունից, դասա-կարգային պայքարի ռեալ հարաբերություններից են բխեցնում: Պրոլետա-րիատի կոմունիստական շարժումը և կոմունիստական իդեալը նրանք պաշ-տպանում են վոչ թե այն պատճառով, վոր կոմունիզմը վեհ գաղափար է, այլ վորովհետև այդ վեհ գաղափարի իրականացումը կատարելապես հնարավոր է, վորովհետև կոմունիզմը խոշոր կապիտալիստական արտադրության զար-գացման անհրաժեշտ հետևանքն է:

Իր զարգացման մի վորոշ բարձր աստիճանի վրա կապիտալիստական խո-շոր արտադրությունը մասնավոր սեփականության պայմաններում, բուր-ժուազիայի ստեղծած հասարակական հարաբերությունների պայմաններում առաջադիմել այլևս չի կարող: Արտադրողական ուժերի և արտադրական հա-րաբերությունների այդ բախումը միայն պրոլետարիատը կարող է վերաց-նել, վորովհետև ըստ իր դրության արտադրության պրոցեսում պրոլետա-րիատը բուրժուական հասարակության միակ դասակարգն է, վորն ընդունակ է թե բուրժուազիայի տիրապետությունը վերացնել և թե արտադրությունը

սոցիալիստական հողի վրա կազմակերպել: Մասնավոր սեփականության պահ-պանումն օբյեկտիվորեն անհնարին է, վորովհետև մեր դարի բարձր արտա-դրողական ուժերը նրա նեղ շրջանակներում զարգանալ այլևս չեն կարող և վորովհետև պրոլետարիատ այժմյան արտադրության միջոցների մասնա-վոր սեփականությունը պահպանել չի կարող նույնիսկ այն դեպքում, յեթե իր հեղափոխության ընթացքում նման ձգտումներ ունի: Ինչպես մանր արտադրությունն անհրաժեշտաբար մասնավոր սեփականություն է յենթա-դրում, այնպես էլ բարձր զարգացման հասած խոշոր արտադրությունը հա-սարակական սեփականություն է պահանջում: «Կապիտալ»-ի III հատորում Մարքսը նկատում է, վոր արդեն ակցիոներական ընկերությունները մասնա-վոր կապիտալիստական սեփականության ինստիտուտի անկման ու ոչնչացման նշան են, վոր այժմյան բարձր արտադրողական ուժերն օգտա-գործելու համար անհատ կապիտալիստները հարկադրված են իրենց անհատա-կան կապիտալները միացնել: Արդեն կապիտալիստական հասարակության պայմաններում կապիտալը, իբրև մասնավոր սեփականություն, դադարում է աճել ու զարգանալ և իր զարգացման համար մասնավոր սեփականության վերացում է պահանջում: Ակցիոներական ընկերությունները, տրեստները, սինդիկատները և կապիտալիստական այլ միությունները Մարքսի ուսմունքի ճշտության անժխտելի ապացույց են: Այդ ամենն վոչ այլ ինչ է, քան «արտա-դրության կապիտալիստական յեղանակի վերացումն իրեն՝ արտադրության կապիտալիստական յեղանակի շրջանակներում» («Կապիտալ», հատ. III, գլուխ 27):

Արդեն հասարակական հողի վրա դրած խոշոր կապիտալիստական սեփա-կանությունը բանվորները չեն կարող իրենց համար մասնավոր սեփականու-թյան վերածել, վորովհետև նրա անհատական բաշխումը ֆիզիքապես անհնա-րին է, իսկ հնարավորության դեպքում այն բանվորներին վոչ թե դեպի սո-ցիալիզմ, այլ դեպի մանր ապրանքային արտադրության կտաներ, վորի զարգացման պրոցեսում նորից անխուսափելիորեն կապիտալ, վարձու աշ-խատանքի ստրկություն և ընդհանրապես կապիտալիստական հարաբերու-թյուններ կառաջանային: Յեթե բանվորը գործ ունենար վոչ թե խոշոր գոր-ծարանի, այլ փոքրիկ արհեստանոցի հետ, վոչ թե յերկաթուղու վիթխարի տեխնիքական ցանցի, այլ սուրբ Եչմիածնի սուրբ ու համեստ ավանակի հետ, վոչ թե ցեպելինի, այլ Արաբանի սայլի հետ, վոչ թե ովկիանոսյան մեծ նա-վերի հետ, վորոնցից ամեն մեկը մի փոքրիկ քաղաք է ներկայացնում, այլ Ա-րաքսի վրա լողացող նավակների ու տիկերի հետ և այլն և այլն, այդ դեպքում բաժանումը հնարավոր կլիներ: Սակայն չէ՞ վոր պատմության համապատաս-խան շրջանում վո՛չ մասսայական վարձու աշխատանք կա և վո՛չ ուրեմն պրո-

յետարական շարժում ու պրոլետարական սոցիալիզմի գաղափար: Կապիտալիստական տնտեսության մեջ գործող՝ արտադրության, փոխադրման և ընդհանրապես հաղորդակցության միջոցների անհատական ուժերով վոչ արտադրել և վոչ գործադրել կարելի չէ:

IV

Խոշոր կապիտալիստական արտադրության տեխնիկան բնական անհրաժեշտությամբ մարդկությունը դեպի սոցիալիզմ է տանում, սոցիալիզմի համար նյութական բազա յե ստեղծում և պրոլետարական մասսաներ է առաջացնում, վորոնց համար սոցիալիզմը փրկության միակ ուղին է և վորոնք՝ իբրև արտադրող մասսաներ՝ ընդունակ են կապիտալիստական սեփականությունը և արտադրությունը սոցիալիստական սեփականության և սոցիալիստական արտադրության վերածել: Բուրժուական գործարանում աշխատանքը միշտ էլ հասարակական է յեղել՝ հարյուրավոր, հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորների ձեռքով է կատարվել, իսկ կապիտալիստական տնտեսության արտադրանքը փոքրաթիվ կապիտալիստների մասնավոր սեփականությունն է կազմում, վորովհետև արտադրության միջոցները և իշխանությունը նրանց ձեռքում են կենտրոնացած: Կապիտալիզմի զարգացման բարձր աստիճանի վրա, մանավանդ ներկայումս՝ ֆինանսական կապիտալի շրջանում, հրեշային չափեր է ընդունել կապիտալիզմին ընդհանրապես հատուկ այն յերևույթը, վոր կապիտալի սեփականատերը և կապիտալն արտադրության մեջ գործադրողը տարբեր անձինք են: Խոշոր կապիտալիստների մի նշանավոր տոկոսն արտադրության հետ ընդհանրապես կապված չէ և նրանց միակ արհեստը կտրոն կտրելն է: Այժմյան խոշոր մենաշնորհային կապիտալը կապիտալիստների մեծամասնությանն ազատում է նույնիսկ արտադրության հետ անհրաժեշտորեն կապված կազմակերպչական աշխատանքից, այնինչ կապիտալիստների տնտեսության մեջ մի բոլորովին ավելորդ տարր, միջնադարյան հողատիրության նման մակաբույծների մի վոհմակ է դառնում:

Արտադրողական ուժերի զարգացմանը նպաստելու փոխարեն՝ մենաշնորհային կապիտալը նրանց զարգացման առաջ բազմաթիվ խոչընդոտներ է ստեղծում: Անկախ դրանից, ֆինանսական կապիտալի հաջողությունները պահանջում են, վոր քաղաքականապես բուրժուազիային ստրկանան վոչ միայն գաղութային ժողովուրդները, այլև կապիտալիստական յերկրների բանվորական լայն մասսաները: Այսպիսով, ֆինանսական կապիտալի կամ իմպերիալիզմի շրջանում իրենց զարգացման ծայրահեղ աստիճանին են հասնում այն ներհակությունները, վորոնք կապիտալիստական արտադրությանը միշտ էլ հատուկ են յեղել: Իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմն սկսում է փտել ու

քայքայվել և իր գոյության շարունակությունը միայն ժողովրդական լայն մասսաների ստրկության ուժեղացման գնով է ձեռք բերում: Միևնույն ժամանակ կապիտալիստն արտադրության համար բոլորովին ավելորդ է դառնում: Մի բևեռում արտադրության հանրայնացումն է աճում, մյուս բևեռում՝ կապիտալիստների պարազիտիզմը: Դասակարգային պայքարն ավելի սուր կերպարանք է ընդունում, քան յերբևիցե կապիտալիզմի պատմության ընթացքում: Այդ ամենին ավելանում է կապիտալիզմի հիմնական ներհակությունը, նրա ամենամեծ դժբաղդությունը՝ բարձր արտադրողական ուժերի և բուրժուական արտադրական հարաբերությունների անմիաբանությունը, նրանց անհամապատասխանությունը:

Խոշոր մեքենայական արտադրությունը տնտեսության բոլոր ճյուղերում արդեն ներկայումս հանրայնացրած արտադրություն է, այնպես վոր նրանից սոցիալիստական արտադրության ու սոցիալիստական կարգերին անցնելու համար պահանջվում է միայն հասարակական կամ սեփականատիրական հարաբերությունները փոխել, պահանջվում է բուրժուազիային սեփականազրկել և արտադրության միջոցներն ու իշխանությունը պրոլետարիատի ձեռքում կենտրոնացնել: Զարգացած մեքենայական արտադրությունը տալիս է մեզ այն ամենը, վոր պահանջվում է սոցիալիզմի համար: Ահա ինչու պրոլետարական հեղափոխության հենց առաջին ժամանակից սկսած, «հետևողական սոցիալիստական տիպի» արտադրություն է կազմակերպվում տնտեսության այն բոլոր ճյուղերում, վորտեղ արդեն կապիտալիզմի շրջանում մեքենայական արտադրությունն է իշխելիս յեղել: Մեքենայացրած խոշոր գյուղատնտեսությունն էլ բացառություն, իհարկե, չի կազմում:

Հեղափոխության միջոցով պրոլետարիատը տիրանում է արտադրության միջոցներին ու իշխանությանը և իր դիկտատուրայից ոգտվելով՝ անմիջապես սոցիալիստական արտադրություն է մտցնում տնտեսության այն բոլոր ճյուղերում, վորտեղ հեղափոխության ժամանակ արտադրությունն արդեն մեքենայացրած է, վորտեղ ուրեմն արդեն հանրայնացրած արտադրությունն է տիրապետում: Մարքսիզմի այբուբենին ծանոթ ամեն մի բանվոր իմանում է, վոր առանց այս հիմնական պայմանի՝ սոցիալիզմի հաստատման մասին խոսք լինել չի կարող: Յերբե՛ք և վո՛չ մի սոցիալիստական կուսակցություն, վորը մարքսիստական ծրագիր ունի, այլ կերպ վոչ դատել և վոչ վարվել է: Միայն մանր-բուրժուական կուսակցություններն են, վոր սնվել են և շարունակում են սնվել այն սին հույսերով, իբրև թե գյուղի և քաղաքի մանր արտադրության հողի վրա կարելի յե անմիջապես սոցիալիզմ կառուցել: Պրոլետարական հեղափոխության թշնամիները խորհրդային կարգերի ու լենինիզմի քննադատության մեջ անվերջ իրենք իրենց հակասում են, վորովհետև նրանց հա-

կահեղափոխական ձգտումները պատմական անցյալին են պատկանում և այդ պատճառով էլ իրենց ձգտումները արմատապես հիմնավորել ու ձևակերպել նրանք անզոր են: Մեզ այսօրվա գրագետների խնդրի նկատմամբ նրանք կատարյալ անհեթեթություններ են դուրս տալիս՝ մերթ ժխտելով սոցիալիստական տարրերի ներկայությունը մեր տնտեսության մեջ, ժխտելով ամենից առաջ մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը, մերթ բոլշևիկներին մեղադրելով նրանում, թե Հոկտեմբերի ղեկավար այդ կուսակցությունը մեր հետամնաց գյուղում ծրագրում է անմիջապես սոցիալիզմ հաստատել:

Բոլշևիկները մարքսիզմի միակ հետևողական պաշտպաններն են: Լենինիզմը վերածնեց, վերականգնեցրեց Մարքսի ու Էնգելսի ուսմունքը, այդ ուսմունքին դեռ լրիվ չտեսնված ժամանակայնություն ավելից և նրա մեջ մի նոր գլուխ մտցրեց, վորը Մարքսի ու Էնգելսի մահից հետո միայն առաջացած՝ կապիտալիզմի վերջին շրջանին, ֆինանսական կապիտալի կամ իմպերիալիզմի շրջանին է վերաբերում: Պրոլետարական հեղափոխության առաջացման ու հաղթության տնտեսական պայմանների խնդրում, ինչպես և բոլոր մյուս խնդիրներում, լենինիզմը մարքսիզմի ամենահարազատ, ամենահետևողական շարունակությունն ու մեկնաբանությունն է, մարքսիզմից նվազագույն չափով անգամ չի շեղվում: Մեր ասածը հիմնավորելու համար, կանգ առնենք այն խնդրի վրա, թե մեր հետամնաց գյուղում սոցիալիզմ մտցնելու մասին Լենինն ինչ տեսակետ էր պաշտպանում:

Կոմունիստական շաբաթօրյակներին նվիրված իր մի հոդվածում, 1919 թ. հունիսին, Լենինը գրում է. «Պարզ է, վոր դասակարգերի լիակատար վոչնչացման համար պետք է վոչ միայն տապալել շահագործողներին՝ կալվածատերերին ու կապիտալիստներին, վոչ միայն վերացնել նրանց սեփականությունը, այլ պետք է վերացնել նաև արտադրության միջոցների ամեն մի մասնավոր սեփականություն, պետք է վոչնչացնել թե՛ գյուղի ու քաղաքի միջև գոյություն ունեցող տարբերությունը և թե՛ տարբերությունը ֆիզիկական ու մտավոր աշխատանքի մարդկանց միջև: Սա մի շատ երկարատև գործ է, վորը կատարելու համար արտադրողական ուժերի զարգացման ուղիով պետք է վիթխարի քայլերով առաջ գնալ, պետք է հաղթահարել մանր արտադրության բազմաթիվ մնացորդների դիմադրությունը (համառ պասսիվ դիմադրություն, վորը հաղթահարելու համար առանձնապես համառ ու ծանր պայքար է պահանջվում), պետք է հաղթահարել սովորույթի և անշարժության այն ահագին ուժը, վորն այդ մնացորդների հետ է կապված» (16—249):

Սոցիալիզմն արտադրության միջոցների մասնավոր սեփականության, ուրեմն նաև դասակարգերի վերացումն է: Ըստ Լենինի ուսմունքի, այդ ծրա-

գրի իրագործումը Խորհրդային իշխանությունից դեռ երկարատև ու համառ պայքար է պահանջում, վորպեսզի վերացվեն մանր արտադրությունը, գյուղի ու քաղաքի տարբերությունը, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի տարբերությունը: Մեր պետական արդյունաբերությունը «հետևողական սոցիալիստական տիպի» արդյունաբերություն է, սոցիալիստական են Խորհրդային իշխանության ամբողջ շինարարությունը, վորովհետև այդ ամենը սոցիալիստական պրոլետարիատի սոցիալիստական ծրագրի իրականացման գործին են ծառայում: Այստեղից Կոմինտերնը բոլորովին այլ եզրակացության է գալիս, քան նրան հակահեղափոխական կուսակցություններն են վերագրում: Սոցիալիստական հասարակությունը մեզ մոտ դեռ կառուցված չէ, գրում է Լենինը «Կոոպերացիայի մասին» հոդվածում, սակայն մենք ունենք այն ամենն, ինչ վոր սոցիալիզմի կառուցման համար անհրաժեշտ և բավական է» (18^2—130):

Ի՞նչ է պահանջվում սոցիալիզմի համար: «Պարենհարկի մասին» իր հռչակավոր հոդվածում, 1921 թ. ապրիլին, Լենինը գրում էր. «Սոցիալիզմն անհնարին է առանց խոշոր-կապիտալիստական տեխնիկայի, վորը կառուցված լինի ըստ նորագույն գիտության վերջին խոսքի, անհնարին է առանց պլանաչափ պետական կազմակերպության, վորն արդյունքների արտադրության և բաշխման գործում տասնյակ միլիոնավոր մարդկանց կարողանար միևնույն նորման ամենախիստ կերպով պահպանելու կանոններին յենթարկել»: «Դրա հետ միասին, շարունակում է Լենինը, սոցիալիզմն անհնարին է առանց պրոլետարիատի տիրապետության պետության մեջ. այդ էլ այբուբեն է» (18^1—206):

Սոցիալիզմի իրականացման համար այդ նախադրյալներն անհրաժեշտ համարելով՝ Լենինը, իսկ նրա հետ նաև ամբողջ Կոմկուսը, գյուղում անմիջապես սոցիալիստական արտադրության կազմակերպելու ծրագիր չեյին կարող ունենալ և նման ծրագիր յերբեք չեն էլ ունեցել: «Մանր գյուղացիական յերկրում սոցիալիզմ «մտցնելը» պրոլետարական կուսակցությունը վոչ մի կերպ չի կարող իրեն նպատակ դնել», գրում էր Լենինը 1917 թ. ապրիլին «Պրոլետարիատի նպատակները մեր հեղափոխության մեջ» հոդվածում, վորը կազմած ու հրատարակած էր, իբրև «պրոլետարական կուսակցության պլատֆորմի նախագիծ»: «Կոմունան, այսինքն բանվորների և գյուղացիների պատգամավորական խորհուրդները, չի «մտցնում», չի յենթադրում «մտցնել» և չպետք է մտցնի վորևէ բարենորոգումներ, վորոնք և՛ տնտեսական իրականության և՛ ժողովրդի ճնշող մեծամասնության գիտակցության մեջ բացարձակապես չեն հասունացել», ասում է Լենինը նույն հոդվածում (14^1—էջ 31 և 48):

Այսպես էր դատում Լենինը Փետրվարյան հեղափոխության սկզբում, այսպես էր դատում նաև Հոկտեմբերյան հեղափոխության փառավոր հաղթանակներից հետո, 1921 թ. ապրիլին, երբ ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելու պատրաստություններ էին տեսնվում: «Պարենհարկի մասին» իր հոդվածում, 1921 թ. ապրիլին, այդ մասին Լենինը հետևյալն է գրում. «Երևի, Ռուսաստանի տնտեսության խնդիրներով զբաղվողների մեջ դեռ մեկը չի եղել, որը ժխտեր նրա անցողական բնույթը: Երևի, ոչ մի կոմունիստ չի ժխտել նաև այն, որ «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» արտահայտությունը նշանակում է այն, որ Խորհրդային իշխանությունը վճռել է կիրառել անցումը դեպի սոցիալիզմ և ոչ թե այն, որ ներկա տնտեսական կարգերն իբրև սոցիալիստական են ճանաչվում: Սակայն, ի՞նչ բովանդակություն ունի անցում բառը: Երբ խնդիրը տնտեսությանն է վերաբերում, նրա բովանդակությունն այն չի՞ արդյոք, որ տվյալ տնտեսական կարգերում կան կապիտալիզմի և սոցիալիզմի տարրեր, մասնիկներ և կտորներ: Ամեն ոք կընդունի, որ այդ այդպես է» (18¹—203):

V

Մեր տնտեսության մեջ և՛ կապիտալիզմի և՛ սոցիալիզմի տարրեր կան: Ըստ Լենինի տված դասավորման, այդ տարրերն են. 1. նահապետականը, 2. մանր ապրանքային արտադրությունը, 3. մասնավոր կապիտալիզմը, 4. պետական կապիտալիզմը և 5. սոցիալիզմը: Բավական է ծանոթ լինել մեր տնտեսության այս անալիզին, համոզվելու համար, թե մեր թշնամիներն ինչքան անգրագետ ու անբարեխիղճ են, երբ բոլշևիկներին այն միտքն են վերագրում, որպես թե մեր ողջ տնտեսությունը նրանք սոցիալիստական են համարում և գյուղացիությունը սոցիալիստական ինչ-որ կոլեկտիվներով քշում են: Ինչպես տեսնում եք, մեզ մոտ ոչ միայն մանր ապրանքային արտադրություն կա, որը գլխավորապես գյուղում է տարածված, այլ մի կողմից իրենց գոյությունն են պահպանել նահապետական տնտեսության մյուս կողմից—կապիտալիստական տնտեսության զանազան ձևերը: Հետևապես, խորհրդային կարգերում դեռ գոյություն ունեն դասակարգեր, որոնց լրակատար վերացումով միայն հնարավոր կլինի մեր երկրի ողջ տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով կազմակերպել: Կապիտալիստներին և կալվածատերերին տապալելուց հետո, ամենահիմնական և ամենադժվար լուծելի խնդիրն այդ ասպարեզում մանր ապրանքային արտադրության վերացումն է, այսինքն՝ ամենից առաջ և գլխավորապես մանր գյուղատնտեսական արտադրության վերացումը, որի համար կռվի բոլորովին այլ

եղանակներ ու միջոցներ են պահանջվում, քան կապիտալիստ և կալվածատեր դասակարգերի վերացման համար:

Մանր գյուղացիական մասսաներին վերացնել, այդ բառի սովորական իմաստով, միայն կապալիստներն ու կալվածատերերն են ընդունակ, որոնք վերջին 300 տարվա ընթացքում նրանց ամենուրեք անխնայաբար քայքայում, սնանկացնում, սեփականազուրկ են անում կամ ուղղակի ֆիզիքական բնաջնջման են ենթարկում: Գյուղացիության վերացման այդ երկու եղանակների կիրառման գործում կապիտալիստական բոլոր երկրները միմյանց հետ ազատորեն մրցել կարող են, սակայն կասկածից դուրս է, որ գյուղացիության վերացման ընդդիմության ամենակլասիկ, ամենաօրինակելի երկիրն Անգլիան է: Խորհրդային իշխանությունն էլ է ձգտում վերացնել մանր գյուղատնտեսական արտադրությունը, սակայն ոչ թե գյուղացիության կործանման, տնտեսական ու ֆիզիքական բնաջնջման գնով, այլ նրա տնտեսական ու կուլտուրական վերածննդի միջոցով: Գյուղացին պետք է դադարի մանր արտադրող ու գյուղացի լինել ոչ թե պրոլետարիատի շարքերն անցնելու համար, ինչպես այդ բուրժուական հեղափոխությունների պրոցեսում կատարվեց, այլ սոցիալիստական հասարակության արտադրողների շարքերն անցնելու համար: Տնտեսության բոլոր ճյուղերում սոցիալիզմը խոշոր արտադրություն է, որի պայմաններում ոչ բանվոր կա և ոչ գյուղացի: Այս խնդիրը կարելի չէ լուծել, գրում է Լենինը, «միայն ողջ հասարակական տնտեսության կազմակերպչական վերակառուցմամբ՝ անհատական, առանձնացած, մանր ապրանքային տնտեսությունից հասարակական խոշոր տնտեսության անցնելով»: Անցման այդ շրջանի տևողությունը կրճատելու համար միայն մի միջոց կա, այն է՝ «գյուղացուն մի այնպիսի օգնություն հասցնել, որը նրան հնարավորություն տար գյուղատնտեսական ամբողջ տեխնիկան մեծ չափերով բարելավել և արմատորեն կերպարանափոխել» (16—352):

Մանր գյուղացին սոցիալիստ չէ, սակայն նրա շահն է՝ սոցիալիստ դառնալ, պրոլետարիատի հետ գործել: Բուրժուական կարգերի զարգացումը նրան դեպի կործանում է տանում, և այս կործանման ուղին է, որ նրա համար պատրաստում են հակահեղափոխական բոլոր կուսակցությունները: Խորհրդային կարգերի ժխտումը նրանց կողմից միայն այն իմաստն ունի, որ մեր երկրում էլ պետք է նախ տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության կապիտալիստական եղանակ հաստատել և ապա միայն սոցիալիզմի խնդիրներով զբաղվել: Իսկ կապիտալիստական արտադրությունը մանր արտադրողների մասսայական սեփականազրկում, տնտեսական կործանում, ֆիզիքական ու բարոյական անկում է ենթադրում, փոխհետև արտադրության այդ եղանակի հիմքը վարձու աշխատանքն է:

Սեփականատիրական անկյուն համար վոչ փոխադարձ համաձայնություն և վոչ գործակցություն է պահանջվում: Միակ նպատակահարմար ձևերն այդտեղ ճնշումն է, ֆիզիկական ույժն է: Ընդհակառակը, Խորհրդային իշխանության համար այդ ձևերը բոլորովին անպետք ու վնասակար է, վորովհետև բռնի ուժով չի կարելի մարդկանց դաստիարակել, մտավորապես ու կուլտուրապես վերածնել, սոցիալիզմի կողմնակիցներ դարձնել և նրանց յուրաքանչյուրական համակրանքն ու համերաշխությունը նվաճել: Այս ուղին է, վոր գործել է, գործում է ու գործելու յե Խորհրդային իշխանությունն, այսինքն իր գյուղացիական ծրագիրն իրականացնելու համար պրոլետարիատը խոսքով ու որինակով գյուղացուն պետք է համոզի նրանում, վոր կապիտալիստական կարգերում նա անխուսափելիորեն կործանման է դատապարտված, վոր նրա միակ փրկությունը սոցիալիզմն է և վոր սոցիալիզմի նվաճումը միայն պրոլետարական դիկտատուրայի միջոցով է հնարավոր: Բանվորի և գյուղացու դաշինքը յերբեք ամուր հիմքերի վրա չի դրվի, յեթե Խորհրդային իշխանությունից տնտեսական ու քաղաքական ոգնության հետ միասին գյուղացին միաժամանակ նաև համապատասխան հեղափոխական ու կոմունիստական դաստիարակություն չստանա, յեթե հոգեպես չհեղաշրջվի, պրոլետարիատի համոզված ու անկեղծ դաշնակիցը, կոմունիզմի նվիրված մարտիկը չդառնա:

Կոմկուսը և Խորհրդային իշխանությունը կտրուկ կերպով արգելում են աշխատավոր գյուղացիության նկատմամբ վորևէ բռնության գործադրել. համոզմունքի և բարոյական ազդեցության ձևերը հրամանի ձևերով փոխարինել: Գյուղացու ընդհանուր կուլտուրական և կոմունիստական դաստիարակությանը Կոմկուսը և Խորհրդային իշխանությունը չափազանց մեծ դեր են տալիս, սակայն գյուղացու հոգեկան վերածնունդի ծրագիրը նրա տնտեսական վերելքի հետ են կապում: 1921 թ. հոկտեմբերին, քաղլուսվարների 2-րդ համագումարի ուշադրությունը Լենինն այն կետի վրա յեր կենտրոնացնում, վոր «քաղաքական լուսավորության հետևանքները միայն տնտեսության բարելավումով կարելի յե չափել» (18^{1}—385): Նույն խնդրի վրա Լենինը կանգ է առել նաև Կոմկուսի X համագումարում, վորտեղ ասում եր. «Լուծել այդ խնդիրը մանր հողագործի նկատմամբ, նրա ամբողջ հոգեբանությունն այսպես ասած առողջացնել կարող է միայն նյութական բազան, տեխնիկան, տրակտորների և մեքենաների մասսայական գործադրումը գյուղատնտեսության մեջ, մասսայական ելեկտրիֆիկացիան» (18^{1}—139): Այդ աշխատանքն, ըստ Լենինի, մեզանից մի քանի տասնյակ տարի ժամանակ է պահանջում:

Նույն ճառում Լենինը հայտնում է, վոր արտադրության մասսայական մեքենայացումը և ելեկտրիֆիկացիան վոչ միայն գյուղացու տնտեսությունը

կբարձրացնեն և գյուղատնտեսության մեջ սոցիալիզմի նախադրյալներ կստեղծեն, վոչ միայն գյուղացուն հոգեպես կհեղաշրջեն և նրան պրոլետարիատի հետ ամուր կապերով կկապեն, այլև գյուղում կուլակների մասսայական վերացում կառաջացնեն:

Գյուղատնտեսությունը պետք է բարձրացնել նույն մանր արտադրության հողի վրա ու մասնավոր սեփականության շրջանակներում և միաժամանակ ձեռնարկել այն բոլոր միջոցներին, վորոնք ընդունակ են նպաստել նրա փոխանցմանը սոցիալիստական տնտեսության: Իսկ փոխանցումը նրանում է կայանում, վոր «ամենաանշահավետ և ամենահետամնաց, մանր, առանձնացած գյուղացիական տնտեսությունն աստիճանաբար միանա և խոշոր հասարակական հողագործական տնտեսություն կազմակերպի: Բոլոր սոցիալիստները և միշտ խնդիրն այսպես են մտածել: «Մեր կոմունիստական կուսակցությունն էլ նույն տեսակետն ունի», ասում եր Լենինը 1921 թ. ապրիլին (18^{1}—188—189): Վերն արդեն կանգ առանք այն խնդրի վրա, վոր մանր արտադրության անեզր թագավորություն ներկայացնող մեր գյուղում խոշոր արտադրության անցնել միայն գյուղացիների կոոպերացման միջոցով է հնարավոր: Կամ մանր տնտեսությունների ձուլում կոոպերացիայի հողի վրա և սոցիալիզմ, կամ գյուղացիության մասսայական սեփականազրկում և կապիտալիզմ—խնդրի մի յերրորդ լուծում գոյություն չունի:

Սոցիալիզմը միայն պրոլետարական կարող է լինել, միայն խոշոր արտադրության հողի վրա կարող է կառուցվել: Իր հեղափոխությունը կատարելուց և իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո, պրոլետարիատը վոչ թե ձգտում է գյուղում և ընդհանրապես մանր արտադրության մեջ անմիջապես սոցիալիստական տնտեսություն կազմակերպել, այլ մանր արտադրողներին կապիտալի և կալվածատիրության լծից ազատագրելով՝ նրանց տնտեսական ու քաղաքական ամեն մի ոգնություն է ցույց տալիս, վորպեսզի իրենց արտադրության կոոպերացման միջոցով նրանք աստիճանաբար խոշոր տնտեսություն ստեղծեն և կոոպերացիայի միջոցով ու նրա վրայով սոցիալիզմի անցնեն:

Կապիտալիզմն արդեն իր զարգացման գագաթնակետին է հասել, արդեն իր կործանման ուղին է բռնել, սակայն և այնպես զարգացած կապիտալիստական տնտեսությունը մարդկության փոքրամասնությունն է ընդգրկում և ամենաառաջավոր կապիտալիստական յերկրներում անգամ այսպես կոչված «մաքուր» կապիտալիզմ դեռ չկա: Իսկ բուրժուազիայի իդեոլոգները պահանջում են, վոր արդեն պրոլետարական դիկտատուրայի շրջանում, բանվոր դասակարգի հեղափոխության հենց յերկրորդ որը, այսպես կոչված «մաքուր» սոցիալիզմ հաստատվի, այն էլ տնտեսապես հետամնաց մի յերկրում: Կա-

կամից դուրս է, վոր նույնիսկ պրոլետարական դիկտատուրայի վերացումից հետո, սոցիալիզմի առաջին շրջանում, մանր արտադրությունն ամենուրեք ավելի կամ պակաս չափով դեռ պահպանվելու յե և վոր նրա լիակատար փոխարինումը խոշոր հանրայնացրած արտադրությամբ սոցիալիստական կարգերում եյ յերկար, տասնյակ տարիների պատմություն է ունենալու:

Զ.

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՍՈՒՆԱՑԱԾ Է

I

Յերբեք և վոչ մի բոլշևիկ չի արտահայտվել այն իմաստով, վոր հետևողական սոցիալիստական կարգեր հաստատելու համար մեր տնտեսության բոլոր ճյուղերը, բնակչության բոլոր խավերը և յերկրի բոլոր մասերը տնտեսապես ու կուլտուրապես արդեն հասունացած են: Ով մեր թշնամիներին հավատ է ընծայում և Լենինի ուսմունքին անծանոթ է, միայն այն յեզրակացության կարող է հանգել, վոր բոլշևիզմի համար բանվորը և գյուղացին մի դասակարգ են և վոր հետևապես նրանք յերկուսն էլ հավասար չափով կոմունիզմի կողմնակիցներ են, կոմունիզմին անցնելու համար յերկուսն էլ տնտեսական ու քաղաքական միևնույն վիճակն են ապրում: Բանվորի և գյուղացու միջև հավասարություն չկա ու ընդհանրապես լինել չի կարող վոչ բուրժուական և վոչ խորհրդային կարգերում: Նրանք յերկու տարբեր դասակարգեր են և ինչքան դեռ կշարունակեն իրենց առանձին դասակարգային գոյությունը, նրանց հավասար համարել միայն անհուսալի ուտոպիստները կամ հակահեղափոխականները կարող են: Բոլշևիկները գյուղացիներին յերբեք չեն ասում, վոր նրանք բանվորներին հավասար են, այլ գյուղացիներին խոսքով ու գործով համոզում են արտադրության կոոպերատիվ և սոցիալիստական ձևերին անցնել և բանվորի հետ միասին մի ընդհանուր սոցիալիստական տնտեսություն ստեղծել, վորի հաղթությունով վերջ կդրվի և՛ բանվորի և՛ գյուղացու դասակարգային գոյությանը: Ըստ Մարքսի և Լենինի ուսմունքի՝ հավասարությունը դասակարգերի վերացումն է, այնպես վոր գյուղացու և բանվորի հավասարության գիտակից ու անկեղծ կողմնակից միայն կոմունիստը կարող է լինել: Մարքսը, Էնգելսը և Լենինը շատ անգամ են արտահայտվել այն իմաստով, վոր դասակարգերի վերացմանը չձգտել և միաժամանակ հավասարության գաղափարը պաշտպանել՝ ամենամեծ հիմարությունն է:

«Գյուղացիք առանձին դասակարգ են», գրում է Լենինը: «Իբրև աշխատավորներ, կապիտալիստական շահագործմանը նրանք դեմ են, սակայն միաժամանակ նրանք սեփականատերեր են:» Ահա ինչու նրանք դեմ են կապիտալին, սակայն կոմունիզմի նկատմամբ էլ տատանվող դիրք են բռնում: Բանվորի և գյուղացու դաշինքը Լենինը մի «առանձնահատուկ տեսակի դաշինք» է անվանում, որը կնքվում է «սոցիալիզմի հաստատակամ կողմնակիցների կողմից՝ տատանվող դաշնակիցների հետ»: Այդ դաշնու դասակարգերը «տնտեսապես, քաղաքականապես, սոցիալապես և հոգեպես միմյանցից տարբերվում են»*):

Իբրև մանր սեփականատեր և ապրանք արտադրող, գյուղացին դարերի ընթացքում տնտեսական ու հասարակական մի այնպիսի միջավայրում է ապրել ու դաստիարակվել, որ նույնիսկ պրոլետարական հեղափոխությունից հետո, խորհրդային կարգերում, միանգամից սոցիալիզմի կողմն անցնել չի կարող: Նրա սոցիալիստական զարգացումը մեծապես խանգարում են թե՛ նրա մասնավոր սեփականությունն ու մանր արտադրությունը և թե՛ նրա հետամնաց գաղափարները, որոնք մշակվել ու ձևակերպվել են դարերի ընթացքում ու նրա հետամնաց տնտեսության արդյունք են:

Իր տնտեսական ու կուլտուրական զարգացման մակարդակով, սոցիալիզմի համար մեր գյուղացիությունը դեռ պատրաստ չէ: Նրա հետամնացության պատճառով է, որ վերջ տնտեսության հանրայնացումը մեծ դանդաղությամբ է կատարվում: Սոցիալիզմի ամենակարևոր նախադրյալները մեր գյուղում դեռ բացակայում են, սակայն այս հանգամանքը սոցիալիզմի վերջնական նվաճումը մեզ մոտ ոչ թե անհնարին է դարձնում, այլ միայն դժվարացնում ու դանդաղեցնում է: «Հեղափոխական պայքարի միջոցով». հարց է տալիս Լենինը մեր հակառակորդներին, «ինչո՞ւ չէյինք կարող նախ սկսել նվաճել այն նախադրյալները, որ անհրաժեշտ են զարգացման այդ որոշ մակարդակի համար, իսկ այնուհետև արդեն, հենվելով բանվորա-գյուղացիական իշխանության և խորհրդային կարգերի վրա, առաջ գնալ՝ մյուս ժողովուրդներին հասնելու համար»: **Յեթե** քաղաքակրթությունը հարկավոր է սոցիալիզմի համար, շարունակում է Լենինը, «ինչո՞ւ մենք չէյինք կարող նախ ստեղծել մեզ մոտ քաղաքակրթության այնպիսի նախադրյալներ, ինչպիսիք են կալվածատերերի վտարումը և ռուսական կապիտալիստների վտարումը, իսկ այնուհետև արդեն դեպի սոցիալիզմ տանող շարժման ձեռնարկել»: (18²—111. ընդգծումները մերն են):

Սոցիալիզմի համար մեր գյուղը հասունացած չէ, սակայն պրոլետարա-

*) Հատ. 16. էջ 215 և 241.

կան դիկտատուրան պայմաններ է ստեղծում, որոնք սոցիալիզմի համար անհրաժեշտ նախադրյալների հասունացումը կատարելապես հնարավոր են դարձնում: Այդ նախադրյալներից հիմնականը և ամենակարևորը, ամենաանհրաժեշտը մեր գյուղի համար կոոպերացիան է՝ գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիան: «Գյուղում սոցիալիզմ կառուցելու հիմնական ուղին է», ըստ Կոմկուսի 14-րդ համագումարի բանաձևի, «գյուղացիության հիմնական մասսան կոոպերատիվ կազմակերպության մեջ գրավել և այդ կազմակերպությանը սոցիալիստական զարգացում ապահովել՝ ոգտագործելով, հաղթահարելով և վտարելով նրա կապիտալիստական տարրերը»: Կոոպերացիան սոցիալիզմ չէ, սակայն յեթե կոոպերացիան մասսայական տարածում է ստանում ոչ թե բուրժուական կարգերում, այլ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, որտեղ իշխանությունը, հողը և արտադրության ու փոխանակության հիմնական միջոցները հանուն կոմունիզմի պայքարող և կապիտալիստական կարգերի դեմ պայքարող պրոլետարիատի ձեռքում են կենտրոնացած, այդ դեպքում արդեն պրոլետարական դիկտատուրան, ապահովված արդյունաբերությունը և կոոպերացիան տալիս են մեզ այն ամենը, «որ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակության կառուցելու համար» (Լենին—«Կոոպ. մասին»):

II

Հոկտեմբերյան հեղափոխության փաստի շուրջը չէ, որ հեղափոխության և հակահեղափոխության միջև թեորեթիկական վեճ է մղվում: Արդեն 10-րդ տարին է, որ այդ հեղափոխությունը կատարվել է: Նախկին Ռուսաստանի իշխող դասակարգերը և միջազգային ամբողջ բուրժուազիան մեր բանվորի ու գյուղացու միացյալ ուժերից այնքան ծանր հարվածներ, այնքան անբուժելի վերքեր ստացան, տնտեսական ու քաղաքական դիրքերից այն աստիճան զրկվեցին և միաժամանակ իր սոցիալիստական շինարարության ու միջազգային հարաբերությունների ասպարեզներում խորհրդային իշխանությունն այնքան խոշոր նվաճումներ կատարեց, տարիների ընթացքում պրոլետարիատի դիկտատուրան այն աստիճան ամրապնդվեց և ամբողջ աշխարհում այնքան բարեկամներ ու կողմնակիցներ ձեռք բերեց, որ հեղափոխության փաստը ժխտել վաղուց արդեն անհնարին է դարձել: Հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի հաղթության ամենամեծ ապացույցն այն է, որ Խորհրդային իշխանությունը միջազգային ամբողջ բուրժուազիայի կյանքի ու մահվան կռիվ է հայտարարել և որ հենց այդ կռվի պրոցեսում ու նրան չնայած՝ մի շարք բուրժուական պետությունների կողմից Խորհրդային իշխանությունն արդեն ճանաչվել է: Հոկ-

ումների հաղթությունը և Խորհրդային իշխանության մեծ նվաճումները, ամենից առաջ մեր տնտեսության սոցիալիստական տարրերի անընդհատ աճումը չընդունելու համար պետք է հիմարների թագավոր ու ծակ-փիլիսոփա լինել, պետք է հոգեպես գժբաղդանալ ու Մոլյերի այն հայտնի հերոսի վիճակին արժանանալ, որին ամեն ինչ «թվում էր», բայց որին առողջ իրականության մարակի հարվածներն ամեն անգամ սթափեցնում, խելքի էին բերում և հարկադրում էին «վայ» կանչել:

Վեճը Հոկտեմբերի սոցիալական բնույթին ու բովանդակությանն, այսինքն՝ այն խնդրին է վերաբերում, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը վո՞ր դասակարգը կամ վո՞ր դասակարգերն են կատարել, բնակչության վո՞ր խավերի ներկայացուցիչ ու պաշտպան է Խորհրդային իշխանությունը և մեր յերկրի տնտեսական պայմաններում սոցիալիզմի շենքի կառուցումն ի՞նչ աստիճան հնարավոր է:—Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական հեղափոխություն է, պրոլետարիատի ղեկավարությամբ է կատարվել, սակայն պրոլետարիատը գյուղացիության և աշխատավոր ամբողջ ժողովրդի հետ միասին էր կռվում՝ գլխավորելով ամբողջ շարժումը, նրան տոն և ուղղություն տալով: Այստեղ նույն յերևույթի հետ գործ ունենք, վորը բուրժուական հեղափոխությունների շրջանում այնքան տարածված էր, այն տարբերությամբ ի հարկե, վոր վերաբերում էր վոչ թե պրոլետարիատին, այլ բուրժուազիային: Այդ յերևույթն իր ամենակլասիկ արտահայտությունն ստացավ Ֆրանսիական Մեծ Հեղափոխության շրջանում, վորը բուրժուական հեղափոխություն էր, բուրժուազիայի ծրագրով ու նրա ղեկավարությամբ էր կատարվում, սակայն շարժման մեջ ամենաակտիվ մասնակցություն ունեյին և նրա վիճակը վորոշելու գործում ամենավճռական դեր էին կատարում նաև գյուղացիական ու բանվորական մասսաները:

Պատմության այն շրջանում, յերբ տնտեսական զարգացումը միայն կապիտալիզմի ուղիով էր հնարավոր, յերբ ուրեմն տնտեսության կազմակերպիչն ու ղեկավարը միայն բուրժուազիան կարող էր լինել և յերբ արտադրողական ուժերի զարգացման համապատասխան ցած աստիճանը մանր սեփականատերերին անխուսափելիորեն սեփականազրկման էր դատապարտում և տնտեսության վերելքը միայն վարձու աշխատանքի մասսայական կիրառումով էր հնարավոր դարձնում, պատմության այդ շրջանում հեղափոխական շարժումը բուրժուազիան էր գլխավորում, սակայն միայն իր ուժերով կալվածատիրական կարգերի դեմ կռվել բուրժուազիան անզոր էր: Պատմական զարգացումը դեպի գյուղացիության կործանումն էր տանում, իսկ բանվորա-

թյունն այդ շրջանում մի այնքան աննշան ուժ էր ներկայացնում, վոր կալվածատեր և կապիտալիստ դասակարգերի դեմ միաժամանակ կռվելու մասին անգամ յերազել չէր կարող: Արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացումն անխուսափելիորեն սոցիալիզմի ուղիով է կատարվում, դեպի սոցիալիզմ է տանում: Մեքենայական արտադրության զարգացումը միայն արտադրության հանրայնացման ուղիով է հնարավոր: Մարքսը և Ենգելսը ցույց տվին արդեն իրենց առաջին գործերում, վոր մեքենայական արտադրության հիմքը հեղափոխական է, վոր նրա գոյությունը միայն նրա արտադրողական ուժերի անընդհատ զարգացման պայմաններում է հնարավոր, իսկ նրա զարգացումը տնտեսության համայնացրած տարրերի ուժեղացումով է արտահայտվում:

Կապիտալիզմը մասնավոր սեփականատիրական արտադրություն է, սակայն իր զարգացման ամեն մի քայլով մասնավոր սեփականությունը ժխտում, նրա գոյության շարունակությունն անհնարին է դարձնում: Ինչպես վերը տեսանք, արդեն ակցիոներական կապիտալը մասնավոր սեփականության ժխտում է նշանակում, իսկ իմպերիալիզմի շրջանի մենաշնորհային կապիտալը մասնավոր սեփականության շենքում քարը քարի վրա չի թողնում և կատարելապես հասունացնում է արտադրության այն ապարատը, վորն անհրաժեշտ է սոցիալիզմի համար:

III

Ամեն մի հեղափոխություն արտադրողական ուժերի նոր զարգացում. արտադրության նոր յեղանակ, նոր հասարակական հարաբերություններ, նոր կուլտուրա յե նշանակում: Զարգացած կապիտալիզմի ուժերը մասնավոր սեփականության գոյությունը ժխտում և հրամայողաբար սոցիալիստական տնտեսության կազմակերպում են պահանջում: Զարգացած կապիտալիզմի և մանավանդ իմպերիալիզմի շրջանի միակ հեղափոխական դասակարգը—պրոլետարիատն է, վորն ըստ իր դրության արտադրության պրոցեսում, ըստ արտադրողական ուժերի զարգացման այժմյան բարձր աստիճանի՝ մասնավոր սեփականատիրական ձգտումներ ունենալ չի կարող և իր հեղափոխության միջոցով միայն հասարակական սեփականություն, միայն սոցիալիստական տնտեսություն կարող է կազմակերպել: Արտադրության սոցիալիստական յեղանակից հրաժարվելու համար, հաղթություն տարած պրոլետարիատը պետք է նախ մեր դարի զարգացած մեքենայական արտադրությունից հրաժարվի, պետք է նորից միջնադարի մանր արտադրության՝ պարզ ապրանքային տնտեսության պայմաններին վերադառնա: Մենաշնորհային կապիտալիզմից հետո առաջ գնալ, արտա-

դրողական ուժերը զարգացնել միայն սոցիալիզմի հողի վրա յե հնարավոր: Պրոլետարիատի հեղափոխությունը չի կարող սոցիալիստական չլինել:

Պրոլետարական հեղափոխությունը սոցիալիստական ե, սակայն այդ դեռ չի նշանակում, վոր իր հեղափոխության հենց յերկրորդ օրը տնտեսության բոլոր ճյուղերում պրոլետարիատն անմիջապես սոցիալիստական արտադրություն ե կազմակերպում: Սեփականության ձևերը և արտադրության յեղանակները բացառապես արտադրողական ուժերի զարգացման մի վորոշ մակարդակով են վորոշվում: Այն արտադրողական ուժերը, վորոնցից օգտվում են մեր յերկրի գյուղացիներն ու արհեստավորները, անհրաժեշտ են դարձնում մասնավոր սեփականության և մանր արտադրության, ուրեմն նաև ապրանքային տնտեսության ժամանակավոր պահպանումը, մինչև վոր տնտեսության այդ ճյուղերում խոշոր մեքենայական արտադրություն հաստատվի: Արտադրության ամեն մի յեղանակից նոր, ավելի բարձր յեղանակի անցնելը պատմության բոլոր շրջաններում յերկարատև պրոցես ե յեղել, և վոչ թե հինը միանգամից նորով ե փոխարինվել: Նախնադարի կոլեկտիվ սեփականության ձևերից մասնավոր սեփականության անցնելը յերկար և ձիգ հարյուրավոր տարիների, հնարավոր ե՝ հազարավոր տարիների պրոցես ե ներկայացրել: Այս ե այն միակ յեզրակացությունը, վորին կարելի յե հանգել համապատասխան գրականության ուսումնասիրությունից*):

Հարյուր հազարավոր տարիների ընթացքում, մարդկային հասարակության ամբողջ պատմությունը ծանոթ չի մի շրջան, վորն իր զարգացման տեմպով կապիտալիստականի հետ մրցել կարողանար: Չնայած դրան, դեռ այսոր ել անհնարին ե մի կապիտալիստական յերկիր մատնացույց անել, վորն այսպես կոչված «մաքուր» կապիտալիստական տնտեսություն ունենար, այսինքն տնտեսության բոլոր ճյուղերում մանր արտադրությունն իսպառ վերացրած և արհեստավորական արտադրությունն ու մանր գյուղատնտեսությունը խոշոր մեքենայական արտադրությունով փոխարինված լիներ: Զարգացման մի այսքան բարձր աստիճան կապիտալիզմի համար, ինչպես և արտադրության նախորդ բոլոր յեղանակների համար ընդհանրապես աներևակայելի յե, վորովհետև տնտեսական ամեն մի շրջան իր զարգացման պրոցեսում առաջացնում և հասունացնում ե նաև այն արտադրողական ուժերն ու այն դասակարգերը, վորոնց ձեռքով ինքը կործանվելու յե:

---

*) Առանձին ուշադրության ե արժանի Լ. Գ. Մորգանի «Перв: общество» կլասիկ գործը, մանավանդ նրա չորրորդ մասը (ռուս. հրատ. 1900 թ.):

Կապիտալիզմն արդեն իր զարգացման գագաթնակետին ե հասել և այժմ իր կործանման շրջանն ե մտել, սակայն մարդկության յերկու յերրորդը դեռ նախակապիտալիստական տնտեսություն ունի, թեև կապիտալիստական յերկրներին ե յենթարկվում և նրանց կողմից շահագործվում ու ճնշվում ե: Մյուս կողմից, տնտեսական զարգացման ամենաբարձր աստիճանի հասած կապիտալիստական յերկրները տնտեսության նախակապիտալիստական ձևերով դեռ շատ հարուստ են: Յեթե պրոլետարական դիկտատուրայի դեմ կռվող հակահեղափոխական կուսակցությունները քննադատության նույն չափանիշով բուրժուական յերկրներին մոտենային, անհրաժեշտաբար այն յեզրակացությանը կհանգեյին, վոր դեռ կապիտալիստական յերկրներ չեն վոչ միայն Իտալիան ու Ֆրանսիան, այլ նույնիսկ Անգլիան ու Միացյալ Նահանգները, վորովհետև այդ բոլոր յերկրներում վոչ միայն կապիտալիստների, բանվորների և կալվածատերերի դասակարգեր կան, վորոնք ամեն մի բուրժուական հասարակության համար անհրաժեշտություն են, այլ նաև միջանկյալ մի շարք դասակարգեր ու բնակչության առանձին խավեր կան, վորոնք պատմության նախակապիտալիստական շրջանի մնացորդներ են և «մաքուր» կապիտալիստական հասարակության մեջ տեղ չպիտի ունենան:

Հակահեղափոխության պահանջն ե, վոր Խորհրդային Միությունը նախ «մաքուր» կապիտալիստական տնտեսություն ունենա և ապա միայն մեզ մոտ կոմունիզմի խնդիր բարձրացվի: «Մաքուր» կապիտալիզմի պահանջով հակահեղափոխությունը ձգտում ե վերականգնել մեզ մոտ կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետությունը, խնդրին անտեղյակ մարդկանց շարքերում այն տպավորությունն ստեղծելով, իբրև թե կապիտալիզմի զարգացման մի այդքան բարձր աստիճան իրոք հնարավոր ե և զարգացման այդ յերևակայական աստիճանը սոցիալիզմի անհրաժեշտ նախադրյալն ե: Այստեղից նրանք տրամաբանորեն այն յեզրակացությունն են անում, վոր սոցիալիզմի համար Խորհրդային Միությունը դեռ հասունացած չե և վոր մեր յերկրի տնտեսական զարգացումը միայն կապիտալիզմի ուղիով կարող ե ընթանալ: Նրանք խարդախում են կապիտալիզմի պատմությունը, բանվորներից ու գյուղացիներից թաքցնելով լավ հայտնի այն յերևույթը, վոր տնտեսության զանազան ճյուղերին կապիտալիզմը միայն աստիճանաբար ե տիրացել և վոր դեռ այսոր ել անխտիր բոլոր յերկրներում կապիտալիստական արտադրության կողքին շարունակում ե իր գոյությունը գյուղի և քաղաքի մանր արտադրությունը:

Բոլշևիկները վոչ միայն չեն պնդում, վոր սոցիալիզմի համար մեր յերկիրը լիովին հասունացած ե, այլ անվերջ հայտարարություններ են անում այն մասին, վոր պրոլետարական հեղափոխությունը կատարվեց մի

յերկրում, որտեղ իր դիկտատուրան հաստատելուց հետո, պրոլետարիատը տնտեսության բոլոր ճյուղերում անմիջապես սոցիալիստական արտադրություն կազմակերպել չի կարող և հարկադրված է նյութական ու քաղաքական այն նախադրյալներն ստեղծել, որոնք սոցիալիզմի պատմական հիմքերն են կազմում: Սակայն, դրա հետ միաժամանակ, սոցիալիզմի հաղթությունը մեզ մոտ բոլշևիկները կատարելապես հնարավոր են համարում, ինչքան որ պրոլետարիատի ձեռքում են կենտրոնացած և՛ իշխանությունը և՛ խոշոր արդյունաբերությունը, որոնք սոցիալիզմի նախադրյալներն ստեղծելու լիակատար յերաշխիք են:

Ամենահետևողական կերպով մարքսիզմի հողի վրա կանգնած լինելով, Լենինի հետ միասին բոլշևիկներն այն ծրագիրն են պաշտպանում, որ Խորհրդային Միության տնտեսական պայմաններում «խոշոր մեքենայական արտադրությունը» գյուղացիների հողագործության մեջ մտցնել «չի կարելի», սակայն հենց այդ պատճառով նույն խոշոր մեքենայական արտադրությունը «չի կարելի վերացնել չաքարի արդյունաբերության մեջ», որն արդեն կատարելագործված մեքենայական արտադրություն է (14^2–208): Միաժամանակ, իրենց մեծ ուսուցչի հետ բոլշևիկները պնդում են, որ «մաքուր» յերևույթներ ոչ բնության և ոչ հասարակության մեջ չկան ու լինել չեն կարող», որ «մաքուր» կապիտալիզմ աշխարհում չկա ու լինել չի կարող, այլ միշտ նրա խառնուրդին ենք հանդիպում կամ ֆեոդալիզմի կամ մեշչանականության, կամ որևէ այլ տնտեսական ուժերի հետ» (13–160): Յեթե կապիտալիզմի զարգացման բարձրագույն աստիճանի վրա ոչ մի յերկրում «մաքուր կապիտալիզմ» չկա, առավել ևս «մաքուր սոցիալիզմի» մասին խոսք լինել չի կարող, մանավանդ պրոլետարական դիկտատուրայի շրջանում, որի գոյությունն արդեն «մաքուր սոցիալիզմի» բացասումն է: Ինքնին հասկանալի յե, որ տնտեսության բոլոր ճյուղերում պրոլետարական դիկտատուրայի շրջանում սոցիալիստական արտադրություն դեռ չկա:

IV

Կոմունիզմի մեծ ուսուցիչների հետ միասին, ներկա խնդրում մի ժամանակ այս նույն տեսակետի վրա յեր կանգնած նաև Կ. Կաուցկին, յերբ պրոլետարիատի դասակարգային հեղափոխության ծրագրից դեռ չէր հրաժարվել: Իր «Հողային Խնդիրը» հայտնի գործում, որը Մարքսի «Կապիտալից» հետո լույս տեսած մարքսիստական գրականության ամենաառաջնակարգ գործերից մեկն է և որի առաջին հրատարակությունը կատարվել

է 1898 թ., գյուղացիությունը Կ. Կաուցկին ոչ թե եվոլյուցիոն զարգացման ճանապարհն եր հանձնարարում, այլ նրա փրկության և գյուղատնտեսության բարձրացման միակ յերաշխիքը պրոլետարիատի սոցիալիստական հեղափոխության մեջ եր տեսնում:

Մեր դարի կատարելագործված տեխնիկան գյուղատնտեսության մեջ «միայն առանձին կալվածքներում կարող է զարգանալ», գրում է այդտեղ Կաուցկին: «Այդ տեխնիկան ընդհանուր սեփականություն դարձնելու և նրա զարգացման ճանապարհից այն արգելքները վերացնելու համար, որոնց շնորհիվ կարճատև վերելքից հետո գյուղատնտեսությունը ճնշված դրության մեջ է ընկնում՝ կրկին սոցիալական հեղափոխություն է պահանջվում»: «Արդյունաբերական պրոլետարիատն ինքն իրեն ազատագրել չի կարող, չազատագրելով իր հետ գյուղի բնակչությունը», գրում է նույն Կաուցկին: «Յեթե խոշոր արդյունաբերության զարգացումը սոցիալիզմի ուղղությամբ է կատարվում և յեթե այժմյան հասարակության մեջ այդ արդյունաբերությունը տիրապետող ուժ է ներկայացնում՝ այդ արդյունաբերությունը կնվաճի սոցիալիզմի համար և իր պահանջներին կհարմարեցնի նաև տնտեսության այն ճյուղերը, որոնք այդ հեղաշրջման նախադրյալները սեփական ուժերով ստեղծել անընդունակ են»: «Անհեթեթություն է կարծել, որպես թե հասարակության մի մասը կարող է մի ուղղությամբ զարգանալ, մյուս՝ նույնքան կարևոր մասը, հակառակ ուղղությամբ: Հասարակության զարգացումը կարող է միայն մի ուղղությամբ կատարվել: Սակայն անհրաժեշտ չէ, որպեսզի հասարակական օրգանիզմի ամեն մի մասն իր զարգացման համար անհրաժեշտ շարժիչ ուժերն ինքն իր միջից առաջացնի. բավական է, որ ամբողջ օրգանիզմի համար պահանջվող ուժերը նրա մի մասն առաջացնի»: «Արդյունաբերությունն է շարժիչ ուժը ոչ միայն սեփական զարգացման, այլ և գյուղատնտեսական զարգացման համար»:

Այս ամենից ի՞նչ է հետևում: Այն, որ պրոլետարական հեղափոխությունը կարող է կատարվել և կկատարվի անկախ նրանից, թե կատարելագործված տեխնիկան գյուղատնտեսության մեջ ինչ աստիճան է տարածված: Կապիտալիստական հասարակակարգում, գրում է Կաուցկին, այդ տեխնիկան «միայն առանձին կալվածքներում» է գործադրվում: Իր հեղափոխության միջոցով պրոլետարիատը սեփական պետություն է կազմակերպում և «հենց պետական իշխանությունն է, որ սոցիալական հեղաշրջման ամենազորեղ լծակն է դառնալու»: Ինչպես կապիտալիզմի, այնպես էլ սոցիալիզմի դարում, իրեն անհրաժեշտ արտադրողական ուժերը գյուղատնտեսությունն արդյունաբերությունից է ստանալու», գրում է Կաուցկին: Պրո-

լետարական պետությունը գյուղացիներին և արհեստավորներին վոչ միայն սեփականազուրկ չի անելու, այլ նրանց տնտեսության վերելքի գործին ամեն կերպ աջակցելու յե:

Պրոլետարական հեղափոխությունից հետո յել արհեստները և մանր գյուղատնտեսական արտադրությունը կշարունակեն իրենց գոյությունը, մինչև վոր տնտեսության այդ ճյուղերում եր կոոպերատիվ արտադրություն հաստատվի: «Գյուղացուն սեփականազուրկ անելու փոխարեն, գրում է Կաուցկին, սոցիալ-դեմոկրատիան նրան արտադրության ամենակատարելագործված միջոցներ կտրամադրի, վորոնք կապիտալիզմի դարաշրջանում նրա համար կատարելապես անմատչելի եյին: Հասկանալի յե, վոր արտադրության այդ ամենակատարելագործված միջոցները գյուղացին միայն խոշոր արտադրության մեջ կարող է գործադրել և սոցիալիստական ռեժիմը շահագրգռված կլինի նրա տարածմանը նպաստել: Կարիք չկա սեփականազրկման յեղանակներին դիմելու, վորպեսզի գյուղացիները հարկադրված լինեն իրենց դաշտերը միացնել և խոշոր արտադրության կոոպերատիվ կամ կոմունալ ձևերին անցնել: Յեթե պետականացրած տնտեսություններում խոշոր կոոպերատիվ արտադրությունը կոոպերատոր—բանվորներին կապացուցի իր շահավետությունը, նրանց որինակը բավական է, վորպեսզի գյուղացին էլ կոոպերատիվ արտադրության ձեռնարկի»*):

II Ինտերնացիոնալի և Կոմինտերնի միջև մղվող վեճի լուծման համար Կ. Կաուցկու նախկին տեսակետն այս խնդրում այնքան կարևոր է, առանձնապես II Ինտերնացիոնալի կատարած դավաճանությունն յերևան հանելու տեսակետից, վոր Կ. Կաուցկու նույն գործից նպատակահարմար ենք համարում մի քանի քաղված էլ կատարել: «Հողային Խնդրի» I մասի IV գլխի վերջում, քննելով կոոպերատիվ կազմակերպման հետ կապված խնդիրները, Կաուցկին գտնում է, վոր այդ գործի հաջողության հիմնական գրավականը հասարակության սեփականազուրկ և վոչ թե սեփականատեր տարրերն են: Սակայն, շարունակում է Կաուցկին, «դրանով բոլորովին չի ասված, վոր գյուղացու և արհեստավորի համար կոոպերատիվ արտադրության հասնելու միայն մի ճանապարհ կա՝ վոր նրանք պրոլետարիզացիայի շրջանն են անցնելու, վոր նրանք կապիտալի կողմից բնական անհրաժեշտությամբ սեփականազրկման են յենթարկվելու և վոր սոցիալիստական արտադրությունն անհնարին է, քանի դեռ գյուղացիներ ու արհեստավորներ գոյություն ունենեն: Վերահիշյալով միայն այն է ասվում, վոր կոոպերատիվ արտադրության ձեռնարկությունը միայն հաղթանակով պսակված պրոլետարիատը կարող է իր վրա վերցնել և միայն նա կարող է պայմաններ ստեղծել, վորոնք նաև արհեստավորի ու գյուղացու համար կոոպերատիվ խոշոր արտադրության անցնելու հնարավորության կստեղծեն, վոչ իհարկե յերևակայական հնարավորություն, ինչպես այդ այժմ տեղի ունի, այլ իրական հնարավորություն»:

*) К. Каутский „Аграрный вопрос" изд. 1926 г. (изд-во «Пролетарий») стр. 252-261 և 382-388: Այստեղ առաջ բերած քաղվածքների թարգմանությունը գերմաներենից է կատարված:

Յերբ պրոլետարական հեղափոխությունից հետո, շարունակում է Կաուցկին, սոցիալիստական տնտեսությունը կապացուցի իր կենսունակությունը, կարդարացնի իր հետ կապված հույսերը և յերբ գյուղացին կհամոզվի, վոր մասնավոր սեփականության վերացումն իրեն սեփականազրկությամբ այլևս չի սպառնում, այն ժամանակ նա կհասկանա, թե իր առաջադիմության տեսակետից մասնավոր սեփականությունն ինչ չարիք է և այդ չարիքից ազատվել կցանկանա: Ընդհակառակն, ասում է Կաուցկին, «անմտություն է սպասել, վոր գյուղացին բուրժուական հասարակարգում կոոպերատիվ արտադրության անցնի» (եջ 111): Իսկ յերբ գյուղացին կգիտակցի կոոպերատիվ գյուղատնտեսական արտադրության առավելությունները, նա կգիտակցի նաև այն, վոր «այդ ձևի արտադրություն ինքը միայն այնտեղ կկազմակերպի, վորտեղ պրոլետարիատն ուժ ունի՝ հասարակական հարաբերությունների իր շահերին համապատասխան կազմակերպելու»: Իսկ նույն գործի 351 եջում Կաուցկին հայտարարում է, վոր կոոպերացիան «տնտեսական զարգացման և մանր արտադրությունից խոշոր արտադրության անցնելու մի զորեղ միջոց է՝ գյուղատնտեսության մեջ շատ ավելի լայն չափերով, քան արդյունաբերության մեջ»:

Առանձնապես, ինչ կապիտալիզմի հասունացման խնդրին է վերաբերում, պատերազմից առաջ Կաուցկին այստեղ մի տեսակետ եր պաշտպանում, վորը լրիվին համապատասխանում է Մարքսի և Ենգելսի տեսակետին ներկա խնդրում, վորից Կաուցկին այժմ հրաժարվել է և վորի միակ պաշտպանն այսոր Կոմինտերնն է: «Յեվրոպայի կուլտուրական յերկրները, գրում է Կաուցկին նույն գործում, կապիտալիզմի համար շատ ավելի վաղ հասունացան, քան արտադրության բոլոր ճյուղերում և համապատասխան բոլոր յերկրներում ֆեոդալիզմն ինքն իրեն սպառել եր: Չե՞ վոր դեռ այսոր էլ ֆեոդալիզմի շատ մնացորդների յենք հանդիպում: Նույն կարգով, այժմյան հասարակությունն էլ սոցիալիզմի համար կհասունանա շատ ավելի վաղ, քան վերջին արհեստավորը և վերջին գյուղացին կանհետանան, շատ ավելի վաղ, քան պրոլետարիատն իր ամբողջությամբ քաղաքականապես կհասունանա և տնտեսապես կկազմակերպվի: Այս ամենը նախադրյալներ են,

վորոնք կապիտալիստական հասարակակարգում յերբեք չեն իրականանալու։ Յեվ հաղթական պրոլետարիատի ամենախոշոր անելիքներից մեկը կլինի՝ բնակչության հետամնաց տարրերին բարձրացնել և արտադրության ավելի բարձր յեղանակի ու ավելի բարձր կուլտուրայի միջոցներով նրանց ապահովել։ Այդ ասպարեզում չափազանց կարևոր դեր են կատարելու պրոլետարիատի կողմից ձեռնարկվելիք այն միջոցները, վորոնց նպատակը կլինի՝ գյուղացիությունը բարձրացնել և նրա անցումը սոցիալիստական արտադրության մոտեցնել ու հնարավորապես դյուրացնել» (եջ 282)։

V

Յեթե այս տողերը Կ. Կաուցկին նորից կարդա, անշուշտ այն յեզրակացության կհանգի, վոր մարքսիզմի և լենինիզմի մեջ վորևե տարբերություն չկա, վոր լենինիզմը մարքսիզմի հետևողական շարունակությունն է և վոր մինչև պատերազմն ինքը մարքսիստ է յեղել, մարքսիստ առանց չակերտների. այն ինչ այժմյան իր քարոզած թեորիաները բուրժուական լիբերալիզմի և այսպես կոչված կաթեդեր-սոցիալիզմի թեորիաներ են, թեորիաներ, վորոնց յելակետը վոչ թե պրոլետարիատի դասակարգային շարժումը և նրա կոմունիստական հեղափոխությունը, այլ բուրժուական պետության բարենորոգումներն են։ Մեր դարի կատարելագործված տեխնիկայից և բնական գիտություններից բուրժուական իրականության մեջ միայն առանձին կալվածքները կարող են օգտվել, գրում է Կաուցկին։ Գյուղացու փրկությունը պրոլետարիատի հեղափոխությունն է, վորի հաղթությունից հետո գյուղատնտեսության զարգացումը միայն սոցիալիզմի ուղիով կարող է ընթանալ, վորովհետև անհնարին է մի հասարակություն յերևակայել, վորտեղ գործարանային արդյունաբերությունը սոցիալիզմի ուղիով, իսկ գյուղատնտեսությունը— կապիտալիզմի ուղիով ընթանային։

Արդեն կապիտալիստական հասարակակարգում իր շարժիչ ուժերը գյուղատնտեսությունը գործարանային արդյունաբերությունից է ստանում և իր վիճակի վորոշման գործում ամբողջապես գործարանային արդյունաբերությանն է յենթարկվում։ Սոցիալիստական հասարակության մեջ այդ կախումը վերանալ չի կարող, այն մեծ տարբերությամբ սակայն, վոր պրոլետարական հեղափոխությունից հետո գյուղատնտեսությունը կախում կունենա վոչ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական գործարանային արդյունաբերությունից, հետևապես՝ գործարանային արդյունաբերության կողմից վոչ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական ազդեցության յենթակա կլինի, սոցիալիստական իշխանությունից միայն սոցիալիստական հեղաշրջման ու սոցիալիստական զարգացման ստիմուլներ կստանա, մի խոսքով՝ իր

առաջխաղացման տնտեսական ու քաղաքական պայմանների նկատմամբ սոցիալիստական միջավայրում կգտնվի և միայն սոցիալիզմի ուղիով զարգանալ կկարողանա։

Յեթե պրոլետարական պետության գործարանային արդյունաբերությունը և ֆինանսները զարգացման այնքան ցած մակարդակի վրա գտնվեն, վոր պրոլետարական իշխանությունն անզոր լինի գործարանային արդյունաբերության ազդեցությունը գյուղատնտեսության վրա տարածել, այսինքն՝ գյուղատնտեսությանը տեխնիքական ու ֆինանսական օգնություն հասցնել և նրա սոցիալիստական վերակազմությանը զարկ տալ, այդ դեպքում գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի տարրերը հաղթություն կտանեն և սեփականությունն ու իշխանությունը նորից կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքը կանցնեն։ Սակայն, մի յերկրում, վորտեղ գործարանային արդյունաբերությունը դեռ այդքան հետամնաց է, համապատասխան չափով հետամնաց կլինի նաև պրոլետարիատը, այնպես վոր նրա հեղափոխության հաղթության ու նրա իշխանության յերկարատևության մասին այդտեղ խոսք լինել չի կարող։ Ահա այստեղ է թաղնված շան գլուխը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը միջազգային է վոչ միայն այն պատճառով, վոր մեր բանվորին ու գյուղացուն Յեվրոպայի բանվորությունն ամենամեծ օգնություն հասցրեց, վոչ միայն այն պատճառով, վոր նրա պատմական հաղթությունները միայն համաշխարհային իմպերիալիզմի և համաշխարհային պատերազմի ստեղծած պայմաններում եյին հնարավոր, այլև այն պատճառով, վոր հեղափոխության դեմ կռվում եր միջազգային ամբողջ կապիտալը, այնպես վոր նրա հաղթությունը հաղթություն է թե մեր յերկրի և թե ամբողջ բուրժուական աշխարհի կապիտալիստների ու կալվածատերերի հանդեպ։ Արդեն 10-րդ տարին է, վոր Խորհ. իշխանությունը գոյություն ունի և նրա գոյության ամեն մի նոր քայլ, տնտեսական ու կուլտուրական շինարարության բնագավառներում կատարած ամեն մի նվաճում կրկին միջազգային բուրժուազիայի դեմ տարած հաղթություններն են։ Իսկ այդ բոլոր հաղթությունների հիմքը և նրանց շարժիչ ուժը պրոլետարիատն է և այն արդյունաբերությունն է, վորը պրոլետարիատին է պատկանում և նրա շարժման վերջնական հաղթության հիմնական գրավականն է։

Ցարական Ռուսաստանում գյուղատնտեսությունն ամբողջապես կապիտալիստական գործարանային արդյունաբերությանն էր յենթարկվել, նրա զարգացման ուղիներով էր ընթանում։ Անգլիայի կամ Գերմանիայի արդյունաբերության հետ համեմատած, ցարական Ռուսաստանի արդյունաբերությունը շատ թույլ ու հետամնաց էր, սակայն արդեն մի այնքան խոշոր ուժ էր ներկայացնում, վոր յերկրի գյուղատնտեսությունն ամբողջապես իրեն էր

յենթարկել և արդեն բարձր միջազգային արժեք էր ստացել: Առանց այդ արդյունաբերության, Խորհրդային իշխանության տասնամյա գոյությունն ու նվաճումները կատարելապես անհնարին կլինեյին: Բնական է, վոր խորհրդային կարգերում էլ գյուղատնտեսությունը գործարանային արդյունաբերությանն է յենթարկվում և իր զարգացման ուժերն ու միջոցները միայն նրանից կարող է ստանալ: Եվ ահա, այս պայմաններում է, վոր հակահեղափոխությունը տնտեսական զարգացման մի նոր ու յուրահատուկ ուսմունք է թխել, ըստ վորի, սոցիալիստական արտադրության տարածումը գյուղատնտեսության վրա անհնարին է համարվում ամեն մի յերկրի համար, վորտեղ արդեն մինչև պրոլետարական հեղափոխությունը խոշոր մեքենայական գյուղատնտեսական արտադրություն չկա, վորտեղ գյուղատնտեսությունը սոցիալիզմի համար 100 տոկոսով հասունացած չէ: Ինչպես վերև տեսանք, յերեք տասնյակ տարի առաջ, իր «Հողային խնդրում» Կաուցկին այն տեսակետն էր պաշտպանում, վոր գյուղատնտեսության համար զարգացման մի այդքան բարձր աստիճան բուրժուական կարգերում ընդհանրապես աներևակայելի է:

Հոկտեմբերյան հեղափոխության պատմական մեծ հաղթությունները և Խորհրդային Միության տնտեսական ու կուլտուրական վերելքի արագ տեմպը II Ինտերնացիոնալի իդեոլոգներին զրկում են ամեն մի հնարավորությունից պնդելու, վորպես թե մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերաշինությունը Խորհրդային իշխանության ուժերից վեր մի գործ է, վորովհետև իր արդյունաբերական ու ֆինանսական ուժերով գյուղացիներին համապատասխան օգնություն հասցնել, գյուղատնտեսության զարգացումը կոոպերատիվ և սոցիալիստական արտադրության ուղիով տանել և գյուղատնտեսությունն ամբողջապես պրոլետարիատի ու նրա գործարանային արդյունաբերության ղեկավարությանը յենթարկել նա չի կարող:

Եթե իրենց հակահեղափոխական թեորիաները II Ինտերնացիոնալի ղեկավարներն այսպես հիմնավորեյին, այդ թեորիաները վոչ վոքի համար համոզեցուցիչ դարձնել չպիտի կարողանային: Ահա ինչու նրանք գերադասում են մարքսիզմը խարդախել, Կ. Կաուցկին, Ռ. Հիլֆերդինգը և ընկ. հրաժարվում են իրենց սեփական թեորետիկական գործերից և ապա մեծ հաջողությամբ ապացուցում են, վոր լենինիզմն իրենց թխած մարքսիզմին չի համապատասխանում և վոր սոցիալիզմի վերջնական հաղթությունը մեզ մոտ անհնարին է, վորովհետև Մարքսի ուսմունքը կապիտալիզմի զարգացման օրենքների ամենաճշգրիտ արտահայտությունն է, այն ինչ լենինիզմը մարքսիզմի ժխտումն է:

II Ինտերնացիոնալի ղեկավարների այս բոլոր հավաստիացումները միանգամայն ճիշտ են, ինչքան վոր խնդիրը վոչ թե Մարքսի ուսմունքին, այլ

նրանց կողմից ֆալսիֆիկացիայի յենթարկած մարքսիզմին է վերաբերում: Ճիշտ է նաև, վոր լենինիզմն այս վերջին «մարքսիզմի», այսինքն ռեֆորմիզմի ու ոպորտյունիզմի լիակատար ժխտումն է:

Բավական է ծանոթանալ Կ. Կաուցկու վերոհիշյալ գործի բովանդակությանը, համոզվելու համար նրանում, վոր II Ինտերնացիոնալը հրաժարվել է և՛ Մարքսից ու Էնգելսից, և՛ նախապատերազմյան շրջանի Կաուցկուց ու Հիլֆերդինգից: Մարքսի և Էնգելսի ուսմունքի չխեղաթյուրած մեկնաբանությունը և հետևողական կիրառումը միայն Կոմինտերնն է տալիս: Առանձնապես ինչ կապիտալիզմի հասունացման այն աստիճանին է վերաբերում, վորն անհրաժեշտ է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար, Կոմինտերնը վոչ մեզ մոտ և վոչ վորևե այլ յերկրում չի ծրագրում ու չի պատրաստվում արտադրության նոր ձևեր ու հասարակական նոր կարգեր հաստատել, վորոնց համար պահանջվող պատմական նախադրյալները համապատասխան յերկրում դեռ բացակայում են: Սակայն, ասում է Լենինը, Հոկտեմբերյան հեղափոխության մեծ փորձը ցույց տվեց, վոր պատմական վորոշ պարագաներում պրոլետարիատը կարող է տվյալ յերկրում իր իշխանությունը հաստատել և ապա միայն, հենվելով այդ իշխանության վրա, սոցիալիզմի համար անհրաժեշտ նյութական ու բարոյական նախադրյալներն ստեղծել:

VI

Հակահեղափոխության անվերջ հավաստիացումներն այն մասին, վոր սոցիալիզմի համար մեր յերկիրը դեռ հասունացած չէ, վոչ թե գործարանային արդյունաբերությանն ու բանվորին, այլ գլխավորապես գյուղատնտեսությանը և գյուղացուն են վերաբերում: Իր ժամանակին, ճորտերի ազատագրման դեմ ուղղած ամենածանրակշիռ առարկությունն էլ այն էր, վոր նրանք դեռ բարբարոս են և առանց կալվածատերերի ղեկավարության վոչ միայն իրենց տնտեսությունը կազմակերպել չպիտի կարողանան, այլև հասարակական ու պետական վողջ կյանքը խանգարելու, անարխիայի յեն մատնելու: Ճորտատիրական կարգերը պաշտպանել այժմ վոչ վոք այլևս չի համարձակվում: Այժմ բոլորի համար պարզ է, վոր տնտեսական ու կուլտուրական վերելքի բոլոր ուղիները ճորտության պայմաններում գյուղացու համար անհասարակ փակ եյին և վոր գյուղացու ամեն մի բարեկամ նախ պետք է աջակցեր նրա ազատագրման գործին, պետք է այդ գործը կազմակերպեր և ապա միայն նրա տնտեսական ու կուլտուրական զարգացման խնդիրներով զբաղվեր:

Նշանակալից է, վոր բուրժուական հեղափոխությունների շրջանում հողատիրական արիստոկրատիան հակահեղափոխական կռվի նույն զենքին էր

գլխում՝ բուրժուաներին իբրև բարբարոս, ագետ, խակ, բիրտ ու կոպիտ մարդիկ էր հայտարարում, վորոնք անընդունակ են պետության կազմակերպել ու ղեկավարել և միայն քանդելու, կործանելու շնորհքով են օժտված: Նույնիսկ 18-րդ դարի 80-ական թվականներին, յերբ ֆրանսիական բուրժուազիան աշխարհի ամենակուլտուրական ուժն եր, արդեն ճոխ գեղարվեստական գրականություն, չափազանց հարուստ փիլիսոփայություն, արագ տեմպով զարգացող մաթեմատիկական ու բնական գիտություններ ուներ, այդ իրոք կուլտուրական ֆրանսիական բուրժուազիան կալվածատիրական կարգերի պաշտպանների կողմից հեգնանքի յեր յենթարկվում և իբրև մի դասակարգ եր հայտարարվում, վորն առանց կալվածատերերի օգնության պետություն ստեղծել անզոր ե:

Հեղափոխական դասակարգերի հասունացման խնդիրը դարերի պատմություն ունի, շատ հին հեքիաթ ե և կասկածից դուրս ե, վոր տիրապետող դասակարգերի ձեռքում պաշտպանության զենքի դեր ե խաղացել ամեն անգամ, յերբ ճնշված ու շահագործվող դասակարգերը նրանց լծից ազատագրվելու փորձեր են արել: Այժմ այդ ժանգոտած ու դեմագոգիական զենքը բուրժուազիան պրոլետարիատի դեմ ե ուղղում, իր հակահեղափոխական ձգտումները թաքցնելու համար II Ինտերնացիոնալի օգնությանը դիմելով, վորի ձեռքն ե հանձնում ստրկատերերի և ճորտատերերի այդ սիրեցյալ զենքը: Մեր կոմկուսի ծրագիրը, Լենինի չափազանց հարուստ գրական ժառանգությունը, կոմկուսի և Կոմինտերնի համագումարների վորոշումները և մեր ամբողջ գրականությունը միաբերան հաստատում են, վոր կոմունիզմի համար մեր գյուղը դեռ հասունացած չե, վոր մեր գյուղում անմիջապես սոցիալիստական կարգեր հաստատել չի կարելի, սակայն վոր կոոպերացման ճանապարհով միանգամայն հնարավոր ե մանր արտադրությունից խոշոր սոցիալիստական արտադրության անցնել:

Հակահեղափոխականների փորձաքարը վոչ կոոպերատիվ և վոչ սոցիալիստական արտադրությունն ե: Մարքսիզմով և սոցիալիզմով քաղցրացրած ու քողարկած նրանց թունավոր զենքը միայն մի նպատակի յե ծառայում՝ խորհրդային կարգերի վերացման, բուրժուական կարգերի և կապիտալիզմի վերահաստատման նպատակին: Յեթե վաղը պրոլետարական հեղափոխությունը հաղթանակի Անգլիայում, վորն անկասկած սոցիալիզմի համար ամենահասունացած յերկիրն ե, Անգլիայի կալվածատերերն ու կապիտալիստները այդ յերկրի պրոլետարական իշխանության դեմ նույն կռիվն են մղելու, Անգլիայի բանվորներին ել խակ են հայտարարելու: Իր սեփականությունից և իշխանությունից վոչ մի դասակարգ հոժար կամքով չի հրաժարվում: Ինչքան վոր կապիտալիստական յերկրների բուրժուազիան մեր հակահեղափո-

խական եմիգրացիային նյութապես ու քաղաքականապես օգնում ե, նրանք կռվի և վոչ մի միջոցից հրաժարվել չեն կարող, միայն թե վերադարձնեն իրենց իշխանությունը, իրենց հողերն ու գործարանները: Իսկ նրանց այդ հակահեղափոխական վոտնձգություններին մեր բանվորն ու գյուղացին միայն այն պատասխանը կարող են տալ, վոր յեթե 1917—1920 թ. թ. նրանք «պատրաստ» եյին բուրժուազիային և կալվածատերերին սեփականությունից ու իշխանությունից զրկելու, յեթե 1921—27 թ. թ. «պատրաստ» եյին յերկրի կործանված տնտեսությունը վերականգնելու և շինարարության բոլոր բնագավառներում առաջին նվաճումներ կատարելու համար, ապա այդ յերկու շրջանի պատմական մեր նվաճումների վրա հենվելով և իրենց հեղափոխական դաշինքն ել ավելի ամրապնդելով՝ նվաճած սեփականությունն ու իշխանությունը, ինչպես և իրենց շինարարության մեծ արդյունքները այսուհետև ձեռքից բաց թողնել չեն կարող:

Հակահեղափոխականների շարքերում տարածված այն բոլոր թեորիաները, վորոնցով իբր թե ապացուցվում ե սոցիալիզմի կառուցման անհնարինությունը մեզ մոտ, գիտության հետ, մանավանդ մարքսիզմի հետ, վորևե առնչություն չունեն: Ինչքան խորհրդային իշխանության սոցիալիստական շինարարությունը մեր կյանքի բոլոր բնագավառներում ավելի յե նվաճումներ կատարում, ինչքան մեր տնտեսության սոցիալիստական տարրերն ավելի յեն աճում, ինչքան մեր բանվորների ու գյուղացիների կազմակերպությունները ավելի յեն զորեղանում, ինչքան նրանք ավելի լայն մասսաներ են ընդգրկում՝ համապատասխան չափով այնքան ավելի յե աճում հակահեղափոխական ցնդաբանությունների թիվը, վորոնց նպատակն ե ապացուցել սոցիալիզմի անհնարինությունը մեզ մոտ: Հենց միայն այն հանգամանքը, վոր բուրժուազիան մարքսիզմով ե քողարկվում և սոցիալիզմից ե ճառում, խորհրդային իշխանության սոցիալիստական մեծ նվաճումների նշան ե և ցույց ե տալիս, թե մեր սոցիալիստական շինարարության հաջողությունները հակահեղափոխության բանակի շարքերում ինչ իրարանցում են առաջացրել:

Իր այդ թեորիաներով, նվիրված «հասունացման» խնդրին, բուրժուազիան ձգտում ե քայքայել բանվորների և գյուղացիների կազմակերպված շարքերը, սոցիալիզմի կառուցման հնարավորության նկատմամբ ձգտում ե նրանց շարքերում կասկած և անհավատություն տարածել: Ահա ինչու մեր կուսակցական ու արհեստակցական, պետական ու կոոպերատիվ և այլ մարմինները թեորետիկական բամբասանքի այդ տարափին պետք ե պատասխանեն վոչ միայն մեր շինարարության ընդլայնումով, այլև բանվորական ու գյուղացիական ամենալայն մասսաների քաղաքական դաստիարակության ուժեղացումով, թեորետիկական աշխատանքի խորացումով, Մարքսի, Ենգելսի և Լենի-

նի ուսմունքի մասսայականացումով, յերբեք մոռացության չտալով Լենինի այն պատգամը, վոր «քաղաքական լուսավորության արդյունքները միայն տնտեսության բարելավումով կարելի յե չափել» (18[1]—385):

Մասնավոր կապիտալը մեզ մոտ բացարձակորեն աճում ե, սակայն այդ աճումը շատ ավելի դանդաղ ե կատարվում, քան պետական ու կոոպերատիվ տնտեսության աճումը: Տարեց-տարի մեր տնտեսության մասնավոր սեկտորը նվազում ե, իր դիրքերը սոցիալիստական սեկտորին զիջելով: Յեվ ինչքան այդ յերևույթն ավելի ակներև, ավելի համոզեցուցիչ ե դառնում, կոմունիզմի թշնամիներն իրենց հակահեղափոխական ագիտացիան այնքան ավելի յեն ուժեղացնում, այնքան ավելի յեն պնդում, վոր սոցիալիզմի կառուցումը մեզ մոտ անհնարին ե, վորովհետև բնակչության ավելի քան 80 տոկոսը մանր արտադրությամբ ե զբաղվում, այն ինչ—հավատացնում են նրանք գործին անտեղյակ ու միամիտ մարդկանց—ըստ Մարքսի ուսմունքի սոցիալիզմը միայն այնտեղ ու այն ժամանակ ե հնարավոր, վորտեղ և յերբ տնտեսության բոլոր ճյուղերում, ուրեմն նաև գյուղատնտեսության մեջ, խոշոր կապիտալիստական արտադրությունն ե տիրապետում: Այդ պատճառով ել II Ինտերնացիոնալի և միջազգային բուրժուազիայի իդեոլոգները պնդում են, վոր մեր բանվորության և գյուղացիության կողմից սոցիալիզմի հետ կապած հույսերը բոլորովին անհիմն են, վոր վաղ թե ուշ մեր վողջ տնտեսությունը նորից կապիտալիստականի յե վերածվելու և վոր հետևապես լենինիզմը մարքսիզմի ժխտումն ե:

Լենինիզմը հակադրվում ե մարքսիզմին: Յեվ նույնիսկ մարդիկ, վորոնք վոչ Լենինի և վոչ Մարքսի ուսմունքին են ծանոթ, վորոնք այդ յերկու մեծ կոմունիստների միայն անուններն են իմանում, բոլշևիզմը «ջախջախելու» գործում նույնիսկ այս տիպի մարդիկ կույր այդ յեղանակին են դիմում, խիզախ հայտարարություններ անելով այն մասին, վոր Լենինի և Մարքսի ուսմունքները յերկու տարբեր աշխարհների յեն վերաբերում: Այս հանգամանքը նկատի առնելով, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նաև այն խնդրի վրա, թե Մարքսի, Ենգելսի և Լենինի տեսակետից հետամնաց յերկրներում սոցիալիստական կարգեր հաստատելն արդյոք հնարավո՞ր ե՝ մանր գյուղացիությունը սեփականազրկման չենթարկելով, և յեթե հնարավոր ե, դրա համար ի՞նչ պայմաններ են պահանջվում:

Է.

ՄԱՐՔՍԸ, ԵՆԳԵԼՍԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ ՀԵՏԱՄՆԱՑ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I

Ներկա գլխում գլխավորապես Մարքսի և Ենգելսի ուսմունքի վրա յենք կանգ առնելու, վորովհետև Լենինի տեսակետը նախորդ գլուխներում արդեն պարզաբանված ե:

Մարքսը և Ենգելսը շատ անգամ են արտահայտվել այն մասին, թե տնտեսապես հետամնաց յերկրներին կապիտալիզմի դարաշրջանում ինչ վիճակ ե սպասում: Ներկա դեպքում նրանց կարծիքներն այնքան ավելի բարձր արժեք և վճռական նշանակություն են ստանում, վոր այդ կարծիքների մի մասն անմիջապես Ռուսաստանի գյուղական համայնքին ե վերաբերում:

Արդեն «Կոմ. Մանիֆեստում» Մարքսը և Ենգելսը միջազգային պրոլետարիատին ցույց տվին, թե կապիտալիստական արտադրությունն ինչ ուղղությամբ ե զարգանում և ինչպես իր զարգացման պրոցեսում ինքն իր կործանման ու կոմունիզմի նվաճման գործիքներ ե ստեղծում: Կոմունիզմը արտադրության միջոցների հասարակական սեփականության և պլանային սկզբունքով կազմակերպված խոշոր հասարակական արտադրություն ե: Ըստ Մարքսի ուսմունքի, սեփականության ձևերը և արտադրության յեղանակներն արտադրողական ուժերի զարգացման մի վորոշ՝ նրանցից ամեն մեկին համապատասխանող՝ մակարդակով են պայմանավորվում: Սակայն իրենց զարգացման մի վորոշ բարձր մակարդակի հասնելով, տվյալ ամեն մի յերկրի արտադրողական ուժերը ներհակության մեջ են ընկնում նույն յերկրում տիրապետող արտադրական հարաբերությունների հետ, այսինքն՝ դասակարգային կամ սեփականատիրական հարաբերությունների հետ, վորովհետև զարգացման համապատասխան բարձր աստիճանի հասած արտադրողական ուժերը պատմականորեն իրենց հատկացրած հասարակական հարաբերությունների շրջանակներում աճել այլևս չեն կարողանում: Նրանց զարգացման

համար հասարակական հարաբերությունների ավելի լայն ասպարեզ, այսինքն նոր հասարակակարգ է պահանջվում, վորի առաջացումը նախկին իշխող դասակարգերի կործանման գնով և նոր՝ հեղափոխական դասակարգի ջանքերով է հնարավոր:

Հեղափոխության հաջողությունը պահանջում է, վոր նախկին իշխող դասակարգերն այլևս անընդունակ լինեն ամբողջ հասարակության զարգացման ներկայացուցիչները հանդիսանալու, անընդունակ լինեն արտադրողական ուժերի զարգացման ուղիով ընթանալու և այդ զարգացմանը զարկ տալու, իսկ մյուս կողմից պահանջում է, վոր հեղափոխական դասակարգը նոր հասարակակարգ կազմակերպելու տնտեսական ու քաղաքական հնարավորություններ ունենա, այսինքն ընդունակ լինի նախկին իշխող դասակարգերին զրկել սեփականությունից ու իշխանությունից, տվյալ յերկրում իր իշխանությունը հաստատել, արտադրողական ուժերի պահանջին համապատասխանող հասարակական կարգեր ստեղծել, արտադրողական ուժերի զարգացումն առաջ տանել: Հեղափոխությունը հնարավոր և անհրաժեշտ է դառնում ամեն մի յերկրում, վորտեղ այս յերկու պայմաններն արդեն գոյություն ունեն, վորտեղ հին դասակարգային հարաբերությունների և նոր արտադրողական ուժերի միջև առաջացած ներհակությունն այնքան սուր բնույթ է ստացել, վոր իրենց հասարակակարգը պահպանել նախկին իշխող դասակարգերն այլևս անզոր են:

Հոկտեմբերյան հեղափոխությունը բուրժուական Ռուսաստանի նախկին իշխող դասակարգերի հենց նման անզորության արդյունք էր: Յեթե նրանց իշխանության կործանումը պրոլետարական հեղափոխության ուժերից վեր մի գործ լիներ, սեփական ուժերով իրենց իշխանությունը պահպանել նրանք անզոր կլինեյին: Կամ յերկրում պրոլետարիատի իշխանությունը պետք է հաստատվեր կամ այդ յերկիրը միջազգային կապիտալի ձեռքում գաղութային ստրկացման էր յենթարկվելու: Պատերազմը հասարակական ուժերի մի այնպիսի դասավորում առաջացրեց, վոր նախկին Ռուսաստանի բուրժուազիան հարկադրված էր իշխանությունը ձեռքից բաց թողնել: Նույն պատերազմի հետևանքով է, վոր միջազգային բուրժուազիան անզոր յեղավ փրկելու նախկին Ռուսաստանի իր յեղբայրակիցների իշխանությունը: Բուրժուական Ռուսաստանի իշխող դասակարգերը սնանկացել եյին և իրենց տիրապետությունը միայն միջազգային կապիտալի ոգնությամբ ու հովանավորությամբ կարող եյին պահպանել, իսկ միջազգային կապիտալը հենց այդ ժամանակ պրոլետարիատի և գաղութային ժողովուրդների կողմից մի այնպիսի հարձակման էր յենթարկված, վոր հազիվ իր գոյությունը փրկեց և բուրժուական Ռուսաստանին մեծ ոգնություն հասցնել անզոր էր, մանավանդ վոր պա-

տերազմից անմիջապես հետո դժվար էր խոշոր ռազմական ուժեր ուղարկել այն հեղափոխության դեմ, վորի շնորհիվ գլխավորապես պատերազմին վերջ դրվեց և վորը բոլոր յերկրների զորքերին կոչ էր անում՝ իրենց սվինները սեփական յերկրի իշխող դասակարգերի դեմ ուղղել:

Մեր բուրժուազիան սնանկացել էր, միջազգային բուրժուազիան համաշխարհային հեղափոխության վտանգի առաջ էր կանգնած, իսկ կապիտալիստական յերկրների պրոլետարիատը միջազգային բուրժուազիայի միջամտությունը Հոկտեմբերյան հեղափոխության գործերին ամեն կերպ խանգարում, ամեն կերպ արգելք էր հանդիսանում: Հոկտեմբերյան հեղափոխությունը փրկեց մեր յերկիրը պատերազմի նոր ավերումներից ու քաղցից. փրկեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունից, փրկեց գաղութային ստրկացման անխուսափելի վտանգից: Նույնիսկ Գուչկովի և Պուրիշկևիչի ամենաաջակողմյան կուսակցություններն արդեն 1916 թ. վերջերին պարզ գիտակցում եյին, վոր Ռուսաստանը դեպի կործանում է գնում: Միակ դասակարգը, վորն ընդունակ էր հետևողական կերպով կռվել թե՛ պատերազմի և թե՛ նրա հեղինակների ու պաշտպանների դեմ, պրոլետարիատն էր, իսկ պրոլետարիատի հեղափոխությունը միայն սոցիալիստական կարող է լինել:

II

Ըստ Մարքսի ուսմունքի, սոցիալիզմ միայն այնտեղ կարելի յե կառուցել, վորտեղ արդեն խոշոր հանրայնացրած արտադրությունն է տիրապետում: Կոմինտերնն այն միակ կազմակերպությունն է ամբողջ աշխարհում, վորը հետևողական ու անշեղ կերպով մեկնաբանում, տարածում և կիրառում է Մարքսի ուսմունքը: Մարքսիստները ցնորքներով սնվել չեն կարող: Մանր-բուրժուական կարգերը սոցիալիստական կարգերի հետ խառնել նրանք անընդունակ են: Յեվ բոլշևիկներն իրենց պարզ հաշիվ են տալիս այն մասին, թե Խորհրդային Միության տնտեսությունը սոցիալիստական ինչ կառուցվածք ունի: Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական, ուրեմն՝ սոցիալիստական հեղափոխություն է, սակայն իր դիկտատուրան հաստատելուց հետո տնտեսության բոլոր ճյուղերում պրոլետարիատն անմիջապես սոցիալիստական արտադրություն կազմակերպել չէր կարող, վորովհետև սոցիալիզմի տնտեսական ու բարոյական նախադրյալները միայն մեր խոշոր արդյունաբերության մեջ եյին հասունացած: Մասնավոր կապիտալի, մանր գյուղատնտեսական և մանր արհեստավորական արտադրության, նույնիսկ տնտեսության նահապետական ձևերի գոյությունը մեզ մոտ բոլշևիկները չեն ժխտում ու ժխտել չեն կարող: Հետևապես, նրանք չեն ընդունում ու չեն կարող ընդունել, վորպես թե մեր վողջ տնտեսությունն արդեն սոցիալիստական

է։ Սակայն, դրա հետ միաժամանակ, բոլշևիկները պնդում են, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական, սոցիալիստական հեղափոխություն է և որ իր քաղաքական իշխանությունից ու իր սոցիալիստական արդյունաբերությունից օգտվելով՝ պրոլետարիատը կարող է մեզ մոտ հետևողական սոցիալիստական կարգեր հաստատել։

Առանց խոշոր արտադրության սոցիալիզմի շենքի կառուցումն անհնարին է, հայտարարում են բոլշևիկները. և այդ պատճառով էլ տնտեսապես հետամնաց մեր երկրում, տնտեսության բոլոր ճյուղերում, գլխավորապես գյուղատնտեսության մեջ, անհրաժեշտ է նախ կոոպերացման միջոցով խոշոր արտադրություն ստեղծել, որպեսզի այնուհետև հնարավոր լինի սոցիալիստական արտադրության անցնել։ Մեր դժբաղդությունն է, որ պրոլետարական հեղափոխությունից հետո բնակչության 4/5-ը մանր արտադրության հետ է կապված, սակայն այստեղից բոլորովին չի հետևում, որ պետք է վերականգնել բուրժուական կարգերը, տնտեսության բոլոր ճյուղերում խոշոր կապիտալիստական արտադրություն հաստատել և ապա նորից սոցիալիստական հեղափոխություն կատարել։

Գործարանային արդյունաբերությունը կարող է ընդլայնվել, զարգանալ և տնտեսության բոլոր մյուս ճյուղերին իրեն ենթարկել, երբ կապիտալիստական արտադրության պայմաններում է գործում, առանց պլանի և ժողովրդական ամենալայն մասսաների հետ մշտական պատերազմի մեջ գտնվելով։ Ինչո՞ւ նույն արդյունաբերությունը չի կարող աճել ու զարգանալ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, երբ արտադրության միջոցների կենտրոնացումը և արտադրության հանրայնացումը հնարավոր է բարձրագույն աստիճանի հասցնել, երբ արտադրությանը հնարավոր է պլանաչափ կազմակերպություն տալ, տարիներ առաջ նախատեսել նրա վերելքի արդյունքը, տեխնիկական և մարդկային ուժերը մաքսիմալ նպատակահարմարությամբ օգտագործել, ազատ լինելով բուրժուական կարգերի անարխիայից և ուժերի շռայլումից, հազարավոր սնանկացումներից և կործանիչ ճգնաժամերից։

Կապիտալիստական գործարանային արդյունաբերության միջոցով հնարավոր է գյուղատնտեսության մեջ խոշոր արտադրություն հաստատել, այն էլ գյուղացիության կործանման գնով։ Ինչո՞ւ իր պետական սոցիալիստական արդյունաբերության միջոցով պրոլետարիատը չի կարող խոշոր գյուղատնտեսական արտադրություն կազմակերպել և այդպիսով գյուղն էլ սոցիալիզմի համար հասունացնել, առանց գյուղացիության պրոլետարիզացիայի, առանց գյուղացիության դեմ տանջալի ու հարյուրավոր տարիներ կռվելով, առանց արտադրության մեծաքանակ ուժերի կործանման՝ կոոպերացման միջոցով, գյուղացու հետ ձեռք ձեռքի տված։

Կոոպերացման ճանապարհով մեր գյուղատնտեսությունը սոցիալիզմի համար հասունացնելու հնարավորությունը ժխտելու փոխարեն, մեր հակառակորդները թող փորձեն ապացուցել, որ աշխատավոր գյուղացիության համար կոոպերացումը շահավետ չէ, որ կոլեկտիվ արտադրությունը գյուղատնտեսության արտադրողական ուժերը չի բարձրացնում և խոշոր արտադրություն չի ստեղծում և որ բանվորն ու աշխատավոր գյուղացին ձեռք ձեռքի տված սոցիալիզմի ուղիով ընթանալ և ընդհանրապես միասին ու համերաշխությամբ գործել չեն կարող։

Ամենատարրական անաչառություն է պահանջվում, հասկանալու համար, որ մեր պետական գործարանային արդյունաբերությունն արդեն «հետևողական սոցիալիստական տիպի» արդյունաբերություն է և որ խորհրդային ու սոցիալիստական կարգերում, պրոլետարական իշխանության և նրա սոցիալիստական արդյունաբերության միջոցով գյուղում խոշոր կոլեկտիվ արտադրության կազմակերպելը շատ ավելի հեշտ է և շատ ավելի պակաս ժամանակ է պահանջում, քան խոշոր գյուղատնտեսական արտադրության կազմակերպման բուրժուական եղանակը, որի իրականացման համար պահանջվում է նախ մանր հողատիրությունը վերացնել, այսինքն գյուղատնտեսական լայն մասսաներին սեփականազուրկ անել, խոշոր կապիտալիստական հողատիրություն ստեղծել և ապա միայն խոշոր գյուղատնտեսական արտադրության անցնել։

Պետք է դեռ նկատել, որ կոլեկտիվ արտադրության առաջացումն ու զարգացումն անհրաժեշտաբար խոշոր արտադրություն են ենթադրում, այն ինչ կապիտալիստական հողատիրության պայմաններում խոշոր գյուղատնտեսական արտադրությունը ոչ թե օրենք, ոչ թե մասսայական երևույթ, այլ սովորաբար բացառություն է։ Յերկրագնդի երեսին չկա և ոչ մի կապիտալիստական երկիր, որտեղ սեփական խոշոր գյուղատնտեսական արտադրություն ունեցող կալվածատերերն այդ դասակարգի շարքերում աննշան փոքրամասնություն չկազմեն։ Նրանց հողերի խոշորագույն մասը վարձով գյուղացիներին է տրվում, որոնք մանր արտադրության շրջանակներից դուրս գալ անզոր են։

Ըստ Մարքսի և Ենգելսի ուսմունքների, խոշոր արտադրությունը սոցիալիզմի անհրաժեշտ նախադրյալն է։ Սակայն, գիտական սոցիալիզմի հիմնադիրները երբեք այն միտքը չեն արտահայտել, որ պրոլետարական հեղափոխությունն անհաջողության կհանդիպի, եթե համապատասխան երկրների տնտեսության բոլոր ճյուղերը խոշոր մեքենայական արտադրության կողմից արդեն մինչև հեղափոխության մոմենտը նվաճած չեն։ Կոմինտերնի գաղափարական հակառակորդները թող փորձեն Մարքսի կամ Ենգելսի

անտահման հարուստ գրական ժառանգության մեջ մի միտք, մի արտահայտություն մատնացույց անել, որը գեթ ամենահեռավոր կերպով իրենց ռամբառանքային հավատալիքներին կարողանար հիմք ծառայել: Մեր կողմից ամենակատեգորիկ կերպով պնդում ենք, որ Մարքսի և Էնգելսի գործերում նման մի կտոր, նման մի տեղ գտնել մեր հակառակորդներին երբեք հաջողվել չի կարող: Ոչ պակաս անիմաստ է հակաբոլշևիկյան բանակի այն հավատիացումն, իբրև թե ըստ Մարքսի և Էնգելսի ուսմունքի պրոլետարական հեղափոխությունը միայն այն ժամանակ կարող է կատարվել և հաջողությամբ պսակվել, երբ ոչ միայն տվյալ ամեն մի երկրի տնտեսության բոլոր ճյուղերում խոշոր կապիտալիստական արտադրությունը կիրապետի, այլ և երբ կապիտալիզմը նույն ձևով ամբողջ աշխարհի վրա կտարածվի: Բոլշևիզմի հակառակորդներն այս կետում էլ Մարքսի և Էնգելսի ուսմունքից խոտոր հրաժարվել են, աչքառու կերպով զրպարտությամբ և պրովոկացիայով են զբաղվում:

III

Մարքսին ու Էնգելսին նման թեորիաներ վերագրելով, հակահեղափոխականներն այնպես են ձևանում, կարծես դեպի գիտական սոցիալիզմի հիմնադիրները նրանք ամենաբարձր հարգանք են տածում և իրենց ամեն մի քայլափոխում նրանց ուսմունքին են հետևում, այդ ուսմունքով են ղեկավարվում: Իսկ փաստորեն, նրանց այդ բոլոր հավատիացումները Մարքսի և Էնգելսի նկատմամբ կատարյալ հեգնանք են ներկայացնում: Մարքսին և Էնգելսին նման մտքեր վերագրողներն այդ հանճարեղ և բազմակողմանի կրթության տեր մարդկանց փաստորեն տգետ ու անգրագետ են հայտարարում: Ոչ Մարքսն ու Էնգելսը և ոչ որևէ այլ սոցիալիստական դպրոց երբեք այն տեսակետը չեն պաշտպանած, որ կապիտալիզմը պետք է անպայմանորեն ընդգրկի տնտեսության բոլոր ճյուղերը բուրժուական երկրներում և սա նույն կարգով իր տիրապետությունն ամբողջ աշխարհում հաստատի, որպեսզի պրոլետարական հեղափոխությունը հնարավոր դառնա: Կապիտալիզմի զարգացման և «հասունացման» մի այդքան բարձր աստիճան ընդհանրապես անհնարին է, մանավանդ երբ խնդիրն ամբողջ աշխարհին է վերաբերում, այն էլ իմպերիալիզմի դարաշրջանում: Ֆինանսական կապիտալն իր ամբողջ էությամբ կապիտալիզմի նման համաշխարհային տիրապետությունը կատարելապես անհնարին է դարձնում:

Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո չէ, որ II Ինտերնացիոնալը և միջազգային բուրժուազիան Մարքսին ու Էնգելսին նման թեորիաներ են վերագրում: Նրանց տգիտությունից չէ, որ այս զրպարտությունը

բղխում է: II Ինտերնացիոնալի և բուրժուազիայի ձեռքում գիտական սոցիալիզմի այդ խարդախումը մի զենք է, որով նրանք արդարացնում են իրենց հակահեղափոխական քաղաքականությունը բոլշևիզմի և Խորհրդային Միության նկատմամբ, բանվորական և գաղութային խնդիրներում: Մարքսին և Էնգելսին զրպարտելով, II Ինտերնացիոնալն իր դավաճանությունն է քողարկում:

Չափազանց նշանակալից է, որ պրոլետարական հեղափոխության հակառակորդներն ու թշնամիները պատերազմից առաջ Մարքսին ու Էնգելսին ուտոպիզմում էին մեղադրում, պրոլետարական հեղափոխության վաղաժամ գուշակության համար նրանց հեգնանքի էին ենթարկում, հիշեցնելով մանավանդ «Կոմ. Մանիֆեստը»: Բավական է մատնացույց անել այն պատմական վիճաբանությունները, որ 1893 թ. մարտ ամսին տեղի ունեցին գերմանական ռեյխստագում՝ սոց.-դեմ. և բուրժուական կուսակցությունների միջև: «Ազատամիտ» Ռիխտերը, կենտրոնի ներկայացուցիչ Բախեմը, պահպանողական Շտեկկերը և մյուսները չորս օր շարունակ սոց-դեմ. կուսակցությունը քննադատում և հեգնանքի էին ենթարկում, նրան յերկու հիմնական մեղադրանք առաջադրելով: 1893 թ. գերմանական բուրժուազիայի ներկայացուցիչները պնդում էին, որ սոց-դեմոկրատիան դասակարգային կռվի հեղափոխական յեղանակների յե հետևում և այդ պատճառով էլ նրա աշխատանքը միայն կործանիչ հետևանքներ կարող է ունենալ: Յերկրորդ գլխավոր մեղադրանքն այն էր, որ արդեն մինչև անցյալ դարի 90-ական թվականների վերջերը սոցիալ-դեմոկրատիան անհնարին չէր համարում իշխանությունը գրավել: Առանձնապես պրոլետարական դիկտատուրայի մասին պատգամավոր Բախեմը հետևյալ կարծիքն էր հայտնում. «Մարքսը այն տեսակետն էր պաշտպանում, որ սոց-դեմ. կուսակցությունը պետք է նախ գրավի քաղաքական իշխանությունը և ապա այդ իշխանությունը պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի ձևով կազմակերպելով ու նրանից օգտվելով, բավականի յերկարատև քաղաքական անցման շրջանում աստիճանաբար պետք է սոց-դեմոկրատական պետություն ստեղծի»*):

Ինչպես տեսնում ենք, «սոց-դեմ. պետությունը» և սոցիալիզմը բուրժուազիայի իդեոլոգը միմյանց հետ չի շփոթում, սակայն և այնպես 1893 թվականին Մարքսի թեորիան պրոլետարական դիկտատուրայի մասին Բախեմն ավելի ճիշտ էր մեկնաբանում, քան Կաուցկին կամ Հիլֆերդինգը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Իսկ ընդունել պրոլետարական դիկտատուրայի

*) «Государство будущего» стеногр. отчет дебатов герм. рейхстага, стр. 54, изд. Глаголева: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Վ. Լիբկնեխտի ճառը, մանավանդ էջ 209—211.

բայլի շրջանի պատմական անհրաժեշտությունը նշանակում է ընդունել նաև այն, որ պրոլետարական հեղափոխության ժամանակին սոցիալիզմի բոլոր նախադրյալները դեռ չեն կարող հասունացած լինել, որ միաժամանակ պրոլետարիատը դեռ պետք է պահպանի սեփական ապարատը` թե սոցիալիզմի նյութական ու բարոյական նախադրյալները հասունացնելու և թե սոցիալիզմի թշնամիներին վերջնականապես ջախջախելու համար: Կապիտալիստական հասարակակարգի զարգացման բարձրագույն աստիճանը, գրում էր 1895 թ. մարտին Էնգելսը Կոնրադ Շմիդտին, ենթադրում է, որ հասարակության մեջ գոյություն ունեն միայն «ժամանակակից դասակարգերը` հողատերերը, կապիտալիստները (արդյունաբերական և առևտրական) և բանվորները, իսկ միջին բոլոր աստիճանները վերացած են: Սակայն իրերի նման դրություն չկա նույն իսկ Անգլիայում և յերբեք չի լինի. մենք թույլ չենք տա, որպեսզի գործն այդքան հեռու գնա» *(ընդգծումը մերն է):

Մարքսը, Էնգելսը և Լենինը բազմիցս հեգնել են մարդկանց, որոնք «մաքուր» կապիտալիզմի կամ «մաքուր» սոցիալիզմի հույսերով են ապրում: Վերահիշյալ նույն նամակում Էնգելսն իբրև օրինակ է վերցնում ֆեոդալական կարգերը և հայտարարում է, որ յեվրոպական յերկրներից և ոչ մեկում այդ կարգերն իրենց զարգացման գագաթնակետին յերբեք հասնել չկարողացան և որ նրանց ամենակլասիկ ձևը Յերուսաղեմի եֆեմեր (խաբուսիկ) թագավորության մեջ ենք գտնում: Իր զարգացման պրոցեսում կապիտալիզմն անխուսափելիորեն քայլ առ քայլ ուժեղացնում է կազմակերպում է պրոլետարիատին, իրեն հատուկ ներհակություններին քայլ առ քայլ ավելի ու ավելի սուր կերպարանք է տալիս, այնպես որ նրա զարգացման բարձրագույն աստիճանի հույսերով ապրելու համար պետք է նախ պատմական զարգացման դիալեկտիկական ուսմունքից հրաժարվել:

Մարդիկ, որոնք սոցիալիզմի հաջողության համար կապիտալիզմի լիակատար «հասունացում» են պահանջում, մոռանում են, որ կապիտալիզմի առաջացման պայմանները այդ պահանջին յերբեք չեն համապատասխանել և որ հենց այժմ առաջավոր կապիտալիստական յերկրների բուրժուազիան տնտեսապես հետամնաց յերկրներում ամենաբարձր ձևի կապիտալիստական արտադրություն է կազմակերպում: Դուրս է գալիս, որ յեվրոպացիք կարող են բռնի ուժով Չինաստանը նվաճել և ընդամենը մի քառորդ դարի ընթացքում Շանհայում ամենակատարելագործված կապիտալիստական խոշոր արդյունաբերություն ստեղծել, թեև Չինաստանը ոչ մանուֆակտուրային շրջան է անցել, ոչ տեխնիկական գյուտեր է կատարել ու սեփական մեքենաներ է արտադրել և ոչ ընդհանրապես բուրժուական վերածնունդի ու հումանիզմի

*) Письма К. Маркса и Ф. Энгельса, перевод Адоратского, стр. 320.

բնական ու մաթեմատիկական գիտությունների և մատերիալիզմի զարգացման այն հռչակավոր դարերն է վերապրել, որոնց կուլտուրան կապիտալիստական արտադրության անհրաժեշտ նախապայմանն է, իսկ Խորհրդային իշխանությունը չի կարող մեր գյուղում կոոպերատիվ խոշոր արտադրություն կազմակերպել, որովհետև մեր գյուղը կապիտալիզմի չարիքները լրիվ կերպով չի ճաշակել:

Հայաստանի Խորհրդային իշխանությունն, օրինակի համար, Զորագետի վրա խոշոր ելեկտրոկայան և ցեմենտի գործարան է կառուցում: Յեթե մեր հակառակորդների «թեորիաներին» հետևենք, պետք է ընդունենք, որ մեր յերկրի աշխատավորությունն այդ խոշոր ձեռնարկների կառուցմանը միայն մի քանի հարյուր տարի հետո պետք է դիմեր, յերբ մեզ մոտ ել կզարգանային բնական, մաթեմատիկական ու տեխնիկական այն գիտությունները, յերբ մեզ մոտ ել բարձր զարգացման կհասնեյին մեքենայական, քիմիական և ելեկտրոտեխնիկական արդյունաբերության այն ճյուղերը, որոնց բարձր զարգացման արդյունքից օգտվում է այսօր Խորհրդային իշխանությունը` հիշյալ կայարանը և գործարանը կառուցելու համար:

Ինչպես տեսնում ենք, II Ինտերնացիոնալի և բուրժուազիայի իդեոլոգների նոր թխած այդ «թեորիան» միջազգային բուրժուազիայի իմպերիալիստական քաղաքականության գործին է ծառայում, այդ գործի հաջողությանը չափազանց շահավետ է: Հակահեղափոխության իդեոլոգներն իրենց այդ «թեորիայով» այն են ասում, որ բուրժուազիան ընդունակ է կատարելագործված գործարանային արդյունաբերություն ստեղծել Չինաստանում, Տաճկաստանում և նրանցից շատ ավելի հետամնաց յերկրներում, այնինչ խորհրդային իշխանությունն անզոր է նույն խոշոր արդյունաբերությունն ստեղծել մի յերկրում, որն իր տնտեսական ու կուլտուրական զարգացման մակարդակով միջազգային բուրժուազիայի բոլոր գաղութներին մեծապես գերազանցում է, որն արդեն հարյուր տարի առաջ հազարավոր կապիտալիստական գործարաններ ու արհեստանոցներ ուներ և մեկ ու կես դար շարունակ Յեվրոպայի տնտեսական ու քաղաքական կյանքում վերին աստիճանի կարևոր դեր է խաղացել:

IV

Կ. Մարքսն առաջինն էր, որ «սոցիոլոգիան գիտական հողի վրա դրեց, ընդունելով հասարակական-տնտեսական ֆորմացիայի գաղափարն, իբրև տվյալ արտադրական հարաբերությունների ամբողջություն, ապացուցելով որ այդ ֆորմացիաների զարգացումը բնական-պատմական պրոցես է», գրում էր Լենինը 1894 թ., իր «Что такое друзья народа» գործում: Մարդկային հասարակության դիալեկտիկական զարգացման ընդհանուր օրենքի

լավագույն ձևակերպումը Մարքսը տվեց 1859 թ., իր «Քաղաքատնտեսության քննադատության» հռչակավոր հառաջաբանում: Այդտեղ Մարքսը ցույց տվեց, թե որն է հասարակական կյանքի բազիսը և որը՝ նրա վերնաշենքը, ցույց տվեց, թե ամեն մի հասարակություն, իր դիալեկտիկական զարգացման պրոցեսում, տնտեսական-հասարակական տվյալ ֆորմացիայից ինչպես է մի նոր, ավելի բարձր ֆորմացիայի անցնում: Սակայն, հասարակական-տնտեսական և վոչ մի ֆորմացիայի արտադրական հարաբերությունների և նրա զարգացման տենդենցների ու որենքների մասին պարզ գաղափար կազմել վոչ վոք չի կարող, յեթե պատմության դիալեկտիկական զարգացման վերոհիշյալ որենքով սահմանափակվի, յեթե այդ որենքն, իբրև պատրաստի ֆորմուլա, փորձի բոլոր դարերին և բոլոր ֆորմացիաներին վերաբերյալ ամեն մի խնդրի լուծման բանալի դարձնել: 1890 թվականի իր նամակներից մեկում Ենգելսը գրում է, վոր պատմական մատերիալիզմը մի լծակ չէ, վորից ոգտվելով կարելի լիներ առանց այլ և այլության տվյալ ամեն մի հասարակակարգի կառուցվածքը վորոշել: «Ամբողջ պատմության ուսումնասիրությունը պետք է նորից սկսել: Տարբեր հասարակական ֆորմացիաների գոյության պայմանները պետք է իրենց մանրամասնություններում հետազոտել, նախ քան նրանցից համապատասխան քաղաքական, մասնավոր-իրավական, եսթետիկական, փիլիսոփայական, կրոնական և այլ հայացքներ դուրս բերելու փորձեր անելը» ("Письма„ 275): Իսկ Դյուրինգի դեմ ուղղած իր գործում Ենգելսը հետևյալն է ասում. «Սկզբունքները վոչ թե հետազոտման յելակետ, այլ նրա վերջնական հետևանք են», «սկզբունքները միայն այն չափով են ճիշտ, ինչ չափով վոր համապատասխանում են բնությանը և պատմությանը» (մասն I. գլ. 3):

Վերացականորեն կազմած սկզբունքները յելակետ ունենալով և նրանց վրա հենվելով, շատ հեշտ է տվյալ ամեն մի հասարակության զարգացմանը ցանկացած ուղղություն և բովանդակություն տալ, սակայն խնդրի լուծման այդ ձևը գործնական վորևէ արժեք չի ներկայացնում: Նման ամեն մի աշխարհայացք լավագույն դեպքում իր հեղինակի ինքնաբավականության համար գոյություն ունի: Հասարակության զարգացման գործին նա միայն վնասել կարող է: Ահա ինչու Կ. Մարքսը պատմական զարգացման իր բացած ընդհանուր որենքով չսահմանափակվեց, կապիտալիզմի առաջացման, զարգացման ու կործանման պայմաններն այդ որենքի գոյությամբ պարզաբանված չէր համարում և այդ նպատակի իրականացմանը նվիրեց իր խոշորագույն գիտական գործը՝ «Կապիտալը», վորի առաջին հատորի ծանոթություններից մեկում Դոն-Քիշոտին է նմանեցնում այն գիտնականներին, վորոնց համար տնտեսական-հասարակական ֆորմացիաներ գոյություն չունեն և վորոնք բոլոր դարերի ու յերկրների համար պատմական զարգացման մի ընդհանուր

որենք են ընդունում: Դիալեկտիկան պատմական ամեն մի շրջանի առանձին կոնկրետ ուսումնասիրություն է պահանջում: Ահա ինչու արդեն 1894 թ. Ռուսաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի աշխատանքը Լենինն արդյունավետ էր համարում միայն այն դեպքում, յեթե այդ ինտելիգենցիան «իլլյուզիաներից հրաժարվի և հենարան փնտրի Ռուսաստանի իրական, այլ վոչ թե նրա ցանկալի զարգացման մեջ, իրական, այլ վոչ թե հնարավոր հասարակական-տնտեսական հարաբերություններում: Նրա թեորեթիքական աշխատանքի կենտրոնն է լինելու՝ ուսումնասիրել Ռուսաստանի տնտեսական ներհակությունների բոլոր ձևերը: ..Նա պետք է մեր իրականության մի ամբողջացած պատկեր տա, իբրև արտադրական հարաբերությունների մի վորոշ սիստեմի» (հատ. I. եջ 207): Մարքսի թեորիան է, գրում է Լենինը նույն գործում, «հետազոտել և բացատրել վորոշ յերկրների տնտեսական կարգերի եվոլյուցիան»: Այդ պատճառով էլ Մարքսի թեորիայի «կիրառումը» Ռուսաստանում ըստ Լենինի միայն հետևյալը կարող է լինել. «Հետազոտել Ռուսաստանի արտադրական հարաբերությունները և նրանց եվոլյուցիան, մատերիալիստական մեթոդի և թեորեթիկական քաղաքատնտեսության մշակված ձևերով (приемы) ոգտվելով» (հատ. I, եջ 181):

Պատմական ամեն մի ֆորմացիա իր զարգացման հատուկ որենքներն ունի: Այս դրությունը պարտադիր է ամեն մեկի համար, ով ընդունում է պատմության դիալեկտիկական զարգացումը: Յեվ ընդհակառակն. ամեն վոք, ով ընդունում է մարդկային հասարակության զարգացումը թռիչքների կամ հեղափոխությունների միջոցով, ում համար եվոլյուցիան անհրաժեշտաբեն հեղափոխության է հանգում, վորովհետև իր զարգացման մի վորոշ բարձր աստիճանի հասնելով, ամեն մի հասարակություն առաջադիմել այլ ևս չի կարող՝ նա պետք է հետևողական լինի և ընդունի նաև զարգացման առանձին որենքները պատմական ամեն մի ֆորմացիայի համար: Սակայն ներկա խնդիրն այդքանով էլ չի սպառվում: Վոչ միայն տնտեսական ամեն մի ֆորմացիա իր զարգացման որենքներն ունի, այլ և տարբեր յերկրներում ու պատմության տարբեր դարերում հասարակական-տնտեսական տվյալ ֆորմացիայի զարգացումն իր մանրամասնություններում, իր առանձին կետերում ընդհանուր ուղիից կարող է շեղվել, տվյալ յերկրի բնական ու պատմական միջավայրով պայմանավորված առանձնահատուկ ձևեր ընդունել, թեև նրա ընդհանուր ընթացքը՝ այդ ֆորմացիայի զարգացման հիմնական որենքը միշտ և ամենուրեք միևնույնն է: Յեթե իբրև որինակ արտադրության կապիտալիստական յեղանակը վերցնենք, կտեսնենք, վոր անհնարին է յերկու յերկիր մատնացույց անել, վորոնք իրենց կապիտալիստական զարգացման կարգով ու ձևերով և ընդհանրապես այդ զարգացման բոլոր մանրամասնություններով միմյանց լրիվին նմանեին: Սակայն և այնպես, կապիտալիզմի

հիմնական օրենքներն ամենուրեք միևնույն են (պրոլետարացում, հավելյալ արժեք, կապիտալների կենտրոնացում և այլն)։

Ահա ինչու բոլոր յերկրների ու դարերի, պատմական բոլոր ֆորմացիաների համար պատրաստի դեղատոմսեր տալ Մարքսը չեր կարող, չեր կարող վոչ նրանց կապիտալիստական և վոչ նրանց սոցիալիստական զարգացման նկատմամբ։ Անգլիայի բանվորական շարժման կամ Տաճկաստանի ու Չինաստանի ազգային-ազատագրական շարժումների վիճակը վորոշելու համար Մարքսի և Ենգելսի գործերում պատրաստի ֆորմուլաներ չեք գտնի։ Ընդհակառակը։ Ըստ Մարքսի և Ենգելսի ուսմունքի, այդ շարժումների ընթացքը և հեռանկարները պարզելու համար պետք է հանգամանորեն ուսումնասիրել վոչ միայն այդ յերկրներից ամեն մեկի գոյության բնական պայմանները, նրանց տնտեսական-քաղաքական դրությունը և տնտեսական-քաղաքական զարգացման տենդենցներն, ուղիներն ու հնարավորությունները, պետք է վոչ միայն տվյալ յերկրում տիրապետող հասարակական հարաբերություններին ու դասակարգային ներհակություններին ծանոթանալ, այլև ամենամեծ չափով պետք է հաշվի առնել տվյալ շարժման միջազգային պայմանները, նրա առաջխաղացման ընդհանուր պատմական միջավայրը։

V

Մարքսի, Ենգելսի և Լենինի գործերում այդ թեորիան լուսաբանող հարուստ նյութ է կուտակված։ Այստեղ կանգ կառնենք մի կլասիկ օրինակի վրա, վորը բնակչության աճման խնդրին է վերաբերում։ Ձևակերպելով բնակչության աճման այն օրենքը, վորը կապիտալիզմի շրջանին է հատուկ, Մարքսը շարունակում է. «Իրոք, արտադրության ամեն մի առանձին պատմական յեղանակին հատուկ են իր առանձին, պատմական նշանակություն ունեցող՝ բնակչության օրենքները։ Բնակչության վերացական օրենք միայն բույսերի և կենդանիների համար գոյություն ունի, ինչքան վոր մարդը պատմականորեն նրանց վրա իր ազդեցությունը չի տարածում», գրում է Մարքսը «Կապիտալ»-ի առաջին հատորում (եջ 623)։ Խնդիրն ավելի յե պարզվում 14-րդ դարի ժանտախտին վերաբերող մի նկատողությամբ, վորն անում է Մարքսը նույն հատորի 23-րդ գլխում։ «Յեթե 14-րդ դարի չափանիշով 19-րդ դարի արտադրողական հարաբերություններին և բնակչության համապատասխան հարաբերություններին մոտենալն ինքն ըստ ինքյան մի անտահման միամտություն է, այդ միամտությունը դեռ այն էլ է աչքաթող անում, վոր յեթե Ջրանցքի այս կողմն՝ Անգլիայում, ժանտախտը և նրան ուղեկցող՝ բնակչության նվազումը, գյուղի բնակչության ազատագրում և հարստացում առաջացրին, Ջրանցքի այն կողմը՝ Ֆրանսիայում, նույն ժանտախտն բնակչության ավելի ուժեղ ստրկացում և ավելի բարձր չքավորության հետևեցին» (եջ 697)։

Դժվար է ավելի պարզ արտահայտվել, խնդրին վերաբերյալ ավելի համոզեցուցիչ նյութ տալ, քան այդ կոմունիզմի մեծ ուսուցիչներն են արել։ Սակայն կոմունիզմի թշնամիները Մարքսին ու Ենգելսին թեորիաներ են վերագրում, վորոնց դեմ նրանք տասնյակ տարիներ շարունակ կռվել են, և Մարքսին ու Ենգելսին այսօր Կանտի կամ Հեգելի, իսկ վաղը նույն իսկ Ֆիխտեյի կամ Շոպենհաուերի ուսմունքները վերագրելով, հակահեղափոխական նպատակներով թխած այդ յուրահատուկ «մարքսիզմով» կռվում են կոմունիզմի և լենինիզմի դեմ։ Նշանակալից է, վոր բուրժուական հեղափոխությունների շրջանում էլ հակահեղափոխության իդեոլոգները կռվի այս նույն զենքին եյին դիմում, բուրժուական համապատասխան հեղափոխությունը կործանում դուշակելով և կործանման այդ գուշակությունը նրանով պայմանավորելով, վոր հեղափոխությունն իր ընթացքով ու իր ձգտումներով պատմական այս կամ այն օրենքին հակասում է կամ վոր ավելի առաջացած յերկրներում համապատասխան հեղափոխական ծրագրների կիրառումը դեռ վաղաժամ է համարվում։ Հիշենք միայն պատմական այն մեծ բանակռիվը, վոր 18-րդ դարի յերկրորդ կեսում Ֆրանսիայի հակահեղափոխականները մղում եյին հեղափոխական բուրժուազիայի հետ, իրենց հակահեղափոխական վտանձգություններն «ավելի առաջավոր» Անգլիայի որինակով արդարացնելով։ Յեթե Ֆրանսիան այդ թեորիաներին հետևեր, դեռ այսօր էլ հանրապետական կարգեր ունենալու իրավունքից նա զուրկ կլիներ. վորովհետև դեռ այսօր էլ Անգլիան հանրապետություն չէ և միաժամանակ իր տնտեսական-կուլտուրական զարգացման մակարդակով Ֆրանսիային անպայման գերազանցում է։

«Մեր թեորիան, գրում էր Ենգելսը 1887 թ. իր նամակներից մեկում, հեղափոխական թեորիա յե և վոչ թե մի դոգմա է, վորը կարելի յե անգիր անել և ապա մեքենայորեն կրկնել»։ «Պահանջել, վոր ամերիկացիք կատարելապես գիտակից կերպով հետևեն այն թեորիային, վորը հին արդյունաբերական յերկրներում է մշակվել, նշանակում է անհնարին պահանջ առաջադրել», գրում է նույն Ենգելսը 1886 թ. իր մի նամակում։ Յեթե տվյալ շարժումը հասկանալու համար չպահանջվեր ուսումնասիրել նրա զարգացման ներքին ու արտաքին պայմանները, չպահանջվեր բացել այն կապը, վոր նրա զարգացման զանազան էլեմենտների միջև գոյություն ունի, այդ դեպքում. գրում է Ենգելսը, «թեորիայի գործադրումը պատմական ամեն մի շրջանի նկատմամբ ավելի հեշտ կլիներ, քան առաջին աստիճանի ամենապարզ հավասարության լուծումը»։*)

Ի՞նչ խոսք կարող է լինել այն մասին, վոր Ենգելսի այդ տեսակետը Մարքսի կողմից լիովին բաժանվում էր։ Արդեն 70-ական թվականներին,

*) Письма, стр. 267—269, 277.

նկատելով իր ուսմունքի խեղաթյուրումը չատերի կողմից, Մարքսը մի ան-
գամ հայտարարեց, որ եթե իր ուսմունքն իրոք այն բովանդակությունն
ունենար, որը նրան վռմանք վերագրում են, այդ դեպքում մարքսիստ լի-
նելուց ինքը կհրաժարվեր: Իր թեորիայի խեղաթյուրման դեմ Մարքսը ու-
ժեղ կերպով բողոքում է նաև իր պատմական նամակում, ուղղված 1877 թ.
«Отеч. записки.» պարբերականի խմբագրությանը: Խոսելով իր ուս-
մունքի քննադատության մասին Ն. Կ. Միխայլովսկու կողմից, Մարքսն ի
մեջի այլոց հետևյալն է գրում. «Կապիտալիզմի ծագման այն պատկերը,
որ ես տվել եմ, Միխայլովսկին ուզում է անպայման տնտեսական զար-
գացման ընդհանուր ընթացքի պատմափիլիսոփայական մի թեորիայի վերա-
ծել, որին բոլոր ժողովուրդներն անխուսափելիորեն պետք է ենթարկվեն
(պատմական ինչ պայմաններում էլ նրանք ապրելիս լինեն)...: Սակայն ես
քննադատից ներողություն եմ խնդրում: Այդպես գտնել, նշանակում է թե
չափից դուրս ինձ պատված լինել և թե միաժամանակ ինձ մի սխալ կարծիք
վերագրել, որի համար բոլորովին պատասխանատու չեմ» («Письма». 239:

Կապիտալիզմի ծագման այն պատկերը, որի մասին Մարքսը խոսում է,
«Կապիտալի» I հատորում է տված, նախնական կուտակմանը նվիրված գլու-
խում: Մարքսը զարմանք է հայտնում այն առթիվ, որ «Կապիտալի» այդ
գլխից Միխայլովսկին իր հոդվածում առաջ չի բերում և ոչ մի կտոր, ո-
րով կարողանար հիմնավորել իր տեսակետը: Նույն նամակում Մարքսը
պատմում է, թե Ռուսաստանի տնտեսական զարգացման խնդիրներն իրեն
պարզելու համար ինքն ինչպես է վարվել: «Ժամանակակից Ռուսաստանի
տնտեսական զարգացման մասին հիմնավորված կարծիք ձեռք բերելու նպա-
տակով, ես սովորեցի ռուսերեն և այնուհետև, երկար տարիներ չարունակ
ուսումնասիրում եմ ռուսական պաշտոնական և այլ հրատարակությունները,
որոնք այդ նյութին են վերաբերում», գրում է այդտեղ Մարքսը:

Ռուսաստանի տնտեսական զարգացման ուղիները որոշելու համար,
Մարքսը խնդրին ոչ թե վերացականորեն է մոտենում, տնտեսապես հետա-
մնաց այդ երկրի նկատմամբ այն թեորիան գործադրելով, որը հենց ինքը
բացել ու ձևակերպել էր առաջավոր կապիտալիստական երկրների, գլխա-
վորապես՝ Անգլիայի նկատմամբ, այլ տարիներ չարունակ ուսումնասիրում
է տվյալ կոնկրետ դեպքին վերաբերյալ նյութը և այնուհետև միայն իր այն
հռչակավոր եզրակացությունն է անում, որը մանր-բուրժուական ռեակ-
ցիոն սոցիալիզմի անոգնական իդեոլոգների կողմից կես դար չարունակ այն-
քան անբարեխիղճ ու այնքան բթամիտ կերպով չահագործվում է:

VI

Մարքսի վերոհիշյալ նամակը նրա այն բազմաթիվ նամակների շարքին է
պատկանում, որոնցից ամեն մեկը մի-մի խոշոր գիտական գործ, իսկական
գիտական հայտնաբերություն է ներկայացնում: Ծանոթանալով Ռուսաստա-
նի տնտեսական դրությանը և նրա տնտեսական զարգացման տենդենցներն իր
համար պարզելով, անցյալ դարի 70-ական թ.թ. վերջերին Մարքսը այն եզ-
րակացության հանգեց, որ Ռուսաստանի գյուղական համայնքի քայքայու-
մը և գյուղացիության պրոլետարիզացիան անխուսափելի չեն, եթե Ռուսաս-
տանը կապիտալիստական արտադրության զարգացման ուղիով ընթանա,
սակայն որ նույն Ռուսաստանը կարող է պահպանել իր գյուղական համայն-
քը և գյուղացիության սեփականազրկումից ու կապիտալիզմի այլ չարիքնե-
րից խուսափել, պատ մնալ, եթե մինչև կապիտալիզմի տիրապետությունը
Ռուսաստանի տնտեսության բոլոր ճյուղերում՝ առաջավոր կապիտալիստա-
կան երկրներում արդեն պրոլետարական հեղափոխություն կատարվի: Այդ
դեպքում, ասում է Մարքսը, Ռուսաստանը հնարավորություն կստանա իր
տնտեսական ու հասարակական կյանքում սոցիալիստական կարգեր հաստա-
տել, չանցնելով կապիտալիզմի զարգացման այն բոլոր շրջանները, որոնք
բնորոշ են առաջավոր կապիտալիստական երկրների համար: Կապիտալիզմի
չարիքներից խուսափելու այդ հնարավորությունը Մարքսը նրանով է պայ-
մանավորում, որ տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց Ռուսաստանը
Եվրոպայի կատարելագործված տեխնիկայից ու զարգացած գիտություն-
ներից ամենալայն չափով կօգտվի՝ իր տնտեսության բոլոր ճյուղերում խոշոր
արտադրություն կազմակերպելու համար:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այս խնդիրն այնքան
բարձր թեորետիկական արժեք է ստացել և կոմունիստական ու
հակակոմունիստական բանակների միջև պայքարի մի այնքան զորեղ
քաղաքական զենք դարձել՝ թե՛ Խորհրդային Միության և թե՛
հետամնաց ու գաղութային երկրների սոցիալիստական ապագայի նկատ-
մամբ, որ անհրաժեշտ ենք համարում Մարքսի և Ենգելսի գործերից մի չարք
քաղվածքներ կատարել, ապացուցելու համար, թե բոլշևիզմի հակառակորդ-
ներն ու թշնամիներն ինչքան տգետ ու անբարեխիղճ են, երբ Լենինի ուս-
մունքի համապատասխան կետը հակամարքսիստական են հայտարարում:

«Отеч. записки» պարբերականին ուղղած վերոհիշյալ նամակում
Մարքսն այդ մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «Եթե Ռուսաստանը
չարունակելու է նույն ուղիով ընթանալ, որով 1861 թ. սկսած ընթացել է,
նա կզրկվի կապիտալիստական կարգերի չարիքներից խուսափելու ամենագե-
ղեցիկ դեպքից, որը երբևիցե և որևէ ժողովրդի պատմությունը վերա-

պահել է»: Յեվ մի քիչ հետո. «Յեթե Արևմտյան Յեվրոպայի ժողովուրդների օրինակին հետևելով, Ռուսաստանը ձգտում է կապիտալիստական յերկիր դառնալ—իսկ այդ ուղղությամբ վերջին տարիներում նա բավականին աշխատանք է թափել—իր այդ նպատակին հասնել նա չի կարող, գյուղացիության մի խոշոր տոկոսը նախապես պրոլետարիզացիայի չենթարկելով, իսկ այնուհետև, կապիտալիստական կարգերի գիրկն ընկնելուց հետո, Ռուսաստանն անխուսափելիորեն կապիտալիզմի անողոք օրենքների իշխանությանը կենթարկվի, ինչպես այդ բոլոր մյուս մեղանչած ժողովուրդների հետ է տեղի ունեցել»: „Письма 238—239“: Իր միտքն ավելի պարզաբանելու համար Մարքսը հին Հռոմի պատմությունն է հիշեցնում, յերբ գյուղացիությունը նույնպես սեփականազուրկ յեղավ, սակայն այդ սեփականազրկման հետևանքով վարձու աշխատանքի կարգեր, կապիտալիստական կարգեր չառաջացան: Գյուղացիության սեփականազրկումը հին Հռոմում ստրկատիրական կարգերի թագավորությամբ պսակվեց:

Մարքսը նույն բովանդակությամբ մի քանի նամակ էլ ունի գրած, վորոնցից այստեղ կանգ կառնենք 1881 թ. մարտին Վերա Զասուլիչին ուղղած նամակի վրա: 1881 թ. փետրվարին Վ. Զասուլիչը դիմել եր Մարքսին, խնդրելով իր կարծիքը հայտնել Ռուսաստանի գյուղական համայնքի ապագա վիճակի մասին, ինչպես և պարզել այն խնդիրը, թե ըստ իր ուսմունքի արդյո՞ք «պատմական անհրաժեշտություն է, վոր աշխարհի բոլոր յերկրներն անցնեն կապիտալիստական արտադրության բոլոր ֆազերը»: «Архив К. Маркса и Фр. Энгельса» հրատարակության առաջին գրքում զետեղված են թե Վ. Զասուլիչի ու Կ. Մարքսի այդ նամակները և թե՛ Կ. Մարքսի նամակի չորս սևագրերը, վորոնք մեզ հետաքրքրող հարցի մասին շատ հարուստ ու թանկարժեք նյութ են պարունակում: Սևագրերը կազմելու փաստը ցույց է տալիս, թե Մարքսի աչքում ներկա խնդիրն ինչքան բարձր կարևորություն եր ստացել:

Կապիտալիզմի սիրահարներին, վորոնք կարծում են, թե բոլոր յերկրներն անհրաժեշտաբար անցնելու յեն կապիտալիզմի բոլոր ֆազերը, Մարքսը հետևյալ հարցն է առաջադրում. «Իր մոտ մեքենաներ, շոգենավեր, յերկաթուղիներ և այլն մտցնելու համար Ռուսաստանը միթե՞ հարկադրված է յեղել մեքենայական արդյունաբերության առաջացման այն յերկար շրջանն անցնել, վորը Յեվրոպան է անցել: Յեվ միաժամանակ նրանք թող բացատրեն ինձ, թե փոխանակության ամբողջ մեխանիզմն (բանկեր, վարկային ընկերություններ և այլն) ինչպե՞ս մի անգամից մտցրին իրենց մոտ, յերբ նույն գործի համար Արևմուտքում դարեր են պահանջվել»: «Յեթե Ռուսաստանն ամբողջ աշխարհից կտրված լիներ, իր սեփական ուժերով նա պետք է հետևապես այն տնտեսական նվաճումները կատարեր, վոր կատարել է Արևմտյան

Յեվրոպան՝ զարգացման մի շարք շրջաններ անցնելով, իր նախնադարյան համայնքների գոյության շրջանից սկսած մինչև իր այժմյան դրությունը»: Սակայն ռուսական համայնքը պահպանել է իր գոյությունը մինչև կապիտալիզմի զարգացման այն աստիճանը, յերբ «արտադրության այդ յեղանակն ամերիկական ու յեվրոպական յերկրներում ճակատագրական ճգնաժամ է ապրում»: Այդ պատճառով էլ համայնքը «կարող է տիրանալ այն պտուղներին, վորոնցով կապիտալիստական արտադրությունը հարստացրել է մարդկությանը, չանցնելով կապիտալիզմի շրջանը»:

Այս տեսակետը պարզաբանելով, Մարքսը բոլորովին չի պնդում, վոր Ռուսաստանի գյուղական համայնքից կարելի յե անմիջապես սոցիալիզմի անցնել, այլ իրեն առաջադրած հարցին այդ պատասխանն է տալիս, զգուշացնելով, վոր խնդրի նման լուծումը «թեորետիկապես հնարավոր է», յեթե մինչև հեղափոխությունը համայնքը չքայքայվի, յեթե միաժամանակ գյուղատնտեսության մեջ կոլլեկտիվ աշխատանք մտցնելու «տնտեսական պահանջ և նրա իրականացման նյութական պայմաններ լինեն»: Սակայն, շարունակում է Մարքսը, «չի կարելի թաքցնել, վոր «գյուղական համայնքի» կյանքն այժմ վտանգված է», իսկ «ռուսական համայնքը փրկելու համար ռուսական հեղափոխություն է պահանջվում»*):

VII

Մարքսի սպասած հեղափոխությունը միայն 1917 թ. կատարվեց, յերբ համայնքը վաղուց արդեն փաստորեն գոյություն չուներ, բայց յերբ յերկրում արդեն գործարանային արդյունաբերություն կար, վորից օգտվելով հնարավոր է գյուղատնտեսության մեջ կոլլեկտիվ արտադրություն կազմակերպել, ազատելով գյուղացուն «կապիտալիզմի բոլոր ֆազերն անցնելու» դժբաղդությունից: Մարքսի կարծիքով, Ռուսաստանի հետամնաց գյուղը կապիտալիզմի բոլոր չարիքներից կարող է փրկվել, յեթե մինչև նրա նվաճումը կապիտալիզմի կողմից՝ Արևմուտքում պրոլետարական հեղափոխություն կատարվի: Այդ հեղափոխությունը 1917 թ. վոչ թե Արևմուտքում, այլ հենց Ռուսաստանում կատարվեց: Ովքեր Մարքսի և Ենգելսի ուսմունքն իբրև «հեղափոխական թեորիա» և վոչ թե իբրև «դոգմա» են ընդունում, «վորը կարելի յե անգիր անել և ապա մեքենայորեն կրկնել», չեն կարող չընդունել, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր հետամնաց գյուղի համար սոցիալիստական վերածննդի հենց այն պայմաններն ստեղծեց, վորոնց առաջացումը կես դար առաջ միայն յեվրոպական պրոլետարական հեղափոխությունից եր սպասելի: Այս ամենից հետո բոլշեվիզմի թշնամիները մեզ միայն մի հարց կարող են առաջադրել, այն

*) «Архив», I. стр. 269—286.

է, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն արդյո՞ք պրոլետարական էր: Այդ մասին մեր հակառակորդները կարող են ամենամանրամասն տեղեկություններ ստանալ բուրժուական յերկրներում ապաստան գտած տասնյակ հազարավոր կալվածատերերից ու կապիտալիստներից, որոնց նախկին սեփականությունն այժմ պրոլետարական պետության ձեռքում է կենտրոնացած:

Անհրաժեշտ է կանգ առնել Մարքսի մի հոդվածի վրա էլ, որը խնդրին նույն լուծումն է տալիս՝ նրան մի այլ կողմից մոտենալով, մի այլ մոմենտ առաջ քաշելով: Մենք նկատի ունենք Բակունինի «Государственность и анархия» գործի քննադատությանը նվիրած հոդվածը, որ Մարքսը գրել է 1874 թ.: Խոսելով պրոլետարական հեղափոխության մասին այն յերկրներում, որտեղ սեփական տնտեսություն ունեցող գյուղացիությունը դեռ բնակչության մեծամասնությունն է կազմում, Մարքսը գրում է, որ գյուղացիությունը «բանվորական հեղափոխությանը կամ կխանգարի և ամեն մի բանվորական հեղափոխություն կործանման կհասցնի, ինչպես այդ մինչև այժմ Ֆրանսիայում է տեղի ունեցել, կամ... պրոլետարիատն, իբրև կառավարություն, պետք է միջոցների ձեռնարկի, որոնցով գյուղացու դրությունն անմիջապես բարելավվի, և նա ինքը հեղափոխության կողմը կանցնի: Այդ միջոցները պետք է իրենց մեջ հողի մասնավոր սեփականությունից նրա կոլեկտիվ սեփականությանն անցնելու սաղմեր պարունակեն և այդ անցումը դյուրացնեն, այնպես որ գյուղացին այդ յերրակացությանը հանգի՝ իր տնտեսությունից յելնելով»:

Նման հեղափոխությունը յե՞րբ է հնարավոր: Նույն հոդվածում այս հարցին Մարքսը հետևյալ պատասխանն է տալիս. «Արմատական սոցիալական հեղափոխությունը տնտեսական զարգացման որոշ պատմական պայմանների հետ է կապված, որոնք նրա նախադրյալներն են: Ահա ինչու այդ հեղափոխությունը միայն այն ժամանակ է հնարավոր, յերբ կապիտալիստական արտադրության պայմաններում արդյունաբերական պրոլետարիատը ժողովրդական մասսայի շարքերում առնվազն նշանավոր տեղ է բռնում, իսկ հաղթության որևէ շանսեր ունենալու համար պրոլետարիատը պետք է ընդունակ լինի, տվյալ պատմական պայմանները հաշվի առնելով, գյուղացիությանն անմիջապես գեթ նույնքան օգնություն հասցնել, ինչքան իր հեղափոխության ժամանակ այդ արեց Ֆրանսիական բուրժուազիան այն ժամանակվա Ֆրանսիական գյուղացու համար»*):

Բոլշևիզմի թշնամիները չեն կարող ոչ Հոկտեմբերյան հեղափոխության փաստը հերքել և ոչ այն, որ Խորհրդային իշխանությունն ընդունակ է մեր գյուղացիությանը գեթ այնքան օգնություն հասցնել, ինչքան 18-րդ

*) Հոդվածը զետեղված է „Летописи Марксизма“ кн. II (մեր կատարած թարգմանքի համար տե՛ս էջ 93):

դարի վերջում այդ Ֆրանսիական բուրժուազիան էր անում: Իսկ յեթե մեր թշնամիների շարքերում տարրական բարեխղճություն լիներ, նրանք կընդունեյին, որ յերբեք և ոչ մի բուրժուական հեղափոխության ընթացքում բուրժուազիան գյուղացիությանն այն աստիճան օգնություն չի հասցրել, ինչքան այդ մեր գյուղացիության նկատմամբ Խորհրդային իշխանությունն է արել:

VIII

Ռուսաստանի գյուղական համայնքի մասին Էնգելսն էլ նույն տեսակետն էր պաշտպանում: Իր հայտնի հոդվածում, ուղղած Պ. Տկաչևի դեմ, վերջինիս Էնգելսը հեգնանքի յե յենթարկում և նրան առաջարկում է սոցիալիզմի այբբենին ծանոթանալ և ապա միայն սոցիալիզմի խնդիրների մասին հեղինակավոր կերպով կարծիքներ հայտնել: Էնգելսը Տկաչևին այն բանի համար էր հեգնում, որ ըստ նրա տեսակետի՝ Ռուսաստանը սոցիալիզմի համար ավելի մեծ հարմարություններ էր ներկայացնում, քան Արևմտյան Եվրոպան, որովհետև անցյալ դարի 70-ական թ.թ. Ռուսաստանը զուրկ էր թե՛ զորեղ բուրժուազիայից և թե՛ մեծաթիվ պրոլետարիատից: Մարքսի հետ միասին, Էնգելսն էլ գտնում էր, որ պատմական որոշ պայմաններում կապիտալիստական զարգացման բոլոր ետապներն անցնելու դժբաղդությունից Ռուսաստանի գյուղական հասարակական գյուղը կարող է խուսափել, սակայն Ռուսաստանի գյուղական համայնքը սոցիալիզմի հիմք համարելու մտքից նա ավելի քան հեռու յեր: «Ռուսական համայնքը, գրում է այդտեղ Էնգելսը, գոյություն է ունեցել հարյուրամյակներ, իր միջից և ոչ մի ուժ չառաջացնելով, որի շնորհիվ յուրավոր տարիներ կարողանար համայնական սեփականության մի ավելի բարձր ձև ստանալ»*): Ըստ Էնգելսի, անցյալ դարի 70-ական թ.թ. ռուսական համայնքն արդեն քայքայվում էր և սոցիալիզմի հաղթության յերաշխիքը ոչ թե այդ համայնքում, այլ պրոլետարական հեղափոխության մեջ պետք է տեսնել, որն անհնարին կդարձնի մասնավոր հողատիրության և կապիտալիզմի առաջացումն այնտեղ, որտեղ հողային համայնքը դեռ պահպանվել է: Նույն հոդվածում Էնգելսը գրում է. «Սակայն իրերի այս դրությունը միայն այն ժամանակ կհասնենք, յերբ Արևմտյան Եվրոպայում՝ դեռ մինչև համայնական սեփականության կատարյալ քայքայումը՝ պրոլետարական հեղափոխությունը կհաղթանակի և ռուս գյուղացու համար այդ անցումը կատարելու նախադրյալներ կստեղծի և ամենից առաջ նրան այն նյութական միջոցները կտրա-

*) «Soziales aus Russland» հոդվածը, գրած 1875 թ. և զետեղված Էնգելսի հոդվածների ժողովածվում՝ «Internationales aus dem Volksstaat» էջ 64.

մասերի, վորոնք անհրաժեշտ են նրա գյուղատնտեսական արտադրության սեփականում անխուսափելիորեն կատարվելիք հեղաշրջումը կիրառելու համար: Ուրեմն պարոն Տկաչևի կողմից պարզ հիմարություն է ասել, վոր ռուս գյուղացիները, թեև «սեփականատերեր են», սակայն «սոցիալիզմին ավելի մոտ» են կանգնած, քան Արևմտյան Յեվրոպայի սեփականազուրկ բանվորները: Դրան միանգամայն հակառակը պետք է ասել: Յեթե կա մի ուժ, վորը Ռուսաստանի համայնական սեփականությունը դեռ կարող է փրկել, նրա համար նոր, իսկապես կենսունակ ձև ընդունելու պայմաններ ստեղծելով, այդ ուժը Արևմտյան Յեվրոպայի պրոլետարական հեղափոխությունն է» (եջ 57):

Բավական է Տկաչևի դեմ ուղղած այդ կլասիկ հոդվածի բովանդակությանը ծանոթանալ, վորպեսզի խնդիրն սպառած համարվի: Սակայն մեծ պատմական կարևորությունը նկատի առնելով, ավելորդ չէ կանգ առնել Ենգելսի մի քանի այլ գործերի վրա յել, վորտեղ ռուսական համայնքի խնդիրն է շոշափվում: Այսպես, օրինակի համար, 1893 թ. Նիկոլայ-Օնին գրած իր նամակներում Ենգելսն այն միտքն է պաշտպանում, վոր յեթե 10—20 տարի առաջ Յեվրոպայում պրոլետարական հեղափոխություն կատարվեր, այդ դեպքում «Ռուսաստանը հնարավորություն կունենար կրճատելու իր զարգացման ուղին և կանգնեցնելու կապիտալիզմի ուղղությամբ կատարվող իր սեփական զարգացման ձգտումը»: «Դժբաղդաբար, մենք չափազանց դանդաղ ենք շարժվում», ասում է Ենգելսը, իսկ այդ ժամանակ ռուսական համայնքն արդեն կազմալուծվում է: «Անմիջապես նախնական հողային համայնքից սոցիալիզմը վոչ մի կերպ զարգանալ չի կարող», ասում է այդտեղ Ենգելսը («Письма» 305—308, 311—313):

Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունները, գրում է Ենգելսը 1880 թ. Գուրվունովա—Կարլուկովա-յին, պետք է հաշվի առնեն և՛ ռուսական համայնքը և՛ արտելային կազմակերպությունները, սակայն միաժամանակ պետք է իմանան, վոր այդ ուժերով սոցիալիզմ կառուցել չի կարելի: Այդ ամենը «մանր պալլիատիվ միջոցներ են»*):

Իր մի այլ հոդվածում, նվիրած «Գյուղացիական խնդիրն Ֆրանսիայում և Գերմանիայում», մեզ հետաքրքրող խնդրի մասին Ենգելսն ի միջի այլոց հետևյալն է գրում, խոսելով պրոլետարական հեղափոխության մասին. «Մեզ համար անօգուտ կլիներ այդ հեղափոխությանն սպասել մինչև այն ժամանակ, յերբ ամենուրեք կապիտալիստական արտադրությունն իր զարգացման ծայրահեղ աստիճանին կհասնի, յերբ վերջին մանր արհեստավորը և վերջին մանր գյուղացին խոշոր արտադրությանը կզոհաբերվեն»: Սակայն, ասում է Ենգելսը, գյուղացիության շարքերում մենք յերբեք չենք կարող «թեկուզ

*) “Неизданные письма Фр. Энгельса„ 28.

հույսի ճառագայթ առաջացնել այն մասին, վոր նրա մանր սեփականությունը ձգտելու չենք յերկարատև կյանք ապահովել»: «Մենք վճռականապես մանր գյուղացու կողմն ենք անցնում», սակայն բացատրելով նրան, վոր «նրա տունը և հողային սեփականությունը մենք կարող ենք փրկել կամ պահպանել այն պայմանով միայն, վոր նրա մոտ ել ընկերական սեփականություն և ընկերական արտադրություն հաստատենք»: Գյուղացու տնտեսության մեջ այդ հեղաշրջումը պետք է կատարել «վոչ թե բռնի ուժով, այլ օրինակի ազդեցությամբ և այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ հասարակական ոգնությամբ»*):

IX

Այսքանով սահմանափակվում ենք, թեև Մարքսի ու Ենգելսի գործերից նրանց այդ տեսակետը հիմնավորող հարյուրավոր այլ քաղվածքներ կարելի յեր կատարել: Խնդիրն ավելի քան պարզ է: Մարքսը և Ենգելսը բոլոր յերկրների և պատմական բոլոր պայմանների համար սոցիալիստական հեղափոխության մի ընդհանուր ծրագիր և ընդհանուր տակտիկա չեն մշակել ու մշակել չեյին կարող, վորովհետև դրանով իրենք իրենց ուսմունքը ժխտած կլինեյին: Պրոլետարական հեղափոխության համար պետք է նույնքան տարբեր ու բազմաթիվ պայմաններ, պայքարի տակտիկայի և տնտեսական ու կուլտուրական շինարարության նույնքան տարբեր ձևեր ու յեղանակներ յենթադրել, ինչքան այդ բուրժուական հեղափոխությունների դարում է տեղի ունեցել: Պրոլետարական հեղափոխության առաջացումը Մարքսը և Ենգելսը հնարավոր եյին համարում արդեն 19-րդ դարում և նրա առաջացման հույսերն ամենամեծ չափով պատերազմի հետ եյին կապում: Կապիտալիստական արտադրության զարգացման այսպես կոչված բարձրագույն աստիճանը նրանք անհեթեթություն եյին համարում և ընդունում եյին, վոր Արևմտյան Յեվրոպայի պրոլետարական հեղափոխությունից հետո էլ մանր արտադրություն և մանր սեփականություն կլինեն վոչ միայն տնտեսապես հետամնաց յերկրներում, այլև այն առաջավոր յերկրներում, վորտեղ արդեն պրոլետարիատի դիկտատուրան է հաստատվել:

Այդ մանր սեփականության և մանր արտադրության վերացումը Մարքսը և Ենգելսը ծրագրում եյին կատարել պայքարի հենց այն յեղանակով, վորն այժմ Խորհրդային Միության պրոլետարիատի կազմակերպությունների կողմից է կիրառվում: Վոչ թե բռնի ուժ, այլ կազմակերպված հասարակական-պետական ոգնություն և մանր տնտեսությունների կոոպերացում—ահա ինչ

*) «Крест. вопрос во Франции и Германии», изд. «Буревестник, 1905. стр. 39—42.

էյին առաջարկում Մարքսը և Էնգելսը Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ տասնյակ տարիներ առաջ: «Յեվ յես և Մարքսը յերբեք չենք կասկածել, գրում է Էնգելսը 1886 թ., վոր կոմունիստական տնտեսության անցնելու ժամանակ պետք է լայն մասշտաբով օգտագործենք կոոպերատիվ արտադրությունը, նրա մեջ անցման մի շրջան տեսնելով: Սակայն գործն այնպես պետք է կազմակերպել, վորպեսզի հասարակությունն, այսինքն՝ ամենից առաջ պետությունը, արտադրության միջոցների սեփականությունն իր ձեռքում պահպանի և վորպեսզի այդպիսով առանձին կոոպերատիվների մասնավոր շահերն ամբողջ հասարակության շահերին չհակասեն»*): Սպասելով, վոր իր այս առաջարկը վոմանք կարող են բուրժուական կոոպերատորների ծրագրներից մեկի կամ մյուսի հետ շփոթել, Էնգելսը նույն հոդվածում հայտարարում է, վոր «Շուլցե-Դելիչի և Լասսալի հետ այստեղ ընդհանուր վոչինչ չկա»:

X

Բոլշևիզմի հակառակորդները ծրագրած կերպով անբարեխիղճ մարդիկ են, վորոնք գիտակցաբար խեղաթյուրում են Մարքսի և Էնգելսի ուսմունքը՝ բանվորական մասսաներին այդ ճանապարհով լենինիզմից հեռու պահելու նպատակով: Գիտական սոցիալիզմի հիմնադիրների գործերից վերև բերած քաղվածքները կասկած չեն թողնում նրանում, վոր լենինիզմի և մարքսիզմի մեջ վորևէ տարբերություն կամ հակասություն գտնելու համար այդ ուսմունքներից յերկուսում էլ պետք է անգրագետ լինել կամ ծրագրած կերպով պետք է ստել ու կեղծել, վորովհետև կործանվող բուրժուազիայի իդեոլոգների համար գաղափարական պայքարի բոլոր այլ ուղիներն արդեն փակված են: Իր ժամանակին բուրժուական գիտնականները ձգնում էյին Մարքսին «ջախջախել» և «Կապիտալի» I հատորը վարկաբեկել, հայտարարելով, վոր Մարքսը նոր վոչինչ չի ասում, վոր «Կապիտալն» ամբողջապես պլագիատ է, գրական գողություն է, բուրժուական քաղաքատնտեսությունից վերցրած և հեգելյան դիալեկտիկայով համեմած թեորիաների ժողովածու յէ: Յեթե բոլշևիզմի հակառակորդների համար հնարավոր լիներ, յերևի նրանք էլ կգերադասեյին այդ զենքի օգնությանը դիմել, յերևի նրանք էլ Լենինին պլագիատ կատարելում կմեղադրեյին: Այդպես վարվելով, նրանք ավելի հետևողական կլինեյին, սակայն այդ զենքից օգտվելը նրանց համար չափազանց վտանգավոր է, վորովհետև պայքարի այդ միջոցին դիմողը հարկադրված կլիներ բանվորների աչքում Մարքսի վարկը բարձրացնել, այսինքն անուղղակի ճանապարհով հեղափոխության հաղթանակի գործին նպաստել: Բոլշեվիզմը պրոլետարիատի կոմունիստական շարժման, այսինքն՝ մեր դարի ա-

*) Энгельс. «Политич. завещание», 18.

մենաառաջավոր շարժման պաշտպանը, մարտիկն ու ղեկավարն է, և այդ պատճառով էլ նրա թշնամիները շահագրգռված են ամեն քայլափոխում կեղծել, ստել, ամեն ինչ խեղաթյուրել:

Լենինը 20-րդ դարի լավագույն մարքսիստն է, լավագույնը վոչ միայն այն իմաստով, վոր Մարքսի և Էնգելսի ուսմունքը վերակենդանացրեց, ռեֆորմիզմի և օպորտունիզմի կեղծիքներից այդ ուսմունքը փրկեց և նորից նրա հարազատ մեկնաբանությունը տվեց, այլև այն իմաստով, վոր Մարքսի և Էնգելսի ուսմունքում նա վոչ թե դոգմաներ, այլ հեղափոխական ուսմունք էր տեսնում և այդ հեղափոխական ուսմունքն ընդլայնեց ու լրացրեց մի նոր ու մեծ գլխով, դարաշրջան կազմող գլխով, վորը կապիտալիզմի զարգացման այժմյան վերջին շրջանի, իմպերիալիզմի շրջանի քաղաքատնտեսական և պատմափիլիսոփայական հանճարեղ վերլուծումն է պրոլետարիատի դասակարգային շահերի տեսակետից, հեղափոխական կոմունիզմի տեսակետից: Իր ուսմունքով Լենինը փրկեց մարքսիզմը դոգմատիզմի դատապարտվելու անխուսափելի վտանգից II Ինտերնացիոնալի և բոլոր տիրացուների կողմից: Սակայն Լենինի մեծությունը նրանով չի սահմանափակվում, վոր նա իմպերիալիզմի խորագույն և հանճարեղ թեորետիկոսն է պրոլետարիատի տեսակետից: Լենինը վոչ միայն պրոլետարական հեղափոխության հանճարեղ թեորետիկոսը, այլև պրոլետարական հեղափոխության նույնքան հանճարեղ պրակտիկ կազմակերպիչն ու ղեկավարն է, Կոմինտերնի հիմնադիրն է, վորի ղեկավարությամբ վոչ միայն Հոկտեմբերյան հեղափոխությունը կատարվեց և Խորհրդային իշխանությունը կազմակերպվեց, այլև պրոլետարիատի միջազգային կոմունիստական շարժման և ճնշված ու գաղութային ժողովուրդների ազատագրական շարժման մի նոր դարագլխի հիմք դրվեց:

Յեթե միայն ներկա հոդվածի նյութի շրջանակներով սահմանափակվենք, այդ դեպքում էլ կհամոզվենք, վոր հասարակական գիտությունների և կապիտալիզմի գոյության դեմ ուղղած ազատագրական շարժումների բնագավառներում իր ուսմունքով Լենինը միջազգային պրոլետարիատի և շահագործվող ամբողջ գյուղացիության, շահագործվող ամբողջ մարդկության առաջ մի բոլորովին նոր դարաշրջան, հեղափոխական պայքարի ամենալայն հորիզոններ բացեց: Կանգնած մնալով Մարքսի և Էնգելսի ուսմունքի հողի վրա և այդ ուսմունքը յելակետ ունենալով, Լենինը թեորետիկապես բացատրեց և Հոկտեմբերյան հեղափոխության պատմական մեծ փորձի վրա գործնականապես ցույց տվեց, թե միմյանց հետ բանվորն ու շահագործվող գյուղացին ինչ փոխհարաբերությունների մեջ պետք է մտնեն և իրենց ազատագրական շարժումներն ինչ յեղանակներով ու ինչ շրջանակներում պետք է մղեն, վորպեսզի կապիտալի լծից ազատագրվեն

թե կապիտալիստական յերկրներում և թե՛ հետամնաց ու գաղութային յերկրներում:

XI

Ինչպես վերև համոզվեցինք, այս մասնավոր խնդրում ևս մարքսիզմի ու լենինիզմի մեջև տարբերություն չկա: Խնդիրն արդեն այնքան պարզ է, վոր մեր այս միտքը մի ավելորդ անգամ ապացուցելու համար կարող ենք Լենինի գործերից վերցրած հետևյալ յերկու քաղվածքներով սահմանափակվել: 1920 թ. հուլիսին, Կոմինտերնի յերկրորդ կոնգրեսում, զեկուցելով ազգային և գաղութային խնդիրների հանձնաժողովի անունից, Լենինն ի միջի այլոց հետևյալն եր ասում. «Կարո՞ղ ենք արդյոք ճիշտ համարել այն տեսակետը, վոր ժողովրդական տնտեսության զարգացման կապիտալիստական փուլն անխուսափելի յե այն հետամնաց ժողովուրդների համար, վորոնք այժմ ազատագրվում են և վորոնց շարքերում այժմ, պատերազմից հետո, առաջադիմության ուղիով շարժում է նկատվում: Այդ հարցին մենք բացասական պատասխան տվինք: Յեթե հաղթանակով պսակված հեղափոխական պրոլետարիատը նրանց շարքերում սիստեմատիկ պրոպագանդա մղի, իսկ խորհրդային կառավարությունները իրենց տրամադրության ներքո գտնվող բոլոր միջոցներով նրանց ոգնության գան, այդ դեպքում ճիշտ չի լինի յենթադրել, վոր հետամնաց ժողովուրդների համար զարգացման կապիտալիստական փուլն անխուսափելի յե: Բոլոր գաղութներում և հետամնաց յերկրներում մենք վոչ միայն մարտիկների ինքնուրույն կադրեր, կուսակցական կազմակերպություններ պետք է ստեղծենք, վոչ միայն հողատեր գյուղացիական խորհուրդների կազմակերպման պրոպագանդ պիտի մղենք և խորհուրդներն այդ յերկրների նախկապիտալիստական պայմաններին հարմարեցնենք, այլև Կոմունիստական Ինտերնացիոնալը պետք է հաստատի ու թեորետիկապես հիմնավորի այն դրույթը, վոր ամենաառաջավոր յերկրների պրոլետարիատի ոգնությամբ հետամնաց յերկրները կարող են խորհրդային կարգերի անցնել. իսկ զարգացման վորոշ աստիճանների վրայով կոմունիզմի անցնել. խուսափելով զարգացման կապիտալիստական փուլից» (ընդգծումները մերն են)*):

Իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարում բոլորովին չի պահանջվում, վոր հետամնաց ժողովուրդներն անցնեն կապիտալիզմի բոլոր փուլերը: Առաջավոր յերկրների պրոլետարիատի ոգնությամբ նրանք կարող են անմիջապես իրենց յերկրներում խորհրդային կարգեր հաստատել և աստիճանաբար կոմունիզմի անցնել:—Առաջավոր յերկրների պրոլետարիատի և հետամնաց ժողովուրդների միջև ի՞նչ ձևի կապեր պետք է հաստատվեն,

*) Стенографич. отчет II конгресса Коммун. Интернационала, стр 119. կամ Լենինի հատ. 17, եջ 277.

վորպեսզի պատմական այդ մեծ խնդրի լուծումը հնարավոր դառնա: Ի պատասխան այդ հարցի, մի քաղվածք ենք առաջ բերում Կոմինտերնի նույն կոնգրեսի հողային խնդրին վերաբերյալ բանաձևից, վորը մեր գրականության մեջ այդ խնդրին նվիրված ամենակլասիկ գործերից մեկն է: Բանաձևի հեղինակը Լենինն է, այնպես վոր ներկա դեպքում գործ ունենք միաժամանակ Լենինի և ամբողջ Կոմինտերնի տեսակետի հետ: Ահա այդ բանաձևի սկիզբը.

«Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գործող քաղաքային և արդյունաբերական պրոլետարիատն է միայն, վոր գյուղի աշխատավոր մասսաներին կարող է փրկել կապիտալի և խոշոր կալվածքային հողատիրության լծից, փլուզումից և իմպերիալիստական պատերազմներից, վորոնք կրկին ու կրկին անխուսափելի յեն, քանի կապիտալիստական հասարակակարգը գոյություն ունի: Գյուղի աշխատավոր մասսաների փրկության միակ ճանապարհն է՝ միանալ կոմունիստական պրոլետարիատին և ամենայն նվիրվածությամբ պաշտպանել նրա հեղափոխական պայքարը, վորի նպատակը կալվածատերերի (խոշոր հողատերերի) և բուրժուազիայի լծի խորտակումն է:

«Մյուս կողմից, մարդկությունը կապիտալի ճնշումից և պատերազմներից ազատագրելու գործում արդյունաբերական բանվորներն իրենց համաշխարհային-պատմական կոչումը կատարել չեն կարող, յեթե նեղ-համքարական, նեղ-արհեստակցական շահերի շրջանակներում պարփակվեն և իրենց հոգսերն ինքնահավան կերպով սեփական դրության, յերբեմն՝ սովորական մեշչանական դրության՝ բարելավումով սահմանափակեն: Առաջավոր շատ յերկրներում հենց այդպես է վարվում «բանվորական արիստոկրատիան», վորը II Ինտերնացիոնալի այսպես կոչված սոցիալիստական կուսակցությունների հիմքն է և բանվորության այն խավերից է բաղկացած, վորոնք գործնականում սոցիալիզմի չարագույն թշնամիները, նրա դավաճաններն են, մեշչան շովինիստներ են և բանվորական շարժման մեջ բուրժուազիայի ագենտներն են: Իբրև իրոք հեղափոխական, իրոք սոցիալիստորեն գործող դասակարգ պրոլետարիատը միայն այն դեպքում է հանդես գալիս, յերբ բոլոր աշխատավորների ու շահագործվողների ավանգարդում է կանգնում ու գործում, ղեկավարելով շահագործողների տապալմանը նվիրված նրանց պայքարը, իսկ այդ անհնարին է, յեթե գյուղն ել դասակարգային պայքար չի մտցնվում, յեթե գյուղի աշխատավոր մասսաները քաղաքի պրոլետարիատի կոմունիստական կուսակցության շուրջը չեն կազմակերպվում, յեթե գյուղի աշխատավորը քաղաքի բանվորից չի դաստիարակվում»*):

*) Стенограф. Отчет, стр. 607.

XII

Աշխարհի ամենահետամնաց յերկրներում միջազգային բուրժուազիան ամենաբարձր տիպի կապիտալիստական արտադրություն է ստեղծում, ոգտագործելով այն կատարելագործված տեխնիկան ու բարձր զարգացման հասած բնական ու մաթեմատիկական գիտությունները, վորոնց առաջացման և հասունացման պրոցեսները բուրժուազիայից չորս դար ժամանակ և յերկարատև ազատագրական—հեղափոխական շարժումներ, հերոսական պայքար ու մեծ զոհողություններ են պահանջել: Իր հերթին, կապիտալի ծնունդը պատմական զարգացման մի այլ յերկարատև շրջան է յենթադրում, յերբ ավատական ու ճորտատիրական կարգերում զարգացած յեռադաշտի և համքարական արհեստների տեխնիկան ու կուլտուրան առևտրական կապիտալի, կապիտալիստական տնայնագործության, կոոպերատիվ և մանուֆակտուրային կապիտալիստական արտադրության առաջացման նախադրյալներն ու անհրաժեշտ պայմաններն ստեղծեցին:

Ամերիկայի կամ Յեվրոպայի իմպերիալիստական բուրժուազիան ընդունակ է յերկաթուղի կառուցել, գործարաններ ու ելեկտրոկայաններ հիմնել և ամենակատարելագործված մեքենաներով նավթ արտադրել այնպիսի յերկրներում, վորոնք վոչ միայն մեքենա չեն տեսել, վոչ միայն կապիտալիստական կոոպերատիվ ու մանուֆակտուրային արտադրության մասին գաղափար չունեն, այլ վորոնք դեռ այսոր էլ իրենց պատմական գոյության մինչ—ֆեոդալական շրջանն են ապրում, վորոնց զարգացման բարձրագույն աստիճանը նահապետական կամ մայրապետական շրջանները՝ պատրիարխատը կամ մատրիարխատն են: Այդ յերկրներից ամեն մեկի գրավումը իմպերիալիստական պետությունների կողմից սովորաբար նրանց բնակչության անտեսական քայքայումով, սեփականազրկությամբ և յերբեմն նույնիսկ նրանց մի խոշոր տոկոսի ֆիզիքական բնաջնջումով է ուղեկցվում: Բուրժուազիայի ստորաքարշ և փարիսեցի գիտնականներն «ապացուցում են», վոր հետամնաց յերկրների ժողովուրդները կուլտուրական զարգացման ընդհանրապես անընդունակ վայրենիներ են և վոր բուրժուազիան նրանց շարքերում կուլտուրա տարածելու պատմական կոչումն ունի:

Հետամնաց յերկրներում կապիտալի կուլտուրական գործունեության հենց առաջին քայլը նրանով է արտահայտվում, վոր այդ յերկրների շահագործող դասակարգերի հետ բուրժուազիան դաշինք է կնքում և նրանց ոգնությամբ ժողովրդական մասսաներին զրկում է հողից, նրանց նոր հարկերով է ծանրաբեռնում և քաղաքականապես ճնշում՝ ճորտացնում ու ստրկացնում է նույնիսկ այնտեղ, վորտեղ մինչ այդ ճորտությունը և ստրկությունը բացակայում են կամ դեռ բոլորովին սաղմային դրության մեջ են գտնվում: Բնական է, վոր բուրժուական այդ «կուլտուրայից» «վայրենիները» հրաժար-

վելով հրաժարվում են, և ահա այստեղ է, վոր բուրժուազիան նրանց «դաստիարակման» գործին է ձեռնարկում՝ նրանց վրա իր կուլտուրան տարածելու համար հրի ու սրի ոգնությանն է դիմում: Կապիտալի իմպերիալիստական տարածումը III Ինտերնացիոնալը պատմականորեն անհրաժեշտ է համարում, վորովհետև ըստ նրա իդեոլոգների ուսմունքի՝ համաշխարհային մասշտաբով զարգացած կապիտալիզմը հաջող պրոլետարական հեղափոխության և սոցիալիզմի պատմական նախապայմանն է:

Վերև տեսանք, վոր Մարքսը և Ենգելսը ուղղակի հակառակ տեսակետի վրա եյին կանգնած, վոր նույնիսկ առանձին յերկրների նկատմամբ կապիտալիզմի զարգացման այն բարձրագույն աստիճանը, վոր տրամաբանորեն հնարավոր է յերևակայել, գործնականում նրանք անիրականալի եյին համարում: Մարքսի և Ենգելսի ուսմունքը լիովին համապատասխանում է Լենինի այն դրությանը, վոր «ամենաառաջավոր յերկրների պրոլետարիատի ոգնությամբ հետամնաց յերկրները կարող են խորհրդային կարգերի անցնել, իսկ զարգացման վորոշ աստիճանների վրայով կոմունիզմի անցնել, խուսափելով զարգացման կապիտալիստական փուլից»: Խոշոր մեքենայական արտադրության տարածման այս յեղանակը կապիտալիստ դասակարգի ձեռքով և ուրեմն իր կապիտալիստական ձևով դեռ վոչ վոք չի ժխտել, չեն ժխտել նաև III Ինտերնացիոնալի իդեոլոգները, վորոնք կապիտալիզմի տարածման այդ յեղանակը հնարավոր և անհրաժեշտ են համարում, բուրժուազիայից յերբեմն միայն գթասրտություն հայցելով այն առթիվ, վոր նրա գաղութային քաղաքականությունը չափից դուրս բարբարոս արտահայտություն է ընդունում: Նրանք պահանջում են նվաճողական քաղաքականություն, առաջարկելով հետամնաց յերկրների նվաճումը կուլտուրական միջոցներով կատարել:

III Ինտերնացիոնալի և Կոմինտերնի տարբերությունը ներկա դեպքում այն է, վոր III Ինտերնացիոնալը հնարավոր է համարում խոշոր արտադրության տարածումն ամբողջ աշխարհի վրա, ինչքան վոր այդ արտադրությունը կապիտալիստական յեղանակով է կազմակերպված: Խոշոր կապիտալիստական արտադրության տարածման համար վոչ միջազգային բուրժուազիան և վոչ III Ինտերնացիոնալը հետամնաց ժողովուրդներից «հասունացման» վկայական չեն պահանջում: Յեվ նախնադարի համայնական տնտեսությունից և՛ նահապետական ու ֆեոդալական կարգերից հնարավոր է համարվում անմիջապես բարձր կապիտալիստական տնտեսության անցնել, յենթադրելով, վոր այդ անցումը առաջավոր բուրժուական յերկրների կապիտալիստ դասակարգի ձեռքով ու միջոցներով է կատարվում:

Անցման այդ հնարավորությունը ժխտել անկարելի յե, վորովհետև իմպերիալիզմի պրակտիկան մեջ այդ մասին շատ հարուստ նյութ, բազմաթիվ ապացույցներ է տալիս: Ի՞նչ են առաջարկում Մարքսը, Ենգելսը, Լենինը և

ամբողջ Կոմինտերնը:—Այն, ինչ որ հնարավոր է բուրժուազիայի համար, չի կարող անհնարին լինել պրոլետարիատի համար, երբ նա իր ձեռքը կվերցնի տվյալ երկրի թե՛ արտադրության միջոցները և թե՛ իշխանությունը—ահա այդ առաջարկի էությունը: Եթե բուրժուազիան ընդունակ է հետամնաց երկրներում խոշոր մեքենայական արտադրության հիմնել՝ հակառակ նրանց ժողովուրդների կամքին և այդ ժողովուրդների ճնշող մեծամասնության դեմ կռվելով՝ իր դիկտատուրան հաստատած պրոլետարիատի համար նույնը կատարել շատ ավելի հեշտ կլինի, որովհետև նա կպարծի համապատասխան ժողովուրդների ճնշող մեծամասնության հետ ձեռք ձեռքի տված, որովհետև սոցիալիստական տնտեսության ու սոցիալիստական կուլտուրայի տարածումը որևէ ժողովրդի աշխատավոր մասսաների նկատմամբ բռնի ուժի հետ կապել չի կարող:

Եթե II Ինտերնացիոնալի թեորետիկոսները հետևողական լինեին, «հասունացման» նույն թեորիան նրանք պետք է հրապարակ հանեին նաև այն դեպքում, երբ խնդիրը կապիտալիստական խոշոր արտադրության տարածման է վերաբերում: Սակայն, հասկանալի պատճառներով, նրանք այսպես չեն վարվում, որովհետև նրանց նորագույն թեորիաները գիտության հետ որևէ առնչություն չունեն, կյանքի պրակտիկային իսպառ չեն համապատասխանում և թխած են միայն մի նպատակով՝ բուրժուազիայի իմպերիալիստական քաղաքականությունն արդարացնելու և Կոմինտերնի ու Խորհրդային Միության դեմ կռվելու նպատակով: II Ինտերնացիոնալի այդ նոր թեորիաները երբեք էլ գիտական հիմնավորում տանել չեն կարող, որովհետև արտադրողական ուժերի զարգացման ու աճման տենդենցներին նրանք լիովին հակասում են:

II Ինտերնացիոնալի և միջազգային բուրժուազիայի տեսակետն այն մասին, որ կապիտալիզմը դեռ կենսունակ է և սոցիալիզմի համար դեռ հասունացած չէ, որ նրա համապատասխան հասունացման համար պահանջվում է բոլոր երկրներում և տնտեսության բոլոր ճյուղերում անպայմանորեն խոշոր կապիտալիստական արտադրության հասնել, այդ տեսակետը միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից և եվրոպական պրոլետարիատի մի շարք հեղափոխական շարժումներից հետո է առաջացել, իբրև կոմունիզմի դեմ ուղղած մի հակաթույն, իբրև II Ինտերնացիոնալի կատարած դավաճանության արդարացում: Հօգուտ կապիտալի տիրապետության ստեղծած այդ թեորիան ոչ թե միջազգային բուրժուազիայի զորության արտահայտություն, այլ նրա անօգնական վիճակի արդյունք է: Միջազգային բուրժուազիան գաղափարականապես վաղուց արդեն սնանկացել է, սնանկացել է այն աստիճան, որ կոմունիզմի դեմ կռվելու համար սեփական գաղափարների պահեստից օգտվել այլևս անզոր է: Եվ ինչքան որ միևնույն ժամա-

նակ կոմունիզմը միջազգային մասշտաբով մեծ նվաճումներ է կատարում, նրա դեմ կռվելու համար բուրժուազիան հարկադրված է մարքսիզմը կեղծել և այդ կեղծած մարքսիզմն իբրև «իսկական» մարքսիզմ հայտարարելով՝ բանվորության շարքերում այն տարածել: Ահա այստեղ է, որ II Ինտերնացիոնալի ռենեգատ ղեկավարները բուրժուազիային օգնության են հասնում, նրան անփոխարինելի ծառայություն են մատուցում:

Ըստ Լենինի ուսմունքի, իմպերիալիզմը կապիտալիզմի գոյության վերջին շրջանը՝ նրա քայքայման ու կործանման շրջանն է: Երբ պրոլետարական հեղափոխության դեմ կռվելու համար սեփական գաղափարների պահեստում համապատասխան զենք բուրժուազիան չի գտնում և ճարահատյալ՝ այդ զենքը պրոլետարիատի իդեոլոգիայում է փնտրում, դրանով միայն իր սնանկացման փաստը և Մարքսի ու Լենինի ուսմունքի ճշտությունն է հաստատում: Բուրժուազիայի նման մի հզոր ու կուլտուրական դասակարգ, որն այնքան հարուստ գիտական ու փիլիսոփայական գրականություն ունի, իսկապես որ անել կացության մեջ պետք է ընկնի, որպեսզի կոմունիզմի դեմ կռվելու համար մարքսիզմի օգնությանը դիմի՝ թեև կեղծած մարքսիզմի, լիբերալիզմի վերածած մարքսիզմի օգնությանը: Բուրժուազիայի և II Ինտերնացիոնալի այդ նոր թեորիան, որը կապիտալիզմի «հասունացման» աստիճանին է վերաբերում, ջախջախվում է նախ Մարքսի, Էնգելսի և Լենինի ուսմունքով, երկրորդ՝ Հոկտեմբերյան հեղափոխության և Խորհրդային Միության նվաճումներով և երրորդ՝ իմպերիալիստական կապիտալի պրակտիկայով, զարգացած կապիտալիզմի տարածումով հետամնաց երկրների վրա:

XIII

Եղբայրական դաշինքի և համերաշխության այն հարաբերությունը, որը Խորհրդային Միության բանվորի և գյուղացու միջև է ստեղծվել և որն արդեն իր պատմական նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը լիովին ապացուցել է, մեր բանվորի և գյուղացու միջև ստեղծված այդ հարաբերությունը պարտադիր է նույնիսկ Անգլիայի նման մի առաջավոր կապիտալիստական երկրի պրոլետարիատի համար, պարտադիր է միջազգային ամբողջ պրոլետարիատի համար: Եթե իբրև օրինակ Անգլիան վերցնենք, որը գյուղացիություն համարյա թե չունի, կտեսնենք, որ իր դասակարգային հեղափոխությունը կատարելուց և Անգլիայում իր դիկտատուրան հաստատելուց հետո այդ երկրի պրոլետարիատը ստիպված կլինի Անգլիայի այժմյան գաղութների աշխատավոր գյուղացիության հետ նույն բարեկամական հարաբերության մեջ մտնել, որը մեր բանվորի ու գյուղացու համար այնքան բնորոշ են և որի նպատակահարմարությունը պրոլետարական դիկտատուրայի հաստատման համար պատմականորեն արդեն արդարացված է:

Գաղութային բուրժուազիան արդեն մի այնքան խոշոր ուժ է ներկայացնում, վոր պրոլետարական հեղափոխությանը նրա կողմից սպառնացող վտանգը վոչ մի դեպքում թերագնահատել չի կարելի։ Յեթե անգլիական պրոլետարիատն այնքան անհեռատես գտնվի, վոր իր հեղափոխության ընթացքում և նրա հաղթության յերկրորդ որը Անգլիայի այժմյան գաղութների վիճակով չզբաղվի, այդ յերկրների բանվորներին ու գյուղացիներին չկազմակերպի, կապիտալի դեմ մղվող կռվում նրանց ամեն կերպ չաջակցի և այդ յերկրներում բանվորա-գյուղացիական իշխանություն չհաստատի ու այդ իշխանության հետ յեղբայրական դաշինք չկնքի, դրանով իր դիկտատուրայի գոյությունն ամենամեծ վտանգի կենթարկի և՛ քաղաքականապես և՛ տնտեսապես, մոտավորապես նույն վտանգին, վորին յենթակա կլիներ պրոլետարական իշխանությունը մեր յերկրում՝ այդ քաղաքականությանը չհետևելու դեպքում։ Անգլիան ամենաառաջավոր կապիտալիստական յերկրներից է, սակայն առանց գաղութների մի տնտեսական ամբողջություն չի ներկայացնում։ Իր հեղափոխությունից հետո Անգլիայի հաղթական պրոլետարիատը շահագրգռված կլինի գաղութների հետ սերտ տնտեսական կապեր պահպանել, վորովհետև այլ կերպ նա կզրկվի թե՛ գյուղատնտեսական մթերքներից քաղաքների բնակչության սպառման համար և թե՛ հում նյութից իր գործարանային արդյունաբերության համար։

Միջազգային մասշտաբով վերցրած, առաջավոր բոլոր կապիտալիստական յերկրների պրոլետարիատի և գաղութային ու հետամնաց յերկրների աշխատավոր գյուղացիության միջև էլ, հիշյալ յերկրներում պրոլետարական հեղափոխություն կատարվելուց հետո, կրկին նույն յեղբայրական կապերը պետք է հաստատվեն, վորոնց շնորհիվ մեր բանվորն ու գյուղացին այնքան մեծ նվաճումներ կատարեցին։ Այլ կերպ պրոլետարական իշխանության շենքը ավազի վրա կառուցված կլինի, վորովհետև առաջավոր կապիտալիստական յերկրների բուրժուազիային հնարավորություն կտրվի տնտեսապես հետամնաց յերկրների իշխող դասակարգերի հետ միասին մի ընդհանուր հակակոմունիստական ճակատ կազմակերպել, հետամնաց յերկրներում կապիտալիզմի վերելքին զարկ տալ և այդ յերկրները հակապրոլետարական շարժման բազա դարձնել։ Հետամնաց յերկրների հարյուր միլիոնավոր գյուղացիությունը, պրոլետարական հեղափոխության գործի հաջողությանը նպաստելու փոխարեն, միջազգային բուրժուազիայի և այդ յերկրների ֆեոդալական կամ կիսաֆեոդալական կառավարությունների կողմից կոմունիզմի դեմ կօգտագործվի։

Հոկտեմբերյան հեղափոխության և Խորհրդային իշխանության նվաճումներից հետո կապիտալիզմի հասունացումը միայն այն դասակարգերի կողմից է ժխտվում, վորոնք վոչ թե տվյալ խնդրի տեսական լուսաբանությանն են

ձգտում, այլ պրոլետարիատի գիտակցությունը մթագնելով՝ խորհրդային կարգերի վերացման գործն են կազմակերպում։ Բուրժուազիան վաղուց արդեն գաղափարականապես այնքան է սնանկացել, վոր նման խոշոր սոցիալական խնդիրների շուրջը գիտական, սկզբունքային բանակռիվ կազմակերպել, անզոր է։ Յեվ տարօրինակ էլ կլիներ, յեթե խեղդվողը՝ փրկության միջոցների ձեռնարկելու փոխարեն, սկսեր այն մասին փիլիսոփայել, թե ծանրության որենքն իրականությանն ինչ աստիճան է համապատասխանում։

Բուրժուազիայի դրությունը թեորետիկապես փրկելու պարտականությունը II Ինտերնացիոնալն իր վրա յե վերցրել։ Սակայն, ինչպես մինչև այժմ, այսուհետև էլ նրա բոլոր ջանքերն այս ասպարեզում ապարդյուն են անցնելու։ Գիտականորեն հիմնավորել ու ձևակերպել Մարքսին վերագրվող այդ թեորիան, վորը Մարքսի ուսմունքի կեղծումն է, II Ինտերնացիոնալին ընդհանրապես հաջողվել չի կարող, վորովհետև Մարքսի ուսմունքի և այն մեկնաբանության միջև, վորը նրան II Ինտերնացիոնալն է տալիս, նույնքան նմանություն կա, ինչքան, որինակի համար, հին Կտակարանի և դարվինիզմի միջև։ II Ինտերնացիոնալին և միջազգային բուրժուազիային այդ գիտական ֆալսիֆիկացիան հաջողվել չի կարող այն պարզ պատճառով, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը «վոչ միայն խոշոր գործնական հաջողություն, այլ միաժամանակ սկզբունքի հաղթություն է» և վոր Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում վոչ միայն բուրժուազիան բանվոր դասակարգի կողմից ջախջախվեց, այլև «բուրժուազիայի քաղաքատնտեսությունը բանվոր դասակարգի քաղաքատնտեսությունից պարտություն կրեց»։

Այս վերջին յերկու արտահայտությունները Մարքսին են պատկանում։ Հեղափոխական Մարքսն այսպես էր բնորոշում Անգլիայի բանվորության առաջին խոշոր նվաճումը՝ 10-ժամյա բանվորական որվա որենքը*)։ Ի՞նչ կասկած, վոր յեթե կոմունիզմի մեծ ուսուցիչը կենդանի լիներ, Հոկտեմբերյան հեղափոխության պատմական մեծ նվաճումներում նա միայն «սկզբունքի հաղթություն», միայն «բուրժուազիայի քաղաքատնտեսության պարտություն» չէր տեսնի։ Յեթե Մարքսը և Ենգելսը կենդանի լինեյին, Հոկտեմբերյան հեղափոխության նկատմամբ նրանք չեյին սահմանափակվի նաև այն խանդավառ բնորոշումով, վորին նրանց կողմից Փարիզի Կոմունան արժանացավ։ Բավական է ծանոթանալ հենց միայն Փարիզի Կոմունային նվիրված նրանց հոդվածներին ու կոչերին, համոզվելու համար, վոր գիտական սոցիալիզմի հանճարեղ հիմնադիրները, Կոմինտերնի և Լենինի հետ միասին, Հոկտեմբերյան հեղափոխությունն իբրև իմպերիալիզմի շրջանի առաջին պրոլետարական հեղափոխությունը կհայտարարեյին և միջազգային պրոլետարիատին կոչ կանեյին՝ պաշտպանել Խորհուրդների Միությունը և մեր պրոլետա-

*) Տես «Учредительный Адрес» I Интернационала.

րիատի օրինակին հետևելով՝ ամենուրեք գյուղացիության հետ դաշինք կնքել, կապիտալի իշխանությունը վերացնել և բուրժուական ամբողջ աշխարհում բանվոր դասակարգի դիկտատուրան հաստատել:

Իմպերիալիզմի շրջանում, այն էլ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, II Ինտերնացիոնալը գտնում է, վոր կապիտալիստական հասարակակարգը դեռ կենսունակ է, վոր կապիտալիստ դասակարգը դեռ անսպառ ժամանակով գլխավորելու յե մարդկային ամբողջ հասարակության տնտեսական ու կուլտուրական զարգացումը, վոր արտադրողական ուժերի աճումն այսուհետև էլ դեռ անսպառ ժամանակով կապիտալիզմի շրջանակներում է կատարվելու: Այն ինչ արդեն ակցիոներական կապիտալում Մարքսը կապիտալիստական մասնավոր սեփականության ժխտումն էր տեսնում և դեռ 1871 թ., Փարիզի Կոմունային նվիրած իր հռչակավոր հոդվածում, գտնում էր, վոր գերմանական ու ֆրանսիական զորքերի միացումը՝ Կոմունայի դեմ կռվելու համար, «վոչ թե այն է ապացուցում, վոր նոր՝ իր համար ճանապարհ բացող հասարակությունը վերջնականապես պարտված է, ինչպես Բիսմարկն էր կարծում, այլ հին՝ բուրժուական հասարակության կատարյալ կազմալուծումն է ապացուցում: Փարիզի Կոմունան մի քաղաքի նեղ շրջանակներում էր գործում և ընդամենը յերկու և կես ամսյա գոյություն ունեցավ: Նման պայմաններում ֆրանսիական ամբողջ բուրժուազիային սեփականությունից ու իշխանությունից զրկել նա ի հարկե չէր կարող, ուստի և նա չէր կարող խոշոր շինարարական գործեր կատարել: Սակայն և այնպես Մարքսը գտնում է, վոր Կոմունան «նոր հասարակակարգի սքանչելի նախապաշակն է»:

II Ինտերնացիոնալի իդեոլոգներին հավատ ընծայողները նրանց գրություններից միայն այն յեզրակացությունը կարող են հանել, վոր մեր բանվորության և գյուղացիության, ինչպես և միջազգային պրոլետարիատի ու շահագործվող ամբողջ մարդկության համար Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները շատ ավելի պակաս արժեք են ներկայացնում, քան Փարիզի Կոմունայի նվաճումները և նույնիսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից 70 տարի առաջ կատարված՝ 10-ժամյա բանվորական օրվա նվաճումն Անգլիայում: II Ինտերնացիոնալի համապատասխան գրականությունը վոչընչով չի տարբերվում այն փողոցային գրականությունից, վորով իր ժամանակին յեվրոպական բուրժուազիան կռվում էր Փարիզի Կոմունայի և նրա հերոս պաշտպանների դեմ: Մարքսիզմի ժխտում, պարզ հակահեղափոխական աշխատանք և գրական բամբասանք—ահա ինչ է տալիս այդ ասպարեզում II Ինտերնացիոնալը: Ինչ վերաբերում է խորհրդային կարգերի գնահատման անալիզին II Ինտերնացիոնալի կողմից և նրա վերաբերմունքին դեպի պրոլետարական հեղափոխությունն ընդհանրապես, այդ խնդիրների քննությունից II Ինտերնացիոնալն այնպիսի յեզրակացության է հանգում, վորին հետևել՝ նշանակում է պրոլետարական հեղափոխությունը չէ թե մի քանի հարյուր տարով հետաձգել, այլ կոմունիզմը պրոլետարիատի ազատագրական պայքարի ծրագրից ընդհանրապես դուրս ձգել:

Յեվ այս ամենը կատարվում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, վորը պրոլետարիատի առաջին հաղթական հեղափոխությունն է, այն էլ մի հեղափոխություն, վորն իր ալիքներով վոչ միայն Խորհրդային Միության նման մի մեծ յերկիր ընդգրկեց, այլ և ամբողջ աշխարհի բանվորական և գյուղացիական շարժմանը զորեղ զարկ տվեց: Այս ամենն իմպերիալիզմի դարում է կատարվում, յերբ կապիտալիզմի զարգացման ներկա բարձր աստիճանը և համաշխարհային մասշտաբով առեղծված հասարակական հարաբերությունները սոցիալիզմը վոչ միայն հնարավոր, այլ և անհրաժեշտ են դարձնում, յերբ Խորհրդային Միությունն, իբրև միակ պրոլետարական պետություն, միջազգային պրոլետարիատի և շահագործվող ամբողջ մարդկության ազատագրական շարժման գաղափարական ու կազմակերպչական կենտրոնի յե վերածվում և յերբ Փարիզի Կոմունայի դրոշակը Մոսկվա յե տեղափոխվում, նրա պաշտպանությունը մեր պրոլետարական կազմակերպություններին, մեր Խորհրդային իշխանությանն է հանձնվում:

Իմպերիալիզմի շրջանի անալիզը Լենինին այն յեզրակացության է բերում, վոր կապիտալիզմն սկսել է փտել և իր գոյությունը միայն նոր միլիոնավոր բանվորների ու գյուղացիների բնաջնջման գնով, միայն նոր պատերազմների միջոցով կարող է պահպանել: Ըստ Լենինի ուսմունքի, կապիտալիզմն ինքն իրեն արդեն ապրել է, և մարդկային հասարակության տնտեսական ու կուլտուրական վերելքն այսուհետև միայն պրոլետարական հեղափոխության միջոցով, միայն կոմունիզմի ուղիով և բանվորի ու գյուղացու հեղափոխական դաշինքի զորությամբ կարող է կատարվել: II Ինտերնացիոնալի և Կոմինտերնի միջև մղվող վեճի ամենաէական, կենտրոնական խնդիրը հենց այստեղ է փնտրելու: Ով ընդունում է, վոր իմպերիալիզմը կապիտալիզմի քայքայման ու մահվան փուլն է, ով ընդունում է, վոր կյանքի բոլոր բնագավառներում բուրժուազիայի միակ ժառանգը պրոլետարիատն է և վոր պրոլետարական հեղափոխությունը միայն սոցիալիստական կարող է լինել, ով միաժամանակ շահագործման թշնամի յե, նա չի կարող չընդունել նաև Մարքսի, Ենգելսի և Լենինի ուսմունքը պրոլետարական հեղափոխության մասին: Կամ անվերջ պատերազմներ, արտադրողական ուժերի, կուլտուրական արժեքների և տասնյակ միլիոնավոր մարդկային կյանքերի վոչնչացում, կամ՝ միջազգային բանվորության միասնականություն, բանվորի և գյուղացու յեղբայրական հեղափոխական դաշինք և կապիտալիզմի տապալում:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ
ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Գիտական սոցիալիզմի հիմնադիրների գործերից և վոչ մեկը դեռ ևս իր թարմությունը չի կորցրել: Նրանք բոլորը հանճարեղ մտքերի մի մի անսպառ պահեստ, գիտության և հեղափոխական վոգևորման անսահման հարուստ աղբյուր են ներկայացնում և քանի դեռ դասակարգերը գոյություն ունեն՝ պրոլետարիատի ազատագրական շարժման թեորիայի ու պրակտիկայի բնագավառներում նրա համար միշտ էլ անփոխարինելի ղեկավար ույժ են հանդիսանալու: Մեր ապրած միջազգային պայմանները, մեր յերկրի տնտեսական կառուցվածքն ու դասակարգային հարաբերությունները և հեղափոխական կոմունիզմի ու հակահեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միջև մղվող պայքարն Մարքսի և Ենգելսի գործերի ուսումնասիրությունը հրամայողական պահանջ են դարձնում: Հատկապես, ինչ Ենգելսի ներկա գործին է վերաբերում, մեզ համար նա չափազանց խոշոր այժմեականություն է ստանում շնորհիվ այն մեծ դերի, վորը մեր պրոլետարական հեղափոխության մեջ գյուղացիությանն է վիճակված:

Ենգելսի այս գործի հրատարակությունը չափազանց կարևոր է վոչ միայն այն պատճառով, վոր նրա ուսումնասիրությամբ կարելի յե գյուղացիական խնդրում միանգամայն պարզ ու հետևողական կոմունիստական տեսակետ ձեռք բերել, այլ և այն պատճառով, վոր բավական է նրան հարևանցիորեն ծանոթանալ, համոզվելու համար՝ թե ինչքան ճշմարտություն կա միջազգային կապիտալի և II Ինտերնացիոնալի լիդերների այն հավաստիացումներում, իբր թե լենինիզմը մարքսիզմի ժխտումն է:

Ինչպես Մարքսի և Ենգելսի բոլոր մյուս գործերում, այստեղ էլ այն մտքին ենք հանդիպում, վոր «քաղաքական իշխանության նվաճումը սոցիալիստական կուսակցության կողմից մոտ ապագայի գործ է դարձել»: Սակայն, շարունակում է Ենգելսը, այդ նպատակին իրականացնելու համար մեր կուսակցությունը «պետք է նախ քաղաքից գյուղ գնա, պետք է գյուղում ուժեղանա»: Ենգելսը անհանդուրժելի յե գտնում, վոր պրոլետարիատի կուսակցությունը «կործանման դատապարտած գյուղացուն հանդիստ կերպով նրա կեղծ պաշտպանների ձեռքում թողնի»: Իսկ Ֆրանսիայի նկատմամբ չեշտակի հայտա-

բարում է, որ «մանր գյուղացու կամքին հակառակ որևէ հաստատուն քաղաքական հեղաշրջում այնտեղ անհնարին է»:

Բավական է Էնգելսի հենց այս մի քանի դրույթներին ծանոթանալ, միաժամանակ բավական է տարրական բարեխղճությամբ օժտված լինել՝ առանց տատանվելու վճռելու համար, թե մարքսիզմից ով է շեղվել, պրոլետարիատի դասակարգային շահերին ով է դավաճանել—օպորտյունիստական և ռեֆորմիստական սոցիալ-դեմոկրատիան թե՞ կոմինտերնը: Էնգելսի մեզ զբաղեցնող գործից նույն նպատակին նվիրված մեծաթիվ այլ ապացույցներ կարելի յեր առաջ բերել, սակայն, հասկանալի պատճառներով, այստեղ մենք միայն մի քանի ամենակարևոր դրույթների վրա կանգ կառնենք:

Աշխատավոր գյուղացիության մասնակցությունը պրոլետարիատի ազատագրական շարժմանն Էնգելսն այնքան կարևոր է համարում, վոր նույն իսկ Ֆրանսիայի նման առաջավոր կապիտալիստական մի յերկրում ամեն մի «հաստատուն քաղաքական հեղաշրջում» անհնարին է համարում, յեթե այդ հեղաշրջումը մանր գյուղացու կամքին հակառակ է կատարվում: Բանվոր դասակարգը պետք է ձեռք առնի ամեն մի հնարավոր միջոց՝ գյուղացուն իր կողմը գրավելու համար և նա այդպես է վարվելու, ասում է Էնգելսը, նկատի ունենալով վոչ միայն աշխատավոր գյուղացիության շահը, այլ և իր կուսակցության անմիջական շահը: Չնայած այս մեծ դերին, վորը պրոլետարական շարժման մեջ վիճակված է մանր գյուղացիությանը, սոցիալիստական կուսակցություններին Էնգելսն զգուշացնում է՝ անհատական սեփականության և անհատական արտադրությունը պահպանելու մասին գյուղացիներին վորևէ խոստումներ տալ: Գյուղացիների շարքերում մենք չպետք է «նույն իսկ հույսի ճառագայթ առաջացնենք», վորպես թե նրա մանր սեփականության պաշտպանությունը յերկար ժամանակի համար մեր ծրագրի մեջ է մտնում:

Կոմունիզմի դավաճանները Մարքսի և Էնգելսի գործերից սովորաբար այս խնդրին նվիրած քաղվածքներ են կատարում, թաքցնելով ընթերցողից համապատասխան գործի բովանդակությունն իր ամբողջությամբ: Մարքսի և Էնգելսի գործերից շատ հեշտ է մի քանի տասնյակ այս կարգի քաղվածքներ կատարել և խնդրին անտեղյակ, Մարքսի ու Էնգելսի գործերին անծանոթ մարդկանց համոզել նրանում, վոր ըստ մեր մեծ ուսուցիչների ուսմունքի՝ պրոլետարական հեղափոխության մասին խոսք լինել չի կարող, քանի դեռ արհեստավորական կամ գյուղացիական մանր սեփականություն գոյություն ունի: Այժմ դժվար է մի գրագետ հակահեղափոխական, մի տիրացու գտնել, վորոնք Մարքսին ու Էնգելսին վերագրվող՝ այսպես կոչվող «հասունացման» թեորիայի կողմնակիցներ չլինեյին: Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական չէ և նրա հետևանքով վորևէ սոցիալիստական կարգեր կազմա-

կերպելն անհնարին է, պնդում են հակահեղափոխականները, վորովհետև մինչև հեղափոխությունը կապիտալիզմը մեզ մոտ տնտեսության բոլոր ճյուղերը դեռ չէր ընդգրկել, վորովհետև մեզ մոտ դեռ մանր սեփականություն գոյություն ունի կամ—ինչպես հակահեղափոխականներն են արտահայտվում—կապիտալիզմը սոցիալիզմի համար դեռ չի «հասունացել»:

Այդ մասին ի՞նչ է ասում Էնգելսը:

Իրենց գործերից և վոչ մեկում Մարքսը և Էնգելսը յերբեք այն տեսակետը չեն պաշտպանել, վոր պրոլետարական հեղափոխությունը չի կարող առաջանալ և հաղթությամբ պսակվել, յեթե տվյալ յերկրում մանր սեփականությունը դեռ չի վերացված: Ընթերցողի ուշադրությանն առաջարկվող ներկա գործում Էնգելսն այդ մասին այնքան պարզ է արտահայտվում, վոր նրա միտքը խեղաթյուրել միայն կատարյալ ապուշները կամ քաղաքական խաբեբաները կարող են: «Ինչքան ավելի մեծ կլինի այն գյուղացիների թիվը, վորոնց պրոլետարիզացիայից կփրկենք և մեր կողմը կգրավենք դեռ իբրև գյուղացիների, այնքան հասարակական հեղաշրջումն ավելի արագ ու ավելի հեշտ կկատարվի», գրում է Էնգելսը: «Մեզ համար օգտավետ չէր լինի հեղաշրջում կատարելու համար մինչև այն ժամանակ սպասել, յերբ կապիտալիստական արտադրությունն ամենուրեք իր զարգացման գագաթնակետին կհասնի, յերբ վերջին մանր արհեստավորը և վերջին մանր գյուղացին էլ խոշոր կապիտալիստական արտադրությանը զոհ կգնան»:—Գրագետ մարդկանց համար այստեղ վորևէ մեկնաբանության կարիք չկա:

Ինչպես տեսնում ենք, հակահեղափոխության կողմից քարոզած «հասունացումն» Էնգելսին վերագրելն անհնարին է:

Սոցիալիստական կուսակցությունը չի կարող մանր գյուղացու պաշտպան չլինել, գրում է Էնգելսը, սակայն բացատրելով նրան, վոր նրա տունն ու տեղը պահպանել միայն սոցիալիստական սեփականության և սոցիալիստական արտադրության միջոցով է հնարավոր: Իսկ իր հեղափոխությունից հետո, շարունակում է Էնգելսը, պրոլետարիատը գյուղացիությանը մի շարք արտոնություններ կտա և նրան նյութական օգնություն կմատուցի, վորոնք բուրժուական կարգերում գյուղացուն տրամադրվել ընդհանրապես չեն կարող: Այդ օգնությունը կազմակերպելով, պրոլետարիատն այն նպատակն է հետապնդելու, վոր գյուղացու անհատական սեփականությունը և անհատական արտադրությունը սոցիալիստական սեփականության և սոցիալիստական արտադրության վերածի, իսկ իր այդ ծրագիրն իրականացնելու համար նախ գյուղացիական ընկերություններ (կոոպերացիա) է կազմակերպելու, «սակայն վոչ թե բռնի ուժով, այլ օրինակի միջոցով և այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ հասարակական օգնությամբ»:

Համայնական ոգնությունը—օրինակի ուժ—գյուղացիական ընկերություններ (կոոպերացիա)—սոցիալիստական տնտեսություն՝ ահա աշխատավոր գյուղացիության սոցիալիստական վերածննդի, սոցիալիստական զարգացման այն ուղին, վոր 1894 թվականին Ենգելսը հանձնարարում եր Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությանը, ուրեմն նաև սոցիալիստական կուսակցություններին այն բոլոր յերկրներում, վորոնց բնակչության շարքերում գյուղացիությունը խոշոր տեղ ե կազմում:

Նույն խնդրին Ենգելսը բոլորովին այլ լուծում ե տալիս, յերբ գործը Գերմանիայի խոշոր կալվածատիրական շրջաններին ե վերաբերում, վորտեղ կապիտալիստական տնտեսությունն ե տիրապետում և վորտեղ գյուղատնտեսական պրոլետարիատի լայն մասսաներ կան: «Հենց վոր մեր կուսակցությունը պետական իշխանությունը տիրապետի», գրում ե Ենգելսը, «առանց այլ և այլության խոշոր կալվածատերերին նա նույնպես սեփականազուրկ կանի, ինչպես արդյունաբերական գործարանատերերին»: Իսկ վորովհետև «կապիտալիստական արտադրությունը համայնականի վերածելու գործն այստեղ արդեն կատարելապես նախապատրաստված ե», ուստի խոշոր կալվածատիրական շրջաններում, վորտեղ կապիտալիստական գյուղատնտեսությունն ե տիրապետում, առանց կոոպերացիայի ոգնությանը դիմելու, հնարավոր կլինի անմիջապես սոցիալիստական արտադրություն կազմակերպել: Նման պայմաններում, սոցիալիստական հեղաշրջումը «կարող ե մի որում կատարվել», գրում ե Ենգելսը:

Անաչառ ընթերցողի համար դժվար չե համոզվել, վոր այս բոլոր խնդիրներում լենինիզմը մարքսիզմի հարազատ մեկնաբանությունը, նրա հետևողական շարունակությունը և նրա հանճարեղ գործադրումն ե իմպերիալիզմի շրջանում, առանձնապես՝ Խորհրդային Միության նման գյուղացիական մի յերկրում: Կոմունիզմի թշնամիները Մարքսին ու Ենգելսին նախ մետաֆիզիկներ ու սխոլաստիկներ են դարձնում, նրանց ուսմունքը զրկում են հեղափոխական բովանդակությունից և ապա այդ կեղծած թեորիաները լենինիզմի դեմ են ուղղում, լենինիզմը կեղծած մարքսիզմով ջախջախելու, լենինիզմի հետ միասին նաև մարքսիզմը թաղելու նպատակով: Միջազգային հակահեղափոխության համար չափազանց շահավետ կլիներ՝ պրոլետարական հեղափոխությունն ամենուրեք մինչև այն մոմենտը հետաձգել, յերբ ամբողջ աշխարհում գյուղացիների և արհեստավորների մանր արտադրությունն արդեն վերացած կլինի: Դիալեկտիկայի հանճարեղ վարպետներին նման հակահեղափոխական ու մետաֆիզիքական թեորիաներ վերագրելով, միջազգային բուրժուազիան և II Ինտերնացիոնալը կապիտալիստական արտադրության և բուրժուական հասարակակարգի կատարյալ սնանկացումը, նրանց անոգնական վիճակն են ապացուցում: Ինչպես մինչև այսոր, այսուհետև ել Կոմինտերնը կշարունակի իր գաղափարական պայքարը պրոլետարիատի դասակարգային թշնամիների դեմ և իր պրակտիկայով, իր հեղափոխական գործունեությամբ կապացուցի իր ուսմունքի ճշմարտությունը, կապացուցի, վոր իր ուսմունքը միակն ե, վորից ոգտվելով կարելի յե այժմյան տնտեսական–քաղաքական կյանքի ճշգրիտ պատկեր կազմել և վորը միայն պրոլետարիատի ու շահագործվող ամբողջ մարդկության հեղափոխական կազմակերպման ու հեղափոխական–կոմունիստական պայքարի մի անհաղթելի զենք կարող ե հանդիսանալ:

Այն ընկերները, վորոնք Ենգելսի այս գործի ուսումնասիրությամբ կզբաղվեն և մեր մեծ ուսուցչի առաջարկների ու յեզրակացությունների ճշտությունը մեր իրականության փորձի վրա ստուգել կցանկանան, մշտապես պետք ե աչքի առաջ ունենան այն մեծ տարբերությունը, վոր բուրժուական Յեվրոպայի և բուրժուական Ռուսաստանի գյուղացիության գոյության պայմանների մեջ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը գոյություն ուներ, ինչպես և նոր տեսակի այն տարբերությունը, վոր կապիտալիստական յերկրների և Խորհրդային Միության գյուղացիության գոյության հասարակական–քաղաքական պայմանների մեջ Հոկտեմբերից հետո ստեղծվեց:

Իր գոյության բուրժուական շրջանում մեր գյուղացին առաջավոր կապիտալիստական յերկրների գյուղացիներին մեծապես զիջում եր թե տնտեսապես և թե իր զարգացման հասարակական–քաղաքական պայմաններով, այն ինչ Հոկտեմբերից հետո նրա համար գոյության ու զարգացման բոլորովին նոր հասարակական–քաղաքական պայմաններ են ստեղծվել, վորոնցով բոլոր մյուս յերկրների գյուղացիներին նա անվիճելիորեն գերազանցում ե: Մեր գյուղացուն այժմ միայն բարձր տեխնիկա յե պակասում, վորպեսզի պրոլետարական դիկտատուրայից և պրոլետարիատի հետ կնքած դաշինքից ոգտվելով՝ կոոպերացման միջոցով կարողանա անմիջապես սոցիալիզմի անցնել, այն ինչ կապիտալիստական յերկրների գյուղացիները կապիտալի և կալվածատիրության լծից դեռ չեն ազատագրվել և հասարակական–քաղաքական իմաստով մեր գյուղացիությանը հավասարվելու, նրան հասնելու համար համապատասխան յերկրների պրոլետարիատի հետ միասին ու նրա ղեկավարությամբ դեռ պետք ե իրենց Հոկտեմբերը կատարեն:

Հ. ԱԶԱՏՅԱՆ

ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ*)

Բուրժուական և հետադեմ կուսակցությունները չափազանց զարմացած են նրանով, վոր իրենց գործունեության օրակարգի մեջ սոցիալիստները հանկարծ և ամենուրեք գյուղացիական խնդիրն են մտցնում։ Ավելի շուտ նրանք այն առթիվ պետք է զարմանք հայտնեյին, վոր այդ գործին մինչև այժմ չեն ձեռնարկել։ Իռլանդիայից մինչև Սիցիլիա, Անդալուզիայից մինչև Ռուսաստան և Բուլղարիա գյուղացին բնակչության, արտադրության և քաղաքական զորության մի շատ էական գործոն է։ Արևմտյան Յեվրոպայի յերկու յերկիր միայն բացառություն են կազմում։ Բուն Մեծ Բրիտանիայում խոշոր հողատիրությունը և խոշոր գյուղատնտեսությունն ինքնուրույն գյուղացուն բոլորովին վերացրել են։ Արևմտյան Պրուսիայում նույն պրոցեսը կատարվում է դարերի ընթացքում։ Այստեղ էլ գյուղացին կամ հողից ավելի ու ավելի կտրվում է կամ տնտեսապես ու քաղաքականապես հետ է չպրտվում։

Իբրև քաղաքական զորության մի գործոն, գյուղացին մինչև այժմ գլխավորապես իր անտարբերությամբ (ապատիայով) է աչքի ընկել, վորը գյուղական կյանքի կղզիացումից է առաջանում։ Ժողովրդական լայն մասսաների այդ ապատիան Հռոմի և Փարիզի պարլամենտական անառակության ամենապինդ հենարանն է։ Բանվորական շարժումն Արևմտյան Յեվրոպայում ծագելուց հետո, հատկապես այն յերկրներում, վորտեղ շատ մանր գյուղացիական սեփականությունն է տիրապետում, բուրժուազիայի համար դժվար չէր սոցիալիստական բանվորների նկատմամբ գյուղացիների մեջ անվստահություն և ատելություն առաջացնել, բանվորներին ներկայացնելով իբրև ծույլ ու ագահ քաղաքացիների, վորոնք ձգտում են յուրացնել գյուղացու սեփականությունը։ Փետրվարյան հեղափոխության*) շփոթ սոցիալիստական ձգտումները ֆրանսիական գյուղացիության ռեակցիոն քվեարկությամբ արագ կերպով վերացվեցին։ Իր հանգիստը բարձր գնահատելով, գյուղացին մտաբերեց գյուղացիական կայսր Նապոլեոնի անվան շուրջն առեղծված առասպելը և յերկրորդ կայսրությունն ստեղծեց։ Մեզ բոլորիս հայտնի յե, թե գյուղացիական այդ սխրագործությունը ֆրանսիական ժողովրդին ինչքան թանկ նստեց։ Նրա հետևանքները դեռ այսօր էլ զգացվում են։

Սակայն այնուհետև շատ բան է փոխվել։ Արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացումը կտրեց մանր արտադրության կենսական նյարդը գյուղատնտեսության մեջ։ Այդ արտադրությունն անհուսալիորեն քայքայվում և կործանվում է։ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի և Հնդկաստանի մրցումը հեղեղեց յեվրոպական շուկան աժան հացով, այնքան աժան, վոր հիշյալ յերկրների հետ տեղական և վոչ մի արտադրող մրցել չի կարող։ Խոշոր կալվածատերը և մանր գյուղացին իրենց առաջ յերկուսն էլ հավասար չափով կործանում են տեսնում։ Յեվ վորովհետև նրանք յերկուսն էլ հողատերեր ու գյուղի բնակիչներ են, խոշոր հողատերը մանր գյուղացու շահերի պաշտպանությունն է ձեռնարկում, իսկ գյուղացին, ընդհանուր առմամբ, ընդունում է այդ պաշտպանությունը։

Սակայն ժամանակի ընթացքում Արևմուտքում աճեց բանվոր դասակարգի հզոր սոցիալիստական կուսակցությունը։ Փետրվարյան հեղափոխության շրջանի շփոթ մտապատկերներն ու զգացումները պարզվեցին, խորացան և ընդլայնվեցին մինչև մի ծրագիր, վորն ընդունակ է դիմանալ ամենախիստ գիտական քննադատության և իր մեջ վորոշ ու շոշափելի պահանջներ է պարունակում։ Գերմանական, ֆրանսիական և բելգիական պարլամենտներում սոցիալիստական պատգամավորները թվով ավելի ու ավելի աճում և այդ պահանջները պաշտպանում էյին։ Քաղաքական իշխանության նվաճումը սոցիալիստական կուսակցության կողմից մոտ ապագայի գործ դարձավ։ Սակայն, այդ նվաճումը կատարելու համար կուսակցությունը քաղաքից պետք է նախ գյուղ գնա, պետք է գյուղում ուժեղանա։ Բոլոր մյուս կուսակցությունների հետ համեմատած, սոցիալիստական կուսակցությունն ամենապարզ տեսակետն ունի այն կապի մասին, վորը տնտեսական պատճառների և նրանց քաղաքական հետևանքների միջև գոյություն ունի։ Շնորհիվ իր այդ տեսակետի, գյուղացիների աներես բարեկամի վոչխարի մորթու տակ նա վաղուց արդեն խոշոր կալվածատիրոջ գայլի դեմքն է բացել։ Նման պայ-

*) Ֆր. Ենգելսի այս գործը լույս է տեսել 1894 թ.։ Գերմաներեն բնագիրը ձեռքի տակ չունենալով, թարգմանությունը ռուսերենից ենք կատարում, օգտվելով 1905 և 1920 թ.թ. հրատարակություններից (թարգմանություն Վ. Վելիչկինայի, Գ. Վ. Պլեխանովի խմբագրությամբ)։ Հ. ԱՁ.

*) Հեղինակը նկատի ունի ֆրանսիական 1848 թ. հեղափոխությունը։ Թարգմ.

մաններում, սոցիալիստական կուսակցությունը կարո՞ղ է արդյոք կործանման դատապարտված գյուղացուն հանգստորեն նրա կեղծ պաշտպանների ձեռքում թողնել, մինչև որ արդյունաբերական բանվորի պասիվ թշնամուց գյուղացին նրա ակտիվ թշնամին կդառնա: Իր ամբողջ մեծությամբ այստեղ ծառանում է մեր առաջ գյուղացիական խնդիրը:

I

Գյուղի բնակչությունը, վորին կարող ենք այժմ դիմել, միմյանցից ուժեղ կերպով զանազանվող տարրերից է բաղկացած, վորոնք, իր հերթին, միմյանցից նաև ըստ տեղային պայմանների յեն տարբերվում:

Գերմանիայի Արևմտյան մասում, ինչպես և Ֆրանսիայում ու Բելգիայում, մանր գյուղացիների մանր տնտեսությունն է գերիշխում: Իրենց մեծամասնությամբ, այդ գյուղացիներն իրենց փոքրիկ հողամասերի տերեր են, իսկ նրանց փոքրամասնությունը հողը կապալով է վերցնում:

Գերմանիայի հյուսիս-արևմտյան մասում՝ ներքին Սաքսոնիայում և Շլեզվիգ-Հոլշտինիայում, գլխավորապես խոշոր ու միջակ գյուղացիների յենք հանդիպում, վորոնք առանց բատրակների ու բատրակուհիների, նույն իսկ առանց օրավարձ բանվորների կառավարվել չեն կարող: Նույն յերևույթին մասամբ նաև Բավարիայում ենք հանդիպում: Արևմտյան Պրուսիան և Մեկլենբուրգը խոշոր հողատիրության և խոշոր տնտեսության շրջաններ են, վորտեղ տնտեսությունը ծառաների, բատրակների և օրավարձ բանվորների ձեռքով է տարվում. տեղ-տեղ մանր ու միջակ գյուղացիներ են պատահում, սակայն համեմատաբար թույլ և աստիճանաբար նվազող հարաբերությամբ:

Միջին Գերմանիայում գոյություն ունեն սեփականատիրության և տնտեսության այս բոլոր ձևերը, խառնած զանազան հարաբերություններով՝ ըստ տեղի պայմանների, առանց այս կամ այն ձևի սուր գերակշռության մի լայն տարածության վրա:

Այնուհետև, տարբեր տարածության շրջաններ կան, վորտեղ սեփական կամ կապալով վերցրած հողի արդյունքով իր սնունդն ապահովել ընտանիքը չի կարողանում: Այդ հողը միայն նեցուկ է տնային արդյունաբերության և այստեղ այլ կերպ անբացատրելի՝ ցած աշխատավարձ է հաստատում, վորի շնորհիվ գյուղացու արդյունքի մշտական վաճառքն ապահովվում է, չնայած օտարերկրյա ամբողջ մրցումին:

Գյուղի բնակչության այդ խավերից վո՞րը կարող է սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերն անցնել: Ինքն ինքյան պարզ է, վոր ներկա խնդիրը մենք միայն ընդհանուր առմամբ ենք քննության առնում: Մենք միայն պարզ արտահայտված ձևերն ենք վերցնում: Հոդվածի շրջանակները

մեզ թույլ չեն տալիս անցման աստիճանների և գյուղի խառն բնակչության հետազոտությամբ զբաղվելու:

Սկսենք մանր գյուղացուց: Արևմտյան Յեվրոպայի բոլոր գյուղացիների մեջ նա ընդհանրապես վոչ միայն ամենակարևորն է, այլ ամբողջ խնդրի լուծման համար ել գյուղացիության հիմնական տարրն է: Յեթե մեր վերաբերմունքը դեպի մանր գյուղացին պարզենք, դրանով յելակետ կստեղծենք՝ վորոշելու համար մեր վերաբերմունքը նաև դեպի գյուղի բնակչության բոլոր մյուս տարրերը:

Մանր գյուղացի ասելով, հասկանում ենք հողամասի տիրոջ կամ կապալառուի, գլխավորապես՝ առաջինին, վորի հողամասն ավելի չէ, քան նա ընդունակ է իր սեփական ընտանիքի ուժերով մշակել, և պակաս չէ, քան անհրաժեշտ է այդ ընտանիքը կերակրելու համար: Այս տիպի մանր գյուղացին, ինչպես և մանր արհեստավորը, մի աշխատավոր է հետևապես, վորը դեռ արտադրության սեփական միջոցներ ունի և այժմյան պրոլետարիատից դրանով ել տարբերվում է: Հետևապես, նա արտադրության նախկին յեղանակի մի մնացորդ է: Իր նախահայրը՝ ճորտից, մյուլքատուից և շատ բացառիկ դեպքերում—ազատ գյուղացուց, վորը պարտավոր եր կալվածատիրոջը միայն վորոշ հարկեր վճարել և նրա համար վորոշ աշխատանքներ կատարել, մանր գյուղացին տարբերվում է յեռակի կերպով.

ա) Նրանով, վոր Ֆրանսիական հեղափոխությունը նրան ազատագրեց ավատական տուրքերից ու պարտականություններից իր տիրոջ նկատմամբ և համարյա ամենուրեք, համենայն դեպս Հռենոսի ձախ ափերին, իր գյուղացիական կալվածքն իրեն թողեց, իբրև ազատ սեփականություն:

բ) Նրանով, վոր նա դադարեց ինքնավար հողային համայնքի անդամ լինել, զրկվեց նրա օժանդակությունից և նրա հողերից օգտվելու իրավունքից: Այդ հողերը գյուղացիներից մասամբ նախկին ավատական տերերն յեին թալանել, մասամբ լուսավորության դարի բյուրոկրատիկ օրենսդրությունը, վորը հռոմեական իրավունքի վրա յեր հենված: Ահա ինչու այժմյան մանր գյուղացին զուրկ է հնարավորությունից՝ բանվոր անասուններին ապահովելու սեփական կերով: Համայնական հողերի այդ կորուստը գյուղացու տնտեսապես այն աստիճան հարվածեց, վոր այդտեղից առաջացած վնասն ավատական պարտավորությունների վերացումով ծածկել անհնարին եր: Անդադար աճում է այն գյուղացիների թիվը, վորոնք անզոր են սեփական անասուններ պահել:

գ) Նրանով, վոր այժմյան գյուղացին զրկվել է իր նախկին արտադրական գործունեության կեսից: Իր ընտանիքի անդամների հետ միասին, իր արտադրած հում նյութից օգտվելով, առաջ նա ինքն եր արտադրում ար—

գյունաբերական այն նյութերի մեծամասնությունը, վորոնք իրեն հարկավոր եյին: Մնացած նյութերը նրան մատակարարում եյին հարևան գյուղացիները, վորոնք գյուղատնտեսության հետ միասին արհեստներով եյին զբաղվում և վորոնց նա գլխավորապես սեփական արտադրության նյութերով կամ սեփական աշխատանքով եր վճարում: Ընտանիքն, առավել ևս գյուղն, ինքն իրեն բավարարում եր, արտադրելով իրեն անհրաժեշտ համարյա բոլոր նյութերը: Կարելի յե ասել, վոր այդ տնտեսությունը մաքուր բնական տնտեսություն եր, վորը փողի պահանջ համարյա բոլորովին չուներ:

Փողային տնտեսության և խոշոր արդյունաբերության միջոցով տնտեսության այդ ձևին կապիտալիստական արտադրությունը վերջ դրեց: Յեթե գյուղացու գոյության հիմնական պայմաններից մեկը համայնական հողերից ոգտվելն եր, այդ ոժանդակիչ զբաղմունքը նրա գոյության մյուս հիմնական պայմանն եր: Այսպիսով գյուղացին ավելի ու ավելի քայքայվում է: Հարկերը, անբերրիությունը, ժառանգության բաժանումը, դատական ծախսերը գյուղացիներին մեկին մյուսի հետևից վաշխառուի մոտ են քշում: Պարտքով ծանրաբեռնվելն ավելի ու ավելի ընդհանուր յերևույթ է դառնում և ամեն մի գյուղացու համար ավելի լայն չափեր է ընդունում: Մի խոսքով, մեր մանր գյուղացին, ինչպես և արտադրության նախկին յեղանակի ամեն մի այլ մնացորդ, անխուսափելիորեն կործանման է դատապարտված: Նա ապագայի պրոլետարն է:

Իբրև այդպիսին, սոցիալիստական պրոպագանդի համար նա պետք է պատրաստակամությամբ ականջները բացեր: Սակայն այստեղ նրան դեռ ևս խոչընդոտ է հանդիսանում սեփականության զգացումը, վորը նրա մեջ խոր արմատացած է: Ինչքան ավելի յե դժվարանում այն կռիվը, վոր նա մղում է պարտքով ծանրաբեռնված իր փոքրիկ հողամասը պահպանելու համար, հուսահատության մեջ ինչքան ավելի մեծ ուժով է այդ հողամասին կառչում՝ հանձին սոցիալդեմոկրատի, վորը հողային սեփականության հանրայնացում է պահանջում, այնքան ավելի մեծ չափով նա մի նույնքան վտանգավոր թշնամի յե տեսնում, ինչքան նրա համար վաշխառուն և ադվոկատն են վտանգավոր: Սոցիալդեմոկրատիան ինչպե՞ս կարող է այս նախապաշարմունքը հաղթահարել: Կործանվող մանր գյուղացուն նա ինչ կարող է առաջարկել, ինքն իրեն չդավաճանելով:

Այստեղ մեզ գործնական ցուցմունքներ է տալիս մարքսիստական ուղղությունը հետևող ֆրանսիական սոցիալիստների ծրագիրը: Այդ ծրագիրն այնքան ավելի կարևոր է, վոր մանր գյուղացիական տնտեսության կլասիկ յերկրից է գալիս: Կուսակցության առաջին ագրարային ծրագիրն ընդունվել է 1892 թ., Մարսելի համագումարում: Այդ ծարգրով պահանջվում է. հողազուրկ գյուղատնտեսական բանվորների համար (հետևապես, բատրակնե-

րի և որավարձով աշխատողների համար) աշխատավարձի մինիմում հաստատել, վորի չափն արհեստագործական միությունները և համայնական խորհուրդներն են վորոշում. գյուղում արհեստագործական դատարաններ մտցնել, վորոնց կազմն 50 տոկոսով բանվորական լինի. համայնական հողի վաճառքն արգելել. պետական հողերը կապալով համայնքներին տալ, նրանց պարտավորեցնելով իրենց ամբողջ հողը—և՛ սեփականը և՛ կապալով վերցրածը—հողազուրկ գյուղատնտեսական բանվորների ընտանիքների ընկերություններին հանձնել՝ ընդհանուր ուժերով մշակելու համար, համայնքի վերահսկողության ներքո, արգելելով վարձու աշխատանքի գործադրումը. ծերերին և հաշմանդամներին կենսաթոշակ վճարել, համապատասխան ծախսը ծածկելով խոշոր հողատիրության վրա դրած հատուկ հարկի յեկամուտներով:

Մանր գյուղացիների համար, վորոնց թվում նաև վարձակալների համար, ծրագիրը պահանջում է. համայնքների միջոցով գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերել և ինքնարժեքով գյուղացիներին հանձնել՝ ոգտագործման համար. պարարտացման նյութեր, դրենաժի խողովակներ, սերմացու և այլն գնելու և արտադրանքը վաճառելու համար գյուղացիական ընկերություններ հիմնել. վերացնել այն հարկը, վորը վերցնվում է հողաբաժինները ձեռքից ձեռք անցնելու դեպքում, յեթե նրանց գինը 5.000 ֆրանկից բարձր չէ. ըստ իռլանդական որինակի միջնորդ դատարաններ հիմնել, չափազանց բարձր կապալավարձն իջեցնելու և այն վարձակալներին ու ֆերմերներին վարձատրելու համար, վորոնք հողից հեռանում են և վորոնք իրենց աշխատանքով հողի արժեքը բարձրացրել են. վերացնել քաղաքացիական որենսգրքի 2.102 հոդվածը, վորը հողատիրոջն իրավունք է տալիս բերքի վրա արգելք դնելու. վարկատուներին զրկել չհնձած հացը դրավ վերցնելու իրավունքից. արգելել դրավ վերցնել դաշտային գործիքները, բերքը, սերմացուն, պարարտացման միջոցները, բանվոր կենդանիները, մի խոսքով այն ամենը, վոր անհրաժեշտ է գյուղացուն՝ իր աշխատանքը շարունակելու համար. վերանայել վաղուց հնացած ընդհանուր հողային կադաստրը, իսկ առայժմ վերանայել կադաստրը տեղերում, ամեն մի համայնքում. վերջապես, ձրի գյուղատնտեսական միջնակարգ կրթություն մտցնել և գյուղատնտեսական փորձակայաններ հիմնել:

Ինչպես տեսնում ենք, ծրագրի պահանջները, վորոնք առաջադրվում են հոգուտ գյուղացիության—բանվորների շահերի պաշտպանությանը նվիրված պահանջների մասին առ այժմ չենք խոսում—այնքան էլ մեծ չեն: Այդ պահանջների մի մասն արդեն իրականացրած է: Վարձակալական միջնորդ դատարանների համար պարզապես իռլանդական որինակն է մատնանշվում: Գյուղացիական ընկերությունները մերձհռենոսյան Գերմանիայում

արդեն գոյություն ունեն: Արևմտյան ամբողջ Յեվրոպայում կողատարի վերանայումը բոլոր ագրատամխնների և նույնիսկ բյուրոկրատների ջերմ, անհետաձգելի պահանջն ե: Ծրագրի մյուս կետերն էլ կարող են իրականացվել, առանց կապիտալիստական կարգերին եական վնաս հասցնելու: Ծրագիրը բնույթագրելու համար ե, վոր այս ամենն ասում ենք, և վոչ թե այն կշտամբելու համար: Ընդհակառակը:

Ֆրանսիայի տարբեր շրջաններում այդ ծրագիրը գյուղացիների մեջ այնքան լավ ընդունելություն գտավ, վոր—ըստ առածի՝ ախորժակն ուտելու հետ միասին ե գալիս—ֆրանսիական մեր ընկերները ցանկացան գյուղացու ճաշակին ե՛լ ավելի համարվել: Ի հարկե, կուսակցությունն այդ դեպքում զգում եր, վոր վտանգավոր ուղի յե բռնում: Սոցիալիստական ծրագրի հիմնական սկզբունքները չխախտելով, արդյո՞ք հնարավոր ե գյուղացուն օգնել՝ վոչ իբրև հետագայի պրոլետարին, այլ իբրև այժմյան սեփականատեր—գյուղացուն: Վորպեսզի այդ տարակուսանքը վերացվի, գործնական նոր առաջարկներին—ներածության ձևով—տեսական պատճառաբանություն տրվեց, վորով ձգտում եյին ապացուցել, վոր գյուղացու անհատական սեփականության պահպանումը կործանումից արտադրության կապիտալիստական յեղանակի միջոցով սոցիալիզմի սկզբունքների մեջ ե մտնում, թեև հեղինակներն իրենք պարզ գիտակցում եյին, վոր նրա կործանումն անխուսափելի յե: Այդ պատճառաբանությունը՝, ինչպես և ներկա տարվա սեպտեմբերին Նանտի համագումարում ընդունած պահանջներն են, վոր այժմ հանգամանորեն քննության կառնենք:

Պատճառաբանությունն այսպես ե սկսվում.

«Նկատի առնելով, վոր ըստ կուսակցության ընդհանուր ծրագրի ևսկական իմաստի՝ արտադրողները միայն այն չափով կարող են ազատ լինել, ինչ չափով վոր նրանք արտադրության միջոցներ ունեն.

«Նկատի առնելով, վոր արդյունաբերության ասպարեզում արտադրության այդ միջոցները թեև կապիտալիստորեն արդեն այն աստիճանի կենտրոնացման են հասել, վոր միայն համայնական կամ հասարակական ձևով կարող են արտադրողներին հանձնվել, սակայն վոր նույնը—համենայն դեպս այժմյան Ֆրանսիայում—գյուղատնտեսության մեջ բոլորովին տեղի չունի, ինչքան վոր շատ ու շատ տեղերում անհատ արտադրողների ձեռքում հողը դեռ ես մասնավոր սեփականություն ե.

«Նկատի առնելով, վոր շատ մանր սեփականությունից բղխող այդ դրությունը թեև անխուսափելիորեն կործանման ե դատապարտված, սակայն և այնպես այդ կործանման արագացումը սոցիալիզմի ծրագրի մեջ չի մտնում, վորովհետև սոցիալիզմի խնդիրը սեփականության բաժանումը չե աշխատանքից, այլ ընդհակառակն այն ե, վոր միևնույն ձեռքերում միացվեն ամեն մի

արտադրության այդ յերկու գործոնները, վորոնց բաժանումը դեպի ստրկություն ե տանում և աշխատավորներին պրոլետար ե դարձնում.

«Նկատի առնելով, վոր յեթե սոցիալիզմի պարտականությունը, մի կողմից, այն ե, վոր խոշոր կալվածքները—նրանց այժմյան պատարկապորտ տերերի սեփականազրկումից հետո—համայնական կամ հասարակական ձևով նորից գյուղատնտեսական պրոլետարներին հանձնվեն. մյուս կողմից, սոցիալիզմի համար վոչ պակաս չափով անհրաժեշտ պարտականություն ե՝ ինքնուրույն կերպով աշխատող գյուղացիների մանր սեփականությունը պաշտպանել հարկերից, վաշխառուներից և նոր առաջացած խոշոր կալվածատերերի վոտնձգություններից.

«Նկատի առնելով, վոր այդ պաշտպանությունը նպատակահարմար ե նաև այն արտադրողների վրա տարածել, վորոնք վարձակալների կամ ֆերմերների անվան տակ ուրիշների հողն են մշակում, և այն դեպքում, յերբ վարձու բանվորներին են շահագործում, վորոշ չափով հարկադրված են այդպես վարվել՝ շնորհիվ իրենց վրա ծանրացած շահագործման.—

«Բանվորական կուսակցությունը—վորը, հակառակ անարխիստներին, հասարակական կարգերի բարենորոգման գործում իր հույսը վոչ թե չքավորության աճման ու ընդլայնման հետ ե կապում, այլ աշխատանքի և ամբողջ հասարակության ազատագրումը միայն գյուղի և քաղաքի բանվորների կազմակերպությունից ու միացյալ ջանքերից, վարչական և օրենսդրական գործերի նվաճումից ե սպասում—հետևյալ ագրարային ծրագիրն ե ընդունում, վորպեսզի նրա միջոցով միացնի գյուղատնտեսական արտադրության բոլոր տարրերը և գործունեյության այն բոլոր յեղանակները, վորոնք տարբեր անուննների տակ ազգային հողից օգուտ են քաղում՝ ընդհանուր թշնամու, կալվածատիրական ֆեոդալիզմի դեմ միացյալ ուժերով կռվելու նպատակով»:

Քննենք մոտիկից այդ «նկատառումները»:

Նախ՝ ֆրանսիական ծրագրի այն դրությունը, վոր արտադրողի ազատությունն արտադրության միջոցների սեփականությունն ե յենթադրում, հարկավոր յեղավ լրացնել մի այլ, նրան անմիջապես հետևող դրությունով, այն ե, վոր արտադրության միջոցների սեփականությունը միայն յերկու ձևով ե հնարավոր. կամ իբրև անհատական սեփականություն, վորն արտադրողների ամբողջ մասսայի համար յերբեք և վոչ մի տեղ գոյություն չի ունեցել և վորն, արդյունաբերական պրոգրեսի շնորհիվ, որ օրի վրա ավելի ու ավելի անհնարին ե դառնում, կամ իբրև հասարակական սեփականություն, այսինքն այն ձևով, վորի նյութական ու հոգեկան սկզբունքները հենց կապիտալիստական հասարակության զարգացումով են հաստատվում, և վոր հետևաբար արտադրողները պետք ե ձգտեն՝ իրենց տրամադրության տակ դանվող

բոլոր միջոցներից ոգտվելով՝ արտադրության միջոցները հասարակական սեփականության վերածել:

Հետևապես, արտադրության միջոցների հասարակական սեփականությունն այստեղ առաջադրվում է, իբրև միակ գլխավոր նպատակ: Յեվ այդ վոչ միայն արդյունաբերության նկատմամբ, վորտեղ հողն արդեն պատրաստ է, այլ և տնտեսության բոլոր ճյուղերի, հետևապես՝ նաև գյուղատնտեսության նկատմամբ: Ըստ ծրագրի իմաստի, արտադրողների ամբողջ մասսայի համար անհատական սեփականությունը յերբեք և վոչ մի տեղ գոյություն չի ունեցել: Հենց այդ պատճառով, ինչպես և այն պատճառով, վոր արդյունաբերական զարգացումն առանց այդ էլ դեպի նրա կործանումն է տանում, նրա պաշտպանման մեջ սոցիալիզմը բոլորովին շահագրգռված չէ, սակայն նրա վերացման մեջ մեծապես շահագրգռված է, վորովհետև հասարակական սեփականությունն անհնարին է դառնում, ինչքան վոր անհատական սեփականությունը դեռ գոյություն ունի: Ծրագրին դիմողը պետք է նկատի առնի ծրագիրն իր ամբողջությամբ, իսկ իր ամբողջությամբ վերցրած՝ ծրագիրը նշանավոր չափով փոխում է Նանտի համագումարում առաջ բերած դրությունը, սահմանափակելով նրանում պարունակվող պատմական ճշմարտությունն այնպիսի վերապահումներով, վորոնք միայն նրան հնարավորություն են տալիս Արևմտյան Յեվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում իբրև ճշմարտություն մնալ:

Արտադրության միջոցների անհատական սեփականությունն այժմ արդեն արտադրողներին իսկական ազատություն բոլորովին չի տալիս: Քաղաքներում արհեստավորներն արդեն քայքայվել են, իսկ Լոնդոնի նման խոշոր կենտրոններում նույն իսկ բոլորովին վերացել և փոխարինվել են խոշոր արդյունաբերությամբ, sweating system-ով*) և այն ողորմելի արարածներով, վորոնք սնանկացումներով են ապրում: Ինքնուրույն մանր գյուղացին վոչ իր փոքրիկ հողամասին տիրելու գործում է ապահովված և վոչ ազատ է: Թե նա ինքը և թե նրա տունը, նրա բակը, նրա դաշտը վաշխառուին են պատկանում: Իր գոյության ապահովության պատճառով նա զիջում է պրոլետարին, վորը գեթ յերբեմն հանգիստ որեր է վայելում, վորոնցից պարտքի այդ դժբախտ ստրուկին յերբեք բաժին չի ընկնում:

Ջնջեցեք քաղաքացիական որենսգրքի 2102-դ հոդվածը. ապահովեցեք գյուղացուն դաշտային գործիքների, բանվոր անասունների և այլ ինվենտարը, վորն որենքով արգելված է գրավ վերցնել—այնուամենայնիվ, անել կացությունից նրան չեք փրկի, յերբ նա իր «հոժար կամքով» վաճառում է վաշխառուին և՛ իր անասունները և՛ իրեն՝ հոգով ու մարմնով՝ պարտքի վճար-

*) Բառացի նշանակում է «քրտնաջան սիստեմ»:

-ման ժամկետը մի քիչ հետաձգելու համար: Մանր գյուղացու սեփականությունը կործանումից փրկելու ձեր փորձը վոչ թե նրա ազատությունն, այլ նրա ստրկության առանձնահատուկ ձևն է ապահովում, շարունակելով այն դրությունը, վորի շրջաններում նա վոչ ապրել և վոչ մեռնել է կարողանում: Ահա ինչու ձեր ծրագրի առաջին կետին դիմելն այստեղ բոլորովին անտեղի չէ:

Պատճառաբանության մեջ ասվում է, վոր արտադրության միջոցներից մեկն, այն է՝ հողն, այժմյան Ֆրանսիայի շատ ու շատ տեղերում դեռևս առանձին արտադրողների անհատական սեփականություն է, և վոր սոցիալիզմի խնդիրը վոչ թե սեփականության բաժանումն է աշխատանքից, այլ ընդհակառակն այն է, վոր ամեն մի արտադրության այդ յերկու գործոնները մի և նույն ձեռքերում միացվեն:—Ինչպես արդեն նկատեցինք, այս վերջին դրությունը՝ վերցրած այդքան ընդհանուր ձևով, իբրև սոցիալիզմի նպատակ ընդունվել վոչ մի դեպքում չի կարող: Նրա խնդիրը միայն այն է, վոր արտադրության միջոցներն արտադրողներին հանձնվեն՝ իբրև հասարակական սեփականություն: Հենց վոր այս հանգամանքն աչքաթող անենք, վերոհիշյալ դրությունը մեզ իսկույն այն սխալ մտքին կհասցնի, վոր սոցիալիզմն իբր թե կոչված է մանր գյուղացու այժմյան կարծեցյալ սեփականությունը նրա դաշտի նկատմամբ իսկական սեփականության վերածել և հետևապես մանր վարձակալին սեփականատեր դարձնել, իսկ պարտքերի մեջ խեղդված սեփականատիրոջը պարտքերից ազատել: Ի հարկե, սոցիալիզմը շահագրգռված է նրանում, վոր գյուղացիական սեփականությունն իր այդ կեղծ ձևով վերանա, սակայն վոչ այդ ճանապարհով:

Համենայն դեպս, այժմ տեսնում ենք, վոր իբրև սոցիալիզմի պարտականություն և նույն իսկ իբրև նրա անհրաժեշտ պարտականություն ծրագրի պատճառաբանությունն ուղղակի այն է հայտարարում, վոր սոցիալիզմը «պաշտպանի ինքնուրույն կերպով աշխատող գյուղացիների մանր սեփականությունը հարկերից, վաշխառուներից և նոր առաջացած խոշոր կալվածատերերի վոտնձգություններից»: Դրանով պատճառաբանությունը պարտավորեցնում է սոցիալիզմն այն անել, ինչ վոր նախորդ կետում իբրև անհնարին է ընդունված: Պատճառաբանությունը սոցիալիզմին հանձնարարում է «պաշտպանել» մանր սեփականությունը, թեև հենց ինքն էլ ասում է, վոր այդ սեփականությունն «անխուսափելիորեն կործանման է դատապարտված»: Այդ հարկերը, վաշխառուները և վերածնված կալվածատերերն իրենցից ուրիշ ի՞նչ են ներկայացնում, յեթե վոչ հասարակ գործիքներ, վորոնց միջոցով կապիտալիստական արտադրությունը կատարում է այդ անխուսափելի կործանումը: Ստորև կտեսնենք, թե գյուղացուն այդ յեռորդությունից «սոցիալիզմն» ինչ միջոցներով է պաշտպանելու:

Բայց միայն մանր գյուղացու սեփականությունը չէ, որ պահանջվում է պաշտպանել: «Այդ պաշտպանությունը նպատակահարմար է նաև այն արտադրողների վրա տարածել, որոնք վարձակալների կամ ֆերմերների անվան տակ ուրիշների հողն են մշակում, և այն դեպքում, յերբ վարձու բանվորներին են շահագործում, որոշ չափով հարկադրված են այդպես վարվել՝ շնորհիվ իրենց վրա ծանրացող շահագործման»: Այստեղ արդեն բոլորովին այլ հողի վրա յենք փոխվում: Սոցիալիզմը հատկապես վարձու աշխատանքի շահագործման դեմ է ուղղված: Իսկ այստեղ իբրև սոցիալիզմի անհրաժեշտ պարտականությունն է հայտարարվում՝ պաշտպանել ֆրանսիական ֆերմերներին, որոնք «վարձու բանվորներին են շահագործում»—բառացի այդպես է ասված—և այդ այն պատճառով, որ նրանք որոշ չափով հարկադրված են այդպես վարվել՝ «շնորհիվ իրենց վրա ծանրացող շահագործման»:

Ինչքա՜ն հեշտ ու հաճելի յե վար գլորվել, յերբ թեք մակարդակի վրա յենք կանգնել: Իսկ խոշոր կամ միջակ գերմանական գյուղացուն ֆրանսիական սոցիալիստներն ի՞նչ կպատասխանեն, յեթե նա իրենց մոտ գա և խնդրի գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության խորհրդի առաջ միջամտել, որպեսզի բատրակներին և բատրակուհիներին շահագործելու ասպարեզում գերմանական սոցիալ-դեմոկրատիան իրեն պաշտպանի, իր խնդիրը նրանով պատճառաբանելով, որ վաշխառուների, հարկահավաքների, հացի և անասունների վաճառականների կողմից «ինքն էլ շահագործվում է»: Յեվ ո՞վ կարող է յերաշխավորել, որ մեր խոշոր կալվածատերերը նրանց մոտ չեն ուղարկի կոմս Կանիցին (չէ՞ որ ֆրանսիական սոցիալիստների առաջարկի նման մի առաջարկ էլ՝ հացի ներմուծման պետականացման մասին՝ նա յե մտցրել)՝ գյուղատնտեսական բանվորների շահագործման ասպարեզում իրենց համար նույնպես սոցիալիստական հովանավորություն խնդրելու, իրենց այդ դիմումը նրանով պատճառաբանելով, որ բորսայի, հացի և փողի վաշխառուների կողմից էլ «իրենց վրա յե շահագործում ծանրանում»:

Շտապում ենք ասել, որ մեր ֆրանսիական ընկերները բոլորովին այնպես վատ չեն դատում, ինչպես այդ թվում է: Ծրագրի վերահիշյալ կետը միայն հետևյալ բոլորովին բացառիկ դեպքին է վերաբերում. Ֆրանսիայի հյուսիսում, ինչպես և մեր ճակնդեղի շրջաններում, հողը գյուղացիներին են տալիս, նրանց պարտավորեցնելով ճակնդեղ ցանել և չափազանց ծանր պայմաններով. իրենց ճակնդեղը նրանք պարտավորվում են որոշ գործարանի վաճառել, այն էլ այդ գործարանի նշանակած գներով. պարտավորվում են որոշ տեսակի սերմացու գնել, որոշ տեսակի և նշանակած քանակի պարարտացման նյութեր գործածել. ճակնդեղն ընդունելու ժամա-

նակ էլ նրան ամենաանբարեխիղճ կերպով խաբում են: Գերմանիայի նկատմամբ էլ այս ամենը մեզ լավ հայտնի յե: Սակայն յեթե ֆրանսիական սոցիալիստները ցանկացել են գյուղացիության այս խավն իրենց հովանավորության տակ առնել, այդ մասին պետք էր ուղղակի և վորոշակի արտահայտվել: Իսկ այն ձևով, վոր տրված է ծրագրի այդ կետին—իր անսահման ընդհանրությամբ նա ուղղակի կերպով վոչ միայն ֆրանսիական ծրագիրն, այլ և առհասարակ սոցիալիզմի հիմնական սկզբունքներն է խախտում, և նրա հեղինակները չպիտի դանդաղեն, յեթե ամենատարբեր կողմերից այդ անփույթ խմբագրությունն իրենց համար վոչ ցանկալի կիրառում մեկնաբանվի:

Նույն թյուրիմացությունը կարող են առաջացնել նաև պատճառաբանության յեզրափակման խոսքերն, ըստ վորոնց սոցիալիստական բանվորական կուսակցության խնդիրն է—«միացնել գյուղատնտեսական արտադրության բոլոր տարրերը և գործունեության այն բոլոր յեղանակները, վորոնք տարբեր անունների տակ ազգային հողից ոգուտ են քաղում՝ ընդհանուր թշնամու, կալվածատիրական ֆեոդալիզմի դեմ միացյալ ուժերով կռվելու նպատակով»: Յես վճռականորեն ժխտում եմ այն, վոր վորևէ յերկրի սոցիալիստական բանվորական կուսակցությունը նպատակ ունի իր գիրկն ընդունելու, բացի գյուղի պրոլետարիատից և մանր գյուղացիներից, նաև միջակ և խոշոր գյուղացիությունը կամ նույն իսկ խոշոր կալվածքների վարձակալներին, կապիտալիստ անասնաբույծներին և ազգային հողի այլ կապիտալիստական շահագործողների: Ճիշտ է, ֆեոդալական հողատիրությունը նրանց բոլորին ընդհանուր թշնամին յե: Վորոշ խնդիրներում մենք կարող ենք նրանց հետ միասին գործել, վորևէ վորոշ նպատակի համար մի վորոշ ժամանակ կարող ենք նրանց հետ ձեռք ձեռքի տված կռվել: Ճիշտ է, մեր կուսակցության շարքերն էլ կարող ենք ամեն մի հասարակական դասակարգից առանձին անհատներ ընդունել, սակայն վորևիցե կապիտալիստական խմբեր, միջին բուրժուազիայի կամ միջին գյուղացիության ընդհանուր շահերով կապված խմբեր վոչ մի դեպքում ընդունել չենք կարող: Բայց այստեղ էլ իրերի դրությունն այնքան վատ չէ, ինչքան այդ թվում է. ակներև է, վոր այս ամենի մասին ծրագրի հեղինակներն ուղղակի չեն մտածել: Դժբախտաբար, նրանք ընդհանրացման տենչով են համակվել, և թող չզարմանան, վոր հենց իրենց խոսքով բռնվում են:

Պատճառաբանությանը հետևում են ծրագրի համար կազմած նոր լրացումները, վորոնցում ձևակերպման նույն անճապարումն է նկատվում:

Ծրագրի այն կետն, ըստ վորի համայնքները պետք է գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերեն և վերջիններն իրենց արժեքով գյուղացիներին հանձ-

ներն, այն իմաստով և փոփոխման յենթարկված, վոր, առաջին՝ այդ նպատակով համայնքները պետությունից նյութական ոժանդակություն են ստանում և յերկրորդ՝ մեքենաները նրանք պետք է ձրիաբար մանր գյուղացիների տրամադրության տակ դնեն: Վորևե չափազանց օգնություն այդ նոր գիջումը մանր գյուղացուն տալ չի կարող, վորովհետև նրա հողի մեծությունը և նրա արտադրության յեղանակը մեքենաների գործադրումը քիչ չափով են թույլատրում:

Այնուհետև պահանջվում է «զույության ունեցող ուղղակի և անուղղակի բոլոր հարկերը փոխարինել մի պրոգրեսիվ հարկով բոլոր յեկամուտներից, վորոնք 3000 Ֆրանկից բարձր են»: Բոլոր սոցիալդեմոկրատական ծրագրերում արդեն շատ տարիների ընթացքում կարելի յե այդ պահանջին հանդիպել: Նրա առաջադրումը հատկապես հօգուտ մանր գյուղացիների նորություն է և միայն այն է ապացուցում, թե նրա նշանակությունն ինչքան քիչ է հասկացվում: Իբրև օրինակ վերցնենք Անգլիան: Նրա պետական բյուջեն 90 միլիոն Ֆունտ ստերլինգի յե հասնում: Այդ գումարից 13,5–14 միլիոնը յեկամտային հարկից է ստացվում. մնացած 76 միլիոնն իր աննշան մասում զանազան գործառնությունների հարկադրումից է ստացվում (փոստ, հեռագիր, դրոշմ), իսկ իր ահագին մեծամասնությամբ—մասսայական սպառման հարկադրումից, բոլոր քաղաքացիների և առավելապես ամենաչքավորների յեկամուտների մշտական կրճատման միջոցով՝ մանր, աննշան գումարներով, վորոնցից շատ միլիոններ են հավաքվում: Պետական ծախսերն այլ ճանապարհով ծածկելն այժմյան հասարակության մեջ հազիվ թե հնարավոր է: Յենթադրենք, վոր 90 միլիոնի այդ ամբողջ գումարն Անգլիայում հավաքվում է, իբրև ուղղակի պրոգրեսիվ հարկ այն յեկամուտներից, վորոնք 120 Ֆ. ստ. կամ ավելի յեն կազմում: Ըստ Գիֆֆենի, 1865–1875 թթ. Անգլիայի միջին տարեկան կուտակումը կամ նրա ազգային հարստության տարեկան աճումը 240 մլ. Ֆ. ստ. է յեղել: Յեթե ընդունենք, վոր այդ գումարն այժմ տարեկան 300 միլիոն է կազմում, կտեսնենք, վոր 90 միլիոնի հասնող հարկային բեռը պետք է կլաներ ամբողջ յեկամտի համարյա մի յերրորդը: Այլ կերպ ասած, վոչ մի կառավարություն, բացի սոցիալիստականից, նման քայլ անել չի կարող: Իսկ յերբ կառավարչական ղեկը սոցիալիստների ձեռքը կանցնի, նրանք այնպիսի փոփոխումներ կմտցնեն, վոր այս հարկային ռեֆորմը կհանդիսանա միայն իբրև ժամանակավոր, բոլորովին աննշան վճարում ի հաշիվ պարտքի, իսկ մանր գյուղացիների առաջ զարգացման բոլորովին այլ հեռանկարներ կբացվեն:

Թվում է, թե ծրագրի հեղինակներն իրենք էլ գլխի յեն ընկնում, վոր հարկային այդ ռեֆորմի կիրառմանը գյուղացիները դեռ յերկար սպասելու

յեն, և այդ պատճառով գյուղացիներին «առայժմ» նրանք առաջարկում են. «ինքնուրույն կերպով աշխատող բոլոր գյուղացիների համար հողային հարկի վերացում և այդ հարկի նվազեցումը գրավ դրած բոլոր կալվածքների համար»: Այդ պահանջի յերկրորդ մասը կարող է միայն ավելի խոշոր գյուղացիական հողամասերին վերաբերվել, վորոնք մի ընտանիքի ուժերով մշակվել չեն կարող: Հետևապես, պահանջի այդ մասն էլ նպատակահարմար է այն գյուղացիների համար, վորոնք «վարձու բանվորների չեն շահագործում»:

Այնուհետև. «վորսի և ձկնորսության ազատություն, առանց վորևե սահմանափակումների, այն միակ բացառությամբ, վոր դեպի վորսի կենդանիները, ձուկը և չհնձած հացը զգուշություն պահպանվի»: Այս պահանջը շատ ժողովրդական է թվում, սակայն նրա առաջին մասը վոչնչացվում է յերկրորդով: Ամեն մի գյուղում, գյուղացիական ամեն մի ընտանիքի այժմ արդեն քանի՞ նապաստակ, կաքավ, գայլաձուկ և սազան է հասնում: Ամեն մի գյուղացի վորսին և ձկնորսությանը տարեկան մի օրից ինչքա՞ն ավելի ժամանակ է նվիրելու:

«Օրենսական և սովորական տոկոսի նվազեցում»—այսինքն՝ նոր օրենքներ վաշխառության դեմ, նոր փորձ վոստիկանական այն միջոցն անցկացնելու, վորը յերկու հազար տարի շարունակ միշտ և ամենուրեք անհաջողության է հանդիպել: Յեթե մանր գյուղացին այնպիսի դրության հասնի, վոր վաշխառուին դիմելը նրա համար չարիքներից փոքրագույնը լինի, այդ դեպքում նրա արյունը ծծելու միջոցներ վաշխառուն էլ միշտ կգտնի, առանց դատի տակ ընկնելու: Լավագույն դեպքում այդ միջոցը մանր գյուղացուն հանգստացնելու գործին կծառայի, սակայն նրան օգուտ չի բերի: Ընդհակառակը, նրան վարկ բաց թողնելը կդժվարացնի հենց այն ժամանակ, յերբ նա վարկի ամենամեծ պահանջ ունի:

«Ձրի բժշկական օգնություն և դեղերի մատակարարումն ինքնարժեքով»—համենայն դեպս այս պահանջը հատկապես գյուղացիական չէ: Գերմանական սոցիալդեմոկրատիայի ծրագիրն ավելի հեռուն է գնում, նաև դեղերի ձրի մատակարարում է պահանջում:

«Պահեստի զինվորների ընտանիքների վարձատրությունն այն ժամանակաշրջանում, յերբ նրանք ծառայության մեջ են»—Ավստրիայում և Գերմանիայում արդեն գոյություն ունի, թեև չափազանց անբավարար ձևով, և կրկին հատուկ գյուղացիական պահանջ չէ:

«Տեղափոխման տարիֆի իջեցումը պարարտացման նյութերի, գյուղատնտեսական մեքենաների և գյուղատնտեսական մթերքների համար»—իր գլխավոր կետերում Գերմանիայում արդեն իրականացրած է, թեև գլխավորապես խոշոր կալվածատերերի շահերին է ծառայում:

«Հողի վորակը և գյուղատնտեսական արտադրությունը բարձրացնելու

համար հասարակական աշխատանքներ կազմակերպել և անմիջապես այդ աշխատանքների պլանը մշակելու նախապատրաստական միջոցների ձեռնարկել»—այս կեսն ամեն ինչ անորոշության և գեղեցիկ խոստումների լայն շրջանակների մեջ է գնում և ամենից առաջ նույնպես խոշոր կալվածատիրության շահերին է համապատասխանում:

Մի խոսքով, մեծագոռոզ տեսական պատճառաբանությունից հետո, Նոր ագրարային ծրագրի գործնական առաջարկներն իրենց էությամբ մեզ բոլորովին չեն բացատրում, թե Ֆրանսիայի բանվորական կուսակցությունն ինչպես կարող է հաջողվել պաշտպանել մանր գյուղացու մանր սեփականությունը, վորն—ըստ այդ նույն կուսակցության ծրագրի—անխուսափելիորեն կործանման է դատապարտված:

II

Մեր ֆրանսիական ընկերները միայն մի կետում անպայման արդարացի յեն. մանր գյուղացու կամքին հակառակ Ֆրանսիայում անհնարին է վորևէ հաստատուն քաղաքական հեղաշրջում կատարել: Սակայն, թվում է ինձ, վոր գյուղացուն մոտենալու համար նրանք սխալ ուղի յեն բռնել:

Ինչպես յերևում է, մանր գյուղացուն նրանք ձգտում են իրենց կողմը գրավել մի անգամից, հնարավորության դեպքում—արդեն առաջիկա ընդհանուր ընտրություններին: Այս նպատակին հասնել նրանք կարող են հուսալ միայն շատ համարձակ ու լայն խոստումների միջոցով, վորոնց պաշտպանության համար հարկադրված կլինեն դեռ ավելի համարձակ տեսական դատողությունների դիմել: Սակայն, յերբ խնդրին մոտիկից ենք ծանոթանում, դուրս է գալիս, վոր լայն խոստումներն իրենք իրենց հակասում են (խոստում՝ պահպանել մի դրություն, վորը միևնույն ժամանակ անխուսափելիորեն կործանման դատապարտված է հայտարարվում) և վոր առաջարկվող առանձին միջոցները գործնական նշանակությունից կամ բոլորովին զուրկ են (վաշխառուների դեմ պահանջվող օրենքները), կամ բանվորության ընդհանուր պահանջների մեջ են մտնում, կամ այնպիսի բնույթ են կրում, վոր նաև խոշոր հողատիրությանն են նպաստում կամ վերջապես միջոցներ են, վորոնք մանր գյուղացու համար աննշան նշանակություն ունեն: Այնպես վոր ծրագրի զուտ գործնական մասով ուղղվում է նրա սխալ ներածությունը, և պատճառաբանության մեծագոռոզ, առաջին հայացքից սարսափելի բառերն իրականության մեջ ամենաանմեղ միջոցների յեն վերածվում:

Ուղղակի հետևյալը պետք է ասել. նկատի առնելով գյուղացու այն նախապաշարումները, վորոնք ստեղծվում են նրա ամբողջ տնտեսական դրությամբ, նրա կրթությունով ու կղզիացումով և վորոնք պաշտպանվում են բուրժուական մամուլի ու խոշոր կալվածատերերի կողմից, մանր գյուղա-

ցիական մասսան մենք միայն այն դեպքում կարող ենք մի անգամից մեր կողմը գրավել, յեթե այդ մասսային խոստումներ անենք, վորոնց իրագործման անհնարինությունն սկզբից և յեթ կասկածից դուրս է: Այն է, նրանց մենք պետք է խոստանանք վոչ միայն բոլոր պարագաներում պաշտպանել նրանց սեփականությունը տնտեսական բոլոր ուժերի հարձակումից, այլ և նրանց ազատագրել հենց այժմ նրանց վրա ծանրացող բեռից—վարձակալին ազատ սեփականատեր դարձնել և վճարել սեփականատերերի պարտքը: Նույն իսկ այն դեպքում, յեթե այս ամենը կատարելու հնարավորություն ունենայինք, նորից այն դրության մեջ կընկնեյինք, վորից անհրաժեշտորեն կրկին այժմյան դրությունը կառաջանար: Գյուղացուն մենք դրանով վոչ թե կազատագրեյինք, այլ նրա կործանումը կարճ ժամանակով միայն կհետաձգեյինք:

Սակայն մեզ շահավետ չէ գյուղացուն անմիջապես մեր կողմը գրավել այնպիսի պայմաններում, վոր հետևյալ օրը նա մեզանից յերես դարձնի, յեթե դուրս գա, վոր անզոր ենք մեր խոստումները կատարել: Ինչպես չենք կարող մեր կուսակցական ընկեր համարել մանր արհեստավորին, վորը ձգտում է ընդմիշտ արհեստավոր մնալ, նույնպես էլ չենք կարող մեր կուսակցական ընկեր համարել գյուղացուն, վորը մեզանից իր թզուկային սեփականության մշտնջենականացում է սպասում: Այդ մարդիկ անտիսեմիտներին են պատկանում. իրենց մանր սեփականությունը փրկելու համար նրանք թող անտիսեմիտներին դիմեն: Իսկ յերբ վերջինների մոտ նրանք կիմանան, թե շլացուցիչ ֆրազների տակ ինչ է թաքնված և ինչ յեղանակներ են նվագում այն գործիքները, վորոնց հնչյուններով թնդում է անտիսեմիտական յերկինքը, նրանք այն ժամանակ ավելի ու ավելի կհամոզվեն, վոր մենք—պակաս խոստումներ տալով և մանր գյուղացիության փրկությունը բոլորովին այլ բնագավառում փնտրելով—վոր այնուամենայնիվ նրա համար մենք ավելի վստահելի մարդիկ ենք: Յեթե, ինչպես այդ մեր նկատմամբ տեղի ունի, մեր ֆրանսիական ընկերները անտիսեմիտական աղմկալից դեմագոգիայի միջնոլորտում գործեյին, նրանք այս սխալները յերբեք չէյին կատարի:

Արդ, վո՞րն է մեր դիրքը մանր գյուղացիության նկատմամբ և կյանքի այդ բնագավառում վո՞րն է մեր անելիքն այն դեպքում, յերբ պետական իշխանությունը մեր ձեռքը կանցնի:

Նախ, անպայման ճիշտ է ֆրանսիական ծրագրի հետևյալ կետը. մանր գյուղացու անխուսափելի կործանումը մենք վաղօրոք նախատեսում ենք, սակայն վոչ մի դեպքում կոչված չենք մեր միջամտության վորևէ ձևով այդ կործանումն արագացնել: Յեվ յերկրորդ, նույնքան ակնհայտ է, վոր պետական իշխանությունը նվաճելուց հետո մենք չենք կարող մտածել այն մասին, վոր մանր գյուղացին բռնի կերպով սեփականազուրկ արվի (անկախ

նրանից, այդ սեփականազրկումը վարձատրման սկզբունքով կկատարվի թե ոչ), ինչպես այդ հարկադրված կլինենք խոշոր հողատերերի նկատմամբ անել:

Մանր գյուղացիների նկատմամբ մեր խնդիրն ամենից առաջ այն է, որ նրանց մասնավոր արտադրությունը և մասնավոր սեփականությունը ընկերականի վերածվեն, սակայն ոչ թե բռնի կերպով, այլ օրինակի միջոցով և այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ հասարակական օգնությամբ: Պարզ է, որ իշխանությունը գրավելուց հետո մեր տրամադրության տակ բավականաչափ միջոցներ կլինեն՝ գյուղացուն ապահովելու մի շարք արտոնություններով, որոնք արդեն այժմյանից նրան պետք է պարզաբանվեն:

Արդեն մոտ 20 տարի առաջ Դանիայի սոցիալիստները, որոնց հայրենիքում փաստորեն միայն մի քաղաք կա՝ Կոպենհագենը և որոնք հետևապես այդ քաղաքից դուրս համարյա բացառապես գյուղացիական պրոպագանդի հետ գործ ունեն, նույնանման ծրագիր էին մշակել: Մի գյուղի կամ մի ծխի գյուղացիները— Դանիայում մեծ թվով առանձին խոշոր գյուղացիական տնտեսություններ կան—իրենց ամբողջ հողը պետք է միացնեն, մի խոշոր տնտեսություն ստեղծեն, հողն ընդհանուրի հաշվին մշակեն և այնուհետև շահը բաժանեն համապատասխան անդամներից ամեն մեկի հողամասի, մուծած փողի և կատարած աշխատանքի: Դանիայում մանր հողատիրությունը միայն յերկրորդական դեր է կատարում: Սակայն յերբ այդ նույն գաղափարով մանր հողատիրության մի յերկիր ենք տեղափոխվում, դուրս է գալիս, որ թզուկային հողամասերի միացումը և նրանց ամբողջ տարածության մշակումն ընդհանուրի ուժերով մինչ այդ զբաղված բանվորական ուժերի մի մասն ավելորդ են դարձնում: Խոշոր արտադրության գլխավոր առավելությունները հենց աշխատանքի այս խնայողության մեջ է տեսնելու: Այդ բանվորական ուժերը զբաղեցնելու յերկու ճանապարհ կա: Կամ հարևան խոշոր տնտեսություններից գյուղացիական ընկերություններին պետք է հողի լայն տարածություններ տրամադրել կամ նրանց համար օժանդակիչ արդյունաբերական աշխատանքի աղբյուրներ ստեղծել, հնարավորության սահմաններում և գլխավորապես՝ սեփական գործածության համար:

Յերկու դեպքում էլ նրանց տնտեսական դրությունը կբարելավվի: Միաժամանակ, ամբողջ հասարակության գործերը վարող մարմինը նրանց վրա կարող է իր ազդեցությունը տարածել, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով, որպեսզի գյուղացիական ընկերությունն աստիճանաբար ավելի բարձր ձևի փոխանցվի և ընկերությունն իր ամբողջությամբ, ինչպես և նրա առանձին անդամները, իրենց իրավունքներով և պարտականություններով սոցիալիստական հասարակության մյուս ճյուղերին հավասարեցվեն: Իր

մանրամասնություններում, այդ ծրագրի կիրառումը ավելյալ ամեն մի դեպքում այն կոնկրետ պայմաններից կախում կունենա, որոնք գոյություն կունենան իշխանությունը մեր ձեռքն անցնելու շրջանում: Այսպես, օրինակ, հնարավոր է, որ գյուղացիական ընկերություններին մենք կարողանանք ավելի խոշոր արտոնություններ ապահովել. նրանց ամբողջ հիպոթեկային պարտքի հանձնումն ազգային բանկին ամենացած տոկոսով, նպաստ հասարակական միջոցներից խոշոր արտադրություն կազմակերպելու համար (նպաստ ոչ անպայման կամ գլխավորապես փողով, այլ նաև անհրաժեշտ նյութերով—մեքենաներով, պարարտացման միջոցներով և այլն) և զանազան այլ արտոնություններ:

Ներկա դեպքում ամենակարևորն է գյուղացուն բացատրել, որ նրա տունն ու տեղը մենք կարող ենք փրկել ու պահպանել միայն մի պայմանով՝ ընկերային սեփականություն և ընկերային արտադրություն ստեղծելով: Հենց անհատական սեփականությունով պայմանավորվող անհատական տնտեսությունն է, որ գյուղացիներին դեպի կործանում է տանում: Յեթե իրենց անհատական տնտեսության պահպանման վրա նրանք շարունակեն պնդել, հողից ու տնից անխուսափելիորեն կզրկվեն, որովհետև նրանց արտադրության հնացած յեղանակը կկործանվի խոշոր կապիտալիստական արտադրության կողմից: Այս է այժմ իրերի դրությունը: Յեվ ահա մենք հանդես ենք գալիս և գյուղացիների համար խոշոր արտադրություն կազմակերպելու հնարավորություն ենք ստեղծում՝ նրանց ընդհանուր սեփական միջոցներով և ոչ թե ի հաշիվ կապիտալի: Մի՞թե գյուղացիներին չի կարելի հասկացնել տալ, որ այս ծրագրի կիրառումը նրանց սեփական շահն է, նրանց փրկության միակ միջոցն է:

Մանր գյուղացիներին մենք յերբեք չենք կարող խոստանալ՝ նրանց անհատական տնտեսությունը և անհատական սեփականությունը կապիտալիստական արտադրության գերազանց ուժերից պաշտպանել: Նրանց մենք միայն այն խոստանալ կարող ենք, հակառակ իրենց կամքի՝ իրենց տնտեսական հարաբերություններին բռնի կերպով չմիջամտել: Այնուհետև մենք կարող ենք միջոցներ ձեռք առնել, որպեսզի կապիտալիստների և խոշոր կալվածատերերի կողմից մանր գյուղացիության դեմ մղվող կռիվն այժմ արդեն հնարավորապես պակաս անօրինական միջոցներով մղվի և որպեսզի շատ հաճախ պատահող ուղղակի թալանին և սրիկայությանը հնարավորապես ավելի լայն չափով խանգարած լինենք: Սակայն, այդ բանը մեզ միայն բացառիկ դեպքերում կհաջողվի: Կապիտալիստական զարգացած արտադրության պայմաններում անհնարին է որոշել, թե ազնիվ գործունեությունը որտեղ է վերջանում և որտեղ է խաբեբայությունն սկսվում: Սակայն և այնպես, մեծ տարբերություն կա այն յերկու դրությունների միջև, թե հասարակա-

կան իշխանությունն ավազակի կողմն է բռնում թե ավազակությունից տուժողներին է պաշտպանում: Իսկ մենք վճռականորեն մանր գյուղացու պաշտպան ենք: Հնարավորության սահմաններում մենք ամեն ինչ կանենք, վորպեսզի նրա գոյության պայմանները թեթևացնենք և նրան նպաստենք ընկերության անցնել այն դեպքում, յերբ նա նման վորոշում կանի: Իսկ յեթե նման վորոշում կայացնել նա դեռ անզոր կլինի, նրան մենք հնարավորապես յերկար ժամանակ կտրամադրենք, վորպեսզի իր հողամասի վրա ապրելով այդ մասին մտածի:

Մենք այդպես ենք վարվելու վոչ միայն այն պատճառով, վոր ինքնուրույն կերպով աշխատող մանր գյուղացու մեր կողմն անցնելը հնարավոր ենք համարում, այլ և կուսակցության անմիջական շահերից յելնելով: Ինչքան ավելի կլինի այն գյուղացիների թիվը, վորոնց մենք պրոլետարիզացիայից կփրկենք և դեռ իբրև գյուղացիների մեր կողմը կգրավենք, այնքան հասարակական հեղաշրջումն ավելի արագ ու ավելի հեշտ կկատարվի: Այդ հեղաշրջումը կատարելու համար մեզ շահավետ չեր լինի սպասել մինչև այն օրը, յերբ կապիտալիստական արտադրությունն ամենուրեք իր զարգացման բարձրագույն աստիճանին կհասնի, յերբ խոշոր կապիտալիստական արտադրությանը զոհ կգնան թե վերջին մանր արհեստավորը և թե վերջին մանր գյուղացին: *Նյութական այն զոհողությունը, վորն այդ նպատակով կպահանջվի կատարել հասարակական միջոցներից հօգուտ գյուղացիների, կարող է իբրև ջուրը թափած փող թվալ, յեթե խնդրին կապիտալիստական տնտեսության տեսակետից մոտենանք, այն ինչ այստեղ կապիտալի մի շատ նպատակահարմար գործադրում է կատարվելու, վորովհետև այդ ծախսի միջոցով յերևի հնարավոր կլինի տասն անգամ ավելի խոշոր գումարներ խնայել այն միջոցներից, վորոնք կհարկավորվեն հասարակական ամբողջ բարենորոգման համար: Այդ պատճառով էլ գյուղացիների նկատմամբ մենք կարող ենք հետևապես շատ առատաձեռն լինել: Այստեղ կարիք չկա մանրամասնությունների մեջ մտնել և այդ ուղղությամբ վորոշ առաջարկներ անել. այստեղ կարող ենք միայն ամենաընդհանուր, հիմնական գծերը նշել:*

Վոչ միայն կուսակցությանն, այլ և իրեն՝ մանր գյուղացուն, մենք չենք կարող ավելի վատթար ծառայություն մատուցած լինել, քան այն դեպքում, յերբ գյուղացիությանը կխոստանանք ձգտել յերկար ժամանակով պահպանել նրա մանր սեփականությունը կամ այդ իմաստով նրա մեջ դեռ հույսի մի ճառագայթ կառաջացնենք: Այդ կնշանակեր գյուղացու առաջ ուղղակի փակել նրա ազատագրման ճանապարհը և կուսակցությունն ստորացնել, անտիսեմիտիզմի մակարդակին հասցնել: Ընդհակառակը: Մեր կուսակցությունը պարտավոր է գյուղացիներին ավելի ու ավելի բացատրել,

վոր նրանց դրությունը բոլորովին անհուսալի յե, քանի կապիտալիզմը դեռ գոյություն ունի, և վոր նրանց մանր սեփականությունն, իբրև այդպիսին, փրկել կատարելապես անհնարին է: *Կուսակցությունը պարտավոր է նրանց լիակատար համոզում ներշնչել այն մասին, վոր կապիտալիստական խոշոր արտադրությունն իրենց հնացած մանր արտադրությունը կարող է նույն հեշտությամբ վոչնչացնել, ինչ հեշտությամբ յերկաթուղու գնացքը վոչնչացնում է գյուղացու սայլը: Այսպես վարվելով, մենք տնտեսական անխուսափելի զարգացման իմաստով կգործենք, իսկ տնտեսական զարգացումն ինքն ինքյան գյուղացիների գլուխները կպատրաստի մեր գաղափարները յուրացնելու համար:*

Սակայն, ներկա խնդիրը չեմ կարող սպառած համարել, չարտահայտելով այն խոր համոզմունքը, վոր Նանտի ծրագրի հեղինակներն իրականում ինձ հետ համաձայն են: Իրենց հատուկ նրբամտությամբ, նրանք չեն կարող չհասկանալ, վոր այժմ առանձին մանր մասերի բաժանված հողն էլ պետք է հանրայնացվի: Նրանք իրենք էլ համաձայնում են, վոր մանր սեփականությունն անհետացման է դատապարտված: Մեր այս կարծիքը լիովին հաստատվում է նաև Լաֆարգի կողմից կազմած զեկուցումով, վորը ֆրանսիական կուսակցության ազգային խորհուրդը ներկայացրել է Նանտի համագումարին: Գերմաներեն այդ զեկուցումը հրատարակված է Բերլինի «Սոցիալ-դեմոկրատ» թերթում, ներկա թվականի հոկտեմբերի 18-ի համարում: Արդեն Նանտի ծրագրի հակասությունները ցույց են տալիս, վոր նրա հեղինակներն իրոք այն չեն ասում, ինչ վոր ցանկանում են ասել: Ի հարկե, յեթե նրանց չհասկանան և նրանց հայտարարություններն սկսեն ի չարը գործադրել,—ինչպես այդ արդեն տեղի յե ունեցել—մեղքն այդ դեպքում ծրագրի հեղինակների վրա յե ծանրանում: Համենայն դեպս, իրենց ծրագիրը նրանք պետք է հանգամանորեն պարզաբանեն, իսկ ֆրանսիական կուսակցության հետևյալ համագումարին հարկավոր կլինի ծրագիրը հիմնովին վերանայել:

Անցնում ենք ավելի խոշոր գյուղացիների խնդրին: Շնորհիվ գլխավորապես ժառանգական բաժանումների, ինչպես և շնորհիվ պարտքերի կուտակման ու հողի [illegible] վաճառման, այստեղ մենք անցման աստիճանների մի ամբողջ շարք ենք տեսնում՝ ամենամանր սեփականատիրոջից սկսած մինչև խոշոր գյուղացին, վորը պահպանել է իր ամբողջ հին հողամասը և այն նույնիսկ աճեցրել է: Վորտեղ միջակ գյուղացին մանր գյուղացիների մեջ է ապրում, իր շահերով ու հայացքներով նրանցից էապես չի տարբերվում: Իր սեփական փորձից յելնելով, նա չի կարող չիմանալ, թե իրեն հավասար գյուղացիներից քանիսն են մանր գյուղացու աստիճանին հասել: Իսկ վորտեղ միջակ ու խոշոր գյուղացիներն են գերակշռում, և տնտեսու-

թյունն անհրաժեշտորեն բատրակների ու բատրակուհիների աշխատանք է պահանջում, այնտեղ իրերի բոլորովին այլ դրություն է ստեղծվում: Հասկանալի յե, որ բանվորական կուսակցությունն ամենից առաջ վարձու բանվորների, այն է՝ բատրակների, բատրակուհիների և օրավարձով աշխատողների շահերը պետք է նկատի ունենա: Այդ պատճառով էլ գյուղացիներին նա չի կարող որևէ խոստումներ տալ, որոնք բանվորների վարձու ստրկության շարունակությունն են ընդգրկում: Սակայն, քանի խոշոր ու միջակ գյուղացիներն, իբրև այդպիսիք, դեռ գոյություն ունեն, կառավարվել առանց վարձու բանվորների նրանք անզոր կլինեն: Յեվ յեթե մանր գյուղացիներին, իբրև այդպիսիներին, իրենց գոյության շարունակության հույսեր ներշնչելը մեր կողմից ուղղակի անհեթեթություն կլիներ, նույնը խոշոր ու միջակ գյուղացիներին խոստանալն ուղղակի դավաճանությանը սահմանակից մի քայլ կլիներ:

Ներկա դեպքում էլ կարող ենք գյուղացուն քաղաքի արհեստավորի հետ համեմատության մեջ դնել: Թեև արհեստավորները գյուղացիներից ավելի յեն կործանված, սակայն և այնպես նրանց շարքերում այնպիսիները կգտնվեն, որոնց մոտ աշակերտների հետ միասին բանվորներ էլ են աշխատում կամ որոնց մոտ աշակերտները բանվորի աշխատանք են կատարում: Այդ արհեստավորներից նրանք, որոնք իրենց այժմյան դրությունը ցանկանում են ընդմիշտ պահպանել, թող անտիսեմիտների մոտ գնան, մինչև որ կհամոզվեն, որ իրենց այնտեղ էլ չեն օգնելու: Մնացածները, որոնք տեսնում են իրենց արտադրության յեղանակի անխուսափելի կործանումը, թող մեզ մոտ գան, սակայն նրանք էլ թող պատրաստ լինեն հետագայում բաժանելու այն վիճակը, որը բոլոր մյուս բանվորներին է սպասում: Նույնը պետք է խոշոր ու միջակ գյուղացիների մասին ասել: Հասկանալի յե, որ նրանց բատրակները, բատրակուհիները և օրավարձով աշխատող բանվորները մեզ շատ ավելի մեծ չափով են հետաքրքրում, քան իրենք: Յեթե այդ գյուղացիները ցանկանում են, որպեսզի մենք նրանց իրենց տնտեսության շարունակությունն ապահովենք, կասկածից դուրս է, որ նման առաջարկ անել մենք չենք կարող: Այդ դեպքում նրանց տեղը անտիսեմիտների և նման այլ կուսակցությունների շարքերում է, որոնք հաճույքով ամեն ինչ խոստանում են, որպեսզի ոչինչ չկատարեն: Մենք հաստատուն տնտեսական համոզում ունենք, որ կապիտալիստական տնտեսության մրցումից և հացի անդրովկյանոսյան աժան արտադրությունից խոշոր ու միջակ գյուղացին էլ անխուսափելիորեն կործանվելու յեն, ինչպես այդ յերևում է պարտքի մշտական աճումից և այդ գյուղացիների ակներև անկումից ամենուրեք:

Այդ անկման դեմ մենք միայն այն կարող ենք անել, որ այստեղ էլ

կառաջարկենք տնտեսությունների միացման ճանապարհով ընկերություններ կազմակերպել, որոնց շարքերում վարձու աշխատանքի շահագործումն ավելի ու ավելի կարողանար նվազել և որոնք կարողանային աստիճանաբար ազգային մեծ արտադրական ընկերության ճյուղերը կազմել՝ համապատասխան իրավունքներով և պարտականություններով: Յեթե իրենց արտադրության այժմյան յեղանակի կործանման անխուսափելիությունն այդ գյուղացիք կհասկանան և այստեղից անհրաժեշտ յեզրակացություն կանեն, թող մեզ մոտ գան, և մեր պարտականությունը կլինի՝ արտադրության նոր ձևին անցնելը նրանց համար էլ հնարավորապես դյուրացնել: Հակառակ դեպքում նրանց օգնության հասնել մենք չենք կարող և նրանց վարձու բանվորներին կդիմենք, որոնց մոտ անպայման համակրություն կգտնենք: Պետք է յենթադրել, որ բռնի սեփականազրկում այստեղ էլ չենք կատարի:—Այնուամենայնիվ պետք է հուսալ, որ տնտեսական զարգացման պրոցեսում այս ամուր գլուխներն էլ խելամտության ավելի մատչելի կդառնան:

Միայն խոշոր կալվածատիրության նկատմամբ է, որ խնդրի լուծումը շատ պարզ դյուրանում է: Այստեղ ոչնչով չքողարկված կապիտալիստական արտադրության հետ գործ ունենք, որի շուրջը ոչ մի կասկած ծագել չի կարող: Այստեղ մասսայական գյուղատնտեսական պրոլետարիատ յենք հանդիպում և մեր անելիքը պարզ է: Հենց որ մեր կուսակցությունը կնվաճի պետական իշխանությունը, խոշոր կալվածատերերին անմիջապես սեփականազրկել կանք՝ նույն կարգով, ինչպես և արդյունաբերական գործարանատերերին: Սեփականազրկվող կալվածատերերը կվարձատրվեն թե ոչ, այդ գլխավորապես կախված կլինի ոչ թե մեզանից, այլ այն պայմաններից, որոնցով իշխանությունը գրավելու ժամանակ շրջապատված կլինենք, առանձնապես կախված կլինի պ. պ. խոշոր կալվածատերերի դիրքից: Կալվածատերերին վարձատրելը (ВЫКУП) մենք ընդհանրապես անհնարին չենք համարում: Մարքսն ինձ շատ անգամ է հայտնել իր կարծիքն այն մասին, որ խնդրի լուծումն ամենից աժան կնստեր, յեթե մեզ հաջողվեր վճարման միջոցով այդ բանդայից ազատագրվել: Սակայն, մեզ այստեղ զբաղեցնողն այդ չէ: Սեփականազրկման միջոցով հասարակությանը վերադարձրած խոշոր կալվածքները մենք գյուղատնտեսական բանվորներին կտրամադրենք, որոնք այժմ այդ կալվածքներում աշխատում են և հեղափոխությունից հետո ընկերություններ կկազմակերպեն: Այդ ընկերությունները կալվածքներից կօգտվեն հասարակության վերահսկողությամբ, իսկ ինչ նրանց աշխատանքի պայմաններին է վերաբերում, այդ մասին առ այժմ որոշակի ոչինչ ասել չի կարելի: Համենայն դեպս, կապիտալիստական արտադրությունը հասարակականի վերածելու գործն այստեղ արդեն կատարե-

լապես նախապատրաստած է և կարող է մի օրում կատարվել, ինչպես այդ պ. Կրուպպի կամ Ֆոն–Շտումմի գործարաններում տեղի ունենա: Եվ այդ գյուղատնտեսական ընկերությունների օրինակը կհամոզի նույնիսկ վերջին մանր գյուղացիներին, վորոնք դեռ դիմադրում են, յերևի կհամոզի նաև խոշոր գյուղացիների մի մասին նրանում, թե խոշոր հասարակական արտադրությունն ինչ առավելություններ է ներկայացնում:

Հետևապես, գյուղատնտեսական բանվորների առաջ այստեղ մենք կարող ենք նույն փայլուն հեռանկարները բացել, վորոնք արդյունաբերական բանվորների ազատագրման ճանապարհն են լուսավորում: Ահա ինչու Արևելյան Պրուսիայի գյուղատնտեսական բանվորների գրավումը մեզ համար միայն ժամանակի խնդիր է, այն էլ շատ կարճ ժամանակի: Եվ յերբ Արևմտյան Գերմանիայի գյուղատնտեսական բանվորները մեր կողմը կանցնեն, մեր ամբողջ յերկրում քաղաքական մթնոլորտը կփոխվի: Արևմտյան Գերմանիայի գյուղատնտեսական բանվորների փաստորեն կիսաճորտական դրությունը պրուսական յունկերների տիրապետության գլխավոր հիմքն է, միաժամանակ նաև պրուսական առանձնահատուկ տիրապետության գլխավոր հիմքն է Գերմանիայում: Արևելյան Պրուսիայի յունկերները, վորոնք ավելի ու ավելի յեն պարտքի մեջ ընկնում, աղքատանում են, ի հաշիվ պետության և մասնավոր անձանց մակաբուծությամբ են ապրում և այդ պատճառով էլ իրենց տիրապետությանն այնքան ավելի յեն կպչում, այդ յունկերներն են, վոր ստեղծել ու պաշտպանում են բյուրոկրատիայի և սպայության առանձնահատուկ պրուսական բնույթը: Նրանց մեծամտության, մասնավոր սահմանափակության և ամբարտավանության շնորհիվ է, վոր պրուսական ազգի գերմանական պետությունը—թեև նրա անխուսափելիությունը մեր օրերի համար կատարելապես ակներև է, իբրև ազգային միության այժմ միակ հնարավոր ձև—վոր հենց իր հայրենիքում այդ պետությունն այնքան ատելի յե դարձել և—չնայած իր փառավոր հաղթություններին—արտասահմանում էլ այնքան քիչ հարգանք է վայելում: Այդ յունկերների ույժը նրա վրա յե հիմնվում, վոր հին պրուսական յոթ շրջանների ամբողջ տարածության վրա, այսինքն պետության համարյա մի յերրորդում, հողային սեփականությունը նրանք իրենց ձեռքում են պահում: Եվ այդպիսով տիրացել են նաև հասարակական ու քաղաքական իշխանությանը: Բացի հողային սեփականությունից, նրանք իրենց ձեռքում են կենտրոնացրել նաև շաքարի ու սպիրտի գործարանները, վորոնց միջոցով իշխում են այդ շրջանի ամբողջ խոշոր արդյունագործության վրա: Գերմանիայի մյուս մասերում վոչ խոշոր կալվածատերերը և վոչ խոշոր գործարանատերերն այդքան նպաստավոր պայմաններում չեն գտնվում: Նրանցից և վոչ մեկն իր տրամադրության

տակ մի ամբողջ թագավորություն չունի: Նրանք ցրված են ահագին տարածության վրա և հանուն տնտեսական ու քաղաքական իշխանության թե միմյանց մեջ են մրցում և թե իրենց շրջապատող հասարակական այլ տարրերի հետ:

Սակայն պրուսական յունկերների այդ արտոնյալ դրությունն իր տնտեսական պատվանդանից ավելի ու ավելի յե զրկվում: Չնայած պետական ամբողջ օգնությանը (իսկ Ֆրիդրիխ II-րդի ժամանակից սկսած, այդ օգնությունն ամեն մի յունկերի նորմալ բյուջեյի մեջ է մտնում), այստեղ աճում են թե նրանց պարտքերը և թե աղքատացումը, վորևե դիմադրության չհանդիպելով: Խեղդվող յունկերությունը դեռ կարողանում է իր գոյությունը քարշ տալ, շնորհիվ բացառապես գյուղատնտեսական բանվորների փաստորեն կիսաճորտային դրության, վորը սրբագործված է օրենսդրության և սովորույթի կողմից, շնորհիվ գյուղատնտեսական բանվորների անսահման շահագործման հնարավորության, վորը նրանց կիսաճորտային դրությամբ է պայմանավորվում: Եվ հենց այդ պատճառով արևմտյան Պրուսիայի գյուղական պրոլետարներին մեր կողմը գրավելը շատ ավելի կարևոր է, քան արևմտյան Գերմանիայի մանր գյուղացիներին կամ նույնիսկ հարավային Գերմանիայի միջակ գյուղացիներին մեզ միացնելը: Այստեղ, արևմտյան Պրուսիայում է, վոր գտնվում է մեր վճռական ճակատամարտի դաշտը: Այդ պատճառով էլ կառավարությունը և յունկերությունը ձեռք կառնեն ամեն մի միջոց, մեր մուտքն այնտեղ անհնարին դարձնելու համար:

Այդ բանվորների շարքերում ցանենք սոցիալդեմոկրատիայի գաղափարական սերմերը, հանուն իրենց իրավունքների պաշտպանության նրանց մեջ անվեհերություն և միություն առաջացրեք—և յունկերների տիրապետությունը վերջ կգտնի: Այդ մեծ ռեակցիոն ույժը, վորը Գերմանիայի նկատմամբ մի նույնքան բարբարոս ու նվաճողական տարր է, ինչքան ռուսական ցարիզմը վողջ Եվրոպայի նկատմամբ, ծակած փուչիկի նման կխորտակվի: Պրուսական բանակի «գյուղացիական գնդերը» սոցիալդեմոկրատական կդառնան և միաժամանակ իշխանությունը տեղահան կլինի, փոփոխման կենթարկվի, վորն իր գրկում արդեն ամբողջ հեղաշրջում կպարունակի: Եվ յեթե—ինչպես մեզ սպառնում են—մեր կուսակցության տարածումը խանգարելու համար նոր բռնի միջոցների կդիմեն, այդպես ամենից առաջ այն նպատակով կվարվեն, վորպեսզի արևմտյան Պրուսիայի գյուղատնտեսական պրոլետարիատին մեր գաղափարական ազդեցությունից զերծ պահեն: Նրանց այդ աշխատանքը մեզ համար նշանակություն չունի: Գյուղատնտեսական պրոլետարիատին մենք նվաճում ենք:

ՑԱՆԿ

Ե Ջ

1. Յեռադաշտի արտադրողական ուժերը և նրա կուլտուրան 3

2. Հասարակական կարգերը և գյուղացու հասարակական դրությունը յեռադաշտի շրջանում 16

3. Յեռադաշտի վերացման տնտեսական–հասարակական պայմանները բուրժուական հեղափոխությունների շրջանում 32

4. Գյուղատնտեսական մանր արտադրությունը պրոլետարական հեղափոխության շրջանում 54

5. Բանվոր և գյուղացի. խոշոր և մանր արտադրություն 74

6. Սոցիալիզմի համար Խորհրդային Միությունն արդյո՞ք հասունացած է 95

7. Մարքսը, Ենգելսը և Լենինը հետամնաց յերկրներում սոցիալիզմ կառուցելու մասին 113

ՀԱՎԵԼՎԱԾ

Յերկու խոսք թարգմանչի կողմից 149

ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ.—Գյուղացիական խնդիրը Ֆրանսիայում և Գերմանիայում 154

21. Ա. Դանիլբեգ.—*Լավ է ուշ, քան յերբեք (ագրո-պիես)* . . . 20 կոպ.
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—*Կտավատը և կանեփը* . . . . 20 »
23. Մ. Լուկաշին.—*Անդրկովկասի տնտեսական դրությունը* . . . 15 »
24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անտառներից փայտեղեն բաց թողնելու համար (*պաշտոնական*) . . . —
25. Պրոֆ. Ավ. Քալանթար.—*Կաթնատու կովի կերակրումը* . . 30 »
26. Ա. Ա. Տրիֆոնով.—*Ինչու պետք է ցելը շուտ անել* . . . . 15 »
27. Ա. Բակունց.—*Գալուստի վեկը (ագրո-պատմվածք)* . . . . 15 »
28. Ա. Բակունց.—*Կարտոֆիլի մշակությունը* . . . . 20 »
29. Լ. Սուքքոտին.—*Կովի դատը (ագրո-պիես)* . . . . . . 20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—*Տեղկանեփ* . . . . 5 »
31. Խս. Տեր-Ներսիսյան.—*Պտղատու ծառերի վնասատուներն ու հիվանդությունները* . . . . 25 »
32. Խ. Ավդալբեգյան.—*Գյուղի հողաշինարարությունը* . . . . 20 »
33. Արազի.—*Տրակտորը (ագրո-պատմվածք)* . . . . 15 »
34. Ցալտացի.—*Խորհրդավոր արտուտներ (ագրո-զրույց)* . . . 15 »
35. Խնկո-Ապեր.—*Գյուղատնտես-անասնաբույժը և իր ագրո-զրույցը* . . . . 20 »
36. Մ. Ֆրիդոլին.—*Տասը պատգամ անասնապահին (բ. տպագր.)* . 20 »
37. Մ. Խանզադյան.—*Մեղվաբուծության գործնական ձեռնարկ* . 60 »
38. Արամայիս Յերզնկյան.—*Մեր գյուղատնտեսության հերթական խնդիրներից* . . . . 40 »
39. Ա. Աթանասյան.—*Դուքան, թե՞ արոր* . . . . 10 »
40. Վ. Բոյկով.—*Այծն աղքատի կովն է* . . . . 20 »
41. Խս. Տեր-Ներսիսյան.—*Դամբարը* . . . . 20 »
42. Ի. Կուզնեցով.—*Լենինը և գյուղացիությունը* . . . . . . 30 »
43. Ա. Մուշեղյան.—*Անտառը պետք է հաշվով կտրել* . . . . 5 »
44. Խս. Տեր-Ներսիսյան.—*Ինչպես պատվաստել պտղատու ծառերը* 10 »
45. Ա. Բակունց.—*Խառնաջուրի կոմունան* . . . . 30 »
46. Հ. Ազատյան.—*Ցեղապաշտից ցեղի ռացիլիզմ՝ կոոպերացիայի վրայով* . . . . 1–50 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԻ

1. Ա. Մարգարյան.—*Վուշխարաբուծություն*

Դիմել՝ *Յերևան, Հողժողկոմատ՝ Հրատարակչության: Պետհրատի կենտրոնական և գավառական գրախանութներին, գավհողբաժիններին:*

ԳԻՆԸ 1 Ռ. 50 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0204810

29.707